

**Լրագրողների և  
լրատվամիջոցների  
սկսումամբ  
բռնությունները,  
ճնշումները և  
դատական գործերը  
Հայաստանում  
2012**

դեպքեր և վերլուծություններ



**Violence,  
intimidation and  
legal cases  
against journalists  
and the media  
in Armenia  
2012**

cases and analysis

**Լրագրողների և  
լրատվամիջոցների  
սկստմամբ  
բռնությունները,  
ճնշումները և  
դատական գործերը  
Հայաստանում  
2012**

դեպքեր և վերլուծություններ



Հետաքննող  
լրագրողներ  
ՀԿ

Երևան 2012

Գիրքը հրատարակվել է Եվրոպայում Անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երեւանյան գրասենյակի աջակցությամբ:

Գրքում արտահայտված տեսակետները «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ինն են եւ կարող են չհամընկնել ԵԱՀԿ տեսակետների հետ:

“This publication has been made possible by support from the Organization for Security and Co-operation in Europe, Office in Yerevan. The views expressed herein are those of the Investigative Journalists NGO and do not necessarily reflect the views of the OSCE.”

Լրագրողների եւ լրատվամիջոցների նկատմամբ բռնությունները, ճնշումները եւ դատական գործերը Հայաստանում -2012. դեպքեր եւ վերլուծություններ.-Եր: «Հետաքննող լրագրողներ» ՀԿ, 2012.- 264 էջ:

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի պատրաստած այս գիրքն ամփոփում է 2012 թվականին Հայաստանում լրագրողների եւ զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ տեղի ունեցած բռնությունների ու ճնշումների դեպքերը, մասնավորապես՝ նրանց դեմ ներկայացված հայցերը՝ զրպարտության եւ վիրավորանքի մեղադրանքներով: Գրքում ներկայացվում են այդ դեպքերի եւ իրադարձությունների փաստական կողմը, դատաքննությունների ընթացքը եւ կայացված որոշումները: Առանձին գլխով ներկայացված են նաեւ տպագիր մամուլում, հեռարձակող եւ ինտերնետային ՋԼՄ-ներում 2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների պաշտոնական եւ ոչ պաշտոնական քարոզարշավի լուսաբանման դիտարկումների արդյունքները:

Նախատեսված է լրագրողների, իրավաբանների, խոսքի եւ մամուլի ազատության խնդիրներով զբաղվող փորձագետների, ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաեւ ընթերցող լայն հասարակայնության համար:

This book, prepared by the Investigative Journalists NGO, summarizes the incidents of violence and intimidation directed against reporters and news outlets in Armenia in 2012, especially the legal suits filed against them on charges of slander and insult. The book presents the evidentiary side of these cases and incidents; the trials and the verdicts handed down by the courts. A separate chapter deals with the exposes that appeared in the print media, TV and internet media outlets regarding the official and non-official electoral campaign surrounding the May 6, 2012 parliamentary elections in Armenia.

ISBN 978-92-9234-158-9

© «Հետաքննող լրագրողներ» ՀԿ, 2012 թ.

© ԵԱՀԿ, 2012 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱԲԱՆ

6

## ԼՐԱՏՎԱՄԻՋՈՅՆԵՐԻ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

8

## ՄԱՍ I

### ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՉԼՄ-ՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

19

Դատարանները սկսել են գործի դնել հավասարակշռության նժարը

20

Վճռաբեկ դատարանի որոշումը որոշակիորեն սահմանափակում է լրագրողների գործունեությունը

27

«Հրապարակի» գործելաոճում դատարանը դիտավորություն չգտավ

32

Վճռաբեկ դատարանը «Ժամանակի» գործով նախադեպ ստեղծեց

39

«Գլենդել Հիլզ»-ն ընդդեմ «Ժամանակի». 200,000 դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար

41

Հայկ Բաբուխանյանը պարտվեց հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու պատճառով

44

Լեոնապատի գյուղապետը պարտվեց Վճռաբեկ դատարանի որոշմամբ

53

200.000 դրամ՝ մարզպետի արատավորված պատվի վերականգնման համար

56

Դատարանը վճիռ կայացրեց հոգուտ ոստիկանապետի

60

3 մլն 264 հազար դրամի պահանջը դատարանը նվազեցրեց մինչև 50.000 դրամ

65

«168 ժամ» թերթը հերքեց հրապարակած տեղեկությունները

68

Նախկին տնօրենի տղան պարտվեց թերթի ու լրագրողի դեմ դատական վեճում

69

«Հետքի» լրագրողը չի վիրավորել և չի զրպարտել Լեռնապատի գյուղապետին	71
«Առավոտն» ու Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնը հաշտվել են	75
Հայցը մերժվեց հայցային վաղեմության ժամկետի խախտման հիմքով	77
Դավիթ Կարապետյանը միջնորդել է, Բենիկ Հարությունյանն էլ հրաժարվել է «Ժողովուրդի» դեմ հայցից	79
Հանրայինը հերքել է Եհովայի վկաների մասին հրապարակած տեղեկատվությունը	82
Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդ» թերթի. դատական նիստերն անընդհատ հետաձգվում են	87
«Հրապարակը» Ռոբերտ Քոչարյանից ներողամտություն հայցեց	88
Դատարանը մերժեց «Կյանքի խոսք»-ի հայցն ընդդեմ «Իրավունքի»	89
«Հրապարակը» հերքում չի տպագրելու. դատարանը մերժեց Մարգարիտա Խաչատրյանի հայցը	95
Կկանեցվի՞ Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն- <a href="http://news.am">news.am</a> դատավարությունը	98
Նոր պահանջ՝ մեկական մլն վիրավորանքի և զրպարտության համար	101
Առողջապահության ազգային ինստիտուտի նախկին աշխատակիցը վիրավորվել է «պիտանի չեն» արտահայտությունից	103
Դատարանը մերժեց Փարավոն Միրզոյանի հայցն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի	105
Ո՞վ է Հելսինկյանի «օդերով շան ծնունդը». Արթուր Սաքունցն ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի	109
Շամշյանի դեմ հայցից հրաժարվեց	112

slaq.am-ի ղեկավարությունն ընդունել է սխալը և առաջարկել հաշտվել	114
Դեկանը հրաժարվեց «Հետքի» թղթակցի դեմ ներկայացրած հայցից	115
«Հետքը» եւ ATV-ն՝ որպես երրորդ անձ	116
Հ1-ը, «Բանաձևը» և Սիրակ Եղիազարյանը պարտավոր են հրապարակային ներողություն խնդրել ԵՊՀ ամբիոնի վարիչից	117
Բլոգեր Փիղն ու «ՉԻ»-ն դատարանում են. փոխհատուցման պահանջը 3,5 մլն դրամ է	123
Զրպարտության եւ վիրավորանքի գործում 5 լրատվամիջոց ներգրավված է որպես երրորդ անձ	125
«Հրապարակային հայտարարություն» հասկացության գնահատման նոր չափանիշ՝ «հասանելի է բոլորին»	128

## **ՄԱՍ II**

### **ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Խուլիզանությունն այլևս հանցանք չէ՞	131
Լրագրողները չեն կարող պաշտպանություն ակնկալել իշխանություններից	132
Լրագրողները չեն կարող պաշտպանություն ակնկալել իշխանություններից	134

## **ՄԱՍ III**

### **ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ**

	142
Հին նպատակներ՝ նորացված մեթոդներով	143
Ազատ, բայց ոչ ազդեցիկ վիրտուալ մեդիան	147
Բազմազան, բայց ինտրիգային ու մակերեսային մամուլը	151
Հեռուստաընկերությունների անաչառ «կողմսակալությունը»	154
Մամուլի քարոզարշավը կամ քարոզարշավի մամուլը	158
Նախընտրական քարոզչության վիրտուալ երեսը	161

## ՆԱԽԱԲԱՆ

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում «Հետաքննող լրագրողներ» կազմակերպության հերթական ուսումնասիրությունը Հայաստանում խոսքի ազատության, մասնավորապես՝ լրագրողների նկատմամբ տեղի ունեցած ֆիզիկական բռնությունների եւ վերջին երկու տարիներին դրսևորված՝ մամուլի վրա ազդեցության նոր միջոցի՝ զրպարտության եւ վիրավորանքի հայցերով դատավարությունների մասին:

Գիրքն ամփոփում է 2012 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները: Իրավաբաններ Արա Ղազարյանը եւ Աշոտ Վարելյանը համառոտ ձևով ներկայացրել են լրատվամիջոցների ազատության տարբեր ասպեկտները՝ օրենսդրական կարգավորում, հեռարձակման արտոնագրի մրցույթ, ֆիզիկական բռնություններ, զրպարտության եւ վիրավորանքի հայցերով դատական գործեր: Իրենց վերլուծության մեջ նրանք միայն վերջինի վերաբերյալ են լավատեսական կարծիք արտահայտել՝ դատական պրակտիկան զարգանում է դրական ուղղությամբ, զգալիորեն նվազել է դատարան ներկայացվող գործերի թիվը, իսկ փոխհատուցման գումարների չափի զգալի կրճատումը կայուն դատական պրակտիկա է դարձել: Փոխարենը իրավիճակը նույնն է լրագրողների նկատմամբ բռնությունների դեպքերի բացահայտման առումով: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2012-ին արձանագրված դեպքերի քննությունը ոստիկանության կողմից կրել է ձեւական բնույթ, եղել է ոչ արդյունավետ: Մասնագետների գնահատմամբ՝ ոստիկանությունը դրսևորել է կատարյալ անգործություն:

Գրքի առաջին բաժինը, որն անվանել ենք «Լրագրողները եւ ՁԼՄ-ները դատարանում», ընդգրկում է հոդվածներ 2012թ. դատավարությունների մասին, որոնցում լրագրողները հանդես են եկել պատասխանողի դերում կամ ներգրավված են եղել որպես երրորդ անձ: Նրանց նկատմամբ հիմնական մեղադրանքներն են՝ զրպարտություն, վիրավորանք, պատվի, արժանապատվության եւ գործարար համբավի արատավորում: «Հետքի» լրագրողները դատավարությունների ընթացքին հետեւել են դատական բոլոր ատյաններում եւ լուսաբանել՝ պատրաստելով ինչպես տեղեկատվական ժանրի, այնպես էլ վերլուծական հոդվածներ եւ հարցազրույցներ փորձագետների հետ:

Գրքի երկրորդ բաժինն ամփոփում է նույն ժամանակահատվածում լրագրողների դեմ բռնությունների դեպքերը: 2012-ին բռնության 7 դեպք է արձանագրվել: «Հետքի» լրագրողների՝ այս բաժնում գետեղված վերլուծական հոդվածների եզրահանգումն այն է, որ Հայաստանում լրագրողները չեն կարող պաշտպանություն ակնկալել իշխանություններից:

Ի տարբերություն մեր նախորդ տարիների նմանատիպ հրատարակությունների՝ այս գիրքն ունի մի նոր բաժին՝ «Խորհրդարանական ընտրությունների լուսաբանումը ՋԼՄ-ներում»: Հետքի քաղաքական մեկնաբանը հետեւել է 2012թ. մայիսի 6-ի պաշտոնական եւ ոչ պաշտոնական քարոզարշավին ինչպես տպագիր մամուլում, հեռարձակող ՋԼՄ-ներում, այնպես էլ ինտերնետային ՋԼՄ-ներում, սոցցանցերում եւ հետաքրքիր եզրահանգումներ կատարել:

# Լրատվամիջոցների ազատությունը ՀՀ-ում (2012 հունվար-հոկտեմբեր)

## Համառոտ

2012 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք օրենսդրական նախաձեռնություններ քաղաքացիական հասարակության, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Կառավարության կողմից, որոնց մի մասի արդյունքում փոփոխության են ենթարկվել ՀՀ-ների գործունեությունը կարգավորող առանձին իրավահարաբերություններ, իսկ մի մասն էլ որևէ հաջողություն չի ունեցել, և օրենսդրական նախաձեռնությունը կամ չի ընդունվել Ազգային ժողովի կողմից կամ էլ դեռ չի ընդգրկվել ԱԺ օրակարգում, թեև ներկայացված է եղել ԱԺ դեռ այս տարվա սկզբին և արդեն տևական ժամանակ է, ինչ գտնվում է շրջանառության մեջ:

Խորհրդարանական ընտրությունների օրը գրանցվել են լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության մի քանի դեպքեր ընտրատարածքներում, որոնց առնչությամբ ոստիկանությունը ցուցաբերել է անգործություն, քանի որ մի մասի կապակցությամբ քրեական գործեր չեն հարուցվել, իսկ որոնք էլ հարուցվել են, որոշ ժամանակ անց կարճվել են հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով:

Տեղեկատվության մատչելիության իրավունքի խախտումներ են գրանցվել ինչպես պետական մարմինների, այնպես էլ առևտրային ոչ պետական ընկերությունների կողմից: Եվ վարչական, և՛ դատական վարույթների շրջանակներում հանրային մարմինները և դատարանները շարունակում են չափազանց լայնորեն մեկնաբանել առևտրային գաղտնիք հասկացությունը, որի արդյունքում լրատվամիջոցները, ինչպես նաև լրատվամիջոցների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավապաշտպան կազմակերպությունները զրկվում են տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Միակ ոլորտը, որտեղ շարունակվում են կայուն դրական զարգացումները, զրպարտության և վիրավորանքի գործերով դատական պրակտիկան է, որի շրջանակներում դատարանները շարունակում են հետևողականորեն մերժել այն հայցապահանջները, որտեղ բերվում են վնասի փոխհատուցման անհամաչափ մեծ և չարդարացված պահանջներ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ լրատվամիջոցների տեղեկատվություն տարածելու իրավունքի վրա, որը դատարանները դիտարկում են հանրային շահի ներքո:

## Օրենսդրական նախաձեռնություններ և փոփոխություններ

2012 թվականի ընթացքում հանդես են բերվել օրենսդրական մի շարք նախաձեռնություններ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող կազմակերպությունների, պետական մարմինների և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, որոնք առնչվում

են լրատվամիջոցների և լրագրողների ազատությանը: Մասնավորապես՝ հիշարժան է 2012 թ. հունվարի 31-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումը ընտրական գործընթացները լուսաբանելու նպատակով լրագրողների հավատարմագրման կարգում փոփոխություններ կատարելու մասին, ըստ որի հավատարմագրեր չէին կարող տրվել այն լրագրողներին, ովքեր դատապարտվել էին դիտավորյալ հանցագործություն կատարելու հիմքով, և նրանց դատվածությունը այդ պահի դրությամբ մարված կամ հանված չէր, ինչպես նաև նրանք, ովքեր տարածել էին ընտրական հանձնաժողովների կամ պաշտոնատար անձանց գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չէին համապատասխանում իրականությանը, որը հաստատվել է դատարանի վճռով: Ակնհայտ էր, որ նշված փոփոխությունները սահմանում էին լրագրողական ազատությունների սահմանափակումներ, որոնք շոշափում էին մարդու իրավունքների հարցեր և, հետևաբար, չէին կարող սահմանվել ԿԸՀ-ի կողմից, այլ պետք է սահմանվեին միայն Ազգային ժողովի կողմից ընդունված օրենսդրական ակտով: Լրագրողական մի շարք կազմակերպությունների և իրավապաշտպանների կողմից բարձրացված դժգոհություններից հետո ԿԸՀ-ն ստիպված էր մարտի 15-ին վերացնել հավատարմագրման գործընթացում վերը նշված սահմանափակումները սահմանող դրույթները:

Հիշարժան էր նաև սույն թվի մարտի 21-ին «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի ընդունման փաստը Ազգային ժողովի կողմից: Նման օրենքի ընդունումը բխում էր ՀՀ Սահմանադրության պահանջներից, մասնավորապես՝ արտակարգ դրության ժամանակ ՀՀ-ում մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները «օրենքով» սահմանված լինելու պահանջով: Սույն օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է ազատությունների սահմանափակումների սպառիչ ցանկ, որի 12-րդ կետով սահմանվում է «խոսքի ազատության սահմանափակում, մասնավորապես՝ զանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների, հաղորդումների արգելում»: Այս օրենքի հետ համահունչ լրացվեց նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.2-րդ հոդվածը (Արտակարգ դրության իրավական ռեժիմի կանոնները խախտելը), որի 8-րդ կետով սահմանվեց նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչեւ ութհարյուրապատիկի չափով տուգանքի նշանակում՝ արտակարգ դրության ժամանակ զանգվածային լրատվամիջոցներում արգելված հրապարակումներ, հաղորդումներ թողարկելու դեպքում:

Առանձնապես հետաքրքրություն է առաջացրել երեք լրագրողական կազմակերպությունների՝ Երեւանի մամուլի ակումբի, «Ինտերնյուս» ՀԿ-ի եւ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի համատեղ մշակած «Ընդհատադատության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ օրինագիծը: Մարտի 19-ին ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը այդ նախագիծը դրել է շրջանառության մեջ: Օրենքում փոփոխություններ կատարելը հիմնավորված էր ՀՀ-ում ռադիոհեռուստահաղորդումների հեռարձակ-

ման թվային համակարգի ներդրմամբ, որի ընթացքում ամբողջապես լուծում չէին ստացել հեռարձակման ոլորտի այն հիմնական խնդիրները, որոնք կապահովելին թվային հեռարձակման ներդրումից ակնկալվող արդյունքները եւ կբավարարեին լրագրողական հանրության, լայն հասարակայնության, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների ունեցած մտահոգությունները: Մինչ Ազգային ժողովի վերը նշված հանձնաժողովին ներկայացնելը, օրենքի նախագիծը քննարկվել է ԵԱՀԿ և ԵՄ փորձագետների հետ, այնուհետև ներկայացված է եղել հանրային քննարկման ՄԻՊ գրասենյակի կազմակերպած «Մամուլի ազատության ֆորում»-ի շրջանակներում: Նախագծով առաջարկվող հիմնական փոփոխությունները նպատակ ունեն հեռարձակման թվայնացման պայմաններին համապատասխան օրենսդրական կարգավորումներ սահմանել, ինչպես նաև մեծացնել Հանրային հեռուստառադիոընկերության նկատմամբ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) վերահսկողությունը: Անհրաժեշտ է նկատել, որ ՀՌԱՀ-ի կողմից ցանկացած վերահսկողական գործառույթի սահմանում Հանրային հեռուստառադիոընկերության նկատմամբ կարող է հանգեցնել կոնֆլիկտի երկու կարգավորող մարմինների՝ ՀՌԱՀ-ի եւ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի միջև, որոնք կարգավորում են սկզբունքորեն երկու առանձին ոլորտներ: Հայտնի չէ, թե նման իրավակարգավորումը արդյոք արդյունավետ կլինի պրակտիկայում: Ներկայումս նախագիծը դեռ շրջանառության մեջ է և չի ընդգրկվել Ազգային ժողովի նիստերի օրակարգում:

Ազգային ժողովում դեռևս շրջանառվում է փաստաբան Կարեն Մեժլումյանի մշակած և Ազգային ժողովի նախկին պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի միջոցով շրջանառության մեջ դրված օրենքի նախագիծը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում փոփոխություններ կատարելու մասին: Նախագծով առաջարկվում է հոդվածի շրջանակներում ընդգրկել նաև ոչ հրապարակային բնույթի հայտարարությունները, ինչպես նաև վիրավորական և զրպարտող բնույթի այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «անպարկեշտ» և «ակնհայտ սուտ» հայտարարությունները: Առաջարկվում է նաև նվազեցնել վիրավորանքի և զրպարտության համար գումարային փոխհատուցան վերին շեմը՝ վիրավորանքի համար փոխհատուցում սահմանելով մինչև 500.000, իսկ զրպարտության համար՝ մինչև 800.000 դրամի չափով: Սույն նախագծի ընդգրկումը օրակարգում հետաձգվել էր 60 օրով դեռ 06.02.2012թ. և մինչ այժմ շարունակում է մնալ շրջանառության մեջ:

## **Ֆիզիկական բռնություններ**

2012 թվականի ընթացքում լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքեր են գրանցվել համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում: Որպես կանոն՝ բռնության փաստերի վերաբերյալ լրագրողները ներկայացրել են հանցագործության մասին հաղորդում ոստիկանության տարածքային բաժանմունք, որի առիթով ոստիկանությունը հարուցել է քրեական գործ, սակայն մի որոշ ժամանակ հետո կարճել է քրեական գործը հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով: Ներ-

կայացնենք մի քանի օրինակներ: Մայիսի 5-ին «ԳԱԼԱ» հեռուստաընկերության լրագրող Նաիրա Նալբանդյանի նկատմամբ տեղի է ունեցել բռնություն Գյումրու թիվ 33 ընտրատարածքում, որի վերաբերյալ վերջինս հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Շիրակի մարզի քննչական բաժին, որտեղ փաստի առիթով նյութեր են նախապատրաստվել, սակայն մայիսի 16-ին կայացված որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցադեպի բացակայության հիմքով<sup>1</sup>:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերվել նաև «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Էլինա Չիլինգարյանի նկատմամբ: Վերջինս փորձել է տեսանկարահանել ընտրատեղամասը և դրա մոտ հավաքված մի քանի երիտասարդների, սակայն նրանցից մեկն առանց զգուշացնելու մոտեցել ու երկու անգամ հարվածել է լրագրողի ձեռքին և փորձել խլել տեսախցիկը: Լրագրողին դժվարությամբ հաջողվել է չհանձնել իր տեսասարքը, որից հետո նա հեռացել է ընտրատեղամասից: Էլինա Չիլինգարյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ոստիկանություն ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով: Թեև հաղորդման հիմքով ընթացել է հետաքննություն, և նախապատրաստվել են նյութեր, սակայն հուլիսի 13-ին ոստիկանությունը կարճել է քրեական գործի վարույթը հետևյալ պատճառաբանությամբ. «*Էլինա Չիլինգարյանը տեսանկարահանումներ կատարելիս չի ներկայացել որպես լրագրող, լրագրողին հափուկ փարբերիչ նշան չի կրել, նրա օգտագործած տեսախցիկը նույնպես փարբերանշան չի ունեցել: Նման պայմաններում նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներն իրենց համակցության մեջ գնահատելով՝ հիմնավորված պետք է համարել, որ Հ. Համբարձումյանը չի գիտակցել եւ պարտավոր չէր գիտակցել, որ Էլինա Չիլինգարյանը լրագրող է եւ իրականացնում է մասնագիտական գործունեություն: Հ. Համբարձումյանի դիտարկությունն ուղղված չի եղել Չիլինգարյանին ծեծելուն, մարմնական վնասվածք կամ ֆիզիկական ցավ պատճառելուն: Նկարահանվելուց խուսափելու նպատակով նա հարվածել է նկարահանողի ձեռքին, որի հետեանքով տեսախցիկն ընկել է գետնին: Երկրորդ անձի կողմից ձեռքին հարվածելու վերաբերյալ ցուցմունք է փվել միայն Էլինա Չիլինգարյանը: Այդ դրվագով այլ ապացույց ձեռք չի բերվել, այսինքն՝ չի հաստատվել հանցագործության դեպքը»<sup>2</sup>:*

«Մաքսիմֆո» լրատվական-վերլուծական գործակալության լրագրող Կարեն Ալեքյանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու հիմքով մայիսի 8-ին հարուցվել է քրեական գործ՝ մի խումբ անձանց կողմից բռնության զուգորդմամբ լրատվության միջոցի ներկայացուցչի լրագրությունների իրականացմանը խոչընդոտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերի հասկանիչներով), սակայն առ այսօր որևէ մեկին մեղադրանք չի ներկայացվել և ոչ էլ որևէ քննչական կամ դատավարական գործողություններ են կատարվել հարուցված քրեական գործի շրջանակներում<sup>3</sup>:

1. Տե՛ս «Հետաքննող լրագրողներ»-ի դիտարկումները 2012 թ. բռնությունների մասին «Հետք» ինտերնետային կայքի հետևյալ էջում՝ <http://hetq.am/arm/articles/17891/lragroxnery-chen-karox-pashpanutyun-aknkalel-ishkhanutyunneric.html>:

2. Նույն տեղում:

3. Տե՛ս «Հետաքննող լրագրողներ»-ի դիտարկումները 2012 թ. բռնությունների մասին «Հետք» ինտերնետային կայքի հետևյալ էջում՝ <http://hetq.am/arm/articles/17891/lragroxnery-chen-karox-pashpanutyun-aknkalel-ishkhanutyunneric.html>:

Վերը նկարագրված իրավիճակի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) սահմանված պոզիտիվ պարտավորությունների չկատարման մասին հարց է առաջանում: Կոնվենցիայի և ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթներ պետությանը պարտավորեցնում են ձեռնարկել պոզիտիվ քայլեր իր իրավասության ներքո գտնվող անձանց իրավունքները պաշտպանելու ուղղությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե անձի իրավունքների միջամտությունը կատարվել է սովորական քաղաքացու՞, թե պաշտոնատար անձի կամ պետական մարմնի կողմից: Պետությունը (այսինքն պետության անունից գործող բոլոր պաշտոնատար անձինք և կազմակերպությունները) պարտավոր է ոչ միայն ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց (նեգատիվ պարտավորություն), օրինակ՝ անձի նկատմամբ արգելված վերաբերմունք ցուցաբերելուց, այլև կրում է պոզիտիվ պարտավորություն, որպեսզի նման դեպք տեղի ունենալու դեպքում նախաձեռնի պաշտոնական քննություն: Ընդ որում, քննությունը չպետք է լինի ձևական, այլ պետք է նպաստի, որպեսզի դրա շրջանակներում հայտնաբերվեն ու պատժվեն մեղավոր անձինք և նրանց նկատմամբ նշանակվի համարժեք պատիժ: Այսպիսով, անձի նկատմամբ արգելված վերաբերմունքի նյութական իրավունքի արգելքը ներառում է նաև դատավարական իրավունքի բաղադրիչ, համաձայն որի պետությունը պարտավոր է նախաձեռնել և իրականացնել արդյունավետ քննություն բռնության փաստի առթիվ:

Պոզիտիվ պարտավորության գաղափարն առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում լրագրողների և լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքի առումով: Հաշվի առնելով, որ արտահայտվելու ազատությունը ժողովրդավարության ամենակարևոր նախապայմաններից է, այս իրավունքի արդյունավետ իրականացումը ոչ միայն կախված է լրագրողների և լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքին չմիջամտելու՝ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց նեգատիվ պարտավորությունից, այլ նաև այս իրավունքի իրականացումն ապահովելու ուղղությամբ պետության կողմից ձեռնարկված պոզիտիվ քայլերից: Այդպիսի պոզիտիվ քայլերից են, մասնավորապես, լրատվամիջոցների և նրանց աշխատակազմին բռնություններից և բռնության սպառնալիքներից պաշտպանելու, անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու և բռնության կամ սպառնալիքների փաստերի հիմքով արդյունավետ հետաքննություն նախաձեռնելու և կատարելու գործողությունները: Այս խնդրին անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, որն իր թիվ 1535 Բանաձևում նշել է, որ պետությունները պոզիտիվ պարտավորություն են կրում հետաքննելու լրագրողների դեմ ցանկացած բռնություն, այդ թվում նաև՝ սպառնալիքները, և որ այդ պարտավորությունը բխում է «լրագրողների՝ որպես անհայրենի՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքներից, ինչպես նաև ցանկացած ժողովրդավարության համար ահաբեկումներից և քաղաքական սպառնալիքներից զերծ զանգվածային լրատվական միջոցներ ունենալու անհրաժեշտությունից: Այնպեղ, որպեղ հնարա-

վոր է լրագրողների դեմ իրականացնել հարձակումներ և մնալ անպա-  
տիժ, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը լքողներն  
ստիպում են»:

Անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանելու ուղղու-  
թյամբ պետության պոզիտիվ պարտավորության առկայության հան-  
գամանքն ընդունել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը, որը, հղում կա-  
տարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապա-  
տասխան նախադեպին, սահմանել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի  
ներքո անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը ներա-  
ռում է նաև «անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությու-  
նը: 8-րդ հոդվածի ներքո պետությունները կրում են անձի ֆիզիկական  
և հոգեկան անձեռնմխելիությունն այլ անձանց ուրնձգություններից  
պաշտպանելու պարտականություն: Այդ նպատակով նրանք պետք է  
հաստատեն ու գործնականում կիրառեն մասնավոր անձանց ուրնձ-  
գություններից պաշտպանություն տրամադրող համարժեք իրավական  
կառուցակարգեր»<sup>4</sup>:

Վերը շարադրված իրավիճակներում լրագրողների նկատմամբ տե-  
ղի է ունեցել բռնություն, որն ակնհայտորեն կապված էր նրանց մաս-  
նագիտական պարտականությունների կատարման, տվյալ դեպքում՝  
ընտրությունների լուսաբանման գործառույթների հետ: Բռնությունը  
կատարվել է ոչ պաշտոնատար անձանց կողմից: Հետևաբար, իրա-  
վունքի միջամտության և խախտման հարցը գտնվում է Սահմանադ-  
րության 23-րդ (անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք) և  
27-րդ (ազատ արտահայտվելու իրավունք) և Կոնվենցիայի համա-  
պատասխանաբար 8-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված պոզի-  
տիվ պարտավորությունների դաշտում, մասնավորապես՝ արդյո՞ք ՀՀ  
իրավասու մարմինները կատարել են արդյունավետ քննություն մեղա-  
վորներին հայտնաբերելու, պատժելու և նրանց նկատմամբ համարժեք  
պատիժ նշանակելու ուղղությամբ: Փաստերը ցույց են տալիս, որ նշ-  
ված օրինակներում, ինչպես նաև վերևում վկայակոչված ուսումնասի-  
րության մեջ ներառված այլ գործերով ոստիկանությունը հանցագոր-  
ծության մասին ներկայացված հաղորդումների հիման վրա կատարել  
է հետաքննություն, որի շրջանակներում, սակայն, հետազայում դրսև-  
նորվել է կատարյալ անգործություն՝ չեն կատարվել քննչական կամ  
դատավարական գործողություններ, իսկ մի քանի ամիս անց քրեա-  
կան գործը կարճվել է կամ քրեական գործի հարուցումը մերժվել:

Առավել զարմանալի է այն հանգամանքը, որ քրեական գործերը  
կարճվել են տուժողների կողմից հանցագործության մասին ներկայաց-  
ված հաղորդումների առկայության պայմաններում («ԳԱԼԱ» հեռուս-  
տաընկերության լրագրող Նաիրա Նալբանդյանի նկատմամբ, «Ազա-  
տություն» ռադիոկայանի լրագրող Էլինա Չիլինգարյանի նկատմամբ և  
mynews.am կայքի թղթակից Արթուր Հարությունյանի նկատմամբ), մի  
հանգամանք, որն ինքնին իշխանությունների կողմից պոզիտիվ պար-  
տավորության անտեսման հարց է առաջադրում, քանի որ ՀՀ Սահ-  
մանադրական դատարանը իր թիվ 871 որոշման մեջ սահմանել է, որ

4. ՀՀ Վճռաբեկ դատարանի 26/03/2010թ. թիվ ԵՇՆ/0097/01/09 որոշումը  
Տիգրան Քամալյանի գործով, §23:

հակասահմանադրական է, երբ քրեական գործը կարճվում է հանցադեպի բացակայության հիմքով այնպիսի պայմաններում, երբ առկա է հանցագործության մասին հաղորդում տուժողի կողմից:

Վերը նշվածն ամփոփելով՝ համարում ենք, որ նշված դեպքերով իշխանությունների կողմից խախտվել են ՀՀ Սահմանադրության 17-րդ, 23-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված իրավունքները (բռնությունների արգելում, անձնական կյանքի նկատմամբ հարգանք և ազատ արտահայտվելու իրավունք), քանի որ իրավասու մարմինների կողմից չեն կատարվել այս իրավունքների դատավարական պահանջները՝ քննության նախաձեռնում, մեղավորների հայտնաբերում և համարժեք պատժի նշանակում: Ավելորդ չենք համարում նշել նաև, որ լրագրողների նկատմամբ կատարված բռնությունների փաստով արդյունավետ քննություն չկատարելու հանգամանքը համընդհանուր սառեցնող ազդեցություն (chilling effect) է թողնում ամբողջ լրատվական դաշտի, լրագրողական ազատության վրա, որից տուժում է տեղեկացվելու հանրային ընդհանուր շահը:

## **Հեռուստատեսային հեռարձակման արտոնագրի մրցույթ**

2012թ. մարտի 28-ին Վճռաբեկ դատարանը մերժել է վարույթ ընդունել «Մելտեքս» ՍՊԸ ընկերության բողոքը հեռուստատեսային հեռարձակման արտոնագրի 2011թ. դեկտեմբերին անցկացված մրցույթի հիմքերի առնչությամբ: Այդ որոշումով ավարտվեց ընկերության կողմից նախաձեռնված ներպետական դատական գործընթացը, որով դատարանից խնդրում էր ամբողջությամբ անվավեր ճանաչել ՀՌԱՀ-ի 2010թ. դեկտեմբերի 16-ի թիվ 96-Ա որոշումը «Արմնյուզ» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու վերաբերյալ եւ ճանաչել ՀՌԱՀ-ի կողմից մրցույթում միջամտության արդյունքում «Մելտեքս» ՍՊԸ-ի արդար մրցակցության խախտված իրավունքը: Ընկերությունը, այդպիսով, սպառել է ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցները և սույն թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ արդեն նախնական նամակով դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ վիճարկելով մրցույթի անցկացման եղանակի համապատասխանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափանիշներին: Եվրոպական դատարանում կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիման վրա ընկերությունը պնդում է, որ կարգավորող մարմնի՝ ՀՌԱՀ-ի ակտիվ միջամտության շնորհիվ խախտվել են մրցույթի անցկացման հավասարության, թափանցիկության եւ անաչառության սկզբունքները: Բացի այդ, ընկերությունը պնդում է, որ ՀՌԱՀ-ը ընկերության գործարար բարի համբավը վարկաբեկելու միտում է դրսևորել՝ այդպիսով իր նկատմամբ ցուցաբերելով խտրական մոտեցում:

Չնայած ՀՌԱՀ-ի հետ դատական գործընթացին, որում որպես երրորդ կողմ ներգրավված է «Արմնյուզը», 2012թ. սեպտեմբերի 4-ին «Արմնյուզ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն Արտակ Ալեքսանյանը եւ «Ա1+» հեռուստաընկերության նախագահ Մեսրոպ Մովսեսյանը հանդես եկան համատեղ ասուլիսով՝ հայտարարելով իրենց

համագործակցության մասին: Սեպտեմբերի 10-ից «Ա1+»-ի «Այբ-Ֆե» 20 ռուպեանոց տեղեկատվական-վերլուծական ծրագիրը թողարկվում է «Արմնյուզի» փրայմ թայմում՝ երեկոյան ժամը 21.00-ին, երկուշաբթի-ից ուրբաթ: Հեռուստաընկերությունների միջև համագործակցության պայմանագիրը կնքվել է մեկ տարի ժամկետով:

«Մեյլտեքս» ՍՊԸ ընկերության երկարամյա պայքարը, որի մի դրվագն է հանդիսանում սույն դատական գործընթացը, արտահայտում է այն հիմնական խնդիրը, որն առկա է Հայաստանի Հանրապետության հեռուստատեսային լրատվամիջոցների ոլորտում՝ թափանցիկ ու արդար արտոնագրային մրցույթի բացակայությունը, որի արդյունքում լրատվական դաշտը զբաղեցնում են ընկերություններ, որոնք չունեն բավարար անկախություն գործադիր մարմնից և տարբեր քաղաքական խմբավորումներից: Չնայած վերջին տարիներին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ՝ նպատակ ունենալով բավարար ինստիտուցիոնալ անկախություն տալ ՀՌԱՀ-ին գործադիր իշխանությունից, ինչպես նաև ապահովել արդար արտոնագրային մրցութային պայմաններ, և թեև օրենսդրական այդ բարեփոխումներն ընդունվել են ԵԽ մարմինների կողմից, այդուհանդերձ, պրակտիկայում դեռ չեն ապահովվում ազատ և արդար մրցակցային պայմաններ մրցույթի մասնակիցների համար: Այս առումով պետք է նշել, որ և՛ հասարակական, և՛ միջազգային վերահսկողությունը արտոնագրային գործընթացի վրա դեռ շատ թույլ է, որի արդյունքում ՀՌԱՀ-ը ավելի շատ ժողովրդավարական չափանիշների իմիտացիոն բնույթի գործելակերպ է որդեգրել, քան հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի արդյունավետ կարգավորման:

## **Վերավորանքի եւ գրապարտության հիմքերով դատական գործերը լրատվամիջոցների դեմ**

Ապաքրեականացումից ի վեր, որը կատարվեց 2010 թվականի մայիսին, դատարաններն ընդունել են մեծ քանակությամբ քաղաքացիական հայցեր հասարակության տարբեր խմբերի՝ սովորական քաղաքացիների, քաղաքական գործիչների, օլիգարխների, հանրային պաշտոնյաների, շոու բիզնեսի ներկայացուցիչների, փաստաբանների և նույնիսկ լրագրողների և լրատվամիջոցների կողմից: 2012թ. հոկտեմբեր ամսվա դրությամբ՝ 2010 թվականի հունիսից ի վեր, նոր իրավակարգավորման շրջանակներում հարուցված 51 դատական գործերից ընթացքի մեջ է 15-ը, իսկ մնացած 36 գործերով դատական վարույթներն ավարտվել են: Ընթացքի մեջ գտնվող 15 գործերից 7-ով կայացվել է առնվազն մեկ դատական ակտ, իսկ մնացած 8-ով դատական որոշում դեռ չի կայացվել, և դատաքննությունը դեռ ընթացքի մեջ է առաջին ատյանի դատարանում: Ավարտված 36 գործերից 9-ով դատարանները հայցապահանջները բավարարել են մասնակի, 10 գործով հայցապահանջներն ամբողջությամբ մերժվել են, 9 գործով կող-5. Այս վիճակագրությունը ներառում է միայն այն դատական գործերը, որոնցում լրատվամիջոցը կամ լրագրողը հանդես է գալիս որպես պատասխանող:

մերը կնքել են հաշտություն, 6 գործով հայցվորները դատաքնության ընթացքում հրաժարվել են հայցապահանջից, և 2-ով հայցերը վերադարձվել են սխալներն ուղղելու նպատակով:

2012թ. դատական պրակտիկան կտրուկ տարբերվում է 2010 և 2011 թվականների դատական պրակտիկայից: 2012թ. հունվարից մինչև հոկտեմբեր ամիսը դատարանները ստացել են ընդամենը ութ հայցապահանջ, որը ցածր թիվ է, եթե համեմատենք 2011թ. տվյալների հետ, որի ընթացքում ամսական միջինը 3-ից 6 գործ էր ներկայացվում:

2010 և 2011 թվականների դատական պրակտիկայի ընթացքում դատարանները միտված էին բավարարել բարձր և երբեմն աստղաբաշխական թվերով ներկայացված փոխհատուցման պահանջները վիրավորանքի և/կամ գրպարտության համար: Այս շրջանում դատարանները բավարարել են 3 մլն-ից մինչև 6 մլն դրամական փոխհատուցման պահանջներ ոչ բարոյական վնասի համար<sup>6</sup>: 2011թ. նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարանի կայացրած թիվ ՍԴՈ-997 որոշումից հետո դատական պրակտիկան կտրուկ փոխվեց: Դրան նպաստեց նաև քիչ ուշ Վճռաբեկ դատարանի 27/04/2012թ. կայացրած որոշումը թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով<sup>7</sup>:

Սկսած 2012 թվականի սկզբից՝ նոր հարուցված կամ ընթացքի մեջ գտնվող նախկին գործերով դատարանները սկսել են հետևողականորեն նվազեցնել փոխհատուցման չափերը՝ դատական ծախսերի և ոչ նյութական վնասի փոխհատուցման մասերով: Ավելին, դատարանները սկսել են փոխհատուցման չափը որոշելիս հաշվի առնել պատասխանող լրատվամիջոցի գույքային դրությունը, վիճահարույց տեղեկատվության տարածման եղանակը, հայցվորի կարգավիճակը (դատարանները էականորեն նվազեցնում կամ մերժում էին այն հայցապահանջները, որոնք բերվել էին քաղաքական գործիչների, օլիգարխների կամ հանրային բարձր պաշտոնյաների կողմից), ինչպես նաև, թե ընդհանուր առմամբ սահմանված փոխհատուցման չափը ինչ բացասական ազդեցություն կարող է գործել լրատվամիջոցի գործունեության վրա, որը դիտվում էր որպես հանրային շահ: Այսինքն՝ քաղաքացիաիրավական հարաբերություններում դատարանները սկսել էին տեսնել նաև հանրային իրավահարաբերություններ (լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքը և քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը), որի հետևանքով դատարանները սկսել են կիրառել հանրային և անհատական բախվող շահերը փոխհավասարակշռելու սկզբունքը: Այս նույն սկզբունքին հետևելով՝ դատարանները որոշ գործերով, որտեղ լրագրողը օգտագործել էր չափազանցված կամ նույնիսկ սադրող բնույթի խոսքի տեսակ, նլնելով հանրային շահից՝ նվազեցրել են փոխհատուցման չափը կամ նույնիսկ մերժել հայցը՝ նշելով, որ տարածված տեղեկատվությունն առնչվում էր

6. Սամվել Ալեքսանյանը, Ռուբեն Հայրապետյանը և Լևոն Սարգսյանը ընդդեմ «Դարեակիզբ» ՍՊԸ-ի գործով թիվ ԵԿԴ/2347/02/10 քաղաքացիական գործը և Բելա և Սեդրակ Քոչարյաններն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2479/02/10 քաղաքացիական գործը: Վճիռներին կարելի է ծանոթանալ [www.datalex.am](http://www.datalex.am) էլեկտրոնային էջում:

7. Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի գործով:

հանրային հետաքրքրություն ներկայացնող նյութի<sup>8</sup>: Այսինքն, **2012թ. ընթացքում բոլոր դատական ակտերը կայացվել են Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի սահմանած ուղեցույցներով**, որոնցում ներառված էին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դրույթները: Դրա հետևանքն են այս տարվա դատական պրակտիկայի տվյալները:

2012թ. ընթացքում ավարտվել է ընդհանուր առմամբ 15 դատական գործ, հայցերից երեքը բավարարվել է մասնակի<sup>9</sup>, հինգը մերժվել է ամբողջությամբ<sup>10</sup>, երկուսն ավարտվել է հաշտությամբ<sup>11</sup> և հինգ դատական գործ ավարտվել է հայցվորի կողմից հայցապահանջից հրաժարվելու հետևանքով<sup>12</sup>: Երեք մասնակի բավարարված գործերով վճիռներից երկուսում դատարանները պահանջված դրամական փոխհատուցման չափը նվազեցրել են հինգ անգամ (մի գործով բերվել էր աննշան դրամական փոխհատուցման պահանջ): Համեմատության համար, 2010 և 2011 թթ. ընթացքում կայացված վճիռներով դատարանները մասնակի բավարարված գործերով դրամական փոխհատուցման չափերը նվազեցրել են 2-ից 18 անգամ: Այսինքն, եթե իրավիճակը գնահատենք դա-  
8. Տե՛ս, օրինակ, ԵԿԴ/0790/02/11 քաղաքացիական գործով Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական ջրջանների դատարանի վճիռը՝ ըստ հայցի Հայկ Բաբուխանյանի ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի: Թիվ ԵԿԴ/0526/02/11 քաղաքացիական գործով Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական ջրջանների դատարանի վճիռը՝ ըստ հայցի Տիգրան Արզաբանցյանի ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի:

9. «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1963/02/10: Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2293/02/10: Դանիել Իոսանիսյանը, Բայանուր Պողոսյանը և Հասմիկ Սիմոնյանն ընդդեմ «Մեկ ազգ» կուսակցության, քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0074/02/12: Դատական ակտերը կարելի է կարդալ [www.datalex.am](http://www.datalex.am) էջում:

10. Հայկ Բաբուխանյանը և «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ն ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի լրագրող ([www.report.am](http://www.report.am) կայք) Էդիկ Անդրեասյանի (լրագրող), քաղ. գործ թիվ ԵԿԴ/2374/02/10: Հայկ Բաբուխանյանն ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի և Էդիկ Անդրեասյանի (լրագրող-վերլուծաբան) և Աբել Միքայելյանի (լրագրող), քաղ. գործ թիվ ԵԿԴ/0790/02/11: Տիգրան Տերտերյանն ընդդեմ «168 ժամ» ՍՊԸ-ի և լրագրող Մարինե Մարտիրոսյանի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/1485/02/11: Վանո Եղիազարյանն ընդդեմ «Հետք» շաբաթաթերթի լրագրող Ադրինե Թորոսյանի, քաղ. գործ թիվ ԼԴ/0628/02/11: Արթուր Գրիգորյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթ ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2491/02/11: Դատական ակտերը կարելի է կարդալ [www.datalex.am](http://www.datalex.am) էջում:

11. Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությունը և Գևորգ Ջաքարյանը, Աշխեն Ջաքարյանը, Դավիթ Հարթեյանը, Ակսել Ղազարյանը, Շուշանիկ Ղազարյանը, Հայկ Հակոբյանը, Աիդա Հակոբյանը և Արթուր Մարտիրոսյանը ընդդեմ Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ-ի և Գևորգ Ալթունյանի, Սոնա Թորոսյանի, Նունե Ալեքսանյանի և Էդգար Դավթյանի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2621/02/10: «Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ՍՊԸ-ն ընդդեմ «Առավոտ օրաթերթ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2707/02/10: Դատական ակտերը կարելի է կարդալ [www.datalex.am](http://www.datalex.am) էջում:

12. Արամ Չատինյանն ընդդեմ Գազիկ Շավշյանի, քաղ. գործ թիվ ԵԱՔԴ/1751/02/11: Թերեզա Շահվերդյանն ընդդեմ «Հետք» շաբաթաթերթի լրագրող Ադրինե Թորոսյանի, քաղ. գործ թիվ ԼԴ/0656/02/11: Բենիկ Հարությունյանն ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2427/02/11: Ռուզաննա Ազիզյանն ընդդեմ «Յոթ օր» լրատվական գործակալության, քաղ. գործ թիվ ԵՇԴ/0325/02/12: «Մաս Գրուպ»-ն ընդդեմ Արամ Անտինյանի, քաղ. գործ ԵԱՔԴ/0395/02/12: Դատական ակտերին կարելի է ծանոթանալ [www.datalex.am](http://www.datalex.am) էլեկտրոնային էջում:

տարան ներկայացված քաղաքացիական գործերի՝ ՉԼՄ-ների ազատության վրա ունեցած պոտենցիալ վտանգի տեսանկյունից, ապա եթե նշված 15 գործերով բերվել էր ընդհանուր առմամբ 74 մլն 434,050 դրամի փոխհատուցման պահանջ, բավարարվել է ընդամենը 1 մլն 20,000 դրամի պահանջը, որը կազմում է ներկայացված համընդհանուր դրամական պահանջի 1.4%-ը: Կամ, այլ տեսանկյունից հաշված. 15 գործերով հայցապահանջներից ոչ մեկը չի բավարարվել ամբողջությամբ (այսինքն՝ ոչ մեկով լրատվամիջոցի համար ոչ բարենպաստ դատական ակտ չի կայացվել), 12 գործով կայացվել է ամբողջությամբ բարենպաստ դատական ակտ, իսկ երեքով՝ մասնակի բարենպաստ դատական ակտ: Իսկ եթե գնահատենք ոչ թե միայն 2012 թվականի, այլ 2010-2012թթ. դատական պրակտիկան, ապա պատկերը հետևյալն է. լրատվամիջոցների և լրագրողների դեմ ընդհանուր առմամբ ներկայացվել է 51 դատական հայց, որի շրջանակներում արդեն ավարտված 36 գործերով բերվել է ընդհանուր առմամբ 130,698,350 դրամի պահանջ (նյութական և ոչ նյութական վնասի մասով), որից բավարարվել է 11,286,000 դրամը, այսինքն՝ 8,6%-ը: Ակնհայտ է, որ 2012 թ. ընթացքում դատարաններն ավելի մեծ չափով են սկսել նվազեցնել գույքային պահանջները:

Որպես եզրահանգում՝ վերը նշված դիտարկումները ցույց են տալիս, որ դատական պրակտիկան զարգանում է դրական ուղղությամբ: Զգալիորեն նվազել է դատարան ներկայացվող և ներկայացված դատական գործերի քանակը: Կայուն դատական պրակտիկա է դարձել դատարանների կողմից փոխհատուցման գումարների չափերի զգալի կրճատումը: Անցյալում է մնացել դատարանների կողմից յոթանիշ դրամական փոխհատուցման չափերի սահմանումը: Ավելի հաճախակի են դառնում դեպքերը, երբ հայցվորները դրամական փոխհատուցում չեն պահանջում: Աճում է այն դատական գործերի քանակը, որոնցում կողմերը դատական վեճն ավարտում են հաշտությամբ: Մեծանում է վեճերը արտադատական կարգավորման եղանակներով լուծելու ձգտումը: Ավելանում է այն գործերի թիվը, որոնցում խնդրի լուծումը կողմերը տեսնում են ավելի շատ լրագրողական էթիկայի, քան օրենքի դաշտում: Այս ամենը նշանակում է, որ վիրավորանքի և զրպարտության նորմերի ապաքրեականացումը ծառայում է իր բուն նպատակին:

**Աշոտ Վարելյան**  
**Արա Ղազարյան**

**ՄԱՍ I**

**ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐԸ  
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

## **Դատարանները սկսել են գործի դնել հավասարակշռության նժարը**

2012 թ. հունվար ամսից սկսած՝ լրատվամիջոցների եւ լրագրողների դեմ վիրավորանքի, զրպարտության ու գործարար համբավի պաշտպանության հիմքերով ներկայացվող դատական հայցերի հոսքը սկսեց նվազել: Այս գործընթացի վրա, մեր կարծիքով, էականորեն ազդեց դատարանների մոտեցումը՝ Սահմանադրական դատարանի (ՍԴ) 2011թ. նոյեմբերի 15-ին կայացրած ՍԴՈ-997 որոշումից հետո դատական ակտերի բովանդակությունն էապես փոխվեց: Դատարանները սկսեցին հավասարակշռության նժարը գործի դնել, եւ մի քանի հայցեր, որոնցով դիմողները հանրային անձինք էին, սպասված արդյունքը չունեցան՝ նրանց պահանջած գումարային մեծ փոխհատուցումները մերժվեցին: Նախորդ տարվանից ընթացքի մեջ գտնվող դատական գործերից մի քանիսով արդեն վերջնական դատական ակտեր են կայացվել, եւ դրանցում նկատելի է, որ դատարանները հակված են պրակտիկան զարգացնելու եվրոպական նախադեպերով:

Դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանները վերանայել են իրենց մոտեցումը, եւ անձին վիրավորանքից ու զրպարտությունից պաշտպանելու միակ միջոցը այլեւս գումարային մեծ փոխհատուցումներ տրամադրելը չի համարվում: Վճիռ կայացնելիս կիրառվում են նաեւ ոչ նյութական փոխհատուցման ձեւերը՝ հերքում տվյալ լրատվամիջոցում, ներողության տեսքով հրապարակում: Կարծես հիմնավորվում է այն մոտեցումը, որ դատարան դիմած անձի խնդիրը ոչ թե գումար վաստակելը պետք է լինի, այն էլ՝ օրենքով նախատեսվածի առավելագույն չափով, այլ՝ անձի արժանապատվությունն ու բարի համբավը ոտնահարումից պաշտպանելը: Ավելին, գումարային մեծ չափերով պատիժս ու արժանապատվությունը վերականգնելն արդեն ռիսկային է դառնում հայցվորների համար, ինչպես տեղի ունեցավ փաստաբան Արթուր Գրիգորյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի ներկայացված հայցի դեպքում:

Հիշեցնենք, որ փաստաբանը յուրաքանչյուր վիրավորական մեկնաբանության համար թերթից 3 մլն դրամ փոխհատուցում էր պահանջում, որոնց հանրագումարը կազմել էր 18 մլն դրամ: Սակայն նա հաշվի չէր առել, որ պարտության դեպքում պահանջված գումարի համասնությանը պետական տուրք պետք է վճարեր, որը միայն ընդհանուր իրավասության դատարանում կազմում էր 360 հազար դրամ: Փաստաբանը վերադաս դատական ատյաններում բողոքարկեց դատարանի այդ մոտեցումը՝ ասելով, որ իր համար անընդունելի է պետտուրքի պահանջված չափը եւ հրաժարվում է վճարելուց, քանի որ իր դատական գործը գույքային պահանջ չէ, ինքը իրավունքի խնդիր է վիճարկում, որի համար 4000 դրամ պետուրք պետք է վճարի: Վերաքննիչ դատարանը մերժեց նրան, իսկ Վճռաբեկ դատարանը (ՎԴ), բողոքը վերադարձնելով, փաստորեն հաստատեց, որ համակարծիք է վերաքննիչ դատարանի տեսակետին: Դատարանների այս մոտեցումը ողջունեցին իրավունքի տեսաբանները, ովքեր հիշյալ գործի վերաբե-

րյալ կարծիք հայտնեցին, որ հակառակ դեպքում դատարանը կնպաստեր լրատվամիջոցների սնանկացմանը՝ հնարավորություն տալով չնչին գումար վճարելով գումարային փոխհատուցման մեծ պահանջներ ներկայացնել: Դատարանների նման մոտեցման դեպքում չափազանց դիսկային է դառնում գումարային պահանջ ներկայացնելը, եւ այն կհարկադրի յուրաքանչյուր դիմողի չափավորություն պահպանել, քանի որ պարտվելու դեպքում եւ պահանջված գումարի համամասնությամբ պետտուրք պետք է վճարի, եւ պատասխանողի դատական ծախսերը փոխհատուցի:

Դատարանի այս մոտեցման ազդեցությունն անմիջապես նկատվեց ընթացիկ դատական գործերի վրա. օրինակ՝ Լեոնապատի համայնքապետ Վանո Եղիազարյանը Վանաձորի դատարան մի քանի հայց էր ներկայացրել վիրավորանքի ու զրպարտության հիմքերով եւ մինչեւ ՍԴ-ի հայտնի որոշումը լուրջ հաջողություններ էր ունեցել: Սակայն դրանցից մեկով՝ «Վանո Եղիազարյանն ընդդեմ «Հետք»-ի լրագրող Ադրինե Թորոսյանի»՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, հայցի քննությունն ավարտվեց նրա պարտությամբ: Դատաքննության ընթացքում, թեբեւ կանխազգալով իր պարտությունը, նա հրաժարվեց հայցապահանջով ներկայացված 1 մլն դրամից եւ այն փոխարինեց 1 լումայով: Դատարանը մերժեց հայցապահանջը եւ Վանո Եղիազարյանին պարտավորեցրեց փոխհատուցել լրագրող Ադրինե Թորոսյանի դատական ծախսերը՝ 150 հազար դրամ փաստաբանի համար:

Ակնհայտ է, որ վերջին ամիսներին ներկայացված հայցերով գումարային պահանջները հիմնականում նվազել են, հայցվորները ձեռնպահ են մնում օրենքով նախատեսված առավելագույնը պահանջելուց, քանի որ եւ ՍԴ որոշումը, եւ ՎԴ-ի նախադեպային որոշումը ստորադաս դատարաններին ուղղորդում են նման դեպքերում քննության առնել լրատվամիջոցի ֆինանսական հնարավորությունները եւ այլն: Վերջին ամիսների զարգացումները ցույց են տալիս, որ գումարային փոխհատուցման մեծ պահանջներ ներկայացրած անձինք հետո հրաժարվում են գումարից կամ այն փոխարինում են խորհրդանշական թվով:

**«Ձինվոր» հ/կ-ի խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանն ընդդեմ «Հրապարակ» թերթի ներկայացրած հայցով պահանջում էր հերքել իր մասին հրապարակված զրպարտող տեղեկությունները եւ փոխհատուցում վճարել 2 մլն դրամ: Սակայն հրաժարվեց գումարային պահանջից՝ բավարարվելով միայն զրպարտող տեղեկությունները հերքելու պահանջով:**

Ուրախալի է նաեւ այն հանգամանքը, որ դատարաններն արդեն հայցերը բավարարելիս նվազեցրել են փոխհատուցման միլիոնների շեմը՝ այն հասցնելով նվազագույնի: Փոխհատուցման ենթակա հիմնական պահանջը, որը հայցվորները պնդում են, դատական ծախսերի փոխհատուցումն է: Դատական ծախսերը, որոնք ներառում են նաեւ փաս-

տաբանի ծառայության վճարը, դարձյալ հիմնականում բավարարվել են ողջամտության սահմաններում: Հիշեցնենք, որ նախորդ տարիներին փաստաբանական ծառայության վճարը նույնպես հատում էր միլիոնի սահմանագիծը:

Առայժմ բավարարված գումարային չափերով գոհացուցիչ չէ «Գլենդել Հիլզ»-ն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի գործի ընթացքը, որով «Գլենդել Հիլզ»-ը «Ժամանակ» օրաթերթից պահանջում էր բռնագանձել 2 մլն դրամ զրպարտության համար, ինչպես նաև 500 հազար դրամ՝ դատական ծախսերի համար, հերքել 2010 թ. օգոստոսի 26-ին հրապարակած «1000 դոլար լույթյան դիմաց» հոդվածը: Դատարանի վճռով «Ժամանակ» օրաթերթից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձվի 200 հազար դրամ՝ զրպարտության, 300 հազար դրամ՝ փաստաբանական ծառայությունների համար: Թերթը նաև պետք է հերքի վերոնշյալ հոդվածում հայցվորի գործարար համբավն արատավորող (զրպարտող) տեղեկությունները:

Սա նշանակում է, որ դատարանները վերանայել են իրենց մոտեցումը հայցերի քննության նկատմամբ, սակայն լիովին չեն ձեռքագաղտվել դրամական փոխհատուցումը զրպարտությունը չեզոքացնելու պայման դիտարկելուց: Նաև՝ միշտ չէ, որ պատճառաբանում են, թե ինչու հենց դրամական փոխհատուցումը կարող է լինել անձին վիրավորանքից ու զրպարտությունից պաշտպանելու միջոց: Մինչդեռ, Եվրոպական դատարանի նախադեպերի եւ դրանց մեկնաբանությունների մեջ մշտապես շեշտվում է, որ **արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար:**

Դատական պրակտիկան այս ընթացքում եւս մեկ դրական միտում է արձանագրել՝ դատական վեճերից երեքը հանգուցալուծվել են կողմերի միջեւ հաշտության համաձայնությամբ («Առիթմալուրգիական սրտաբանական կենտրոնն ընդդեմ «Առավոտի»» եւ ««Ետովայի վկաներ» կրոնական կազմակերպությունն ընդդեմ Հանրային հեռուստաընկերության» գործերի մասին տես՝ էջեր 75 եւ 82):

**BlogNews.am-ի գլխավոր խմբագիր Արամ Անտինյանը հայտնում է, որ «Սաս-գրուպ» ՍՊԸ-ի և BlogNews.am կայքի միջև տարածայնություններն այլևս հարթված են: Համացանցում բլոգերներից մեկը մի նյութ էր հրապարակել, որում «Սաս-գրուպ» ՍՊԸ-ին մեղադրում էր վաճառվող ապրանքների ժամկետները կեղծելու և փաստացի ժամկետանց ապրանք վաճառելու մեջ: Բլոգերը նաև պնդել էր, որ ժամկետանց ապրանք օգտագործելու հետևանքով թունավորվել է:**

**BlogNews.am-ը հրապարակել էր վերջինիս հոդվածը, որի արդյունքում «Սաս-գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կապվել էր BlogNews-ի խմբագրության հետ և խնդրել նյութը կայքից հանել: Քանի որ բլոգերն ի հայտ չէր եկել, կայքի գլխավոր խմբագիր Ա. Անտինյանը նյութը հեռացրել էր՝ փորձելով կանխել նրա հետագա տարածումը: Մի շարք էլեկտրոնային լրատվամիջոցներ, հղում անելով BlogNews.am կայքին, վերահրապարակում են այն, ինչի արդյունքում «Սաս-գրուպ»-ը դիմում է դատարան՝ BlogNews.am-ի գլխավոր խմբագրից պահանջելով 2.000.000 դրամ փոխհատուցում:**

**«Սաս-գրուպ» ընկերությունը BlogNews.am կայքի հետ հաշտվելու որոշում է կայացրել: «Սաս-գրուպ» ընկերության և BlogNews-ի շահերը ներկայացնող «Defense» իրավաբանական ընկերության ձեռք բերած պայմանավորվածությունների արդյունքում, ինչպես հայտնում է BlogNews.am-ը, «Սաս-գրուպ» ՍՊԸ-ն հետ է վերցնում իր հայցադիմումը՝ հաստատելով, որ այլևս չունի ոչ մի առարկություն BlogNews.am-ի դեմ: Միաժամանակ BlogNews.am-ը հաստատում է, որ չունի ոչ մի պահանջ «Սաս-գրուպ» ՍՊԸ-ից:**

2012թ. առաջին կիսամյակը նշանակալից էր նրանով, որ Վճռաբեկ դատարանը վերջապես վիրավորանքի ու զրպարտության գործերից մեկով որոշում կայացրեց՝ քննելով Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին գործով պատասխանողի ներկայացրած վճռաբեկ բողոքը: Մասնագետների կարծիքով՝ այս որոշումով, թեկուզե ուշացած, բայց ՎԴ-ն կարգավորեց մի շարք հարցեր, որոնք բաց էին մնացել ՍԴ-ի որոշման մեջ: Դրանցից մեկը վերաբերում է այն հարցին, թե լրատվամիջոցի համար ով կարող է լինել տեղեկատվության աղբյուր: Ըստ Վճռաբեկի՝ «տեղեկատվության աղբյուրն» այն իրավաբանական եւ ֆիզիկական անձն է, որը ինֆորմացիայի փոխանցումը կամ տարածումը կատարել է կոնկրետ միջոցներով եւ նշում է ավանդմանը՝ «տեղեկատվության աղբյուր են հանդիսանում հեղինակները և լրատվական գործակալությունները»: Նախադեպը այս մասով գնահատվեց որոշակի առումով լրագրողական գործունե-

ության սահմանափակում, քանի որ դրանով կնվազեցվի լրագրողների դերակատարությունը, կանտեսվի գերակա հանրային շահը:

Իրավակարգավորում ստացավ նաեւ այն հարցը, թե ով է պատասխանատվություն կրում այն դեպքում, երբ լրատվամիջոցը հրապարակում է, օրինակ, էլեկտրոնային միջոցներով քաղաքացիական ինչ-որ խմբից ստացված տեղեկատվությունը: ՎԴ-ն այս դեպքի համար ամրագրեց հետեւյալը՝ եթե նույնիսկ տեղեկատվության վերարտադրությունը բարեխղճորեն է կատարվել, դա չի նշանակում, որ լրատվամիջոցը կարող է ինքնըստինքյան ազատվել պատասխանատվությունից: Աղբյուրը, որից օգտվել է լրատվամիջոցը, ըստ այս որոշման, պետք է հանդիսանա հեղինակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասի իմաստով:

ՎԴ-ն իր որոշման մեջ անդրադարձավ նաեւ վիրավորանքի եւ զրպարտության գործերով հայցային վաղեմության ժամկետի հարցին, որի վերաբերյալ դատարանները տարբեր մոտեցում ունեին. մեկը 3 տարվա վաղեմության ժամկետ էր կիրառում, մյուսը՝ 1 ամսվա, մեկ ուրիշը՝ 6 ամսվա վաղեմության ժամկետ: ՎԴ-ն նշեց, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ զրպարտությունը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է զրպարտության կամ վիրավորանքի մասին վեց ամիսը լրանալուց հետո, բաց է թողնում հայցային վաղեմության ժամկետը: Սակայն, այս որոշումով հարցի իրավակարգավորումը, ըստ մասնագետների, դարձյալ անորոշ է. Վճճաբեկը լիովին չի հստակեցրել հարցը, թե երբ անձը դատարան է դիմել մեկամսյա ժամկետի խախտումով, բայց ոչ 6-ամսյա ժամկետը բաց թողնելով, դատարանը պետք է ընդունի վարույթ ու քննի գործը, թե ոչ:

Այս բացը թողնվեց դատական պրակտիկայի կարգավորմանը, եւ այն շատ չուշացավ. այդ ժամանակամիջոցում Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվում էր «Արման Ավետիսյանն ընդդեմ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանի» հայցը, որում նման խնդիր կար: Արման Ավետիսյանը դատարան էր դիմել հրապարակման մասին իմանալուց հետո դիմելու մեկամսյա ժամկետը բաց թողնելով: Դատարանն այս գործով վճիռը կայացրեց ՎԴ-ի հիշյալ նախադեպից հետո եւ, կիրառելով ՎԴ-ի որոշման մեկնաբանությունը, միայն հայցային վաղեմության ժամկետի խախտման հանգամանքը նկատի ունենալով, հայցը մերժեց ամբողջությամբ:

Հատված վճռից. «Օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ նշված հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության պահանջով դատարան հայց ներկայացնելու մեկամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքի կամ զրպարտության մասին, իսկ նույն հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետը այն առավելագույն ժամկետն է, որի դեպքում կարող է հայց հարուցվել դատարան վիրավորանքի կամ զրպարտության պահից: Այսինքն՝ տվյալ դեպքում անհրաժեշտ է վերը նշված երկու ժամկետների միաժամանակյա առկայությունը՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին հայցվորի իմանալու պահից չպետք է անցած լինի մեկ ամսից ավել ժամանակ, եւ վիրավորանքի կամ զրպարտության պահից չպետք է անցած լինի վեց ամսից ավել ժամանակ: Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը լրացել է, քանի որ հայցը դատարան է ներկայացվել վիրավորանքի կամ զրպարտության մասին իմանալու պահից մեկ ամսից ավել ժամանակ անցնելուց հետո, իսկ վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամիս ժամկետը լրացած չլիներ: Կանգալանքը չի կարող արգելք հանդիսանալ հայցային վաղեմություն կիրառելու համար»:

Այս ժամանակահատվածում Երեւանի Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում քննվեց եւս մեկ հետաքրքիր գործ՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցին առնչվող առաջին գործը: «Դ. Իոաննիսյանի, Բ. Պողոսյանի, Հ. Սիմոնյանի՝ ընդդեմ «Մեկ ազգ» կուսակցության՝ պատասխանող կազմակերպությունից հայցվորների պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորելու համար գումարի բռնագանձման, ինչպես նաև հրապարակային ներողություն խնդրելու պահանջի մասին»: Դատարանը հունիսի 28-ին կայացրած վճռով կիրառեց «հրապարակային հայտարարություն» հասկացության գնահատման նոր՝ **«հասանելի է բոլորին»** չափանիշը, որ մինչ այդ չէր կիրառել ոչ մի դատարան, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշման մեջ: Ըստ այդմ, սոցիալական ցանցում տեղադրված նյութը կամ տարածված խոսքը ցանկացած հանգամանքում համարվում է հրապարակային, քանի որ հասանելի է բոլորին: Նման դիրքորոշումը հաստատում է այն եզրահանգումը, ըստ որի սոցիալական ցանցերը, մասնավորապես՝ Ֆեյսբուքը, վաղուց դադարել են լինել փակ միջավայր, քանի որ այդ միջավայրում տեղաշարժվող խոսքը հասանելի է բոլորին, հետևաբար դա հանրային դաշտ է:

Ամփոփելով 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում լրատվամիջոցների եւ լրագրողների դեմ վիրավորանքի, զրպարտության ու գործ-

ծարար համբավի պաշտպանության դատական գործերի քննության ընթացքը՝ կարող ենք հաստատել հետեւյալը.

1. Դատական հայցեր ներկայացնողները, ի տարբերություն նախորդ տարիների, երբ հանրային անձինք էին, 2012-ին հիմնականում քաղաքացիներ են, որոնց հայցապահանջներով որոշ դեպքերում լրատվամիջոցները դատաքննությանն ընդգրկվում են իբրեւ երրորդ անձ:
2. Պաշտոնյաները ձեռնպահ են մնում դատական հայցեր հարուցելուց, քանի որ դատարանները հայցերը մերժելիս վճիռներում ամրագրեցին այն հանգամանքը, որ նրանք հանրային անձինք են եւ նվազ պաշտպանություն պետք է ակնկալեն:
3. Դատարաններն արդեն կայուն մոտեցում են ցուցաբերում եւ հետևողականորեն ու զգալի չափով նվազեցնում են գումարային պահանջները, այդ թվում՝ որպես դատական ծախսեր ներկայացվող գումարային պահանջները:
4. Հայցվորները չեն խուսափում դատական վեճը հաշտությամբ լուծելուց:
5. Միաժամանակ, լրատվամիջոցների դեմ կայացված վճիռներում դատարաններն ու մասնագիտական կազմակերպություններն արձանագրում են, որ լրագրողները միշտ չէ, որ բարեխղճորեն են իրականացնում իրենց մասնագիտական գործունեությունը:

**Սառա Պետրոսյան**



## **Վճռաբեկ դատարանի որոշումը որոշակիորեն սահմանափակում է լրագրողների գործունեությունը**

*Վիրավորանքի եւ զրպարտության գործով Վճռաբեկ  
դատարանի 2012 թ. ապրիլի 27-ին կայացրած  
որոշումը մեկնաբանում է իրավաբան  
Արա Ղազարյանը:*

**-Վերջապես Վճռաբեկ դատարանը հրապարակեց վիրավորանքի  
եւ զրպարտության գործերով շատ սպասված որոշումը: Ինչ հար-  
ցեր կարգավորվեցին դրանով:**

-Շատ սպասված, բայց մի փոքր ուշացած որոշում. ես դեռեւս մեկ տարի առաջ եմ հայտնել, որ շատ անհրաժեշտ է, որ Վճռաբեկ դատարանը (ՎԴ) վիրավորանքի եւ զրպարտության գործերով արտահայտի իր դիրքորոշումը: Այդ հնարավորությունն ուներ ՎԴ-ն, սակայն չօգտվեց դրանից, եւ Սահմանադրական դատարանը (ՍԴ) Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա կայացրած որոշումով արտահայտեց մի շարք դիրքորոշումներ: Ես ՍԴ-ի որոշման դերը չեմ նվազեցնում, այն նշանակալի ազդեցություն ունեցավ վիրավորանքի եւ զրպարտության գործերով հետագայում կայացված մի քանի դատական ակտերի վրա, սակայն շատ կարեւոր էր, որ այդ դիրքորոշումներն արտահայտվեին բարձրագույն դատական ատյանի, այլ ոչ թե ՍԴ-ի կողմից:

Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին գործով պատասխանողի բերած վճռաբեկ բողոքի հիման վրա ՎԴ-ն կայացրեց իր որոշումը: Այն մի շարք կետերով արտահայտում է նույնանման եզրահանգումներ, ինչ ՍԴ-ն, բայց միևնույն ժամանակ կարգավորել է մի շարք խնդիրներ, որոնց ՍԴ-ն չէր անդադարձել: Առաջին հերթին իրավակարգավորում է ստացել այն հարցը, թե ով է կրելու պատասխանատվության բեռը այնպիսի դեպքերում, երբ լրատվամիջոցը հրապարակել է, օրինակ, էլեկտրոնային միջոցներով քաղաքացիական ինչ-որ խմբից ստացված տեղեկատվությունը:

-Ըստ քննարկվող որոշման՝ եթե լրատվամիջոցը հրապարակում է իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպության հայտարարությունը կամ տեղեկատվությունը, պատասխանատվությունը կրում է լրատվամիջոցը, **ինչպես կմեկնաբանեք սա:**

-Լրատվամիջոցը ստացել է տեղեկատվություն ինչ-որ աղբյուրից և որոշել է հրապարակել այն՝ գրեթե բառացիորեն կրկնելով ստացված տեղեկատվության բովանդակությունը, այնուհետև հայտնվում է ոմն անձ, ով հայցում է հերքում, պատասխանի իրավունք կամ դրամական փոխհատուցում: Փաստաբանը հայցադիմում գրելիս բախվում է այս կարետոր հարցադրմանը՝ ո՞վ է պատասխանատվություն կրում հրապարակման համար՝ լրատվամիջոցը, որը հրապարակել է տեղեկատվությունը, թե՛ տարածողը: ՎԴ-ն այս դեպքի համար ներմուծել է մի քանի հասկացություններ՝ ասելով, որ եթե նույնիսկ տեղեկատվության վերարտադրությունը բարեխիղճ կերպով է կատարվել, դա չի նշանակում, որ լրատվամիջոցը կարող է ինքնըստինքյան ազատվել պատասխանատվությունից: Աղբյուրը, որից օգտվել է լրատվամիջոցը, ըստ այս որոշման, պետք է հանդիսանա հեղինակ՝ «<< քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասի իմաստով: Ինչ է սա նշանակում: Հեղինակ հասկացության մասին ՎԴ-ն իր որոշման 14-րդ էջում հետեյալ մեկնաբանությունն է տալիս. «տեղեկատվության աղբյուր» հասկացությունը, ըստ Վճռաբեկի, այն իրավաբանական եւ ֆիզիկական անձն է, որը ինֆորմացիայի փոխանցումը կամ տարածումը կատարել է կոնկրետ միջոցներով եւ տալիս է ավանումները՝ «տեղեկատվության աղբյուր են հանդիսանում հեղինակները և լրատվական գործակալությունները»: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիշատակված դրույթներում ամրագրված անձի *հրապարակային ելույթները, պաշտոնական փաստաթղթերը, հեղինակային ստորագործությունները տեղեկատվության աղբյուրների կողմից օգտագործվող միջոցներ են:*

Այս որոշումով ՎԴ-ն ստիպում է, որ լրատվամիջոցները մտնեն էթիկայի դաշտ: Եթե լրատվամիջոցն ունի տեղեկատվության աղբյուրներ եւ վստահում է այդ աղբյուրներին, թող ինֆորմացիան տարածի, բայց եթե ինֆորմացիան տարածում է այնպիսի աղբյուրի անունից, որը իրավաբանական անձ չէ, չպիտի ընդունի: Այս հարցի իրավակարգավորումը բաց էր ՍԴ-ի որոշման մեջ, որովհետեւ նրա խնդիրներն այլ էին, եւ այդ բացը լրացրեց ՎԴ-ն այս որոշումով: Ահա նման հանգամանքներում ողջունելի է այս որոշումը:

**-Տեղեկատվության աղբյուրի մասին ՎԴ-ի որոշման դատողություններին տարբեր մեկնաբանություններ տրվեցին, որոշ կարծիքների համաձայն՝ աղբյուր հասկացության Վճռաբեկի թվարկումը սահմանափակում է լրագրողների տեղեկատվություն ստանալու եւ տարածելու իրավունքը:**

-Տեղեկատվության աղբյուր հասկացության վերաբերյալ, որը նշվում է 1087.1 հոդվածի 9-րդ մասում, ասվում է, որ աղբյուր կարող են հանդիսանալ եւ ֆիզիկական, եւ իրավաբանական անձինք: Այս գործով վիճահարույց տեղեկատվությունը «Ժամանակ» օրաթերթը ստացել է իր աղբյուրից՝ Անտոն Առաքելովից, որը մասնավոր անձ էր:

Վճռաբեկը նշում է, որ ընկերությունը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով չի կարող համարվել տեղեկատվության աղբյուր, քանի որ չի հանդիսանում տեղեկատվության տարածման որեւէ միջոցի հեղինակ կամ լրատվական գործունեություն իրականացնող: Սա նշանակում է, որ եթե լրատվամիջոցն օգտվում է որեւէ մասնավոր անձի տեղեկատվությունից, շուկից, ասեկոսեից, պատասխանատվության ռիսկը վերցնում է իր վրա: Այսինքն՝ լրատվամիջոցն ինքն է որպես պատասխանող կողմ գնում դատարան: Վճռաբեկը նշում է, որ նման դեպքերում ռիսկը լրատվամիջոցինն է, եթե դու նույնիսկ քո լրատվության աղբյուր հանդիսացող մասնավոր անձին բացահայտեցիր դատարանում, միեւնույն է, պատասխանող կողմը դու ես լինելու: Այսինքն, եթե դու ուզում ես օգտվել ոչ ֆիքսված աղբյուրներից, հետագայում դա չի կարող պատասխանատվությունից ազատել քեզ: Տեղեկատվության աղբյուրը պետք է նշել լրատվությունը տարածելիս, իսկ եթե չի նշվում, ուրեմն լրատվամիջոցն է ստանձնում պատասխանատվությունը: Այդուհանդերձ, թեև վերևում նշվեց, որ նման իրավակարգավորումը դրական միտում ունի, բայց միաժամանակ այն վտանգավոր տարր է պարունակում, եթե չարաշահումով կիրառվի: Այն կարող է սառեցնող ազդեցություն ունենալ լրատվամիջոցների ազատության վրա՝ գաղտնի աղբյուրներից, շուկներից օգտվելու ազատության իմաստով: Նման դեպքերում լրագրողը պետք է օգտվի մյուս պաշտպանությունից՝ հրաժարվի բացահայտել աղբյուրը՝ դա հիմնավորելով տեղեկատվության հանրային նշանակությամբ:

**-Պրն Ղազարյան, հիշյալ որոշումով ինչպես են կարգավորվում վիրավորանքի կամ գրպարտության գործերով դատարան դիմելու ժամկետները, որը պրակտիկայում տարբեր կերպ է մեկնաբանվում՝ 1-6 ամիս, սակայն այնքան էլ պարզորոշ չէ, թե որ պահից է սկսվում հայցային վաղեմության կիրառումը:**

-Հայցային վաղեմության ժամկետի հարցի վերաբերյալ կիրառական պրակտիկայում տարբեր մոտեցումներ կան, եւ այս տարի մեր իրականացրած մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ ունենք դատական գործեր, որի դեպքում մի դատարանը կիրառել է 3 տարվա վաղեմության ժամկետ, մեկ այլ դատարան՝ 1 ամսվա, մեկ ուրիշը՝ 6 ամսվա վաղեմության ժամկետ: Այսինքն՝ այս հարցում դատարանում անհատակություն կար: ՎԴ-ն նկատում է, որ օրենքի միատեսակ կիրառության անհրաժեշտություն կա եւ պետք է դիրքորոշում արտահայտի այս հարցով: Վիրավորանքի եւ գրպարտության գործով հայցային վաղեմության ժամկետը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ կետը շատ հստակ է կարգավորում՝ սահմանում է մեկ ժամկետ երկու էլեմենտով: Մեկ էլեմենտը եթե խախտվում է, երկրորդն առ ոչինչ է: ՎԴ-ն իր որոշման մեջ նշել է, որ հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ գրպարտությունը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է գրպարտության կամ վիրավորանքի մասին վեց ամիսը լրանալուց հետո, բաց է թողնում հայցային վաղեմության ժամկետը: Սակայն, այս որոշումով հարցի իրավակարգավորումը դարձյալ անորոշ է: Վճռաբեկն իր որոշումով շատ աղոտ է անդրադարձել

այս հարցին, նա լուում է 1 ամսվա մասին, չի անդրադարձել 1087.1 հոդվածի 13-րդ կետով նշված առաջին էլեմենտին՝ եթե անձը դատարան է դիմել մեկամսյա ժամկետի խախտումով, բայց ոչ 6-ամսյա ժամկետը բաց թողնելով՝ դատարանը պետք է ընդունի վարույթ ու քննի, թե ոչ: Ունենք վճիռ, որտեղ անձը դատարան է դիմել իմանալու պահից մեկ ամիս հետո, սակայն դատարանն ասել է՝ որպեսզի իրավունքները լայն մեկնաբանեն, հիմնվում են 6-ամսյա ժամկետի վրա: Մնում է հետեւել, թե դատական պրակտիկան ինչպես կգարգանա:

**-Ձեր կարծիքով, այս որոշումով հրապարակային վիրավորանքը լիարժեք է սահմանված: Խոսքս վերաբերում է երրորդ անձի ներկայությամբ արված վիրավորական արտահայտություններին, որը պրակտիկայում չի կարգավորվել:**

-ՎԴ-ն սահմանեց, որ բացի տպագրության, զանգվածային լրատվության միջոցներով, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներից բացի՝ հրապարակային են նաեւ առնվազն երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները: Վերջիններս 3-րդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաեւ այն դեպքում, երբ 3-րդ անձը եւս կատարում է արտահայտություններ եւ ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ:

**-Վերջերս այս թեմայով տեղի ունեցած քննարկումներից մեկի ժամանակ սավեց, որ դատարանները կայացրած դատական ակտերով լրատվամիջոցին պարտավորեցնում են կատարել գործողություններ, որի պահանջը կողմը չի ներկայացրել: Ձեր ուսումնասիրություններում հանդիպել եք նման երեւույթի:**

-Այդ պրակտիկան, երբ դատարանը լրատվամիջոցի վրա դրել է օրենքով չնախատեսված պարտավորություններ, արդեն վերացել է, այդ խնդիրը ավելի վաղ շրջանի դատական գործերում է նկատվել, երբ դատական պրակտիկան դեռ բավարար չափով չէր ծավալվել: Օրինակ՝ մի գործով վիճահարույց հրապարակումը հրապարակվել է 7-րդ էջում, բայց դատարանը պարտավորեցրել էր հերքման պահանջը հրապարակել առաջին էջում, այնուհետև պարտավորեցրել է ներողություն խնդրել այն դեպքում, երբ նման պահանջ հայցվորը չէր ներկայացրել (Հրաչ Քեշիշյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի):

**-Տարբեր դատարաններ զրպարտության եւ վիրավորանքի գործերով միօրինակ վճիռներ են կայացնում, որոնցում նույն սխալը կրկնվում է, եւ կարծիք կա, որ դատավորները կամ մի աղբյուրից են օգտվում, կամ նույն մարդն է գրում: Ո՞րն է այդ միօրինակության ու նմանության պատճառը:**

-Մի շարք վճիռներում մեջբերումներ էին արվում Եվրոպական դատարանից, որը Եվրոպական դատարանն իրականում չէր արտահայտել: Գրվում էր՝ «լրատվամիջոցները պարտավոր են օգտվել բացառապես ճշգրիտ փաստերից եւ հղում էր արվում Պեդերսոնի գործին: Սակայն այդ գործում նման բան չկար, ընդհակառակը՝ Եվրոպական դատարանը թույլ է տալիս, որ լրագրողը սխալվի: Մոտ 4-5 տարբեր

գործերով տարբեր դատարանների կայացրած վճիռներում այս սխալը կրկնվում էր, բայց ՎԴ-ի որոշումով այդ հարցն արդեն կարելի է լուծված համարել:

**-Ներկայումս վիրավորանքի եւ զրպարտության գործերով դատական գործընթացներում ինչ զարգացումներ կան, վիճակագրության եւ իրավունքի զարգացման առումով դ՞ր փոփոխում ենք գտնվում:**

-2012 թ. հունվար ամսից սկսած՝ նմանատիպ գործերի հոսքը դատարաններ սկսեց նվազել, եւ մարտ ամսին արդեն գրեթե զրոյական վիճակ էր: Կարծիք կար, որ այն ժամանակավոր դադար էր՝ պայմանավորված ընտրություններով, սակայն ընտրություններն ավարտվեցին, իսկ դատարաններում նոր գործերի հոսք չկա: Այսինքն՝ պատճառը ոչ թե ընտրություններն էին, այլ այն հանգամանքը, որ դատարան դիմելու ռիսկային գործոնն է աճել: Պատճառները երկուսն են.

ա) դատարաններն արդեն կայուն մոտեցում են ցուցաբերում եւ հետևողականորեն ու նշանակալից չափով կրճատում են գումարային պահանջի չափերը,

բ) երբ անձը դիմում է դատարան, նրա մասին տեղեկատվության հոսքն ավելի է մեծանում, և խնդիրը հանրայնացվում է, որը կարող է ստիպել հայցվորին վերանայել իր դիրքորոշումը: Եվ հայցվորները ներկայումս մինչև դատարան դիմելը կամ դիմելուց հետո փնտրում են վեճի լուծման այլընտրանքային մեխանիզմներ: Նկատելի է, որ վերջին մեկ տարում դատարաններում ավելի շատ էին հաշտության դեպքերը, առավել շատ են դեպքերը, երբ հայցվորը ներկայացնում է զուտ հերքման կամ պատասխանի իրավունքի պահանջ՝ առանց հայցելու գումարային փոխհատուցում: Սա այն ուղղությունն է, որ տանում է դեպի ժողովրդավարական հասարակարգ, դատարան մտնելը ծայրահեղ միջոց պետք է լինի, իսկ մինչ այդ կողմերը պետք է փնտրեն արտադատական լուծումներ: Ընդ որում, դրան պետք է մեծապես նպաստեն փաստաբանները: Ըստ իս՝ պրոֆեսիոնալ է ոչ թե այն փաստաբանը, ով շահում է գործը դատարանում, այլ նա, ով արտադատական լուծումներ է գտնում: Եթե ուսումնասիրենք դատական պրակտիկան, կտեսնենք, որ այդպիսի փաստաբաններ կան:

Հարցազրույցը՝ Սառա Պետրոսյանի



Արթուր Գրիգորյան

## «Հրապարակի» գործելաոճում դատարանը դիտավորություն չգտավ

### Այդուհանդերձ, մեկնաբանությունները կայքերում պետք է վերահսկվեն

2011թ. դեկտեմբերին Հայաստանում նախադեպը չունեցող մի դատավարություն սկսվեց. փաստաբան Արթուր Գրիգորյանը պատասխանատվության էր կանչել «Հրապարակ» օրաթերթին՝ ընթերցողների՝ իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորող թվով 6 մեկնաբանությունների համար: Աննախադեպ էր նաեւ ակնկալվող փոխհատուցումը՝ 18 մլն դրամ (3 մլն դրամ յուրաքանչյուր մեկնաբանության համար):

Թերթի էլեկտրոնային կայքում՝ hrparak.am-ում, 2011թ. օգոստոսի 10-ին հրապարակված «Քաղաքացիներն անբարեխիղճ փաստաբանների զրհ» հոդվածի ներքո տեղադրված մեկնաբանությունների մեջ քաղաքացիներից մեկը գրել էր, որ Արթուր Գրիգորյանի պատճառով կորցրել է բողոքարկելու իրավունքը՝ զուտ իր բողոքը ուշացնելու պատճառով: Մեկ այլ քաղաքացի գրել էր, որ փաստաբանը 600 հազար դրամ է վերցրել իրենից և հարցը փորձել միջնորդություններով լուծել:

Հունվարի 13-ի նիստին հայցվոր Ա. Գրիգորյանի ներկայացուցիչ Տիգրան Աթանեսյանը դատարանին ներկայացրեց հայցապահանջը, համաձայն որի՝ վերոնշյալ հոդվածի ներքո առկա մեկնաբանություններից յուրաքանչյուրը պարունակում է և՛ զրպարտություն, և՛ վիրավորանք: Հայցվորը յուրաքանչյուր զրպարտության համար պահանջում է 2 մլն դրամ, յուրաքանչյուր վիրավորանքի համար՝ 1 մլն դրամ, և 6 մեկնաբանությունների համար ընդհանուր գումարը կազմում է 18 մլն դրամ:

Մատնանշելով Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ի որոշումը, համաձայն որի՝ հայցվորը գումարային պահանջ ներկայացնելիս պետք է հաշվի առնի պատասխանողի ֆինանսական վիճակը, որպեսզի պատասխանողը, տվյալ դեպքում՝ «Հրապարակ» օրաթերթը, սնանկության եզրին չկանգնի, հայցվորը դատարանից

խնդրեց պարտավորեցնել՝ պատասխանողից հոգուտ իրեն բռնագանձել ամսական 250.000 ՀՀ դրամ մինչև 18 մլն դրամը լրանալը:

S. Աթանեսյանը հասցված վնասի ապացուցման բեռը վերցրեց իր վրա, իսկ պատասխանողի ներկայացուցիչ Գևորգ Գևորգյանը ներկայացրեց իր դիրքորոշումը ապացուցման բեռի կապակացությամբ, համաձայն որի՝ «Հրապարակ» օրաթերթը պետք է ապացուցի հետևյալ փաստերը.

1. ըվ է պատասխանատու ինտերնետային կայքում մեկնաբանությունների տեղադրման համար,
2. ըվ է պատասխանատու կայքում մեկնաբանությունների տեղադրումը սահմանափակելու համար,
3. արդյո՞ք ընկերությունը պետք է պատասխանատվություն կրի նշված մեկնաբանությունների համար,
4. արդյո՞ք ընկերությունը վիրավորանք հասցրած և զրպարտություն կատարողն է:

Ըստ Գ. Գևորգյանի՝ պատասխանողը չի կարող կրել վիրավորանքի և զրպարտության ապացուցման բեռը, քանի որ ընկերությունը չի վիրավորել և չի զրպարտել փաստաբանին և իրավասու չէ նման փաստերը ապացուցել դատարանում:

Դատարանը բաժանեց ապացուցման բեռը կողմերի միջև հետևյալ կերպ. հայցվորը պետք է ապացուցի իրեն պատճառված վնասը, ինչպես նաև ապացուցի, որ պատասխանողը պարտավոր էր կամ իրավունք ուներ թույլ չտալու, որ քաղաքացիները նման մեկնաբանություններ գրեին: Իսկ պատասխանողը, բացի վերը թվարկած փաստերի ապացուցման բեռից, նաև պետք է ապացուցի մեկնաբանությունների համապատասխանությունը իրականությանը:

Հայցվորը հավելեց, որ վնասի ապացուցման մասով դատաքննությանը կներկայացնի մի շարք հոդվածներ, որոնք հրապարակվել են թերթում իր վստահորդի վերաբերյալ այլ անձանց կողմից: Այսքանով գործով նախնական դատական նիստն ավարտվեց, և դատաքննության օր նշանակվեց փետրվարի 24-ը:

## **Փաստաբանի կյանքի խնդիրն է դարձել օրաթերթը փակելը**

Փետրվարի 24-ի նիստին հայցվորի ներկայացուցիչ Տիգրան Աթանեսյանը դատարանին ներկայացրեց «Հրապարակ» օրաթերթի 2011թ. օգոստոսի 10-ի համարում տպագրված «Քաղաքացիներն անբարեխիղճ փաստաբանների գրի» հոդվածը, որը, ըստ փաստաբանի, պարունակում է 6 մեկնաբանություն, որոնք հայցվորի պատիվը և արժանապատվությունը արատավորող արտահայտություններ են: Այդ մեկնաբանություններն են.

**ՍԱՀԱԿ** -Արթուր Գրիգորյանի պատճառով Հյուսիսային պողոտայում կորցրեցինք բողոքարկելու իրավունք զուտ իրա բողոքն ուշացնելու պատճառով... Հետո պարզվեց՝ էդ փողի դիմաց ա արել: Ինչքան ժամանակ փնտրում էի, որ սատկացնեմ շան պես... Բացի դրանից, ինչ այլանդակ վարքագիծ ունի, էդ արդեն Փաստաբանների պալատը թող

փորձի կարգավորել: Նման փաստաբաններին սենց պաշտպանելով՝ Սահակյան Ռուբիկն իրան ա որակագրկում եւ ընդհանրապես փաստաբանների ինստիտուտը:

**ԳԱՐԻԿ** – Էս անդուր լակոտ փաստաբան կոչեցյալը ոչ այլ ինչ է, եթե ոչ ստահակ ու ստախոս: Մեր գործով նույն սցենարով՝ սկզբից պայմանագիր կնքեց 150,000-ի, հետո վերջում 600,000-ի հասցրեց ու ընդամենը փորձեց հարցը դատավորի հետ միջնորդությամբ լուծել: Այսինքն, ասեց՝ փող տվեք, դատավորի հետ պայմանավորվել եմ: Բա էդ դեպքում ինչո՞ւ էինք իրան էդքան փող տալիս, որ մի հատ էլ դատավորի հետ պայմանավորվում էր... Հետո ասում են կոռուպցիան դատարաններում որտեղից ա սկսվում, այ սենց մարդկային նկարագիր չունեցող վիժվածք փաստաբաններից:

**ԻՍԿՈՒՀԻ** – Ես ուղղակի զարմանում եմ, թե մարդիկ ոնց են վստահում նման... ներին, մենակ իր արտաքին տեսքը բավական է, որ դրան գործ չվստահես: Անզվերենի իմացության կեղծ իմիջ են ստեղծում իրանց համար ու ժողովրդին խաբում: Հայաստանի ԻԲԲ հաջողակ փաստաբանների 99 տոկոսը համագործակցում է ոչ պակաս ..... ու կաշտակեր դատավորների հետ: Ոչ մի վճիռ առանց կաշտաքի չի կայացվում, ու բոլորը գիտեն դրա մասին՝ եւ ժողովուրդը, եւ իշխանությունը: Հարգելի փաստաբաններն էլ մինչեւ գործին ծանոթանալը պարզում են, թե այդ գործի համար մարդիկ ինչքան են պատրաստվում վճարել, հետո նոր գնում են դատավորի հետ «խոսալու»: Եթե մեկը կա, որի դատական հայցն այս տարբերակով չի լուծվել, թող բարձրաձայնի, որ գրանցենք Կարմիր գրքում:

**ԱՆԱՀԻՏ** – Ցավ եմ ապրում հենց մենակ նրա համար, որ նման... էլ են փաստաբան համարվում... ինքս, լինելով փաստաբան, պետք է նախեստառջ ասեմ, որ նա պարտավոր էր տեղյակ պահել իրեն դիմած քաղաքացիներին, որ Եվրոպական դատարան գործերն ընդունվում են հայերենով, եւ անզվերենի իմացության կարիք չկա: Իսկ սա, իհարկե, չի ասել, բացի այդ՝ նա շատ հանգիստ կարող էր ճշտել, թե ինչ ընթացքում է գործը, որը, իմ համոզմամբ՝ նա արել է, բայց թաքցրել է իր պաշտպանյալներից... ստորագույն արարք, եթե ինքն ազահ չլիներ, գումարը պետք է վերադարձներ, իսկ ինչ վերաբերում է սեմինար պարապմունք եւ նման ողորմելի ստեղծին, ավելի լավ է նման ցնդաբանությունների փոխարեն ներողություն խնդրի իր բոլոր վերետում կարծիքներ գրած նախկին պաշտպանյալներից, գումարները վերադարձնի ու հրապարակավ ուտի իր փաստաբանական արտոնագիրը:

**ԱՐՏԱԿ** – Հետաքրքիր է, որ էս փաստաբանիկն արդար դատաքննություն է ակնկալում իր համար..... հետաքրքիր է՝ վճարել է արդեն «արդար» դատաքննության համար: Ժողովուրդ, շատ-շատերն են սրա քաշվածը, ու մի օր էս ամեն ինչը ջրի երես էր ելնելու...

**ՍԵՐԳԵՅ** – Տեսնես իրան ասել են, որ ստելն ու դրամաշորթությունը լավ բան չեն ու փաստաբանի համար անհարիր բաներ են: Էս դեպքն իսկական դրամաշորթություն է... խաբեությամբ գումար շորթել... տենց են անում թուղթ ու գիր անողները, խաղաքարտ նայողները, որ ստի դիմաց փող են վերցնում... լրիվ նույն հանցակազմն է Արթուր Գրիգորյանի մոտ:

Հայցվորը դատարանին ներկայացրեց «Հրապարակ» օրաթերթում այլ անձանց կողմից հրապարակված հոդվածները, որոնք վիրավորում և զրպարտում են հայցվորին և գտնվում են ՀՀ դատարաններում: Հայցվորի ներկայացուցիչը նաև դատարանին հայտնեց, որ փաստաբանները հոգեբան չեն և չեն կարող ամեն օր ժամերով լսել իրենց վստահորդների զատանցանքները, ինչպես նաև ավելացրեց, որ փաստաբանները միշտ չէ, որ գործերը շահում են, լինում են նաև պարտություններ, և բնական է, որ բոլոր վստահորդները չեն կարող գոհ մնալ:

Պատասխանողի ներկայացուցիչ Գևորգ Գևորգյանը, ի պատասխան հայցապահանջի, հայտնեց, որ ամբողջովին առարկում է հայցադիմումին: Ըստ նրա՝ կարևոր է առաջին հերթին պարզել, թե ում կողմից են արվել այդ մեկնաբանությունները, բայց քանի որ հայցվորն իր ելույթում նշեց, որ «Հրապարակ» օրաթերթում արվել են մեկնաբանություններ այլ անձանց կողմից, ապա այսքանով հայցվորը նույնպես հաստատում է, որ այլ անձանց կողմից են արվել, այլ ոչ թե օրաթերթի:

Պատասխանողը նշեց, որ facebook.com, odnoklassniki.ru և բլոգերի նման կայքերում հնարավոր է մեկնաբանություններ թողնել, ինչպես նաև ՁԼՄ-ներում. ինտերնետը մեծ դաշտ է տրամադրում ընթերցողին, որպեսզի նա ազատ արտահայտի իր կարծիքը: Օրաթերթը, լինելով ազատ արտահայտվելու միջոց, որևէ իրավունք կամ պարտականություն չունի՝ արգելելու անձանց իրենց կարծիքը ազատ արտահայտելու:

Գ. Գևորգյանը մեկնաբանությունների վերաբերյալ հայտնեց, որ իրենք պարզապես չեն կարող բոլոր հոդվածների մեկնաբանությունները հետազգայում ստուգել, նման պարտավորություն լրատվամիջոցը չունի, այսինքն՝ իրենք դիտավորյալ չեն դրանք երկար ժամանակ պահել կայքում, դա եղել է ոչ միտումնավոր: Անդրադառնալով ՍԴ որոշմանը, որը դիտավորության առկայությունը պարտադիր է համարում՝ Գ. Գևորգյանը նշեց, որ մեկնաբանությունները դիտավորությամբ չէ, որ երկար ժամանակ հրապարակված են եղել կայքում: Այս դեպքում օրաթերթը մեղավոր չէ, եթե նույնիսկ չի վերահսկել կամ շուտ չի կարդացել դրանք, սա որպես դիտավորություն չի կարող դիտվել:

Պատասխանող, «Հրապարակ» օրաթերթի տնօրեն և գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանն իր ելույթում դատարանին հայտնեց, որ ինտերնետը անսահման հնարավորություններ է տալիս, և այն վերահսկել կամ սահմանափակել հնարավոր չէ: Ըստ խմբագրի՝ օրաթերթը հնարավորություն է տվել իր ընթերցողին հայտնել իր կարծիքը, ինչպես արվում է այլ կայքերում: Այս դեպքում հայցվորի մասին հոդվածի հրապարակումից հետո ընթերցողը կարդացել է և իր հույզերն է արտահայտել:

Ա. Օհանյանը դատարանին ներկայացրեց լրատվամիջոցներից մեկում Արթուր Գրիգորյանի արած այն հայտարարությունը, որ իր կյանքի խնդիրն է դարձել օրաթերթը փակելը:

Հայցվոր Արթուր Գրիգորյանի հարցին՝ արդյոք կայքում մեկնաբանություններն անմիջապես հաստատվում են, թե՛ նախօրոք ընթերցվում են, հետո նոր հաստատվում, Ա. Օհանյանը պատասխանեց, որ հենց այս դատավարությունը իրենց համար դաս եղավ, և արդեն

2011թ. հոկտեմբերից իրենք վերահսկում են մեկնաբանությունները, դրանք անմիջապես չեն հաստատվում, իսկ նախկինում կայքի ծրագիրն այնպես էր մշակված, որ մեկնաբանությունները մեխանիկորեն հաստատվում էին:

Ա. Գրիգորյանի այն հարցին, թե մեկնաբանությունները հաստատելու հետ կապված՝ կայքի դիզայնը արդյո՞ք Ա. Օհանյանն է որոշել, խմբագիրը պատասխանեց՝ այո: Արթուր Գրիգորյանի հերթական հարցին, թե կարո՞ղ էր, արդյո՞ք, այնպես անել, որ մեկնաբանություններն անմիջապես չհաստատվեին, Ա. Օհանյանը կրկին դրական պատասխանեց՝ այո:

## **Դատարանը մերժեց փաստաբան Արթուր Գրիգորյանի հայցն ընդդեմ «Հրապարակի»**

Մարտի 7-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժեց փաստաբան Արթուր Գրիգորյանի հայցն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի: Դատարանը հանգել է այն եզրակացության, որ «Հրապարակ» օրաթերթի գործողություններում դիտավորություն չկա, ընկերությունը Արթուր Գրիգորյանի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին վիրավորանքի ու զրպարտության միջոցով վնաս չի պատճառել, քանի որ «Քաղաքացիներն անբարեխիղճ փաստաբանների զոհ» վերտառությամբ հոդվածը վերաբերել է հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի, որի ներքո թվով վեց մեկնաբանությունները կատարել են բոլորովին այլ անձինք, որոնք հանդես են եկել ծածկանուններով, և վերջիններիս անձը հայտնի չէ:

Այսինքն՝ օրաթերթը հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները: Հետագայում «Հրապարակ» օրաթերթը, դրսևորելով բարի կամք Արթուր Գրիգորյանի սուբյեկտիվ պահանջի առթիվ, վեճի առարկա մեկնաբանությունները հեռացրել է ինտերնետային կայքէջից, այլ կերպ՝ առկա չէ «Հրապարակ» օրաթերթի դիտավորության կանխավարկածը: Մինչդեռ զրպարտության պարագայում խոսքը վերաբերում է դիտավորությամբ կեղծ, իրականությանը չհամապատասխանող փաստերի, փաստացի տվյալների տարածման միջոցով անձի արժանապատվությունն արատավորելուն, նրան հանցանքի կամ զանցանքի մեջ իրականությանը չհամապատասխանող փաստերի հիման վրա մեղադրելուն, իսկ վիրավորանքը ենթադրում է անձի՝ դիտավորությամբ, կանխամտածված նվաստացում, հետևաբար հայցը ենթակա է մերժման՝ անհիմն լինելու հիմքով:

Դատարանը նաև վճռեց Ա. Գրիգորյանից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 360.000 հազար ՀՀ դրամ (18 մլնx2% = 360 000)՝ որպես գործով չվճարված պետական տուրքի գումար: «Այս վճիռը անօրինական ու հիմար դատական ակտ է, որը կազմվել է անինքնասեր մարդկանց կողմից: Մենք անպայման բողոքարկելու ենք ու մեր պայքարը շարունակելու ենք»,- «Հետքի» հետ զրույցում ասաց Արթուր Գրիգորյանի փաստաբան Տիգրան Աթանեսյանը:

## **Վերաքննիչ դատարանը վերադարձրեց Ա. Գրիգորյանի բողոքը. փաստաբանը պետտուրը մասնակի է վճարել**

2012թ. ապրիլի 19-ին ՀՀ վերաքննիչ դատարանը, քննարկելով փաստաբան Արթուր Գրիգորյանի բողոքն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի, որոշել է, որ այն ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ. «Արթուր Գրիգորյանը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջը, այն է՝ պետական տուրքի վճարումը կատարել է մասնակի՝ 10.000 ՀՀ դրամի չափով, մինչդեռ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի վճիռների դեմ բերված վերաքննիչ բողոքների համար գույքային պահանջի գործերով գանձվում է վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով գումար, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագին 3 տոկոսի չափով գումար: Քննարկվող պարագայում բողոք բերողի կողմից ենթակա է վճարման վիճարկվող գումարի 3%-ը՝ դրանից նվազեցնելով արդեն իսկ վճարված 10.000 ՀՀ դրամ գումարը, այսինքն՝  $530.000 \times 3\% = 15.900 - 10.000 = 530.000 - 15.900 = 514.100$  /նախապես վճարված/ = 530.000/:

«Հետքի» հարցին, թե ինչու է մասնակի վճարել պետական տուրքը, Արթուր Գրիգորյանը պատասխանեց, որ դա թյուրիմացաբար որպես գույքային պահանջ է ներկայացվում, սակայն, ըստ Ա. Գրիգորյանի, ուսանողին էլ հարցնեն՝ կարող է պատասխանել, որ անձի պատիվն ու արժանապատվությունը ենթակա է ոչ նյութական իրավունքի պաշտպանության, այսինքն՝ նրա պահանջը չպետք է դիտարկվեր որպես գույքային:

Փաստաբանը տեղեկացրեց, որ պատրաստվում է վճռաբեկության կարգով բողոքարկել վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը, այնուհետև ավելացրեց, որ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի վերադարձման դեպքում դիմելու է Միացյալ ազգերի մարդու իրավունքների կոմիտե:

## **Վճռաբեկ դատարանն էլ մերժեց Արթուր Գրիգորյանին**

Հունիսի 27-ին Վճռաբեկ դատարանը որոշեց վերադարձնել Արթուր Գրիգորյանի բողոքը, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.04.2012 թ. որոշման դեմ էր: Իր վճռաբեկ բողոքում Ա. Գրիգորյանը պատճառաբանել է, որ վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ և 17-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը պատճառաբանել է, որ վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ անձի պատիվը և արժանապատվությունը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտներ դասվում են անձնական ոչ նյութական բարիքների շարքին, ինչն էլ ենթադրում է, որ դրանց դատական պաշտպանությունը չի կարող համարվել գույքային պահանջ, պետական տուրքը քիչ վճարված լինելու պատճառաբանությամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելով՝ Արթուր Գրիգորյանին զրկել է դատական պաշտպանության իրավունքից: Վերոգրյալի հիման վրա Ա. Գրիգորյանը պահանջել է վերացնել վերաքննիչ դատարանի որոշումը:

Վճռաբեկ դատարանը վերադարձրել է վճռաբեկ բողոքը՝ պատճառաբանելով, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին բողոք բերած անձի հիմնավորումը հերքվում է վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պատճառաբանություններով: ՎԴ-ի որոշումը ենթակա չէ բողոքարկման:



Թաթուլ Մանասերյան

## **Վճռաբեկ դատարանը «Ժամանակի» գործով նախադեպ ստեղծեց**

Վիրավորանքի և զրպարտության մասին հոդվածների ապաքրեակա-նացումից հետո Վճռաբեկ դատարանը ԶԼՄ-ների վերաբերյալ ստաց-ված բողոքները ետ էր վերադարձնում: Ի վերջո, Վճռաբեկ դատարա-նը քննեց հայցերից մեկը եւ նախադեպ ստեղծեց:

Ապրիլի 27-ին Վճռաբեկ դատարանը քննեց վերաքննիչ դատարա-նի որոշման դեմ պատասխանող «Ժամանակ» օրաթերթի («Սկիզբ Մե-դիա Կենտրոն» ՍՊԸ-ի) ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհա-նուր իրավասության դատարանը 20.09. 2011թ. վճռել էր հայցը բավա-րարել մասնակի՝ պարտավորեցնելով «Ժամանակ» օրաթերթին հեր-քել 29.09.2010թ. «Քրգոր՝ ԱԺ նախագահի խորհրդակալի դեմ» հոդ-վածում տպագրված տեղեկությունները, նշել, որ չկա քրեական գործ Թաթուլ Մանասերյանի դեմ, և նա չի զբաղվում վաշխառությամբ: Դա-տարանը վճռել էր նաեւ պարտավորեցնել պատասխանողին հոգուտ հայցվորի վճարել 510 հազար դրամ, որից 300 հազարը՝ զրպարտու-թյան համար, 200 հազարը՝ փաստաբանի վարձատրության, 10 հա-զար դրամն էլ՝ որպես նախապես վճարված պետական տուրք:

Վերաքննիչ դատարանը պատասխանողի ներկայացուցչի բերած բողոքը մերժել էր՝ ուժի մեջ թողնելով Կենտրոն և Նորք-Մարաշ վար-չական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը:

Բերված վճռաբեկ բողոքում «Ժամանակ» օրաթերթի ներկայա-ցուցիչ Նիկոլայ Բաղդասարյանը պնդել է, որ դատարանում պատաս-խանող կողմը վկայակոչել է տեղեկատվության աղբյուրը և միջնորդել հրավիրել Անտոն Առաքելովին՝ որպես վկա հարցաքննելու, սակայն դատարանը մերժել է այդ միջնորդությունը: Դատարանի կայացրած վճռի բովանդակությունից հետևում է, որ եթե լրագրողը հոդվածը հրա-պարակելիս չի վկայակոչել իրազեկման աղբյուրը, ապա դատարանում նա զրկվում է նման իրավունքից, մինչդեռ դատարանի նման դիրքորո-շումը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 9-րդ և 6-րդ կետերի պահանջներին:

Վճռաբեկ բողոքի պատասխան ներկայացրած հայցվորի ներկայացուցիչ Անահիտ Սարգսյանը պնդել է, որ նշված պատասխանի համաձայն՝ պատասխանող կողմը կարող էր պատասխանատվությունից ազատվել միայն այն դեպքում, եթե հողվածում հստակ հղում կատարած լիներ տեղեկատվության աղբյուրին: Ընդ որում՝ այլ անձի հրապարակային ելույթին հղում կատարելիս հղումը պետք է լիներ պատշաճ, այսինքն՝ այդ հրապարակումը պետք է լիներ այլ անձի հրապարակային ելույթի բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունը:

Բողոքաբերը նշել է, որ դատարանը հաշվի չի առել նաև, որ անմիջապես հաջորդ օրը հողվածի հեղինակը նույն «Ժամանակ» օրաթերթում տպագրել է նոր հողված, որտեղ նշել է, որ «կա վաշխառության փաստով հարուցված գործ, որով որպես մեղադրյալ անցնում է այլ անձ...»: Հիշյալ տեքստը կարելի է համարել որպես «Ժամանակ» օրաթերթի կողմից տպագրված հերքում, որը նույնաբովանդակ է դատարանի «Վճռեց» մասում պատասխանողի կողմից որպես հերքման տեքստ սահմանված «հերքման» տեքստին:

Բողոքի պատասխանում Ա. Սարգսյանը նշել է, որ այն փաստը, որ պատասխանողի հրապարակած երկրորդ հողվածը հանդիսանում է հերքում, ինքնին ապացուցում է, որ նա ընդունում է, որ իր կողմից առաջին հողվածում հրապարակվել են զրպարտություն համարվող փաստական հանգամանքներ: Բացի այդ, երկրորդ հողվածը չի կարող դիտվել որպես հերքում, քանի որ հենց այդ հողվածում լրագրողը նշել է, որ Թաթևո Մանասերյանից պահանջել է հերքման տեքստ ուղարկել, այսինքն՝ ինչպես արձանագրել է դատարանը՝ երկրորդ հողվածը հրապարակելիս պատասխանող կողմը հերքման որևէ տեքստ չի ունեցել, և այդ հողվածը որպես հերքում չի հրապարակվել:

Այնուհետև Նիկոլայ Բաղդասարյանը նշել է, որ հայցվորի կողմից որևէ հերքման տեքստ չի ստացել, որպեսզի թերթը հերքում հրապարակեր եւ պահանջել է բեկանել 15.12.2011թ. վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավոր Տ. Պետրոսյանի հարցին՝ ուղղված հայցվորի ներկայացուցիչ Ա. Սարգսյանին, թե արդյոք հայցվորը հերքման տեքստ ուղարկել է պատասխանողին, Ա. Սարգսյանը պատասխանել է, որ դեռ նախքան դատարան դիմելը հայցվորը հերքման տեքստ է ուղարկել թերթին, որտեղ տեղեկացրել է, որ հերքման տեքստը չհրապարակելու դեպքում վերջինս դիմելու է դատարան:

Վճռաբեկ դատարանը այսքանով գործը համարել է ավարտված և նիստից քիչ անց հրապարակել դատարանի որոշումը՝ մերժելով վճռաբեկ բողոքը: Որոշման համաձայն՝ բողոքաբեր «Սլիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ից կրոնագանձվի 30 հազար ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք բերելու համար բռնագանձվող պետական տուրք: Եվ քանի որ վճռաբեկ բողոքը մերժվեց, «Ժամանակը» Թաթևո Մանասերյանին պետք է վճարի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ սահմանված 510 հազար դրամը:



Նիկոլայ Բաղդասարյան



Անահիտ Մարդարյան

## **«Գլենդել Հիլզ»-ն ընդդեմ «Ժամանակի». 200,000 դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար**

«Գլենդել Հիլզ» ընկերությունն արդեն երկու տարի «Ժամանակ» օրաթերթից պահանջում է հերքել 2010 թ. օգոստոսի 26-ին հրապարակած «1000 դոլար լուրջան դիմաց» լուրը, որտեղ օրաթերթը, վկայակոչելով իր լավատեղյակ աղբյուրները, պատմում է չկայացած գործարքի մասին:

«Գլենդել Հիլզ» կազմակերպության Գյումրիի ներկայացուցիչները Գյումրիում իրենց կառուցած Մուշ-2 թաղամասի շենքերից մեկի ինքնափլուզումից հետո փորձել են ամեն գնով համոզել բնակիչներին, որ նրանք կատարվածի մասին տեղյակ չպահեն լրատվամիջոցներին: Մեր աղբյուրը, որ չցանկացավ ներկայանալ, տեղեկացրեց, թե բնակիչներին «Գլենդել Հիլզ»-ն առձեռն առաջարկել է 1000 դոլար գումար, ինչպես նաև խոստացել է արագ վերանորոգել բնակարանը, միայն թե թեման չհայտնվի ՀԼՄ-ներում, իսկ հակառակ դեպքում սպառնացել, որ չի վերանորոգի բնակարանը: Տուժած բնակիչները հրաժարվել են «Գլենդել Հիլզ»-ի հետ ստվերային գործարքից»,- գրել է թերթը:

«Գլենդել Հիլզ»-ը պնդում է, որ թերթում տեղ գտած «ինքնափլուզում» եզրը կարծիք է ստեղծում, թե շենքը քանդվում է, մինչդեռ ընդամենը ձեռնարկն էր թափվել: Ընկերությունը նաև պահանջում է հերքել այն տեղեկությունը, համաձայն որի՝ թերթությունների մասին լռելու համար ընկերությունը մի անձի 1000 ԱՄՆ դոլար գումար է առաջարկել: «Գլենդել Հիլզ» ընկերությունը «Ժամանակ» օրաթերթից պահանջում է 2 մլն դրամ՝ զրպարտության միջոցով ընկերության պատվին եւ արժանապատվությանը հասցված վնասի, ինչպես նաև 500 հազար դրամ՝ դատական ծախսերի համար:

### **Լրագրողական արվեստ, թե՛ զրպարտություն...**

2010թ. սեպտեմբերին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Ալեքսեյ Սուբոյանի նախագահությամբ սկսված դատավարությունը շարունակվեց 2012-ին:

Հունվարի 16-ին տեղի ունեցած դատական նիստին հայցվոր կողմի փաստաբան Անահիտ Սարգսյանը դատարանին ներկայացրեց գործի փաստական հանգամանքների վերաբերյալ պատասխանող կողմի առարկության դեմ հայցվորի դիրքորոշումը, որում ասվում էր, որ պատասխանողը, անդրադառնալով Սահմանադրական դատարանի N997 որոշմանը (համաձայն որի՝ պետք է տարանջատում դրվի փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև), նշել է, որ լրագրողը «ինքնափուլում» բառը որպես գնահատողական դատողություն է ներկայացրել՝ նկատի ունենալով, որ առաստաղը փլվել է առանց որևէ մեկի միջամտության:

Սակայն, ըստ հայցվորի, «ինքնափուլում» բառը չի կարող դիտվել որպես գնահատողական դատողություն, այն որոշակի փաստի արձանագրում է: Համաձայն հայցվորի՝ փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև տարբերությունն այն է, որ փաստերի գոյությունը կարելի է ցույց տալ, իսկ գնահատողական դատողությունը ապացուցման ենթակա չէ: Այնուհետև Ա.Սարգսյանը մեջբերեց ՄԻԵԴ-ի նախադեպերից (Lingens v Austria), համաձայն որի՝ նույնիսկ կարծիքի պարագայում պետք է գոյություն ունենա որևէ հաստատված կամ ընդունված փաստական հիմք այդ կարծիքն արտահայտելու համար, որը պետք է արտահայտված լինի բարեխղճորեն: Հայցվորն իր առարկության մեջ նաև անդրադարձավ ապացուցման ենթակա մյուս փաստերին, այն է՝ պատասխանողի կողմից հողվածում գումարի մասին նշելուն:

Պատասխանողը իր վերնագրում նկատի է ունեցել գումարի տրամադրումը, ֆինանսի փոխհատուցումն ու բնակարանի վերանորոգումը: Սակայն հայցվորը կարծում է, որ տվյալ դեպքում հողվածը չպետք է վերնագրվեր «1000 դոլար լուծյան դիմաց», ապա հողվածում նշվեր, որ «Գլենդել Հիլզ»-ի ներկայացուցիչները բնակիչներին առձեռն առաջարկել են 1000 դոլար, որպեսզի նրանք այդ մասին տեղյակ չպահեն լրատվամիջոցներին, հակառակ դեպքում սպառնացել են, որ չեն վերանորոգի բնակարանը, գումար են առաջարկել լուծյան դիմաց: Առարկության մեջ հայցվորը նշում է նաև, որ լրագրողը բարեխղճորեն չի գործել, գործողություններ չի ծավալել իր հողվածում հրապարակված ինֆորմացիայի արժանահավատությունը ստուգելու համար և հողվածը հրապարակելիս հետապնդել է ընկերության գործարար համբավն արատավորելու նպատակ:

Օրաթերթի ներկայացուցիչ Ն. Բաղդասարյանը իր խոսքում նշեց, որ, ամփոփելով ՀՀ դատական պրակտիկան և միջազգային փորձը, շատ կարևոր է տարանջատել փաստական հանգամանքները գնահատողական դատողությունից: Փաստաբանը օրինակ բերեց հետևյալը. երբ անձը հայտարարում է, որ Ն. Բաղդասարյանը ստացել է 5000 դոլար կաշառք, դա փաստ է ու զրպարտություն, բայց երբ անձը հայտարարում է, որ նա կաշառակեր է, սա գնահատողական դատողություն է, այս դեպքում խոսքը վիրավորանքի մասին է: Գործով վիճարկվող նյութում ասվում է, որ Գյումրիում «Գլենդել Հիլզ»-ը շենք է կառուցել, սա փաստ է, ապա հետագայում որպես գնահատողական դատողություն ներկայացնում է, որ այդ շենքում ինքնափուլում է տեղի ունեցել:

Այսինքն՝ առաստաղի փլվելը լրագրողը որակել է որպես ինքնափուլոզում: Ն. Բաղդասարյանը ավելացրեց նաև, որ հողվածի վերնագիրը չի կարող որպես փաստ դիտվել, լրագրողը սեղմ է այն ներկայացրել իր վերնագրում, դա լրագրողական արվեստ է:


Ըստ Ա. Սարգսյանի՝ մեկ ստորակետով, մեկ բույթով հնարավոր է նախադասության ամբողջ իմաստն այնպես փոխել, որ վնասվի ընկերության գործարար համբավը կամ անձի պատիվն ու արժանապատվությունը: Փաստաբանն ավելացրեց, որ ՄԻԵԴ-ը, ինչպես նաև կոնֆերանսներում մի շարք միջազգային մասնագետներ, բազմիցս նշել են, որ ուշադրություն պետք է դարձնել հողվածի վերնագրին, քանի որ վերնագիրը ողջ հողվածը բնորոշում է ավելի կարճ տեսքով:

Դատարանում որպես գրավոր ապացույց հետազոտման էր ներկայացված նաև օրաթերթի հրատարակիչ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի 2010թ. տարեկան շահույթը, որը կազմում է 1.895.000 ՀՀ դրամ, որի հետ կապված Ն. Բաղդասարյանը դատարանին ներկայացրեց արդեն օրինական ուժի մեջ մտած Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռն ըստ հայցի՝ Բելլա և Սեդրակ Քոչարյաններն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի, որի համաձայն՝ պատասխանող կողմը պետք է վճարի 3.000.000 դրամ: Սրանով Ն.Բաղդասարյանը հիմնավորեց, որ պատասխանող կողմը ներկա դրությամբ ավելի քիչ գումար ունի, քան պետք է վճարի, այսինքն՝ պատասխանող ընկերության պարտավորությունները գերազանցում են ընկերության ակտիվները:

## **«Ժամանակը» պետք է 550 հազար դրամ վճարի եւ հերքում տպագրի**

Հունվարի 30-ին դատավոր Ալեքսեյ Սուքոյանը հրապարակեց «Գլենդել Հիլզ» ընկերությունն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի գործով վճիռը: Դատարանը մասնակի բավարարեց «Գլենդել Հիլզ»-ի պահանջը: Համաձայն վճռի՝ «Ժամանակ» օրաթերթից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձվի 200 հազար դրամ գրպարտության համար, 300 հազար դրամ՝ փաստաբանական ծառայությունների, 10 և 40 հազարական դրամ էլ՝ որպես պետական տուրքի վճար: «Ժամանակ» օրաթերթը պետք է նաև հերքի 2010թ. օգոստոսի 26-ին հրապարակած «1000 դոլար լուրջության դիմաց» հոդվածը:

Թերթը մայիսի 2-ին բողոքարկեց ընդհանուր իրավասության դատարանի վճիռը: Հունիսի 14-ին ՀՀ վերաքննիչ դատարանը մերժեց «Ժամանակ» օրաթերթի վերաքննիչ բողոքն ընդդեմ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կայացրած վճռի՝ թողնելով այն նույնը: «Ժամանակ» օրաթերթը վերաքննիչ բողոք բերելու համար պետք է վճարի 6 հազար դրամ: Իսկ սեպտեմբերի 3-ին Վճռաբեկ դատարանը վերադարձրեց «Ժամանակի» գործով վերաքննիչ դատարանի դեմ բերված վճռաբեկ բողոքը:



Էդիկ Անդրեասյան



Հայկ Բաբությանյան

## **Հայկ Բաբությանյանը պարտվեց հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու պատճառով**

Զրպարտության եւ վիրավորանքի հայցով 2011-ին մի ուշագրավ դատավարություն սկսվեց, որը շարունակվեց 2012-ին. լրագրողը լրագրողից 7 մլն դրամ էր պահանջում: «Իրավունք» թերթի խմբագրական խորհրդի նախագահ, ՍԻՄ կուսակցության նախագահ Հայկ Բաբությանյանը երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան երկու հայց էր ներկայացրել պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության մասին՝ ընդդեմ վերլուծաբան Էդիկ Անդրեասյանի և report.am կայքի խմբագիր Արեւ Միքայելյանի:

Ամեն ինչ սկսվել էր 2010թ. սեպտեմբերից՝ Էդիկ Անդրեասյանի հեղինակած ««Իրավունք» իրավունքը Հայկ Բաբությանյանի թրի ծայրին է» հոդվածով, որը տպագրվել էր [www.report.am](http://www.report.am) կայքում: Վերլուծաբանն այստեղ անդրադարձել էր ՍԻՄ կուսակցության նախագահ Հայկ Բաբությանյանի գործունեությանը, որով պատասխանել էր «Իրավունք» թերթում հրապարակված Հ. Օրդույանի հոդվածին՝ նշելով, որ Հ. Օրդույանը հենց Հայկ Բաբությանյանի կեղծանունն է:

Հայկ Բաբությանյանը չէր օգտվել պատասխանի կամ հերքում տպագրելու իրավունքից եւ միանգամից դիմել էր դատարան՝ պահանջելով ստիպել լրատվամիջոցին ու հեղինակին հերքել իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, հրապարակային ներողություն խնդրել իրենից, հրապարակել դատարանի վճիռը նույն լրատվամիջոցում, ինչպես նաեւ վճարել դատական ծախսերը:

Չնայած հայցադիմումում չի ներկայացվել, թե կոնկրետ որ արտահայտություններն են վիրավորանք կամ զրպարտություն պարունակել, այդուհանդերձ, պատասխանող կողմի պնդմամբ, Հ. Բաբությանյանի ներկայացուցիչները դատական նիստերի մեկնարկից հետո 10 կետ են առանձնացրել: Օրինակ՝ Հայկ Բաբությանյանը վիրավորական է համարել իր հասցեին հնչեցրած այն միտքը, թե ««քաջարի» զորավարի

մոտ լավ են ստացվում ներկուսակցական հեղաշրջումներն ու կուսակցական կնիքի համար մղվող մենամարտերը»:

«Իրավունք» թերթն ավելի ուշ պատասխանել է էդիկ Անդրեասյանի հողվածին: Գայանե Ջարգարյանի՝ «Իրավունք» թերթի 2011թ. մարտի 22-24-ի համարում տպագրված «Խոսքի ազատությունը՝ ՀՅԴ-ի մամլիչի տակ» հոդվածն անդադարձել է նաեւ վերլուծաբանին, որին էդիկ Անդրեասյանը պատասխանել է մարտի 25-ի «Երբ զոռով հուշում են անհուշելին» վերլուծականում, ինչի համար Հայկ Բաբուխանյանը նրան մեկ անգամ էլ է դատի տվել:

Ջուզահեռաբար երկու գործով դատական նիստեր ընթացան (առաջին գործի քննությունը սկսվեց 2011թ. հունվարի 27-ին, երկրորդինը՝ հունիսի 15-ին), որոնցից «Երբ զոռով հուշում են անհուշելին» գործի շրջանակներում Հայկ Բաբուխանյանի ներկայացուցիչները միջնորդեցին արգելել report.am կայքում նրա վերաբերյալ որեւէ նյութ տպագրել, որը կպարունակի հայցվորի պատվի, արժանապատվության և գործարար համբավի վերաբերյալ վիրավորանք և (կամ) զրպարտող արտահայտություններ: Միջնորդությունը բավարարվեց: Առաջին գործով հայցվորը 3 մլն դրամ հողվածի հեղինակից էր պահանջել, նույնքան էլ՝ լրատվամիջոցից: Իսկ երկրորդ գործով Հայկ Բաբուխանյանն իր պատվի, արժանապատվության եւ գործարար համբավն արատավորելու համար report.am կայքից, վերլուծաբան էդիկ Անդրեասյանից եւ կայքի հրատարակիչ «Խմբագիր» ՍՊԸ-ից պահանջել էր 1 մլն դրամ փոխհատուցում:

2011-ի նոյեմբերի 9-ին պատասխանողի ներկայացուցիչ Լուսինե Բակունյանը միջնորդություն էր ներկայացրել դատարանին, որպեսզի գործը կասեցվի, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանում նոյեմբերի 15-ին պետք է քննվեր Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Դատավորը հետաձգել էր դատական նիստը:

## **Գործ 1 ««Իրավունքի» իրավունքը Հայկ Բաբուխանյանի թրի ծայրին է»**

### **Հայկ Բաբուխանյանը վիրավորվել է Հայկուշից ու սողունից**

2012թ. փետրվարի 11-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ Հայկ Բաբուխանյանը և «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ն ընդդեմ report.am-ի և էդիկ Անդրեասյանի հայցով դատաքննությունը: Վիճարկվում էր էդիկ Անդրեասյանի հեղինակած ««Իրավունքի» իրավունքը Հայկ Բաբուխանյանի թրի ծայրին է» հոդվածը, որը 31.08.2010թ. տպագրվել էր [www.report.am](http://www.report.am) կայքում:

Հայցվորը պնդում է, որ պատասխանողն արատավորել է իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, ինչի համար էլ պահանջում է 6 մլն դրամի փոխհատուցում:

Նիստին կողմերը իրենց վերջնական դիրքորոշումները հայտնեցին: Հայցվորի ներկայացուցիչ Վահե Հովհաննիսյանը պնդեց պահանջները՝ հավելելով, որ հայցվորը կարծում է, որ հողվածն ամբողջովին պարունակում է վիրավորանք և գրպարտություն իր հասցեին, քանի որ տպագրված հողվածում ստույգ փաստեր չեն և չեն համապատասխանում իրականությանը. չկա ոչ մի հիմնավորում, որը համապատասխաներ իրականությանը: Հայցվորը դատարանին ներկայացրեց հողվածում տեղ գտած այն արտահայտությունները, որոնցից Հայկ Բաբուխանյանը վիրավորվել է և համարում է գրպարտություն:

«Ինչ կարող ես անել՝ մարդն աճում է աչքի առաջ՝ իր որակներով առաջ անցնում բոլորից, ում հաջողվել է կյանքում գեթ մեկ անգամ կուսակցություն քաննել»: Հայցվորը նշում է, որ սա գրպարտություն է, քանի որ կուսակցությունը գոյություն ունի, քանդված չէ:

«Ժողովրդական հին խոսք կա՝ եթե նայելով սովորեին, ապա դասաբի շունը վաղուց դասաբ էր դարձել: Հայկ Բաբուխանյանն այդպես էլ քաղաքական գործիչ չդարձավ»:

«Իսկ թե ինչ կապ ունեն փիղը, դրա թրիքը և ճանճը Հայկ Բաբուխանյանի, նրա առաջնորդությամբ գործող ՄԻՄ-ի, «Իրավունքի» և Հ. Օրդույանի հետ, կարող եք իմանալ վերջիններիս ջախելության օրերի մամուլը թերթելով...»:

Վերը նշվածից հայցվորը հետևություն է անում, որ հրապարակայնորեն ակնհայտ կերպով արատավորվել է իր պատիվը և արժանապատվությունը: Վ. Հովհաննիսյանը նշում է, որ ցանկացած լրագրող չպետք է առաջնորդվի էմոցիաներով, այլ պիտի լինի սուբյեկտիվ և պահպանի զսպվածություն, քանի որ խոսքը քաղաքական և լրատվական գործունեություն իրականացնող անձանց մասին է:

Այնուհետև հայցվորը ներկայացրեց նաև նույն հողվածի տակ տեղ գտած անստորագիր մեկնաբանությունները, որոնց համար, հայցվորի կարծիքով, պատասխանողը պետք է պատասխանատվություն կրի: Ըստ հայցվորի՝ այդ արատավորող արտահայտություններն են.

«Այդ փառամուրը իր նպատակին հասնելու համար ոչ մի բանի առաջ չի կանգնի. նա իր շեֆին արանքից հանեց, գրավեց իր տեղը, ընդդիմադիր կուսակցությունները փակելու կոչերով մտավ Սերժի աչքը, հիմա էլ ուզում է ցույց տալ, որ Ռուբեն Հայրապետյանից և Սամվել Ալեքսանյանից ոչնչով պակաս չէ, որ ինքն էլ, իբր, արժանապատվություն ունի, ինքն էլ լավ գիտի իր գինը՝ 2 միլիոն դրամ»..., «Օո մի հատ ըղոր աշե, չի էլ ամչնա սողունը»... «Հայկուշը էս անգամ թքեց փայտիկին»... «Ախր Անդրեասյանն էլա մագալու բան արել, իջել այս քաղաքացու մակարդակին և դրա մասին նյութ գրել ու հիմա էլ ստիպվածա նույն օղը շնչելու, բա արժեր»: «Report.am և Էդիկ Անդրեասյան, ձեզ հետ են շատերը, ովքեր կարծում են, որ էդ հոգեկան հիվանդի տեղը հոգեբուժարաննա, այլ ոչ թե քաղաքականությունը»:

Պատասխանողի ներկայացուցիչ Լուսինե Բակումյանը հարց ուղղեց հայցվորին առ այն, թե արդյոք հայցվորի կողմից քայլեր արվել են այդ անձանց գտնելու համար, ովքեր կարծիքներ են հայտնել: Հայցվորը պատասխանեց՝ ոչ՝ պատճառաբանելով, որ դա պատասխանողի պարտականությունն է եղել, որպեսզի թույլ չտար, որ այդ կարծիքները հրապարակվեին, ինչպես նաև օրենքից հղում կատարեց, որ եթե տե-

ղեկավարության աղբյուրը հայտնի չէ, ապա պատասխանատվությունը կրում է պատասխանողը:

Լ. Բակույանյանի հերթական հարցին, թե «Օո մի հատ ըդոր աշե, չի էլ ամչնա սողունը» արտահայտության մեջ ինչն է վիրավորական համարում փաստաբանը և ինչից է ենթադրել, որ ասվածը Հայկ Բաբուխանյանին է վերաբերում, հայցվորը պատասխանեց, որ դա Հ. Բաբուխանյանին է վերաբերում, քանի որ այդ արտահայտությունը նրա մասին հրապարակված հոդվածի տակ է գրված:

Լ. Բակույանյանի դիտարկմամբ՝ ցանկացած անձ էլ կարող է ընթերցել սույն հոդվածը և տարբեր սողուններ գտնել: Փաստաբանը հետաքրքրվեց, թե ինչու է հայցվորը դա իրեն վերագրել և խնդրեց, որպեսզի հայցվորը ապացույց ներկայացնի, որ «սողուն» բառը վերաբերում է հենց Հայկ Բաբուխանյանին:

Ըստ հայցվորի՝ պատասխանողը պարզապես փորձում է լողալ բառերի և մտքերի մեջ, քանի որ եթե ուշադիր լիներ, ապա հստակ կհասկանար, որ հոդվածը տպագրվել է Հ. Բաբուխանյանի վերաբերյալ, որից հետո էլ առաջացել են կարծիքները:

Շեթական հարցին, թե ինչից է ենթադրել, որ «Հայկուշը թքեց փայտիկին» արտահայտությունը նույնպես Հ. Բաբուխանյանին է վերաբերում, փաստաբան Վ. Հովհաննիսյանը պատասխանեց. «Դուք ծաղրում եք դատավարությունը»:

«Դուք կարդացել և ըմբռնել եք, որ «Հայկուշը», «սողունը» վերաբերում են Հ. Բաբուխանյանին», - հարցրեց Լ. Բակույանյանը:

Պատասխանողն ամբողջովին առարկեց հայցադիմումին՝ պնդելով, որ հայցապահանջն անհիմն է և ենթակա է մերժման: Ըստ Լ. Բակույանյանի՝ հոդվածագիրն իր հոդվածում արտահայտել է գնահատողական կարծիք, որը պայմանավորված է եղել տարիների ընթացքում Հայկ Բաբուխանյանի հրապարակային ելույթներով, ինչպես նաև գործողություններով: Այնուհետև պատասխանողը նշեց, որ օրենքի համաձայն՝ կողմը կարող է դիմել դատարան հրապարակման մասին տեղեկանալուց մեկ ամիս հետո, իսկ մեկամսյա ժամանակահատվածը հայցվորի կողմից չի պահպանվել, այդ իսկ պատճառով էլ հայցը ենթակա է մերժման:

Այսպիսով գործն ավարտվեց, և փետրվարի 27-ին դատավոր Սամվել Թադևոսյանը հրապարակեց դատական ակտը: Դատարանը մերժեց հայցվոր Հայկ Բաբուխանյանի պատվի, արժանապատվության և գործարար համբավի արատավորման և պատասխանողից 6 մլն ՀՀ դրամի փոխհատուցման պահանջը: Համաձայն վճռի՝ Հայկ Բաբուխանյանից որպես պետական տուրքի գումար պետք է բռնագանձել 236 հազար ՀՀ դրամ:

Դատարանը վճիռը հիմնավորել է նրանով, որ հայցվորը խախտել է Քաղաքացիական օրենսգրքի հոդված 1087.1-ի 13-րդ կետը, համաձայն որի՝ իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան վիրավորանքի կամ գրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո մեկ ամսվա ընթացքում:

## **Վերաքննիչն էլ մերժեց Հայկ Բաբուխանյանին**

Մայիսի 16-ին ՀՀ վերաքննիչ դատարանը քննեց Հայկ Բաբուխանյանի և «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքն ընդդեմ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռը: Նախքան նիստը սկսելը դատարանը կողմերին առաջարկեց այս հարցը արտադատական կարգով լուծել, սակայն Հայկ Բաբուխանյանի ներկայացուցիչ Վ. Հովհաննիսյանը պնդեց, որ իր դիրքորոշումն արդեն հայտնել է, եթե կողմը համաձայն է դրա հետ, ապա պատրաստ է հաշտության գալ: Պատասխանողի ներկայացուցիչ Լ. Բակույանն իր հերթին նշեց, որ արդեն բավականին երկար է տևել գործի քննությունը, բազմիցս քննարկվել է այդ հարցը, և առաջնորդվելով կողմի վերաբերմունքով՝ հայտնեց, որ հաշտության գալն արդեն անհնար է:

Բողոք բերող անձինք վերաքննիչ բողոքում նշել էին, որ դատարանը թույլ է տվել մի շարք նյութական և դատավարական նորմերի խախտումներ, մասնավորապես՝ սխալ է մեկնաբանել Քաղ. օր.-ի 1087.1 և 19 հոդվածները: Ավելին, դատարանը հիմնվել է 1087.1 հոդվածի առաջին մասի վրա, որում ասվում է, որ հայց կարող է ներկայացվել դատարանի վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո մեկ ամսվա ընթացքում: Դատարանը դա պատճառաբանել է նրանով, որ հայցվորը հայց է ներկայացրել 11.11.2010թ., մինչդեռ «Իրավունքը Հայկ Բաբուխանյանի թրի ծայրին է» հոդվածը [www.report.am](http://www.report.am)-ում տպագրվել է 31.08.2010թ.:

Ըստ բողոքաբերների՝ դատարանը ոչ միայն հաշվի չի առել նույն հոդվածի երկրորդ մասը, որում ասվում է, որ հայց կարող է հարուցվել ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում, այլև չի պատճառաբանել և չի հիմնավորել, թե ինչու չի կիրառել այդ հոդվածի մյուս մասը: Բողոքաբերները խնդրում են բեկանել ընդհանուր իրավասության դատարանի վճիռը, բավարարել ներկայացված պահանջները և գործն ուղարկել նոր քննության:

Ի պատասխան վերաքննիչ բողոքի՝ պատասխանողի ներկայացուցիչ Լուսինե Բակույանը նշել է, որ եթե հայցը ներկայացվել է վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում, ապա էական չէ այն հանգամանքը, թե երբ է դրա մասին վիրավորված կամ զրպարտված անձին հայտնի դարձել: Պատասխանում նշվել է, որ հայցվորները, ակնհայտորեն չունենալով վերաքննության համար որևէ ծանրակշիռ և հիմնավոր փաստարկ, օրենքի կամայական մեկնաբանությամբ փորձում են հիմնավորել հայցային վաղեմության ժամկետի բաց թողնված լինելու փաստը: Ըստ այդմ՝ պատասխանողը դատարանին խնդրում է մերժել ներկայացված վերաքննիչ բողոքը:

Մայիսի 31-ին ՀՀ վերաքննիչ դատարանը մերժեց Հ. Բաբուխանյանի և «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքն ընդդեմ Էդիկ Անդրեասյանի և [report.am](http://report.am) կայքի: Համաձայն որոշման՝ հայցվորներ Հ. Բաբուխանյանից և «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ից հօգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձվի 393 հազար դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար նախապես չվճարված գումար:

## **Վճռաբեկ դատարանը նույնպես մերժեց Հայկ Բաբուխանյանին**

Չբավարարվելով կայացված որոշմամբ՝ Հ. Բաբուխանյանը դիմեց Վճռաբեկ դատարան: 2012թ. օգոստոսի 6-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը, դատավոր Ե. Խունդկարյանի նախագահությամբ քննարկելով Հայկ Բաբուխանյանի եւ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի՝ ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի եւ Էդիկ Անդրեասյանի՝ պատվի, արժանապատվության եւ գործարար համբավի պաշտպանության պահանջի մասին քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.05.2012թ. որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը, որոշեց վերադարձնել այն: Վճռաբեկ դատարանը հիմնավորել է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի (Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը) պահանջներին:

## **Գործ 2. «Երբ գոռով հուշում են անհուշելին»**

### **Էդիկ Անդրեասյանը հակընդդեմ հայց է ներկայացնում Հայկ Բաբուխանյանի դեմ**

2012թ. հունվարի 28-ին նշանակված դատական նիստին հայցվորի ներկայացուցիչ Վահե Հովհաննիսյանը դատարանին կրկին ներկայացրեց իր պաշտպանչալի պահանջը. Հայկ Բաբուխանյանը պահանջում է պարտավորեցնել պատասխանողներին նույն լրատվության միջոցով հրապարակային ներողություն խնդրել իրենից, ամբողջությամբ հրապարակել դատարանի վճիռը հայցի բավարարման կամ մասնակի բավարարման դեպքում, ինչպես նաև վճարել 1 մլն դրամ փոխհատուցում հասցրած վիրավորանքի համար: Հայցվորը նաև հայտարարեց, որ ավելացնում է նաև իր պահանջի չորրորդ կետը, այն է՝ Էդիկ Անդրեասյանը պետք է հրապարակային ներողություն խնդրի Հայկ Բաբուխանյանից հայցադիմումին ներկայացված պատասխանում առկա վիրավորական արտահայտության համար:

Պատասխանողի ներկայացուցիչ Լ. Բակույանը հետաքրքրվեց, թե ինչ է կարծում հայցվորը պատասխանողի ուղարկած հաշտության համաձայնության տեքստի մասին: Սակայն Վ. Հովհաննիսյանը տեղեկացրեց կողմին, որ նա որևիցե պատասխան չի կարող տալ, քանի որ իր վստահորդը դեռևս իր դիրքորոշումը չի հայտնել այդ կապակցությամբ: Այնուամենայնիվ, կողմը սա դիտարկեց որպես հաշտության առաջարկի մերժում:

Է. Անդրեասյանը հայցապահանջի չորրորդ կետի վերաբերյալ իր կարծիքը հայտնեց՝ նշելով, որ իր պատասխանում գրվածը ոչ հրապարակային բնույթի է, քանի որ դրա մասին տեղյակ է ինքը, դատարանը, Հ. Բաբուխանյանը և նրա ներկայացուցիչը, ուրեմն ինչու՞ է հայցվորը այն հրապարակային դարձնում:

Վ. Հովհաննիսյանը պատասխանեց, որ դատարան ներկայացնելն

արդեն իսկ հրապարակում է, եթե մեկ անձ մյուսին ասեր, ապա դա ուրիշ է, իսկ սա արդեն հրապարակային արված հայտարարություն է:

Լ. Բակումյանի այն հարցին, թե արդյոք հայցվորը չի կարծում, որ այն հայցադիմումը, որը նա ներկայացրել է դատարան՝ փակագծերում նշելով, որ պատասխանողների հայրանունները հայտնի չեն, նույնպես վիրավորական է: Ըստ Վ. Հովհաննիսյանի՝ վիրավորական չէ:

Լ. Բակումյանը դատարանին ներկայացրեց հայցադիմումի պատասխանը, որում ասվում էր, որ պատասխանողը հերքում է հայցադիմումի պահանջները, քանի որ պատասխանողը կարծում է, որ չի վիրավորել հայցվորին: Ըստ պատասխանողի՝ հրապարակվել է բացասական կարծիք, բայց դա չի նշանակում, որ բացասական կարծիքը պետք է լինի վիրավորական: Հայցվորի այն հարցին, որ եթե մի անձ մեկ այլ անձի ասում է շուն, ուրեմն դա վիրավորանք չէ, Լ. Բակումյանը պատասխանեց, որ եթե դա ասելու համար նա հիմքեր է ունեցել, ուրեմն վիրավորական չէ: Արել Միքայելյանը պատասխանեց, որ ինքն ասել է՝ «շները քեզ ընկեր», այլ ոչ թե շուն:

Հիշեցնենք, որ սովյալ արտահայտությունն արվել էր հետևյալ նախադասության մեջ. «...Գայանե Զարգարյանը, հավանաբար նկատի ունենալով մեր կայքէջի հիմնադիր և «Խմբագիր» հաղորդաշարի ղեկավար Արել Միքայելյանին, գրում է «ընկեր Արել»: Այստեղ ևս ակնհայտ սխալ կա. Արել Միքայելյանը Դաշնակցության անդամ չէ, հետևաբար ճիշտ չէ նրան «ընկեր»-ով դիմելը, իսկ այլապես նա խնդրեց այս հետզրույթյան մեջ ավելացնել ժողովրդական հայտնի խոսքը՝ «շները քեզ ընկեր», բայց ուղղված, անշուշտ, ոչ կնոջը, այլ նրա պատմիչատուին»:

Է. Անդրեասյանը նշեց, որ իրենք դա վիրավորանք չեն համարում, այլ ընկալում են որպես հայրական պատասխան:

Այնուհետև հայցվորը մեջբերեց ՀՀ քաղ. օրենսգրքի 1087.1 հոդվածը, համաձայն որի՝ եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեության իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա՝ լրատվական գործունեություն իրականացնողը: Ըստ հայցվորի՝ այս դեպքում report.am կայքում հրապարակվել են հայցվորին վիրավորող տեղեկություններ, որոնց համար էլ պատասխանատվությունը պետք է կրի պատասխանողը: Սակայն պատասխանողն առարկեց՝ պատճառաբանելով, որ ինտերնետային կայքով արտահայտված կարծիքների, մտքերի համար ԶԼՄ-ն պատասխանատվություն չի կրում, քանի որ վերջինս չի կարող ասանափակել այլ անձանց կողմից հրապարակային կարծիք արտահայտելու իրավունքը:

Հայցվորի այն պնդմանը, որ դրանք հրապարակվել են report.am-ի կայքում, պատասխանողն ասաց, որ այդ արտահայտությունները հրա-

պարակվել են արձագանքների բաժնում: Ըստ Ա.Միքայելյանի՝ կայքը հրապարակել է ուրիշի հայտնած կարծիքը, այլ ոչ թե կայքի կարծիքը, որոնք այս պահին ջնջված են:

Վ. Հովհաննիսյանը պնդեց իր դիրքորոշումն առ այն, որ միևնույն է՝ կայքը հրապարակել է այդ կարծիքը, իսկ ջնջելու հետ կապված ավելացրեց, որ դեռ շուտ, անմիջապես պետք է ջնջեին: Պատասխանողները մնացին այն դիրքորոշմանը, որ իրենք հայցվորին չեն վիրավորել:

Մեկ բուպե ընդմիջում խնդրելուց հետո պատասխանող Է. Անդրեասյանը դատարանին հայտնեց, որ ցանկանում է միջնորդություն անել, այն է՝ սույն գործով հակընդդեմ հայց հարուցել հայցվորի դեմ, քանի որ կարծում է, որ իրեն վիրավորել են: Խոսքն այն մասին է, որ նշված գործով դատարան ներկայացված հայցադիմումում Է. Անդրեասյանին և Ա. Միքայելյանին ներգրավելով որպես պատասխանողներ՝ Հ. Բաբուխանյանը նրանց անվան և ազգանվան տակ փակագծերի մեջ նշել է՝ «հայրանունը հայտնի չէ»:

Ա. Միքայելյանը հայտնեց, որ չի ցանկանում հակընդդեմ հայց ներկայացնել ոչ թե նրա համար, որ չի վիրավորվել հայցվորից, այլ նրա համար, որ կարծում է, որ լրագրողների միջև ծագած վեճերը չպետք է հասնեն դատարան:

Չնայած հայցվորի առարկությանը՝ դատավոր Ա. Մելքումյանը բավարարեց միջնորդությունը և կողմին մեկ շաբաթ ժամանակ տրամադրեց հայց ներկայացնելու համար՝ հերթական նիստի օր նշանակելով փետրվարի 3-ը:

## **«Հայրանունը հայտնի չէ». Էդիկ Անդրեասյանը վիրավորվել է Հայկ Բաբուխանյանից**

Փետրվարի 3-ին Էդիկ Անդրեասյանը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին ներկայացրեց իր հակընդդեմ հայցը:

Հակընդդեմ հայցում Է. Անդրեասյանն ասում է, որ վերը նշված մակագրությունից ստացվում է, որ հայցվորի կողմից հայրանվան փոխարեն ներկայացվել է հայրանունը հայտնի չլինելու և, հետևաբար, հոր՝ որպես ծնողի անհայտ լինելու փաստական տվյալը, ինչն էլ իր հերթին, չհամապատասխանելով իրականությանը, ակնհայտորեն իր մեջ պարունակում է իր հասցեին ուղղված վիրավորանք և արատավորում իր պատիվն ու արժանապատվությունը:

Հայցվորի այն պատճառաբանությանը, թե նման գրառումն արվել է այն պատճառով, որ հայցվորին հայտնի չեն եղել պատասխանողների հայրանունները, ինչն ամենևին չի նշանակել, որ նրանց հայրերը անհայտ են, այլ նման գրառումը բխել է ՀՀ քաղ. դատավարության օր.-ի պահանջներից, Է. Անդրեասյանը պատասխանեց, որ եթե հայցվորի նպատակը լիներ օրենքի պահանջի կատարումը և ոչ թե վիրավորանք հասցնելը, ապա պատասխանողի անհայտ հայրանունը հայտնի դարձնելու համար նա կարող էր ընդամենը ջզլանալ և պաշտոնական հարցում կատարել համապատասխան մարմիններին:

Է. Անդրեսայանը նաև ավելացրեց, որ կողմերի միջև նույն դատարանի վարույթում առկա մեկ այլ քաղաքացիական գործով, մինչև սույն գործով հայց ներկայացնելն արդեն իսկ մի քանի նախնական նիստերում նրա հայրանունը հայտարարվել է, որից էլ ակնհայտ է դառնում, որ հայցվորի կողմից հենց վիրավորանք հասցնելու դիտավորությամբ էլ կատարվել է նման գրառումը:

Այսքանով Է. Անդրեսայանը դատարանից խնդրեց հակընդդեմ հայցով պատասխանող Հայկ Բորիսի Բաբուխանյանին պարտավորեցնել հրապարակային ներողություն խնդրել Էդիկ Գարուշի Անդրեսայանից՝ գործով ներկայացված հայցադիմումում կատարված «հայրանունը հայտնի չէ» գրառման համար:

Դատավոր Ա. Մելքունյանը հայտնեց, որ օրենքով սահմանված եռօրյա ժամկետում կողմերին կհայտնի հակընդդեմ հայցի վերաբերյալ դատարանի որոշումը՝ հերթական նիստի օր նշանակելով փետրվարի 27-ը: Նշանակված օրը դատավոր Մելքունյանը մերժեց Է. Անդրեսայանի՝ սույն գործով հայցվորի դեմ հակընդդեմ հայց հարուցելու միջնորդությունը՝ հիմնավորելով, որ հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա չէ փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը չի կարող ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծում:

Քանի որ կողմերը պնդեցին իրենց դիրքորոշումները և այդպես էլ հաշտության համաձայնության չեկան, դատարանը որոշեց ավարտել դատաքննությունը: Մարտի 12-ին Ա. Մելքունյանի նախագահությամբ դատարանը Հայկ Բաբուխանյանի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության հայցն ընդդեմ վերլուծաբան Էդիկ Անդրեսայանի և report.am կայքի խմբագիր Աբել Միքայելյանի մերժեց՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Համաձայն վճռի՝ Հայկ Բաբուխանյանից հոգուտ ՀՀ պետական բյուջեի պետք է բռնագանձվի 20 հազար ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

## **Լեռնապատի գյուղապետը պարտվեց Վճռաբեկ դատարանի որոշմամբ**

Վճռաբեկ դատարանը հոգուտ Լեռնապատի բնակիչ Բորիս Աշրաֆյանի է լուծել զրպարտության մեղադրանքով հարուցված հայցը: Աշրաֆյանը գյուղի 10 բնակիչներից մեկն է, որոնց դեմ գյուղապետ Վանո Եղիազարյանը հայցեր էր ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան զրպարտության եւ վիրավորանքի մեղադրանքով՝ որպես երրորդ անձ ներգրավելով նաեւ տարբեր լրատվամիջոցների (Աշրաֆյանի գործով ներգրավված էր «Առավոտ» օրաթերթը): Լոռու մարզի դատարանի դատավոր Վարդուհի Հովնաթյանը, որի վարույթում են գտնվել և գտնվում գյուղապետի հայցերով հարուցված 10 գործերը, ի թիվս մյուս գործերի, վճիռը կայացրել էր հոգուտ Վանո Եղիազարյանի:

Նշված գործով դատավոր Հովնաթյանը վճռել էր պարտավորեցնել Բորիս Աշրաֆյանին վիրավորանք հասցնելու համար ներողություն խնդրել գյուղապետից, հերքել զրպարտություն համարվող տեղեկությունները և նրանից հոգուտ Վանո Եղիազարյանի բռնագանձել 300 հազար դրամ (100 հազար՝ վիրավորանքի, 200 հազար՝ զրպարտության համար), ինչպես նաև 14 հազար դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար (հայցվոր Վանո Եղիազարյանը պահանջում էր հրապարակային ներողություն, հերքում, 3 մլն դրամ՝ 1 մլն վիրավորանքի, 2 մլն՝ զրպարտության համար, ինչպես նաև դատական ծախսերի փոխհատուցում):

Դատավոր Հովնաթյանի վճիռը Բորիս Աշրաֆյանը բողոքարկել էր վերաքննիչ դատարան: Բողոքը մերժվել էր, և առաջին ատյանի դատարանի վճիռը թողնվել էր օրինական ուժի մեջ: Բորիս Աշրաֆյանը վճռաբեկ բողոք էր ներկայացրել:

Ի տարբերություն ստորադաս ատյանների՝ Վճռաբեկ դատարանը վճռը լուծել է հոգուտ բնակչի: Գյուղապետն իր հայցադիմումի համար հիմք էր ընդունել «Ժամանակ» օրաթերթում տպագրված «Էս թուրքին մեր միջից հանեք» վերնագրով հոդվածը, որտեղ Բորիս Աշրաֆյանը մասնավորապես նշել է. «Գազի գործով մարդիկ կային, որ ասեն, թե տունը հեռու ա, մի երկու ստույբա ա տնգել, իրա համար գազ ա քաշել: Ես էլ որպես վարչական հանձնաժողովի հասարակական կազմակերպության նախագահ, դե էդ ժամանակվա, թե արի՛ տուգանում ենք. բա ինչ ա եղել: Հետո ասեց՝ թե ապօրինի գազ ա քաշել: Արա, ուրախ չես, ապօրինին դրն ա...2 ստույբա ա տնգել մարդը, պիտի ուրախ լինես, որ ծախս չես անում, էն մարդը գազ ա տարել... Ու հետո, որ էս ցուցակը բացվեց օգնության, ես մնացել էի ապշած... Ասեց՝ բա դու էլ գրեիր, քեզ էլ կտայի: Ասի՛ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար, բացի հորիցդ, մորիցդ, փեսենոնցիցդ... Հռոմսիմյան Նորիկը երեկ անցնում էր, ասում ա՛ արխարս անունից 100.000 գրել են՝ մեռած մարդ ա, բայց իրա ստորագրությունը չի: Սա գայթակղվեց... Հիմա սա տեսախցիկ ու բանա դրել, թերթում գրել էին, թե ինչի՞ ես տեսախցիկ դրել, ասել էր, թե՛ գյուղում անասնագողությունը տարածված ա, դրա համար տեսախցիկ եմ դրել: Խի գյուղապետարանի մոտից անասուն են գողա-

նու՞մ... Սա խայտառակություն է: Ափսոս էդ տղեն, բայց գայթակղվեց»:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները նշված տեքստի հետևյալ արտահայտությունները զրպարտություն են համարել. «Հոռոմսիմյան Նորիկը երեկ անցնում էր, ասում ա՛խապորս անունից 100.000 գրել են՝ մեռած մարդ ա, բայց իրա ստորագրությունը չի», «Ափ՝ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար բացի հորիցդ, մորիցդ, փեսենոնցիցդ...»: «Արա» և «սա» արտահայտությունները համարել են վիրավորանք:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վիճարկվող տեքստը գնահատելով արտահայտված մտքերի ամբողջության մեջ, եկել է եզրահանգման, որ վկայակոչված արտահայտությունները չեն կարող համարվել զրպարտություն և վիրավորանք: Մեջբերելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթը զրպարտության վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Մինչդեռ վիճարկվող տեքստում զրպարտություն որակված արտահայտությունները չունեն թվարկված հատկանիշներից առնվազն երկուսը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ օրենքը վերաբերում է փաստին, որոշակի կոնկրետ տվյալներին, որոնք չեն կարող լինել վերացական, ենթադրական, այլ պետք է ունենան կոնկրետ առարկայական դրսևորում: Իսկ վիճարկվող տեքստում փաստացի տվյալների մասին խոսք լինել չի կարող, քանի որ դրանք վերացական ու ենթադրական են: Նաև՝ դրանցով որևէ կերպ չի արատավորվում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Դատարանն արձանագրել է նաև, որ Բորիս Աշրաֆյանի օգտագործած՝ «Ասի՛ ամոթ քեզ, էս գյուղում էլ սոված մարդ չկար, բացի հորիցդ, մորիցդ, փեսենոնցիցդ» արտահայտությունը գնահատողական դատողություն է, պատասխանողի սուբյեկտիվ գնահատականը՝ ուղղված համայնքի ղեկավարի գործունեության բարոյական կողմին, ուստի նման պայմաններում այդ արտահայտության հավաստիության ապացուցումն ակնհայտորեն անհնարին է:

Անդրադառնալով վիրավորանք որակված արտահայտություններին և դրանք դարձյալ դիտարկելով ամբողջական մտքի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը հանգել է հետևության, որ Բորիս Աշրաֆյանը չի կատարել վիրավորական, կտրուկ կամ անզուսպ արտահայտություններ, չի գերազանցել քննադատության ընդունելի սահմանը: Ընդ որում՝ դատարանն ամրագրել է, որ քննադատության այդ շրջանակն ավելի լայն է պաշտոնատար անձանց համար՝ ի տարբերություն ֆիզիկական անձանց:

Ըստ վճռաբեկ որոշման՝ գյուղապետի գործունեության քննադատության համատեքստում «արա» և «սա» արտահայտությունները չեն կարող համարվել վիրավորանք, քանի որ ուղղված չեն անձի պատիվը կամ արժանապատվությունը արատավորելուն: «Արա» բառն ունի օժանդակ բնույթ և արտահայտության մեջ չունի էական դերակատարում, «սա»-ն իր լեզվաբանական իմաստով ցույց է տալիս խոսողին

մոտ կանգնած կամ խոսքի մեջ նոր նշված առարկա, անձ, երևույթ և կարող է վերաբերել նաև անձի: Ուստի, Վճռաբեկ դատարանը վերջնական որոշում է կայացրել բավարարել Բ. Աշրաֆյանի վճռաբեկ բողոքը: Միաժամանակ, եթե գյուղապետի հայցապահանջով և ստորադաս դատարանների որոշմամբ Բորիս Աշրաֆյանը պետք է փոխհատուցեր գյուղապետին իբր թե նրան վիրավորելու և զրպարտելու համար, ինչպես նաև նրա դատական ծախսերը, ապա Վճռաբեկ դատարանի որոշմամբ՝ այժմ գյուղապետը պետք է իր բնակչին փոխհատուցի նրա կատարած 39 հազար դրամ դատական ծախսը (19 հազար դրամ որպես վերաքննիչ բողոքի և 20 հազար դրամ որպես վճռաբեկ բողոքի համար վճարած պետական տուրքի գումար):



Նվեր Պողոսյան

## 200.000 դրամ՝ մարզպետի արատավորված պատվի վերականգնման համար

Գեղարքունիքի արդեն նախկին մարզպետ Նվեր Պողոսյանն իր անձի հանդեպ «տարածած զրպարտանքի համար» դատի էր տվել «Ժողովուրդ» օրաթերթին: Հայցի համար առիթ էր հանդիսացել թերթի 2011թ. հոկտեմբերի 7-ի համարում տպագրված «Մարզպետը կաշառք է վերցրել» վերնագրով հոդվածը: Պողոսյանը «Ժողովուրդ»-ից պահանջում էր 2,5 մլն դրամ փոխհատուցում իրեն զրպարտելու եւ վիրավորելու համար:

Թերթը գրել էր, որ Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանն իր վարորդի միջոցով 3000 ԱՄՆ դոլար գումար է վերցրել մարզի Թթուջուր գյուղի դպրոցի պատմության ուսուցչին մրցույթում «հաղթանակ» պարգևելու համար: Այդ մասին թերթին ասել էր մրցույթի մյուս մասնակից Աննա Թորոսյանը:

«Թթուջուր գյուղի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին մարզպետարանը որեւէ տեղեկություն չունի, բացառությամբ այն փաստի, որ տնօրենի 22.08.2011թ. N220 գրությամբ Գեղարքունիքի մարզպետին տեղեկացվել է, որ «Թթուջուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել է պատմության ուսուցչի թափուր տեղ՝ 10 դասաժամով: Դրանից հետո դպրոցի տնօրենը որեւէ տեղեկատվություն չի ներկայացրել մարզպետին», - տեղեկացրել էին մարզպետարանից:

«Ժողովուրդ» օրաթերթն իր հերթին հայտարարել է, թե տարօրինակ է, որ Նվեր Պողոսյանը որեւէ կերպ չի հերքում կաշառքի փաստը: «Ժողովուրդ» օրաթերթի էլեկտրոնային փոստին ուղարկվել է հաղորդագրություն Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից, որով հայտարարվում է, թե «ԲՀԿ-ական մարզպետը 3000 դոլար կաշառք է վերցրել» վերնագրով հոդվածը բացառապես զրպարտանք է եւ չի համապատասխանում իրականությանը:

«Նախ տեղեկացնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված հոդվածը չունի այն վերնագիրը, որը նշված է հաղորդագրությունում: Ու անհասկանալի է, թե ինչու է մարզպետը նույնիսկ այդտեղ ընդգծել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանն իր անդամակցությունը: Նվեր Պողոսյանը 3000 դոլար կաշառք վերցնելու պնդմանն ի պատասխան՝ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Սոնա Գրիգորյանի հետ հեռախոսազրույցում ասել է, որ դա հերյուրանք է եւ անջատել է հեռախոսը: Այդ դեպքում անհասկանալի է, թե մարզպետն ինչն է համարում «անձի հանդեպ տարածած զրպարտանք», եթե կոնկրետ կաշառքի փաստը չի հերքում իր պաշտոնական գրության մեջ:

Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացնում է, որ «Մարզպետը կաշառք է վերցրել» խնդրո առարկա նյութում հրապարակել է երկու կողմերի կարծիքը՝ մարզպետի եւ կաշառքի փաստը պնդող Աննա Թորոսյանի, որը հաստատող ձայնագրությունը խմբագրությունում է: Կարծում ենք՝ հասկանալի է, թե ինչ հետաքրքիր դատավարություն է սպասվում «անձի զրպարտություն» ապրած մարզպետի գործով»,- գրել է թերթը:

## **«Ժողովուրդի» տեղեկատվության աղբյուրը խուսափում է հաստատել կաշառքի մասին իր իսկ խոսքերը**

2011թ. նոյեմբերի 18-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում (նախագահող՝ Արթուր Թամրազյան) սկսվել էր Նվեր Պողոսյանի ներկայացրած հայցի քննությունն ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի:

Դատավարության ընթացքում մարզպետ Ն. Պողոսյանի փաստաբանները նշել են, որ «Ժողովուրդ» օրաթերթն իրավունք չունի մարզպետի՝ կաշառք վերցնելու մասին նյութ հրապարակել, քանի որ նա հանրային անձ է: Ավելին, ըստ նրանց՝ թերթը պարտավոր էր պարզել կաշառքի մասը, նոր տպագրել: Իսկ «Ժողովուրդի» ներկայացուցիչ Հակոբ Ճարոյանն ասել էր, որ թերթը պարտավոր չէր քննություն վարել եւ պարզել՝ որտեղ եւ ինչ հանգամանքներում, ում միջոցով է մարզպետը կաշառք վերցրել: Թերթը հանդես է եկել ամբինի դերում՝ հրապարակել է Թթուջուր գյուղի դպրոցի քննության մասնակից Աննա Թորոսյանի խոսքերը, որն ասել էր, թե մարզպետին իր մրցակիցը գումար է տվել վարորդի միջոցով:

Դատավոր Ա. Թամրազյանը եւս հայցվորին հարց էր տվել. «Չե՞ք կարծում, որ թերթը մեջբերում է կատարել»: «Ոչ» պատասխանել էին մարզպետի փաստաբանները:

Դատավարությանը ներկա Ա. Թորոսյանը, ով թերթին հայտնել էր կաշառքի մասին, հաստատել էր իր ասած բոլոր խոսքերը, բայց երբ հասել էր մարզպետի՝ վարորդի միջոցով վերցրած 3000 ԱՄՆ դոլար կաշառքի դրվագին, սկսել էր չհիշել: Նա վախվորած հայացքով նայել էր այս ու այն կողմ՝ հայտարարելով, որ մարզպետի կաշառք վերցնելու մասին ինքը ոչինչ չգիտի, ընդամենը լսել է գյուղի «ասեկոսեններից»:

Այդ ժամանակ «Ժողովուրդը» միջնորդել էր դատարանին՝ լսել Աննայի ձայնագրությունը: Դատարանը բավարարել էր միջնորդությունը: Ձայնագրության մեջ Աննան ասում էր, որ իր ամուսնու հետ գնացել է մարզպետի վարորդի մոտ, որը Վահան գյուղից է, ով ասել է, որ այդ գործն արդեն չի լինի, քանի որ մյուս մասնակցից վերցրել է 3000 ԱՄՆ դոլար ու տվել մարզպետին: «Որ իմանայի դուք էիք, չէի անի այդ գործը», - ըստ Աննայի՝ ասել էր մարզպետի վարորդը:

## **«Ժողովուրդը» հրաժարվեց 100 հազար դրամ վճարել Գեղարքունիքի մարզպետին**

Դատավարությունը շարունակվեց 2012թ.: Հունվարի 17-ին կայացած դատական նիստի ընթացքում «Ժողովուրդ» օրաթերթի ներկայացուցիչ Հակոբ Ճարոյանը միջնորդեց, որ դատավորը նախնական դատական նիստ անցկացնի, քանի որ ներկայացվել է հակընդդեմ հայց, եւ ապացուցման խնդիրներ կան: Սակայն մարզպետի ներկայացուցիչներն առարկեցին: Իսկ գործում որպես երրորդ անձ ներգրավված Աննա Թորոսյանը համաձայնեց «Ժողովուրդ»-ի ներկայացուցիչի հետ: Դատավորը մերժեց օրաթերթի ներկայացուցիչի միջնորդությունը:

Հակընդդեմ հայցով «Ժողովուրդ» օրաթերթը մարզպետից հրապարակային ներողություն էր պահանջում եւ խորհրդանշական մեկ լուծմայի փոխհատուցում, «քանի որ Պողոսյանն իր անպատասխանատու հայտարարություններով արատավորել է «Ժողովուրդի» պատիվը»:

Մարտի 19-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Արթուր Թամրազյանը վճռեց հոգուտ Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանի «Ժողովուրդ» օրաթերթից բռնագանձել 200 հազար դրամ, որից 100 հազար դրամը՝ որպես փոխհատուցման, 100 հազար դրամը՝ որպես փաստաբանի վարձատրության գումար, և պարտադրել հերքում: Իսկ «Ժողովուրդի» ներկայացրած հակընդդեմ հայցը դատավորը առանց որևէ մեկնաբանության մերժեց:

«Փոխանակ մարզպետն Աննային մեղադրեր իրեն ծանր հանցագործության մեջ մեղադրելու համար, «Ժողովուրդից» է ցանկանում 100 հազար դրամով գնել իր պատիվը: Եվ լավ է, որ դատավորը պաշտոնապես արձանագրեց՝ մարզպետ Նվեր Պողոսյանի արժանապատվությունը ոչ թե 2.5 մլն արժե, այլ ընդամենը 100 հազար ՀՀ դրամ», - արձանագրեց օրաթերթը:

«Ժողովուրդը» հրաժարվեց վճարել այդ գումարը մարզպետին՝ թերթի դեմ վճիռը համարելով անարդար: Թերթի խմբագրությունը հղում է անում «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետին, որի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողն ազատվում է տվյալ տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե դա հրապարակային ելույթի ... բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն է, և դա տարածելիս ինքը կատարել է հղում այդ աղբյուրին:

«Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք... Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Այսպիսով, «Ժողովուրդը» պահպանել է օրենքների, էթիկայի ու բարեխղճության բոլոր նորմերը: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի և 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով իրականացրել է մասնագիտական օրինական գործունեություն և վիճահարույց հոդվածում բառացի վերարտադրել է ինչպես մարզպետ Նվեր Պողոսյանին կաշառք վերցնելու մեջ մեղադրող Աննա Թորոսյանի, այնպես էլ մարզպետի խոսքերը»,- տարածած հաղորդագրության մեջ գրել էր «Ժողովուրդը»:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը թերթը բողոքարկեց ՀՀ վերաքննիչ դատարան, որն այն քննեց մայիսի 31-ին:

Դատարանի այն հարցին, թե արդյոք կողմերը չեն ցանկանում այս գործով հաշտության գալ, կողմերը որևէ առարկություն չհայտնեցին դատարանի առաջարկին: Այդ պատճառով նիստը հետաձգվեց մինչև հունիսի 14-ը՝ այն սպասումով, որ կողմերը հաշտության համաձայնություն կնքած կներկայանան նիստին: Սակայն հունիսի 14-ի նիստին հայցվորի ներկայացուցիչները դատարանին տեղեկացրին, որ կողմի հետ հաշտության եզրեր այդպես էլ չեն գտել:

Սեպտեմբերի 6-ին ՀՀ վերաքննիչ դատարանը մերժեց «Ժողովուրդ» օրաթերթի բերած վերաքննիչ բողոքն ընդդեմ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ. մարտի 19-ի վճռի:



Վլադիմիր Գասպարյան



Արթուր Մարտինց

## Պատարանը վճիռ կայացրեց հոգուև ոստիկանապետի

2012թ. փետրվարի 20-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Ալեքսեյ Սուբոյանի նախագահությամբ տեղի ունեցավ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն (ՀՔԱՎ) ընդդեմ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված փաստի հատուցման պահանջի վերաբերյալ նախնական դատական նիստը:

Հայցվորի ներկայացուցիչ Վահե Գրիգորյանն ասաց, որ իրենք հայցապահանջին լրացում են կատարել և ցանկանում են այն գրավոր ներկայացնել դատարանին: Պատասխանող կողմի ներկայացուցիչ Արա Զոհրաբյանն արդեն հասցրել էր ծանոթանալ հայցապահանջի լրացմանը և նշեց, որ դա ոչ թե հայցի պահանջների լրացում է, այլ որոշակի պահանջներից հրաժարվելու դիրքորոշում, որում առկա են իրավական փաստարկներ՝ կապված իրենց պատասխանում նշված փաստարկների հետ: Փաստաբանն ավելացրեց, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված երկշաբաթյա ժամանակ չեն պահանջում, որպեսզի ներկայացնեն իրենց դիրքորոշումը բերված հայցապահանջի լրացմանը, քանի որ կարծում են, որ այդպիսի անհրաժեշտություն չկա:

Վ. Գրիգորյանը դատարանին ներկայացրեց հայցի առարկան, որում ասվում է, որ հայցվորի կողմից հայցադիմում ներկայացնելու համար հիմք են հանդիսացել 2011թ. հոկտեմբերի 17-ին hrparak.am էլեկտրոնային էջում «Ով արյուն կլափի, թող գա իր երեխու դեմ» հոդվածում և 2011թ. հոկտեմբերի 15-ին «Զինուժ» ծրագրում ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի տված հարցազրույցները: Ըստ հայցվորի՝ այդ արտահայտությունները պարունակում են վիրավորանք և զրպարտություն, որոնք փաստ են հասցնում կազմակերպության գործարար համբավին:

Հայցվորը դատարանից խնդրեց ներկայացված հայցադիմումը բավարարել և պարտավորեցնել պատասխանողին հրապարակայնորեն

հերքել գրապարտություն համարվող տվյալները և նրանից բռնագանձել 10 (տասը) ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի փոխհատուցում:

Գասապարյանի շահերի պաշտպան Ա. Զոհրաբյանի այն հարցին, թե արդյոք հայցի հիմքում դրված «Հրապարակ» օրաթերթի և «Զինուժ» ծրագրի հրապարակումների փաստական հանգամանքներից բացի այլ փաստական հանգամանք հայցադիմումի հիմքում դրված է, Վ. Գրիգորյանը պատասխանեց, որ բացի այդ երկու հրապարակումներից՝ նաև դիտարկված է news.am-ի հարցազրույցը, որում պատասխանողը հստակեցրել է, որ իր նախորդ հարցազրույցներում նա նկատի է ունեցել հայցվորին՝ Ա. Սաքունցին: Հայցվորը նշեց, որ այն ներկայացվում է որպես հերքում պատասխանողի կողմից նշված այն փաստարկի, թե պատասխանողը հայցվորին նկատի չի ունեցել իր վիրավորական բնույթի արտահայտություններում: Հայցվոր Արթուր Սաքունցը ներկայացրեց news.am-ում հրապարակված այդ հոդվածը՝ «Վլադիմիր Գասապարյանը ներել է իրեն դատի տված Արթուր Սաքունցին»:

## **Դատավոր. «Այդչիկներով լակոտներ» ասելով՝ ոստիկանապետն ի՞նչ է նկատի ունեցել**

Հունիսի 27-ի դատական նիստին Վլադիմիր Գասապարյանի ներկայացուցիչ Արա Զոհրաբյանը դատարանին ներկայացրեց պատասխանողի դիրքորոշումն առ այն, որ ամբողջությամբ հերքում է հայցվորի պահանջը: Ա. Զոհրաբյանն անդրադարձավ այն հանգամանքին, որ ոչ առևտրային-հասարակական կազմակերպություն հանդիսացող հայցվորը չունի և չի կարող ունենալ գործարար համբավ: Ըստ պատասխանողի՝ հայցվորը կարող է ունենալ բարի համբավ:

Հայցադիմումում Վ. Գրիգորյանը խնդրել է դատարանին հայցադիմումը համարել ներկայացված հայցային վաղեմության ժամկետի սահմաններում, քանի որ առաջին անգամ հայցվորը հայցադիմում է ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի դատարան 2011թ. նոյեմբերի 17-ին՝ նշելով պատասխանողի՝ իրեն հայտնի բնակության վայրի հասցեն: Սակայն սույն գործը վերադարձվել է: Պատկան մարմինների կողմից պատասխանողի հասցեն հայտնելու գործում համագործակցության լիակատար բացակայության պայմաններում հայցվորը 2011թ. դեկտեմբերի 12-ին հայցադիմում է ներկայացրել պատասխանողի աշխատավայրի հասցեով:

Ա. Զոհրաբյանը նշում է, որ Արաբկիրի դատարանը հայցադիմումը վերադարձրել է, եւ համապատասխան որոշումից հետևում է, որ հայցվորը պատասխանողի բնակության հասցեն նշել է Դավթաշենի տարածքում, սակայն դիմել է ոչ այդ տարածքը սպասարկող դատարանին: Ըստ պատասխանողի՝ հայցվորն այդ որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում չի դիմել համապատասխան դատարան և խախտել է Քաղ. օր.-ի 1087.1 հոդվածով նախատեսվող գրապարտության մասին հայտնի դառնալու պահից դատարան դիմելու մեկ ամսվա ժամկետը:

Վ. Գրիգորյանը իր հայցադիմումում խնդրել է դատարանին պարտավորեցնել պատասխանողին հերքել գրապարտություն համարվող փաստացի տվյալները, որոնք են.

«20 տարեկան պոչիկներով լակոտներին, որ բերել են Հելսինկյան կազմակերպությունները, ու էդ լակոտների բերանների արտահայտություններն անձնական վիրավորանք են հասցնում: Երբ փալնքտու լակոտը երկիր պահած, երկրի համար տուժած մարդուն վիրավորում է լկտի բացականչություններով, ես դա չեմ հանդուրժելու... Նրանք անպատվում են պաշտպանության նախարարին՝ ասելով՝ էդ միտանին: Ես ասում եմ՝ էդ չորստանիններիցդ շատ գործ է անում մեր միտանին, չէ՞ որ էդ մարդն ինչ որ արել է, ես չեմ պաշտպանում, արել է էս երկրի համար, որ էդ ոտքը կորցրել է»:

«Ո՞նց կարող է մարդու սիրտ ցավա, երբ նա մտածում է՝ ինչքան աղմկահարույց, ինչքան վատ դեպք պատահի, էնքան լավ է, որովհետև դրա վրա ավելի շատ փող կարող է աշխատի»:

Ա. Ջոհրաբյանը, հղում կատարելով Քաղ. օր.-ի 1087.1 հոդվածին, առ այն, որ գրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը, նշեց, որ հայցվորի կողմից ներկայացված 2011թ. նոյեմբերի 22-ի՝ news.am կայքում հրապարակված «Վլադիմիր Գասպարյանը ներել է իրեն դատի տված Արթուր Սաքունցին» վերտառությամբ հոդվածը չի կարող այդպիսի ապացույց հանդիսանալ: Ըստ փաստաբանի՝ հոդվածում խոսքը Վ. Գասպարյանի դեմ հայց ներկայացրած Արթուր Սաքունցին ներել կամ չներելու մասին է, քանի որ հայցվոր կազմակերպության ղեկավարը հենց Սաքունցն է, հետևաբար Վ. Գասպարյանը պետք է ներելու մասին խոսեր Ա. Սաքունցի վերաբերյալ:

Ըստ Ա. Ջոհրաբյանի՝ Վ. Գասպարյանը «20 տարեկան պոչիկներով լակոտներ», ինչպես նաև «չորստանիններ» ասել է ՀՀ պաշտպանության նախարարին վիրավորանք հասցրած անձանց և ոչ թե հայցվորին կամ Հելսինկյան կազմակերպություններին կամ ակցիայի մասնակիցներին կամ զոհված զինվորների ծնողներին:

Անդրադառնալով «Ո՞նց կարող է մարդու սիրտ ցավա, երբ նա մտածում է՝ ինչքան աղմկահարույց, ինչքան վատ դեպք պատահի, էնքան լավ է, որովհետև դրա վրա ավելի շատ փող կարող է աշխատի» արտահայտությանը՝ Ա. Ջոհրաբյանը նշեց, որ Վ. Գասպարյանը քննադատել է բացասական երևույթները և ոչ թե կոնկրետ անձանց:

Վ. Գրիգորյանի այն հարցին, թե Վ. Գասպարյանն իր արտահայտություններում արդյոք նկատի է ունեցել հայցվորին, Ա. Ջոհրաբյանի կողմից չհնչեց հստակ «այո» կամ «ոչ», այլ այն, որ Վ. Գասպարյանը նկատի է ունեցել ՀՀ պաշտպանության նախարարին վիրավորանք հասցրած անձանց: Ա. Ջոհրաբյանը նշեց նաև, որ հայցվորը պետք է ապացուցի, որ այդ արտահայտությունները հայցվորին են ուղղված եղել, այլ ոչ թե պատասխանողը:

Դատավոր Ա. Սուքոյանը ցանկացավ իր հերթին ճշտել, թե «պոչիկներով լակոտներ» արտահայտությունն անելով, «պոչիկներով» ասելով՝ Վ. Գասպարյանը ինչ է նկատի ունեցել, սակայն պատասխան չստացավ:

Այնուհետև Վ. Գրիգորյանը դատարանի համար հստակեցրեց հայցվորի պահանջն առ այն, որ հայցվորը գրպարտություն է համարում ոչ թե այն, որ «20 տարեկան պոչիկներով լակոտներ» է բերել

հայցվորը, այլ այն հանգամանքը, որ հայցվորի կողմից բերված վերոնշյալ անձինք, ըստ Վ. Գասպարյանի, ՀՀ պաշտպանության նախարարին վիրավորանք են հասցրել:

Այսքանով գործի քննությունն ավարտվեց, և դատական ակտի հրապարակման օր նշանակվեց հուլիսի 11-ը: Սակայն հայտարարված օրը վճռի հրապարակումը հետաձգվեց, քանի որ դատավորը հայտարարեց, որ լրացուցիչ հետազոտություն պետք է իրականացվի հետևյալ արտահայտության համար. «20 տարեկան պոչիկներով լակոտներին, որ բերել են Հելսինկյան կազմակերպությունները, ու էդ լակոտների բերանների արտահայտություններն անձնական վիրավորանք են հասցնում: Երբ փախնոտ լակոտը երկիր պահած, երկրի համար տուժած մարդուն վիրավորում է լկտի բացականչություններով, ես դա չեմ հանդուրժելու... Նրանք անպատվում են պաշտպանության նախարարին՝ ասելով՝ էդ միտանին: Ես ասում եմ՝ էդ չորստանիններիցդ շատ գործ է անում մեր միտանին, չէ՞ որ էդ մարդն ինչ որ արել է, ես չեմ պաշտպանում, արել է էս երկրի համար, որ էդ ոտքը կորցրել է»:

Հուլիսի 20-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ալեքսեյ Սուբոյանը մերժեց «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի հայցն ընդդեմ Վլադիմիր Գասպարյանի:

## **Վերաքննիչ դատարանը մերժել է ՀՔԱՎ բողոքն ընդդեմ ոստիկանապետի օգտին կայացված վճիռ**

Հոկտեմբերի 17-ին ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել է «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի վերաքննիչ բողոքն ընդդեմ ընդհանուր իրավասության դատարանի՝ հօգուտ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի կայացրած վճռի:

Վերաքննիչ բողոքում հայցվորը նշել է, որ դատարանը որևէ գնահատականի չի արժանացրել այն հանգամանքը, որ դատավարության ամբողջ ընթացքում պատասխանողն այդպես էլ չէր հերքել հայցվորին նկատի ունենալու հանգամանքը: Բողոքաբերը նշել էր, որ պատասխանողի ներկայացուցիչը դատավարական բարձրակարգ հմտությունների և բավականին հետաքրքիր պաշտպանության ձևի կիրառմամբ, այնուամենայնիվ, իր կամքից դուրս հանգամանքների բերումով, ի վիճակի չէր ապահովել հետևյալ հարցի հստակ պատասխանը. «Արդյո՞ք պատասխանողը նկատի էր ունեցել հայցվորին»:

Բողոքաբերը նշել է, որ դատարանի կողմից սխալ են կիրառվել ՀՀ քաղ.օր.-ի 19-րդ և 1087.1-րդ հոդվածները, ինչի հետևանքով հայցվորը գրկվել է նշված հոդվածներով նախատեսված իր իրավունքներից և խնդրել է վերաքննիչ դատարանին՝ հայցը մերժելու մասով բեկանել դատարանի վճիռը և գործն այդ մասով ուղարկել նոր քննության:

Վերաքննիչ բողոքի պատասխանում Վ. Գասպարյանի շահերը դատարանում ներկայացնող փաստաբան Արա Զոհրաբյանը հայտնել է, որ վերաքննիչ բողոքում հայցվորը միջնորդել է հարգելի համարել բողոքը բերելու համար բաց թողնված մեկօրյա ժամկետը՝ որպես հարգելի պատճառ նշելով դատարանի կողմից 21.07.2012 թ. վճիռը հայց-

վորին ուղարկելու հանգամանքը, սակայն պատասխանողը նշել է, որ բողոքը պետք է վերադարձվի, քանի որ, ՀՀ քաղ. դատ. օր.-ի համաձայն՝ դատարանը վճռի օրինակը մինչև հրապարակման հաջորդ օրը ուղարկել է հայցվորին:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ պատասխանող կողմը ընդամենը քննադատել է հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները և ոչ թե կոնկրետ անձանց, այդ թվում նաև՝ հայցվորին՝ նկատի ունենալով նաև այն փաստը, որ հայցվորը, հանդիսանալով հասարակական կազմակերպություն, նպատակ է հետապնդում աջակցելու ժողովրդավարական համակարգի ամրապնդմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը, այսինքն՝ ըստ էության կողմ է հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթների բացահայտման և քննադատման գործընթացին:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը, հիմնավոր չհամարելով վերաքննիչ բողոքի հիմքերը, գտել է, որ ընդհանուր իրավասության դատարանը, կատարելով սույն գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, կայացրել է վեճն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի այն բեկանելու հիմքեր առկա չեն, հետևաբար բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով ստորադաս ատյանի վճիռը:

## **3 մլն 264 հազար դրամի պահանջը դատարանը նվազեցրեց մինչև 50.000 դրամ**

«Իջեանի ճՇՇ» ՓԲԸ-ն 2011թ. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացրել «Իջեան ստուդիա» ՍՊԸ ընկերության եւ «Իջեան ստուդիա» հեռուստաընկերության լրագրող Նաիրա Խաչիկյանի դեմ: Ընկերությունը պահանջում էր պարտավորեցնել Նաիրա Խաչիկյանին եւ «Իջեան ստուդիա» ընկերությանը՝ հրապարակայնորեն ներողություն խնդրել եւ «Իջեանի ճՇՇ» ՓԲ ընկերության օգտին նրանցից համապարտությամբ բռնագանձել 3 մլն դրամ՝ որպես փոխհատուցում, եւ 264 հազար դրամ՝ որպես դատական ծախս, որից 200 հազար դրամը՝ փաստաբանին վճարած վարձատրության գումար է: 64 հազարը՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

«Իջեանի ճՇՇ» ՓԲԸ-ի հայցադիմումի մեջ նշված է, որ 2011թ. հունիսի 21-ին հայկական երկրորդ հեռուստաալիքի «Լրաբեր» լրատվական ծրագրով, ինչպես նաեւ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ մի քանի անգամ հեռարձակվել են տեսանյութեր, որոնց մեջ տեղ են գտել ընկերության գործարար համբաժնե արտավարող արտահայտություններ: Դրանք են՝ «գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված, մի պարզ անվամբ՝ Իջեանի ճանշին ձեռնարկություն», «մասնագիտական որակի եւ անաչառության պակասն է, որ ծնել է նման հետեւանքներ», «քանդել եւ սալահատակը ծածուկ վաճառել է», «Իջեանի ճանշինի թեթեւ ձեռքով վաճառվել են», «Մետաղագործների փողոցի 36 մլն դրամի ծախսման ու մսխման աշխատանքների մասին են բարձրաձայնում բնակիչները հորդառատ անձրևներից հետո»:

«Իջեանի ճՇՇ» ՓԲԸ-ի հայցով դատավարությունը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում սկսվել է 2011-ի օգոստոսի 18-ին: Դատարանում ցուցադրվել են խնդրահարույց տեսանյութերը, կողմերը ներկայացրել են իրենց նկատառումները:

Դատաքնության ընթացքում հայցվոր ընկերությունը պնդել է, որ վերը նշված վիրավորական ու զրպարտող արտահայտությունները վնասել են այլ սուբյեկտների հետ իրենց գործարար հարաբերություններին: Պարզաբանելով իր հայցապահանջը՝ հայցվորը հայտնել է, որ այդ արտահայտություններից առաջին երկուսը՝ վիրավորական, իսկ մնացած երեքը զրպարտող բնույթ ունեն: Պատասխանող կողմն էլ պնդել է, որ լրատվության միջոցով բարձրաձայնվել են հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ հանրային վարի վերանորոգման աշխատանքների թերությունների մասին: Պատասխանողները նշել են նաև, որ 27.06.2011թ. հաղորդման ժամանակ հայցվոր ընկերության տնօրենը և այլ աշխատակիցներ հնարավորություն են ստացել ելույթ ունենալ և ներկայացնել իրենց պարզաբանումներն ու տեսակետները, որից հետևում է, որ հայցվոր ընկերությունը ստացել է հերքման և պատասխանի հնարավորություն և, հետևաբար, չի կարող հայցել իրավական պաշտպանության այլ միջոցներ, տվյալ դեպքում՝ գումարային փոխհատուցում Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 10-րդ մասի համաձայն:

2012թ. ապրիլի 27-ին հրապարակելով վճիռը՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը եզրահանգել է, որ առաջին երկու արտահայտությունները՝ «գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված մի պարզ անվամբ՝ Իջևանի ճանշին ձեռնարկություն» և «մասնագիտական որակների ու անաչառության պակասն է, որ ծնել է նման հետևանքներ», իրենց բնույթով գնահատողական դատողություններ են, որոնք վիրավորական չեն կարող համարվել: Թեև լրագրողը ընտրել է չափազանցություններ, սակայն այդպիսի ոճով արտահայտել է կարծիք, որն ինքնին արատավորող բնույթի չէ: Մնացած արտահայտությունները գնահատելով որպես փաստի մասին հայտարարություններ՝ դատարանը եզրահանգել է, որ «սպառնալից քանդել և ծածուկ վաճառել են», «Իջևանի ճանշինի թեթև ձեռքով վաճառվել են» և «36 մլն դրամի ծախսման ու մսխման» արտահայտությունները որպես փաստական տվյալներ չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են կազմակերպության գործարար համբավը: Այդ հիմքով դատարանը սահմանել է, որ հեռուստաընկերությունը մնաս է հասցրել հայցվոր ընկերության գործարար համբավին՝ հեռարձակելով զրպարտող բնույթի տեղեկատվություն:

Հայցվոր ընկերության կրած վնասը փոխհատուցելու նպատակով դատարանը որոշել է հեռուստաընկերությունից եւ լրագրող Ն. Խաչիկյանից բռնագանձել ընդամենը 50.000 դրամ: Փոխհատուցման նման ցածր գումարը դատարանը հիմնավորել է այն հանգամանքով, որ 27.06.2011թ. Իջևանի հեռուստատեսության հեռարձակված «Սալիկները՝ ապահով հանգրվանում» հաղորդմամբ մասնակիորեն վերականգնվել է ընկերության արատավորված պատիվը, քանի որ վերջինս հնարավորություն է ստացել իր տեսակետները ներկայացնել:

## **Վերաքննիչ դատարանը գործը բեկանել է**

Ընդհանուր իրավասության դատարանի վճիռը «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ն բողոքարկեց ՀՀ վերաքննիչ դատարան, որն ամբողջությամբ բեկանեց առաջին ատյանի դատարանի որոշումը և գործն ուղարկեց առաջին ատյանի դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննություն կատարելու համար: Հիմնվելով Վճռաբեկ դատարանի 27/04/2012թ. նախադեպի վրա՝ իր որոշումը դատարանը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Գնահատման առարկա պետք է դառնա օգտագործված միջոցի կամ եղանակի՝ տեղեկատվության արագ և համընդհանուր տարածման հարցը... զանգվածային լրատվության միջոցներով կատարված հրապարակումների տարածումը շատ ավելի արագ է, քան եթե հրապարակումն արվեր անձանց փոքրաթիվ խմբի շրջանակում: Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև տեղեկատվությունը տարածելու շրջանակը: Չանգվածային լրատվության միջոցները, որոնք գործում են տեղական մակարդակում (մարզ, քաղաք), ունեն ավելի փոքր տարածման շրջանակ, քան հանրապետության ամբողջ տարածքով հեռարձակվող և տարածվող լրատվամիջոցները:

Նյութական փոխհատուցում նշանակելու դեպքում անհրաժեշտ է, որ դատարանները մեծ ուշադրություն դարձնեն փոխհատուցվող գու-

մարի չափի սահմանմանը, պատասխանողներից պահանջեն նրանց եկամուտների վերաբերյալ պետական իրավասու մարմիններին ներկայացված ֆինանսական և այլ փաստաթղթեր... հակառակ դեպքում մեծ չափով փոխհատուցումները կարող են ծանր հետևանքներ ունենալ վերջիններիս բնականոն գործունեությունը շարունակելու առումով:

...Տվյալ դեպքում անհասկանալի է, թե ինչ հանգամանքներ հաշվի առնելով է դատարանը հանգել այն հետևության, որ փոխհատուցման չափը պետք է լինի 50.000 ՀՀ դրամ այն պայմաններում, երբ հայկական երկրորդ հեռուստաընկերությունը եթեր է հեռարձակվում ամբողջ հանրապետությունում, այսինքն՝ ամբողջ հանրապետությունով գործունեություն ծավալող ընկերության մասին հնչեցված արտավիրող տեղեկությունները տարածվել են այդ ընկերության հետ գործարար կապերի մեջ գտնվող անձանց ամբողջ շրջանակում:

Գործում առկա չէ Նաիրա Խաչիկյանի գույքային դրությունը հաստատող որևէ վերաբերելի ապացույց... որի հիման վրա հնարավորություն կունենար պարզել պատասխանողի գույքային դրությունը և ըստ այդմ էլ սահմաներ հնչեցված վիրավորանքին և զրպարտությանը համարժեք փոխհատուցման ողջամիտ չափ: Դատարանն ինքն է արձանագրել այն փաստը, որ պատասխանողի գույքային դրության վերաբերյալ որևէ ապացույց առկա չէ, սակայն, այդուհանդերձ, որպես փոխհատուցման չափ սահմանել է 50.000 ՀՀ դրամ»:

Վերաքննիչ դատարանը նաև կասկած է հայտնել, թե արդյոք 27.06.2011թ. հեռարձակված հեռուստաընկերության երկրորդ թողարկումը կարելի է ընդունել որպես պատասխանողի կողմից կատարված հերքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորն ինքն է փորձել հերքել իր մասին տարածված տեղեկությունները, մինչդեռ հերքումը որպես այդպիսին պետք է տա տեղեկություններ տարածած անձը, այլ ոչ թե նա, ում մասին տարածել են տեղեկությունները: Այս հիմքով վերաքննիչ դատարանը պահանջել է նոր դատաքննության ընթացքում քննության առարկա դարձնել նաև այն հարցը, թե արդյոք հայցվորը մինչ դատական պաշտպանությունը դիմել է պատասխանողներին՝ հերքելու իրենց հրապարակած տեղեկություններն այն նույն եղանակներով, ինչով որ տեղի է ունեցել տեղեկությունների տարածումը:

## **«168 ժամ» թերթը հերքեց հրապարակած տեղեկությունները**

Երևանի Կենտրոնի և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդիկ Ավետիսյանը 2012թ. հուլիսի 12-ին հրապարակեց Մարգարիտա Մարտիրոսյանի հայցով դատական ակտն ընդդեմ Հռիփսիմե Կարապետյանի և երրորդ անձ «168 ժամ» թերթի: Համաձայն վճռի՝ «168 ժամ» թերթը պարտավոր է հերքել 04.11.2010թ. թերթում տպագրված «Չեմ կարող էսպես ապրել, անմեղ մարդ է դատվել» վերնագրով հոդվածում պարունակվող, հայցվորի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները, իսկ Հռիփսիմե Կարապետյանը պետք է 100 հազար դրամ վճարի հայցվորին փաստաբանական ծառայությունների համար:

Հայցվորն իր հայցադիմումում պատճառաբանել էր, որ պատասխանողի հրապարակած հոդվածն իր հասցեին ակնհայտ անհիմն մեղադրանքներ և իր պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ է պարունակում: Ըստ հայցվորի՝ հոդվածում առկա այդ արտահայտություններն են.

«...Հ. Կարապետյանը վստահեցնում է, որ սկեսուրն ու ամուսինը՝ սպանության համար դատապարտված Ա. Մանասերյանը, սպառնացել են ճշմարտությունն ասելու, վկայություն տալու դեպքում իր նկատմամբ քայլեր ձեռնարկել...»:

«...Մարգարիտան՝ սկեսուրս, շանտաժի է դիմել: Նա բոլորին կաշառելով՝ մարդկանց դատում, նստացնում է...»:

Հայցվորը խնդրել էր պարտավորեցնել պատասխանողին՝ հերքելու հոդվածում պարունակվող տեղեկություններն ամբողջությամբ՝ հերքումը տպագրելով նույն շաբաթաթերթում, ինչպես նաև Հռիփսիմե Կարապետյանից բռնագանձել 500 հազար դրամ՝ որպես փաստաբանական ծախսերի փոխհատուցում:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանը պնդեց իր դիրքորոշումն առ այն, որ պատասխանողի՝ «Չեմ կարող էսպես ապրել, անմեղ մարդ է դատվել» վերնագրով հոդվածը հայցվորի հասցեին ակնհայտ անհիմն մեղադրանքներ և վերջինիս պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ է պարունակում: Պատասխանող կողմը նիստերին հիմնականում չէր ներկայանում:

Ընդհանուր իրավասության դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ և չի բողոքարկվել վերաքննիչ դատարան: Իսկ թերթը իր կայքէջից հեռացրել է վիճահարույց հոդվածը եւ տպագրել հերքումը:



## **Նախկին տնօրենի տղան պարտվեց թերթի ու լրագրողի դեմ դատական վեճում**

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դեռեւս անցյալ տարվանից քննվում էր Տիգրան Տերտերյանի օրինական ներկայացուցիչ Համետ Տերտերյանի՝ որդու պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները հերքելու և զրպարտության համար փոխհատուցում վճարելու պահանջով դատական նիստն ընդդեմ «168 ժամ» թերթի և լրագրող Մարինե Մարտիրոսյանի:

Էջմիածնի թիվ 2 ավագ դպրոցի աշակերտ, նույն դպրոցի նախկին տնօրենի որդի Տիգրան Տերտերյանի՝ դատարան դիմելու պատճառ էր դարձել «168 ժամ» թերթում տպագրված նյութը, որում նշվում էր, որ, ըստ էջմիածնում շրջանառվող խոսակցությունների, նախկին տնօրենի տղան այրել է դպրոցի արխիվը:

Թերթին եւ լրագրողին նման հայցով դատի էր տվել նաեւ Տիգրանի մայրը՝ դպրոցի նախկին տնօրեն Սուսաննա Նազարյանը, սակայն նույն դատարանի նույն դատավորը (Ա. Մելքումյանը) անցյալ տարվա նոյեմբերին կասեցրեց գործի քննությունը մինչեւ քրեական գործի նախաքննության ավարտը: Իսկ քրեական գործի հարուցվել էր թերթի եւ լրագրողի՝ Նազարյանին վերաբերող հրապարակումների հիման վրա: Նախաքննությունը դեռ չի ավարտվել: Նազարյանը նույնպես պահանջում է հերքել իր պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները եւ զրպարտության համար վճարել 2 մլն դրամ:

Դատավարության ընթացքում դատարանը լսեց գործով անցնող միակ վկային՝ Սիրեն Եղիազարյանին, ով ցուցմունք տվեց առ այն, որ ի թիվս էջմիածնի բազմաթիվ այլ բնակիչների՝ ինքը եւս լսել է, որ թիվ 2 դպրոցի նախկին տնօրեն Սուսաննա Նազարյանի տղան՝ Տիգրանը, արխիվ է այրել: Եղիազարյանը նշեց, որ եթե 1000-2000 մարդու հավաքեն էջմիածնում ու հարցնեն, թե արդյոք նման բան լսել են, նրանք կհաստատեն: Վկան հավելեց, որ ասում է այն, ինչ ընդամենը լսել է տարածված խոսակցություններից:

Վկայի ցուցմունքից հետո հայցվորի ներկայացուցիչ Գ. Գեւորգյանը կարդաց հայցապահանջը հերքում տպագրելու եւ թերթից ու լրագրո-

դից զրպարտության համար համապարտության կարգով 2 մլն դրամ բռնագանձելու մասին: Պատասխանողի ներկայացուցիչ Անահիտ Հակոբյանն առարկեց հայցի դեմ՝ նշելով, որ լրագրողը հղում է կատարել իր աղբյուրին, որը հրապարակային ինֆորմացիա է հաղորդել: Սրան ի պատասխան՝ Գետրոգյանն էլ ասաց, թե լրագրողը բարեխիղճ ու բառացի չի վերարտադրել վկայի հետ հարցազրույցի խոսքերը, հրապարակել է չճշտված ինֆորմացիա, սակայն չի գրել, որ լուրերը չճշտված են: Ավելին, ըստ հայցվորի ներկայացուցչի՝ լրագրողը չի փորձել ճշտել տարածված լուրերը: Սակայն լրագրող Մ. Մարտիրոսյանը շեշտեց, որ հրդեհի փաստը ճշտել է այն ժամանակ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարից, որը հաստատել է եղելությունը ու պատմել, որ այրվել են շինարարության հետ կապված փաստաթղթեր: Փաստաբան Ա. Հակոբյանն էլ հավելեց, որ լրագրողը շարժվել է էթիկայի նորմերին համապատասխան, սակայն նա ոստիկան չէ, որ հետաքննություն անցկացնի: Պարզապես վերարտադրել է այն տեղեկությունները, որոնք տարածվել են էջմիածնում եւ հղում է կատարել իր աղբյուրին՝ օրենսդրությանը համապատասխան:

Դատավոր Ա. Մելքումյանի հարցին, թե արդյոք կողմերը չեն ցանկանում հաշտություն կնքել, ստացվեց բացասական պատասխան:

Ապրիլի 13-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Մելքումյանն ամբողջությամբ մերժեց Տիգրան Տերտերյանի օրինական ներկայացուցիչ Համլետ Տերտերյանի հայցապահանջը հերքում տպագրելու եւ թերթից ու լրագրողից զրպարտության համար համապարտության կարգով 2 մլն դրամ բռնագանձելու մասին:



«Հեքի» փաստաբաններ  
Տիգրան Եգորյանը և Լուսինե Հակոբյանը

## **«Հեքի» լրագրողը չի վիրավորել եւ չի գրպարտել Լեռնապատի գյուղապետին**

2012թ. մայիսի 29-ին հրապարակվեց «Լեռնապատի գյուղապետն ընդդեմ «Հեքի» լրագրողի» գործով Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վարդուհի Հովհաննյանի կայացրած վճիռը, որով մերժվել է լրագրողի դեմ հայցը:

Անցյալ տարվա սեպտեմբերին Լեռնապատի գյուղապետ Վանո Եղիազարյանը, հիմք ընդունելով «Հեք» թերթում 2011թ. օգոստոսի 23-ին լրագրող Ադրինե Թորոսյանի հրապարակած «Գյուղապետի հասցեին ասված «արածել» բառն արժե 1 միլիոն» հոդվածը, վիրավորանքի և գրպարտության հիմքով հայցադիմում էր ներկայացրել դատարան ընդդեմ լրագրողի՝ թերթին ներգրավելով որպես երրորդ անձ: Գյուղապետը պահանջում էր նույն թերթով հրապարակայնորեն հերքել հոդվածում իր կողմից գրպարտություն որակված փաստացի տվյալները, վիրավորելու համար ներողություն խնդրել իրենից և լրագրողից հօգուտ իրեն բռնագանձել 1 մլն դրամ, ինչպես նաև՝ դատական ծախսերը: Նախնական դատական նիստին փոփոխելով 1 մլն-ի դրամական պահանջը՝ գյուղապետն այն դարձրեց 1 լումա: Գյուղապետը կանխավ պատրաստել և դատարանին էր ներկայացրել նաև ներողության տեքստ, որը լրագրողի անունից ցանկանում էր տպագրել տալ «Հեք» թերթում:

Ողջ դատավարության ընթացքում Վանո Եղիազարյանը պնդեց, որ լրագրողը կանխամտածված է ընտրել հոդվածի վերնագիրը՝ «Գյուղապետի հասցեին ասված «արածել» բառն արժե 1 միլիոն», որով գրպարտել է իրեն: Միաժամանակ նույն վերնագիրը նա վիրավորանք էր համարում՝ հիմնավորելով. «Իբրև վերնագիր ընտրված հրապարակային արտահայտությունը հիմնված չէ ստույգ փաստերի վրա կամ պայմանավորված չէ գերակա հանրային շահով, ուստի համարվում է վիրավորանք»:

Հոդվածից հետևյալ մեջբերումն էլ՝ «Արտահայտություններից մեկն էլ՝ «Մենք ուզում ենք իմանալ՝ ըդտեղ արածողը Սամվելն ա լինելու,

գյուղապետը, թե՛ ավագանին», գյուղապետ Վ. Եղիազարյանը որակել է վիրավորական՝ չնայած ինքը նշված արտահայտությունը հայցադիմումում որպես հիմք բերելով՝ ընդգծել է, որ այն որպես հռետորական հարց է տրված», Վ. Եղիազարյանը վիրավորական էր համարում հետևյալ հիմնավորմամբ. «Ընդգծված արտահայտությունից և հատկապես *որակել* բառից պարզ է դառնում, որ լրագրողը համաձայն չէ, որ այն վիրավորանք է, որն ինքնին վիրավորական է»:

Գյուղապետի համար «ինքնին վիրավորական» էր նաև լրագրողի կողմից իր գործունեության մասին գյուղի բնակչի կարծիքը մեջբերելը, որի վերաբերյալ կայացվել է դատական ակտ: Նա պնդում էր, որ «հրապարակվել են փաստացի այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում օբյեկտիվ իրականությանը, կրում են իրենց մեջ արատավորող որակ՝ նվազեցնելով հասարակության լայն շրջանակներում իր՝ որպես անձի, գիտնականի և քաղաքական գործչի մասին ստեղծված օբյեկտիվ կարծիքը»: Զրպարտություն էր որակում մասնավորապես հետևյալ արտահայտությունը. «Իր հասցեին արված վիրավորանքի համար գյուղապետ Վ. Եղիազարյանը 1 մլն դրամ էր պահանջում իր գյուղի բնակչից, իսկ զրպարտության համար՝ 2 մլն դրամ, ինչպես նաև՝ դատական ծախսերը: Դատավոր Վ. Հովնանյանը գյուղապետի ֆինանսական պահանջը բավարարեց մի փոքր մասով»՝ ասելով, թե ինքը գումարային պահանջ չի ներկայացրել համագյուղացուն: Ըստ նրա՝ լրագրողն իրեն զրպարտել էր նաև հետևյալ տեղեկությամբ. «...չնայած ինքը՝ գյուղապետը, նշված արտահայտությունը հայցադիմումում որպես հիմք բերելով՝ ընդգծել է, որ այն որպես հռետորական հարց է տրված», քանի որ, իր ասելով, հայցադիմումի մեջ նման բան չկա:

Դատարանի վճռով, սակայն, «<Ետքի» լրագրողի հրապարակած տեղեկությունները զրպարտիչ և վիրավորական չեն: Իր իրավական վերլուծություններում դատավոր Հովնանյանը վկայակոչել է երկու քաղաքացիական գործերով Վճռաբեկ դատարանի հրապարակած նախադեպային որոշումները՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի մեկնաբանությամբ: Գյուղապետի կողմից վիճարկվող արտահայտությունները քննարկելով այդ որոշումների համատեքստում՝ դատավոր Հովնանյանը հանգել է հետևության, որ հոդվածի վերնագիրը զրպարտություն չէ, քանի որ այն չի պարունակում կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ. այն վերացական է և չի ներկայացնում գյուղապետի անձի վերաբերյալ փաստացի տվյալներ: Նշված վերնագիրն իրականում չի արատավորում և չի էլ կարող արատավորել գյուղապետի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Դատարանն արձանագրել է՝ իրականությանը համապատասխանում է լրագրողի հրապարակած տեղեկությունը, որ իր հասցեին արված վիրավորանքի համար գյուղապետն իր գյուղի բնակչից 1 մլն դրամ էր պահանջում, իսկ զրպարտության համար՝ 2 մլն դրամ, ինչպես նաև՝ դատական ծախսերը: Միաժամանակ դատարանը նշել է, որ գյուղապետը, որպես քաղաքացիական գործով հայցվոր, նշված պահանջով երկու անգամ է դիմել դատարան: «Անգամ նման հանգամանքից ելնելով՝ պատասխանողի (լրագրողի) մոտ կարող էր կարծիք ձևավորվել,

որ հայցվորն ինքը (գյուղապետը) ևս իր հասցեին կատարված արտահայտության համար պատասխանատվության ողջամիտ չափ, ի թիվս այլ միջոցների, համարել է նաև նշված չափով գումարի բռնագանձման հնարավորությունը»,- վճռի մեջ նշել է դատավոր Հովսեփյանը:

Գյուղապետի մատնանշած մյուս արտահայտության վերաբերյալ, ըստ որի՝ *որակել* բառով լրագրողն անհամաձայնություն է հայտնել գյուղապետի կողմից արտահայտությունը վիրավորանք համարելու կապակցությամբ, դատավորը նշել է, որ որևէ հարցի կապակցությամբ լրագրողի չհամաձայնվելը գյուղապետի հետ չի կարող դիտվել վերջինիս ուղղված վիրավորանք, քանի որ լրագրողն ընդամենը լուսաբանել է դատարանում քննված գործը՝ դրա վերաբերյալ տեղեկացնելով հասարակությանը: Տվյալ դեպքում դատավորը վկայակոչել է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ և ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածները, որոնցով ամրագրված են խոսքի, սեփական կարծիքի արտահայտման, տեղեկությունների, գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունները:

Ինչ վերաբերում է լրագրողի կողմից «հռետորական» հարցի ձևակերպման հետ կապված մտքին, դատավորը նշել է, որ չնայած այն չի եղել հայցադիմումում, սակայն արտահայտվել է գյուղապետի կողմից դատարանում տված ցուցմունքի մեջ, որն էլ արձանագրվել է դատական ակտի համապատասխան հատվածում:

Այսպիսով, դատավոր Հովսեփյանը գյուղապետի հայցադիմումը վիրավորանքի և զրպարտության մասով մերժել է, իսկ հայցադիմումով ներկայացված գումարի բռնագանձման մասով՝ կարճել գործի վարույթը, քանի որ հայցվորը հրաժարվել է գումարային պահանջից: Տվյալ դեպքում էլ վկայակոչվել է Քաղ. դատ. օր.-ի 109-րդ հոդվածի 6-րդ կետը, համաձայն որի՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից: Հայցադիմումի մասնակի մերժման և գործի վարույթը գումարային պահանջի մասով կարճման պայմաններում դատավորը, հաշվի առնելով, որ հայցվորը վճարել է պետտուրքի գումարը, դատական ծախսերի հարցը համարել է լուծված: Նաև վճռով ամրագրել է Վ. Եղիազարյանից հօգուտ Ադրիին Թորոսյանի բռնագանձել 150,000 դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

## **Նախկին գյուղապետը կամովին չի կատարում դատարանի վճիռը**

Չնայած դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռին՝ Լեռնապատի արդեն նախկին գյուղապետ Վանո Եղիազարյանը կամովին չէր կատարել դատարանի վճիռը, ուստի քաղաքացիական գործով նախկին պատասխանող, իսկ այժմ պահանջատեր Ադրիին Թորոսյանը երեք ամիս սպասելուց հետո դիմել է ԴԱՀԿ՝ նախկին գյուղապետի նկատմամբ կատարողական վարույթ հարուցելու պահանջով:

Դեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 30, 40, 44, 67 հոդվածներով՝ սեպտեմբերի 7-ին

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (ՀՀ ԱՆ ԴԱՀԿ) Լոռու մարզային բաժնում կայացվել է որոշում՝ կատարողական վարույթ հարուցելու, պարտապանի գույքի վրա արգելանք դնելու և պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին, ըստ որի՝ Ադրինե Թորոսյանին վճարելիք 150 հազար դրամ փաստաբանի վարձատրության գումարի հետ Վանո Եղիազարյանից բռնագանձվում է նաև 7500 դրամ՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս, Վանո Եղիազարյանին պատկանող շարժական ու անշարժ գույքը դրվում է կալանքի տակ և դրա նկատմամբ հայտարարվում է հետախուզում՝ պարզելու սեփականության իրավունքով նրան պատկանող գույքի, գույքային իրավունքների և դրամական միջոցների գտնվելու վայրը, կազմն ու քանակը:

## **«Առավոտ» ու Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնը հաշտվել են**

Կենտրոնն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Հայաստանի Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնն ընդդեմ «Առավոտ» օրաթերթի հանգուցալուծվեց: Պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության մասին քաղաքացիական գործով հայցվորն ու պատասխանողը կնքեցին հաշտության համաձայնություն, որը հաստատվել է դատավոր Է. Ավետիսյանի կողմից:

Ըստ այդմ՝ պատասխանող «Առավոտ» օրաթերթն ընդունել է, որ 01.12.2010 թ. հրապարակված «Իսկ ո՞ր մնաց Հիպոկրատի երդումը» վերնագրով հոդվածի մեջ ներկայացվել է չճշտված տեղեկատվություն: Արդյունքում հոդվածը արատավորել է Հայաստանի «Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ՍՊԸ-ի գործարար համբավը, աշխատակազմի եւ տնօրեն Սմբատ Ջամալյանի պատիվն ու արժանապատվությունը:

Հոդվածը պարունակում էր տեղեկատվություն այն մասին, որ հոդվածի հեղինակ, Կապանի բնակիչ Կարո Ավանեսյանը, ընթերցելով «Առավոտ» թերթի 13.11.2010թ. «Վճարել է 10 տարվա կյանքի համար, ստացել՝ 7 տարվա: Բժիշկները հիվանդին էլ, պետությանն էլ խաբել են» հոդվածը, գրել է, որ ինքը դիմել է Հայաստանի Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն: Վճարումներ կատարելով՝ հետազոտվել է, ինչի հետևանքով պարզվել է, որ նա ունի առիթմիա և պետք է անհապաղ վիրահատվի: Կնքելով պայմանագիր 5,1 մլն դրամ վիրահատության համար (որի 70%-ը վճարվում է նախապես, կատարվում է վիրահատությունը, հետո 3 ամսվա ընթացքում վճարվում է մնացած 30%-ը)՝ նրան վիրահատել են՝ տեղադրելով «Biotronic» ֆիրմայի «Lexos DR» տիպի երկխոռոչանի սարք սրտի ռիթմը վարելու համար, որը երաշխավորում է 4-5 տարի անխափան աշխատանք:

Սակայն Երևանից Կապան վերադառնալու ճանապարհին նրա վիճակը վատացել է՝ շնչարգելություն է ունեցել՝ ինչպես մինչ վիրահատությունը, իսկ արդեն Կապանում շնչարգելությունը կրկնվել է երկու անգամ: Բոլոր սրացումների ժամանակ սարքը չի աշխատել, դա հաստատվել է նաև սարքի ստուգումներով: Վերադառնալով Երևան՝ բժշկուհուն ներկայացրել է մի դիմում, ըստ որի՝ գտել է, որ ախտորոշումը եղել է թերի և խնդրել, առաջարկել, պահանջել է հրավիրել կոնսիլիում՝ ճշտելու ախտորոշումը և կատարելու համապատասխան բուժում առանց լրացուցիչ վճարումների:

Դիմումը քննարկելով՝ Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի տնօրեն Ս. Ջամալյանը գտել է, որ նա խաբում է, թե իր մոտ շնչարգելության սրացումներ են եղել, իրականում այլ բան է եղել, և նոր բուժման հետ կապված հետագա բոլոր քայլերի համար հիվանդը պետք է վճարի:

Պատասխանողը մինչև հաշտության համաձայնության հաստատումը «Առավոտ» օրաթերթում տպագրել է հերքում և Հայաստանի «Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ՍՊԸ-ի պատասխանը:

Իր հերթին հայցվորը պարտավորվել է հաշտության համաձայնագիրը հաստատվելուց հետո նույն պահանջով և հիմքով, ինչպես նաև «Իսկ ռւր մնաց Հիպոկրատի երդումը» վերնագրով հոդվածի հիմքով որևէ այլ պահանջով դատարան հայց չներկայացնել ընդդեմ պատասխանողի:

Այս հիմքով կարճվեց նաեւ «Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն» ՍՊԸ-ի՝ «Առավոտ» օրաթերթի դեմ 2-րդ հայցը «Վճարվել է 10 տարվա կյանքի համար, ստացել՝ 7 տարվա: Բժիշկները հիվանդին էլ, պետությանն էլ խաբէլ են» (13.11. 10թ.) հոդվածի համար:



Չախից՝ Ա. Զեյնալյանը եւ Լ. Բարսեղյանը Չախից՝ Ա. Խոյաթյանը եւ Ա. Ավետիսյանը

## **Հայցը մերժվեց հայցային վաղեմության ժամկետի խախտման հիմքով**

«Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանը 2011թ. օգոստոսի 4-ին դիմել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ և իրավապաշտպան Լեւոն Բարսեղյանի՝ պահանջելով հրապարակայնորեն ներողություն խնդրել [www.asparez.am](http://www.asparez.am) կայքում հրապարակված վիրավորող և զրպարտող բնույթի հրապարակումների համար: Իբրեւ վիրավորանքի եւ զրպարտության համար փոխհատուցում նա պահանջել է 2 մլն դրամ, ևս 200.000 դրամ՝ դատական ծախսերի համար:

[www.asparez.am](http://www.asparez.am) կայքում երեք հոդված էր հրապարակվել, որոնք էլ դարձել էին վեճի առարկա՝ «Կան բաներ, որ չեն ներվում» (11.06.2011թ.), «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» (15.06.2011թ.) և «Ընտանեկան կապալին էին հարվածելու» (16.06.2011թ.): Հոդվածների առիթը ՀՀ կառավարության որոշումն էր Մինաս Ավետիսյանի երկու որմնանկարները վերականգնելու նպատակով Գյումրիից Երեւան տեղափոխելու եւ ապա «Ձվարթնոց» օդանավակայանում ցուցադրելու մասին: Մինասի որմնանկարների տեղափոխումը Գյումրիից Երևան, որը կազմակերպել էր «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, նկարչի որդի Արման Ավետիսյանը (ու՛մ հետ, ըստ գյումրեցի մտավորականների, պայմանավորվածություն էր ձեռք բերվել դա չանել առանց իրենց համաձայնության), մեծ վրդովմունք էր առաջացրել գյումրեցիների շրջանում:

2011թ. հունիսի 23-ին Արման Ավետիսյանը նամակ է ուղարկել Լևոն Բարսեղյանին՝ պահանջելով տպագրել հերքում կամ հրապարակել իր նամակի բովանդակությունը՝ որպես պատասխան: Լևոն Բարսեղյանը Ա. Ավետիսյանի ուղարկած տեքստը հրապարակել է հունիսի 30-ին:

Օգոստոսի 4-ին Արման Ավետիսյանը հայցադիմումով դիմել է դատարան: Հայցով նա Լեւոն Բարսեղյանին հետեյալ պահանջներն էր

ներկայացրել՝ պարտավորեցնել հրապարակայնորեն ներողություն խնդրել իրենից եւ հօգուտ իրեն բռնագանձել 2 մլն դրամ, որից 500 հազարը՝ վիրավորանքի, 1 մլն 500 հազարը՝ զրպարտության համար: Եւս 200 հազար՝ դատական ծախսերի համար: Մասնավորաբար, նա զրպարտություն է համարել Լ. Բարսեղյանի հողվածներում առկա մի քանի գնահատականներ եւ մեկնաբանություններ, թե Արման Ավետիսյանը «թռավ իր պայմանավորվածությունից»:

Դատավարության ընթացքում կողմերը փորձեցին բանակցություններով հասնել հաշտության համաձայնության, սակայն չհաջողվեց:

Հայցվոր կողմը պնդում էր, որ վեճը ծագել է Ա. Ավետիսյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ հրապարակելուց եւ նրան նյութական վնասներ պատճառելուց, իսկ այս գործով կիրառելի իրավական նորմերի շրջանակը հստակեցնելու նշեց, թե սույն խնդիրը պիտի կարգավորվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ, 3-րդ, 7-րդ (1-ին, 2-րդ կետերով) եւ 8-րդ մասերով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածով, ՀՀ Սահմանադրությամբ:

Դատավարության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Անի Խլղաթյանը ներկայացրեց զրպարտության եւ վիրավորանքի իրավական շրջանակները: Զրպարտության առումով հայցորը միջնորդեց, որ պատասխանող կողմն ապացուցի հետեւյալը.

1. Հայցվոր կողմը որմանակարների տեղափոխման համար ֆինանսական եկամուտներ է ստացել:
2. Որմանակարները քաղաքից տեղափոխվել են գաղտնի:
3. Ինչ պայմանավորվածությունից է «թռել» հայցվոր կողմը:
4. Հայցվոր կողմը գործել է էռնեկյանի պատվերով:

Վիրավորանքի առումով պիտի ապացուցի, որ

1. Տղամարդու հետ է գործ ունեցել:
2. Ա. Ավետիսյանը լարախաղաց է:
3. «Այդօրինակ կերպարների վզից գդալ-չանգյալ կախելը» վիրավորանք չէ:

Պատասխանող Լեւոն Բարսեղյանը 52 էջանոց պատասխան էր ներկայացրել դատարան, իր քննադատությունները հիմնավորող փաստական հանգամանքներն ապացուցող տեսագրություններ եւ ծայնագրություններ, վկայություններ եւ այլն, սակայն Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, առանց մնացած հանգամանքները հաշվի առնելու, հենվելով միայն հայցային վաղեմության ժամկետի խախտման հանգամանքի վրա՝ 2012թ. հուլիսի 10-ին Ա. Ավետիսյանի հայցը մերժեց ամբողջությամբ: Դատաքննության ընթացքում դատարանին «Հայցային վաղեմություն կիրառելու մասին» դիմում ներկայացրել էր Լեւոն Բարսեղյանը՝ պնդելով, որ հայցային վաղեմության ժամկետը լրացել է 2011թ. հուլիսի 23-ին, մինչդեռ հայցը ներկայացվել է օգոստոսի 4-ին:

Արման Ավետիսյանը Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բողոքարկել է վերաքննիչ դատարան:

# **Դավիթ Կարապետյանը միջնորդել է, Բենիկ Հարությունյանն էլ հրաժարվել է «Ժողովուրդի» դեմ հայցից**

2011-ին «Ժողովուրդ» օրաթերթի դեմ 3 հայց էր ներկայացվել պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցման պահանջով: Դրանցից մեկը ներկայացրել էր ՀՀ կուրորտաբանության եւ ֆիզիկական բժշկության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Բենիկ Հարությունյանը: Հոկտեմբերի 12-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ափինյանը վարույթ էր ընդունել հայցը:

Որպես վիրավորանքի եւ գրպարտության հետեւանքով պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի փոխհատուցում՝ Բենիկ Հարությունյանը «Ժողովուրդ»-ից պահանջում էր 2 մլն դրամ, եւս 244 հազար դրամ՝ փաստաբանական եւ դատական ծախսերի համար:

«Նշենք, որ դարաբաղյան ծագում ունեցող, Սերժ Սարգսյանի մտերիմ Բ. Հարությունյանի հայցը վերաբերում է «Ժողովուրդ» օրաթերթի սեպտեմբերի 9-ի համարում տպագրված «Դոկտոր, պրոֆեսորի արկածները ոսկու հանքերում» հոդվածին, որտեղ ներկայացրել էինք ԱՄՆ քաղաքացի Նունե Սերոբյանի հնչեցրած մեղադրանքներն այն մասին, որ Բենիկ Հարությունյանը, ում հետ համատեղ բիզնես են ունեցել, չի վերադարձնում իր կողմից ներդրված 218 հազար ԱՄՆ դոլարը: Ընդ որում, նույն հրապարակման մեջ հանգամանալի կերպով ներկայացրել էինք թե՛ Բենիկ Հարությունյանի եւ թե՛ իր փաստաբան Միեր Սիմոնյանի հերքումներն ու պատասխան մեղադրանքները, ինչպես նաեւ՝ նրանց տրամադրած բոլոր փաստական տվյալները», - նշված էր օրաթերթի տարածած հաղորդագրության մեջ:

Դատական նիստին դատավոր Ռ. Ափինյանի հարցին, թե արդյոք կողմերը չեն ցանկանում հաշտության գալ, հայցվորի ներկայացուցիչ Գնել Նազարյանը պատասխանեց՝ միայն այն դեպքում, եթե պատասխանողն ամբողջությամբ հերքի իր գրածը: Իսկ թերթի ներկայացուցիչ Հ. Ճարոյանն ասաց, որ նախ հայցվորը պետք է հաշտության տեքստ ներկայացնի: Հայցվորը նշեց, որ ժամանակին նման տեքստ ներկայացրել են, սակայն կողմը համաձայն չի եղել, այդ իսկ պատճառով նրանք այժմ հաշտության առաջարկ չունեն ներկայացնելու:

Հ. Ճարոյանը դատարանին հայտնեց, որ Նունե Սերոբյանի՝ հոդվածում արված պնդումների, հարցազրույցի և ներկայացված տվյալների հիման վրա միջնորդում է Ն. Սերոբյանին ճանաչել որպես պատասխանող, այսինքն՝ փոխել պատասխանողին, քանի որ այս դեպքում «Ժողովուրդ» օրաթերթը որպես ամբիոն է հանդես եկել: Հայցվորը դատարանին հայտնեց, որ Նունե Սերոբյանի հարցազրույցը, որը տպագրվել է N179-ում, N151-ի հոդվածի շարունակությունն է, և իրենք հայցապահանջն ավելացրել են N179-ի հոդվածի կապակցությամբ:

Ըստ պատասխանողի՝ սույն գործով եթե անգամ առկա են գրպարտություն և վիրավորանք, դրանք հասցվել են ոչ թե թերթի կողմից, այլ

Ն. Սերոբյանի, իսկ թերթը պետք է այս գործընթացում հանդես գար որպես 3-րդ անձ:

Հայցվորը առարկեց միջնորդությանը՝ մեկնաբանելով, որ համաձայն օրենքի՝ լրատվության միջոցը պարտավոր էր ստուգել իրեն տրված ինֆորմացիան և ճշտել տեղեկատվության հավաստիությունը:

Դատարանը, լսելով պատասխանողի միջնորդության կապակցությամբ արտահայտված դիրքորոշումը, որոշեց մերժել այն:

Հ. Ճարոյանը այնուհետև միջնորդեց դատարանին Ն. Սերոբյանին դատակոչել որպես վկա: Սակայն դատավոր Ռ. Ափինյանը հետաձգեց վկայի դատակոչման միջնորդության քննարկումը, մինչև կողմերը կքննարկեն ապացուցման բեռը բաշխելու հարցը:

Այսպիսով, կողմերն անցան ապացուցման բեռի բաշխման փուլին: Գ. Նազարյանը դատարանին ներկայացրեց, թե հողվածում առկա որ արտահայտություններն է հայցվորը համարում վիրավորանք և որը՝ զրպարտություն: Հայցվորը վիրավորանք է համարում «Դուկտոր, պրոֆեսորի արկածները ոսկու հանքերում» վերտառությամբ հողվածի հետևյալ արտահայտությունները.

«...Ասում է Բենիկ Հարությունյանի կողմից «քցված» Նունեն...»: Հայցվորի կարծիքով՝ սրանով հողվածի հեղինակը նկատի է ունեցել այն, որ հայցվորը իր գործընկերոջը խաբել է և գումար է շորթել:

«...Ինչևէ, այս պատմության մեջ հետաքրքիրը ոչ միայն այն է, որ Սերժ Սարգսյանի մերձավորը «քցել» է ներդրումներ կատարած տիկնոջը, այլև այն, որ նա իր անլուրջ խոսակցություններով «խրտնեցրել» է ներդրումների պատրաստակամությամբ Հայաստան եկած գործարարին... »:

Ըստ հայցվորի՝ թերթի (N179) համարում հրապարակված «Բենիկից շարունակում են դժգոհել» վերտառությամբ հողվածում հետևյալ արտահայտություններն են վիրավորել հայցվորին.

«...Բոլորը գիտեն, որ Բենիկ Հարությունյանը կաշառելու, մարդկանց վախեցնելու շատ մեծ կարողություն և ընդունակություն ունի, ու դա մենակ մեր կարծիքը չէ... »:

Հայցվորը սա և՛ վիրավորանք է համարում և՛ զրպարտություն: Ըստ հայցվորի՝ լրագրողը պետք է ճշտեր Ն. Սերոբյանի տված տեղեկատվության հավաստիությունը: Սակայն դատավոր Ռ. Ափինյանը նկատեց, որ հարցազրույցը լրագրողական ժանրերից մեկն է, այսինքն՝ լրագրողը հարցազրույց է վերցրել և դրա մասին հրապարակել:

Հայցվորը զրպարտություն է համարում հետևյալ արտահայտությունները.

«...Ինչպես «Ժողովուրդ»-ի հետ զրույցում նշեց Նունեի ընկերներից Արևշատը, Հրազդանի քննչականի պետը, ով «Բենիկի վարորդի ախպերն է», պատճառաբանել է, թե գործը քաղաքացիաիրավական բնույթի է...»:

Դատավորի հարցին, թե ինչն է զրպարտություն, պատասխանողը նշեց, թե թերթի այն ձևակերպումը, որ Բենիկ Հարությունյանն ունի կապեր և իր անօրինական գործերը ուզում է լուծել կապերի միջոցով:

Հայցվորը վիրավորանք է համարում նաև հետևյալ նախադասությունը. «...Հետաքրքիր է, թե ինչու այդ դեպքում բժշկական գիտություն-

ների դոկտոր, պրոֆեսոր և 130 գիտական աշխատանքների և գյուտերի (անգամ գիտության և արվեստի ասպետի կոչում ունեցող) հեղինակ Բ. Հարությունյանի մասին ստահող տեղեկություններ տարածող Նույնե Սերոբյանի նկատմամբ սուտ մատնության մեղադրանքով քրեական գործ չեն հարուցում...»:

Դատավորի հարցին, թե արդյոք քննչականի պետը Բենիկ Հարությունյանի եղբայրն է, հայցվորը պատասխանեց՝ ոչ: Դատավորը հարցրեց նաև, թե ինչ պատճառաբանությամբ է մերժվել քրեական գործի հարուցումը: Քանի որ կողմերը հավաստի ոչինչ չասացին, դատավորը պատասխանողի վրա դրեց սույն քրեական գործի նյութերը դատարան ներկայացնելու պարտականությունը:

Հաջորդ դատական նիստը նշանակված էր 2012-ի մարտի 5-ին, սակայն մինչ դատական նիստը հայտնի դարձավ, որ հայցվոր Բենիկ Հարությունյանը, «արժևորելով մամուլի զարգացումը որպես ժողովրդավար պետության կերտման կարևոր բաղադրիչ, ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Դավիթ Կարապետյանի միջնորդությամբ հրաժարվում է «Ժողովուրդ» օրաթերթի նկատմամբ ներկայացրած դատական հայցից և որպես փոխհատուցում 2 մլն 200 հազար դրամի պահանջից»:



Գենորգ Ալլոնյան

## **Հանրայինը հերքել է Եհովայի վկաների մասին հրապարակած տեղեկատվությունը**

«Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպությունը դատական կարգով վիճարկում էր 2010թ. նոյեմբերի 9-ին, 10-ին և 11-ին «Հայուր» և «Տեսանկյուն» հաղորդաշարերի ընթացքում հրապարակված տեղեկությունն այն մասին, որ իր ծնողների սպանության մեջ մեղադրվող Արման Թորոսյանը Եհովայի վկա է (դեպքը տեղի էր ունեցել Սեան քաղաքում): Գործը գտնվում էր Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանի վարույթում:

Հայցվոր կողմը՝ զրպարտություն և վիրավորանք էր համարում հնչած արտահայտություններից հետևյալները՝

**ա) Ընդամենը երեկ Եհովայի վկան սպանեց իր ծնողներին:**

Հայցվորի ներկայացուցիչ Ելենա Մարգարյանը դատարանում հայտնեց, որ սա միանշանակ զրպարտություն և փաստ է: Պատասխանողի ներկայացուցիչ Արա Զոհրաբյանը հայտնեց, որ իրենք նույնպես այն համարում են փաստ:

**բ) Ինչպե՞ս փրկել արյան ծարավ Աստված զոհերին:**

Հայցվորի խոսքով, սա զրպարտություն է, քանի որ փաստ է, որը ներկայացնում է, որ եհովաները պաշտում են այն Աստծուն, որը արյան ծարավ է: Խորագրում նշված է Եհովայի վկաների մասին, այսինքն՝ այս դեպքում էլ խոսքը Եհովայի վկաների մասին է:

Ըստ պատասխանողի՝ գնահատողական դատողությունը պետք է տարբերել փաստից, սա գնահատողական դատողություն է: Սա փաստ չէ, այլ դիտվում է որպես հարց:

**գ) «Եհովայի կամազուրկ սպրուկներ և դաժան դահիճներ» խորագիրը և «Ինչո՞ւ են ուրիշ աստվածները և սուպ մարգարեները կարողանում փրկանալ մարդկանց հոգիներին՝ դարձնելով նրանց կամազուրկ սպրուկ ու դաժան դահիճներ» արտահայտությունը:**

Հայցվորի կարծիքով՝ այս սուտ տեղեկությունը զրպարտում և վի-

րավորում է Եհովայի վկաներին, քանի որ վերջիններիս ներկայացնում է որպես կամազուրկ, բանականությունից զուրկ էակներ:

«Դաժան Աստված և նրան երկրպագողներին որպես կամազուրկ ստրուկներ» ասելով՝ կողմը ցանկացել է ասել, որ դրա համատեքստում ներկայացվող սպանությունը Եհովայի վկաներին բնորոշ գործելակերպ կամ վարվելաճ է:

Պատասխանողն այն գնահատողական դատողություն է համարում:

**գ) Հարազատ ծնողներին սարսափազդու դաժանությամբ սպանած երիտասարդը, իր իսկ վկայությամբ, կապարել է Եհովա Աստծո պապովիրանը:**

Ըստ հայցվորի՝ կողմը պետք է ապացուցի, որ Ա. Թորոսյանը Եհովայի վկա է եղել, հակառակ դեպքում զրպարտում և վիրավորում է Եհովայի վկաների արժանապատվությունը: Պատասխանողը նույնպես համաձայնեց, որ սա փաստ է:

**դ) Եհովայի վկաները աղանդ են, և՛ փոքրալիքար աղանդ են:**

Հայցվորի դիտարկմամբ՝ սա զրպարտություն է, քանի որ «Եհովայի վկաներ»-ը աղանդ չեն, այլ օրենքով գրանցված են ՀՀ-ում, ինչպես նաև՝ տոտալիտար աղանդ չեն: Այդ արտահայտությունը, բացի զրպարտություն լինելուց, նաև վիրավորական է:

Պատասխանողի դիրքորոշմամբ՝ սա նույնպես փաստ չէ, այլ՝ գնահատողական դատողություն:

**ե) Իսկ թե նրանցից քանիսը ամեն վայրկյան կարող է անցնել հայտնի սահմանագիծը, դժվար է կանխարեսել:**

Հայցվորն անհիմն որակեց արտահայտությունը, թե Եհովայի վկաները կարող են քրեական հանցագործություն կատարել, ինչպիսին է, օրինակ, Արման Թորոսյանի կողմից կատարված ստոր սպանությունը: Այս տեղեկությունը, ըստ փաստաբանի, նվաստացնում է Եհովայի վկաներին:

Դատավորի հարցին, թե արդյոք հայցվոր կողմը սա որպես փաստ է դիտարկում, պաշտպանը պատասխանեց, որ խնդիրն այն է, որ Եվրոպական դատարանը այն դիրքորոշումն ունի, որ զրպարտչական և վիրավորական արտահայտությունները անհրաժեշտ է դիտարկել ամբողջ հաղորդման, հրապարակման համատեքստում: Այս դեպքում խոսվում է Արման Թորոսյանի մասին, ով «դաժանությամբ սպանել է իր ծնողներին», որ «նա Եհովայի վկա է», և «թե նրանցից քանիսը կանցնեն հայտնի սահմանագիծը»: Փաստաբանի կարծիքով՝ Եհովայի վկաները ներկայացվում են որպես սահմանագիծը ցանկացած պահի հատող անձնավորություններ, այսինքն՝ ցանկացած պահի սպանություն գործելու պատրաստ մարդիկ, և սա ներկայացվում է որպես փաստ:

Պատասխանողի գնահատմամբ՝ սա փաստ չէ, այլ գնահատողական դատողություն է, որի հիմքում ընկած է մեկ փաստ՝ Ա. Թորոսյանի կողմից իր ծնողներին սպանելը:

Հայցվորի ներկայացուցիչը նաև առանձնացրեց 2010թ. նոյեմբերի 11-ին «Տեսանկյուն» հաղորդաշարի ընթացքում հնչած արտահայտություններից հետևյալները.

**ա) Ա. Թորոսյանի կողմից կատարված սպանությունը Եհովայի վկաների կողմից շարունակական պրոցեսի արդյունք է, որը դեռ շար ու շար գոհեր է փանելու:**

Հայցվորի կարծիքով՝ ծնողներին սպանած երիտասարդին որպես Եհովայի վկա ներկայացնելը և դա վերագրելը Եհովայի վկաներին դիտվում է որպես փաստ, որը վիրավորում և զրպարտում է Եհովայի վկաներին:

Պատասխանողի ներկայացուցիչ Ա. Ջոհրաբյանը սպանություն գործելը և դրա մասին ասելը դիտեց որպես փաստ, սակայն մնացած մասը որակեց որպես գնահատողական դատողություն, քանի որ ապագայի վերաբերյալ որևէ բան ասելը որպես փաստ չի դիտվում:

**բ) Սեփական ծնողներին սպանած մարդանման երևույթը Եհովայի վկա էր, սպանել էր ծնողներին, քանի որ իր Եհովան էր այդպես հրամայել:**

Հայցվորը սա կրկին անհիմն փաստ դիտարկեց, որը զրպարտում և վիրավորում է Եհովայի վկաներին: Պատասխանողն ընդունեց, որ դա փաստ է:

**գ) Աղանդ, աղանդավորների ոհմակ կամ զահրումարներ:**

Հայցվորը աղանդ, աղանդավորներ բառերը դիտարկեց որպես զրպարտություն, քանի որ Եհովայի վկաները աղանդ չեն, այլ կրոնական կազմակերպություն են, մինչդեռ «զահրումարը» գնահատողական դատողություն է:

Պատասխանողն ընդունեց, որ դա գնահատողական դատողություն է:

**դ) Եհովայի վկաների գործունեությունը սահմանափակվել է նույնիսկ եվրոպական մի քանի երկրներում:**

Հայցվորի կարծիքով՝ սա ոչ ճիշտ տեղեկատվություն է, անհիմն փաստ է: Պատասխանողը նույնպես կարծում է, որ այն փաստ է:

**ե) «Տեսանկյուն» հաղորդման ժամանակ նշվել է, որ մարդիկ սպանվեցին և հավանաբար դեռ կսպանվեն:**

Հայցվորը սա սուտ և զրպարտչական համարեց, քանի որ հաղորդումը պատկեր է ստեղծում, թե Եհովայի վկաները մեղավոր են ստոր արարքի համար:

Պատասխանողը նշեց, որ հայցվորի կողմից ճիշտ չի վերարտադրվում, այն փաստ չէ, քանի որ «մարդ են սպանել և հավանաբար դեռ կսպանեն» արտահայտության մեջ չի նշվում կոնկրետ Եհովայի վկաների մասին:

զ) «Տեսանկյուն» հաղորդման մեջ կոչ է արվել զգել անհավ Եհովայի վկաներին արտաթորանքով լի տակառի մեջ այնպես, որ գլուխը երևա և պորպեցնել քաղաքով մեկ, իսկ կողքին սուրը ձեռքին մի դահիճ կանգնեցնել, որը պետք է սուրը անցկացնի տակառի վրայով, այնպես, որ Եհովայի վկան ստիպված լինի սուզվել կեղտի մեջ և կրկնել դա նորից ու նորից:

Հայցվորի դիտարկմամբ՝ սա մեջբերում է եղել տեսաֆիլմից, որը կոչ է արել դիտողին, որպեսզի հետևեն տեսաֆիլմի օրինակին:

Դատավորի հարցին, թե ինչն է հայցվորը համարում փաստ, հայցվորը պատասխանեց՝ այն, որ Եհովայի վկաներն արժանի են նման վատ վերաբերմունքի:

Պատասխանողի դիրքորոշմամբ՝ սա ֆիլմից հատված է, ֆիլմի սյուժեն և դերասաններից ոչ մեկի խոսքը չի փոխվել, հետևաբար, որպես փաստ չի կարող դիտվել:

ե) **Հաղորդումը հեռուստադիտողներին քաջալերում է վարվել այնպես, ինչպես հարկ է նման դեպքերում և հարձակվել Եհովայի վկաների վրա՝ բռնությամբ նրանց շենքից դուրս զգելով:**

Հայցվորի բնորոշմամբ՝ սրանով Հանրային հեռուստաընկերությունը կոչ է անում նման կերպ վարվել Եհովայի վկաների հետ՝ փաստելով, որ նրանք արժանի են նման վերաբերմունքի:

Պատասխանողի կարծիքով՝ սա որպես փաստ չի կարող դիտվել, քանի որ հեռուստահաղորդման կողմից այնպիսի բան չի եղել, որ քաջալերի նման կերպ վարվել: Հանրայինը հայցվորի խնդրանքով ժամանակին հերքել է Ա. Թորոսյանի Եհովայի վկա լինելը, սակայն կողմնասում է, որ դա հերքում չէ, քանի որ այն բարեխղճորեն չի արվել:

Հայցվորը հարցրեց, թե արդյոք պատասխանող կողմը պատրմում է ընդունել, որ Հանրայինը պետք է հերքի այս մասով:

Պատասխանողն առարկեց՝ ներկայացնելով հետևյալ 3 ապացույցները.

1. Սևանի քննչական բաժանմունքի քննիչի ցուցումերը՝ պարզելու, թե արդյոք Ա. Թորոսյանը հաճախել է Եհովայական խմբավորումների, մասնակցել է և ում հետ է մասնակցել:

2. Սևանի ոստիկանության բաժնի պետի պատասխանը, որով հայտնում է, որ Ա. Թորոսյանը հարել է Եհովայական աղանդին, սակայն չի պարզվել, թե ում հետ է մասնակցել այդ հավաքություններին:

3. Datalex.am կայքից հանված ակտը, որով դատարանը պարզել է, որ Ա. Թորոսյանը անմեղսունակ է և դատարանի որոշումն առ այն, որ նրա հանդեպ կիրառվի հոգեբուժական հարկադիր բուժում հոգեբուժարանում:

Սրանով պատասխանողն ուզում էր ապացուցել, որ Հանրայինը համապատասխան լուր է հայտնել՝ հիմնվելով նման տեղեկատվության վրա, ինչպես նաև news.am լրատվական կայքի հրապարակման վրա:

Ելենա Մարգարյանը հարցրեց, թե արդյոք ներկայացված փաստաթուղթը, որը կազմվել է 2011թ. հունվարի 19-ին, կարող էր հիմք հանդիսանալ Հանրային հեռուստաընկերության համար 2010թ. նոյեմբերի

9-ին, 10-ին և 11-ին հայտարարելու, որ Ա. Թորոսյանը Եհովայի վկա է:

Պատասխանողը նշեց, որ այդ լուրերը իրականության մեջ պատվել են, հարևանների վկայություններում, նույնիսկ նախաքննական մարմինը սա դարձրել է պաշտոնական հետաքննության առարկա:

Պատասխանողը նաև ավելացրեց, որ հայցվորից խնդրել էր իրեն տրամադրել Եհովայի վկաների ցուցակը, քանի որ հայցվորը նշել է, որ նրանց թիվը մոտավոր 11000 է, սակայն հայցվորն իրեն տրամադրել է միայն 200 Եհովայի վկաների տվյալներ: Պատասխանողը պնդում է դա, քանի որ կարծում է, որ Ա. Թորոսյանի տվյալները նույնպես այնտեղ կգտնվեն:

Ըստ հայցվորի՝ իրենք տվել են Եհովայի այն վկաների տվյալները, որոնք գրանցված են որպես իրավաբանական անձ, իսկ պատասխանողի խնդրանքն առ այն, որ իրեն տրամադրվեն Եհովայի վկաների տվյալները, անտրամաբանական է: Հայցվորը նաև ավելացրեց, որ «Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպությունը նշում է, որ Ա. Թորոսյանը Եհովայի վկա չէ:

Չնայած կոշտ դիրքորոշմանը՝ հայցվոր «Եհովայի վկաներ» կազմակերպությունը 2011-ի սեպտեմբերին հաշտության համաձայնություն կնքելու նախաձեռնությամբ հանդես եկավ: Հերքման տեքստի շուրջ բանակցությունները բավական երկար տեւեցին: Եվ միայն 2012թ. մայիսի 15-ին Հ1-ը ստորագրեց հաշտության համաձայնություն և հեռարձակեց հերքումը՝ այն հրապարակելով նաև իր պաշտոնական կայքում:

Հանրայինը հերքեց այն տեղեկությունը, թե Սևան քաղաքում իր ծնողներին դաժանաբար սպանելու մեջ մեղադրվող երիտասարդը առնչվում է «Եհովայի վկաներ» կրոնական համայնքի հետ՝ հղում կատարելով ՀՀ ոստիկանության Սևանի քննչական բաժանմունքում հարուցված թիվ ԳԴ5/0007/01/11 քրեական գործով պարզված հանգամանքներին: «Նշված քրեական գործի նախաքննության արդյունքում պարզ է դարձել, որ ծնողներին սպանած Արման Թորոսյանը Եհովայի վկա չէ, հետևաբար Հանրային հեռուստաընկերությունը նույնպես հերքում է տեղեկատվությունն առ այն, որ իր ծնողներին սպանած Արման Թորոսյանը Եհովայի վկա է», - նշված էր հերքման տեքստում: Հանրային հեռուստաընկերությունը նաև տեղեկացնում էր, որ «Հայլուր» լրատվական և «Տեսանկյուն» հաղորդումներով «Եհովայի վկաներ» քրիստոնեական կրոնական կազմակերպությանը վիրավորելու նպատակ չի ունեցել:

# Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդի»

## Դատական նիստերն անընդհատ հետաձգվում են

2011 թ. հոկտեմբերի 24-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում սկսվել էր Գուրգեն Աղաջանյանի՝ ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի հայցի քննությունը:

Քաղաքացի Գ. Աղաջանյանը պահանջում էր հրապարակայնորեն հերքել «գրպարտություն համարվող փաստացի տվյալները լրատվության նույն միջոցով», «գրպարտության համար փոխհատուցում վճարել եւ հատուցել վնասները»: Գ. Աղաջանյանը վիրավորվել էր ՀՀ պետգույքի կառավարման վարչության նախկին պետ Կարինե Կիրակոսյանի եւ նույն վարչության պետի տեղակալ Աշոտ Մարկոսյանի մասին թերթի հրապարակումից եւ պահանջել 804 հազար դրամի չափով փոխհատուցում:

Նշված հրապարակման մեջ «Ժողովուրդը» մեջբերումներ էր արել խմբագրությանը հասցեագրված՝ Գ. Աղաջանյանի անունից ստացված նամակից, որտեղ ՀՀ պետգույքի կառավարման վարչության նախկին պետ, Հանրապետական կուսակցության անդամ Կ. Կիրակոսյանին եւ պետի ներկայիս տեղակալ Ա. Մարկոսյանին մեղադրանքներ էին ուղղվել: Ավելի ուշ խմբագրություն էր այցելել Գ. Աղաջանյանը, որի անունից օրաթերթը նամակ էր ստացել եւ հրապարակել: Գ. Աղաջանյանը պնդել էր, թե ինքը չէ նամակի հեղինակը: Խմբագրությունում Աղաջանյանին ցույց էին տվել «Հայփոստի» միջոցով խմբագրությանն ուղարկված նամակը (նամակի հետադարձ հասցեն Պետգույքի կառավարման վարչության հասցեն է), վերջինս պատճենահանել էր նամակն ու ծրարը եւ հեռացել:

Հաջորդ օրը Աղաջանյանը խմբագրություն էր ներկայացրել մի հերքման տեքստ, որը օրաթերթը չէր հրապարակել, քանի որ, ըստ «Ժողովուրդի», այն իրականում հերքում չէր, այլ գովեստի խոսքեր իր հետ խմբագրություն այցելած Ա. Մարկոսյանի հասցեին, տեքստն անհերթեթ էր, հրապարակված նյութի հետ որել է առնչություն չունեցող:

Գ. Աղաջանյանը վիրավորվել էր հետեւյալ արտահայտություններով. «Կարինեն Աբովյան փողոցի իր բնակարանը ստացել է որպես կաշառք», «7 տարի ղեկավարելով վարչությունը՝ իր տեղակալ, «գիտնական», կաշառակեր Աշոտ Մարկոսյանի հետ միասին ուղղակի շահեցին պետական ունեցվածքի մի զգալի չափաքանակ», «Կ. Կիրակոսյանն իրեն այդ ոլորտում ավելի ապահով զգալու համար եւ պետգույքի մի զգալի մասը յուրացնելու նպատակով աճուրդի կենտրոնի տնօրեն է նշանակել իր քեռու տղային՝ Մարտին Քալաշյանին, ով նույնպես կեղծիքների մեծ վարպետ է...»:

Հատկանշական է, որ նույն նյութում «Ժողովուրդը» ներկայացրել էր նաեւ Կ. Կիրակոսյանի եւ վարչության ներկայիս պետ Արման Սահակյանի կարծիքները:

Երրորդ կողմի՝ Կ. Կիրակոսյանի եւ Ա. Մարկոսյանի բացակայությունների պատճառով նիստերն անընդհատ հետաձգվել են, եւ գործի բուն քննությունը 2012թ. հոկտեմբերի դրությամբ դեռ չէր սկսվել:

## **«Հրապարակը» Ռոբերտ Քոչարյանից ներողամտություն հայցեց**

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի փետրվարի 15-ի վճռով Ռոբերտ Քոչարյանն ու «Հրապարակ» օրաթերթը հաշտության համաձայնության եկան:

Փետրվարի 18-ին «Հրապարակ» օրաթերթը, համաձայն դատարանի վճռի, հրապարակեց հերքման տեքստը. ««Հրապարակ» օրաթերթը հայտնում է, որ 12.02.2011թ. 25/695/ համարում Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի մասին հրապարակած «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» հոդվածում տեղ գտած տեղեկությունները ամբողջությամբ չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են Ռոբերտ Սեդրակի Քոչարյանի պատիվս, արժանապատվությունը և բարի համբավը:

«Հրապարակ» օրաթերթը հայցում է ներողամտություն 12.02.2011թ. 25/695/ համարի նշված հոդվածում տեղ գտած անճշտությունների և վիրավորանքների համար»:

2011թ. մարտի 28-ին դատարանի որոշմամբ կալանք էր դրվել «Հրապարակ» օրաթերթի գույքի եւ բանկային հաշիվների վրա: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայցադիմում էր ներկայացրել օրաթերթի դեմ՝ պահանջելով «պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունների հերքում և 6 մլն դրամի փոխհատուցում», որից 3 մլն-ը՝ վիրավորանքի եւ զրպարտության, իսկ մյուս 3-ը՝ դատական ծախսերի համար: Սակայն ապրիլի 11-ին վերացվեց նրա հայցապահանջով օրաթերթի գույքի եւ բանկային հաշիվների վրա դրված արգելանքը:

Ըստ հայցվոր կողմի՝ Ռոբերտ Քոչարյանի հասցեին վիրավորական արտահայտություններ էին տպագրվել «Հրապարակ» օրաթերթի փետրվար եւ մարտ ամիսների 3 համարներում, մասնավորապես՝ «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին բացատրում» հոդվածում: Հրապարակված հոդվածում վիրավորական եւ զրպարտող արտահայտություններ էին համարվել. «Մտքով ինչ անցներ, թե Քոչարյանն անցուդարձին չի դիմանա եւ իր անմտությամբ ասպարեզ կիջնի», «Իսկ Քոչարյանը, որքան էլ առանձնանում է գավառականությամբ ու արյունոտությունամբ, առանձնակի փայլում է անմտությամբ...», «Երեւի տեղապահ Քոչարյանը ոչ միայն մտքի, այլեւ հիշողության կարճության խնդիր ունի»:

Հայցվոր կողմը երկու անգամ թերթից պահանջել էր վերոհիշյալի կապակցությամբ տպագրել հերքում: Սակայն «Հրապարակի» փետրվարի 22-ի համարի «Ինքնակոչ նամակ Քոչարյանի անունից» եւ մարտի 14-ի համարի «Անձամբ Քոչարյանից՝ սխալներով եւ ստորագրությամբ» վերնագրերով հրապարակումները հայցվորի կողմից չէին դիտարկվել որպես բավարարող պատասխաններ: Ուստի, երկրորդ նախագահը որոշել էր հարցը լուծել դատական կարգով:

## **Ռատարանը մերժեց «Կյանքի խոսք»-ի հայցն ընդդեմ «Իրավունքի»**

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում 2012թ. մարտի 23-ին կայացավ «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունն ընդդեմ «Իրավունք» թերթի գործով նախնական դատական նիստը: «Կյանքի խոսքը» դատարանում վիճարկում էր «Իրավունք» թերթի հոկտեմբերի 19-25-ի համարում տպագրված «Աղանդախառն պոռնոլուսանկարների թեման «ծաղկեց» մանկապղծության մեղադրանքով» հոդվածը:

Կազմակերպությունը վիրավորանք և զրպարտություն է համարում թերթի հենց առաջին էջում հոդվածին ուղեկցող կոլաժային լուսանկարը, մյուս լուսանկարում պատկերված կնոջ ձեռքի «Կյանքի խոսք» գրառմամբ վահանակը, հոդվածի վերնագիրը, «աղանդ» եզրույթը, «Կտոր մը «Կյանքի խոսք»» արտահայտությունը (նաև՝ ծաղրանք): «Անշուշտ, մենք առհասարակ չէինք անդրադառնա հայկական շոու բիզնեսին այդքան բնորոշ անառակաբարո վարքագծին և, մասնավորապես, զագրելի պոռնոկադրերի թեմային, եթե չլիներ երկու հանգամանք: Առաջինը, որ պոռնոսկանդալի «հերոսուհի» Անժելա Սարգսյանը պատկանում է Հայաստանի խոշորագույն աղանդին՝ «Կյանքի խոսքին», որին պատկանում են նաև շոու բիզնեսի շատ ներկայացուցիչներ, ավելին՝ այդ պատկանելությունը հաճախ նրանց առաջխաղացման նախապայմաններից մեկն է»: Այս արտահայտությունը ևս «Կյանքի խոսքի» համար և՛ վիրավորական է, և՛ զրպարտչական:

«Պրակտիկորեն գրեթե բոլոր» արտահայտությունները և հոդվածն ամբողջությամբ փաստաբանը վիրավորական համարեց, իսկ պատասխանող կողմը՝ հանձին նաև «Իրավունքի» խմբագիր Հայկ Բաբոխանյանի, առարկեց հայցի դեմ ամբողջությամբ:

«Կյանքի խոսք» կազմակերպությունը համարում է, որ այս հրապարակումը արատավորել է կազմակերպության բարի համբավը, պատիվն ու արժանապատվությունը, կրոնական ատելություն է հրահրել, ինչի հերքման և ներողություն խնդրելու պահանջով էլ կազմակերպությունը մտել է դատարան: «Կյանքի խոսքը» հասցված վիրավորանքի համար պահանջում է հրապարակավ ներողություն խնդրել թերթի առաջին էջում, ինչպես որ տեղադրվել էր հոդվածը, հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և հրապարակել նաև հերքման տեքստերը: Գումարային պահանջը մեծ չէ՝ հօգուտ «Կյանքի խոսքի» բռնագանձել պետական տուրքի գումարը՝ 8 հազար դրամ, ինչպես նաև թարգմանչական և նոտարական ծախսերը՝ 15 հազար դրամ: Փաստաբան Ավետիք Պապինյանը լրագրողների հետ զրույցում նշեց, որ «Կյանքի խոսքը» միտում չունի ֆինանսական նեղություն պատճառել թերթին, այլ միայն իր իրավունքների վերականգնման համար է պայքարում:

Հաջորդ՝ ապրիլի 13-ի դատական նիստին հայցվորի ներկայացուցիչ Ա. Պապինյանը դատարանին ներկայացրեց հայցադիմումի երկրորդ լրացումը, որում առկա են լրացուցիչ ապացույցներ, առարկու-

թյուն հայցադիմումի պատասխաններին և հայցապահանջի ավելացում հավելյալ դատական ծախսերի մասին:

Պատասխանողի ներկայացուցիչ Լ. Բաղդասարյանը դատարանին որպես ապացույց ներկայացրեց տեսասկավառակ, փաստաբանական հարցում, փաստաբանական հարցման պատասխան, երկու պայմանագիր, լիազորագիր, ռեգիստրի վկայական, վկայականի պատճենը և լրագրող Արթուր Հովհաննիսյանի հոդվածը «Հայացք» թերթում:

Այնուհետև հայցվորի ներկայացուցիչը դատարանին միջնորդությամբ արեց առ այն, որ կապված դատարան ներկայացրած ապացույցների հանգամանքի հետ՝ այս ընթացքում հայցվոր կողմը դիմել է ՀՀ տեղեկատվական վեճերի խորհրդին, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության փիլիսոփայական գիտությունների թեկնածուների, գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի առաջատար գիտաշխատողների, կրոնի և հասարակական խնդիրների հետազոտման կենտրոնի աշխատակցի, կրոնի և իրավունքի հարցերի փորձագետ հանդիսացող անձանց, որոնց փորձագիտական եզրակացությունները կարող են սույն գործի համար էական նշանակություն ունենալ: Ուստի, միջնորդեց հետաձգել դատական նիստը առնվազն 25 օրով, քանի որ նշված ժամկետում կստացվեն դատարանին ներկայացրած ապացույցները հաստատող փորձագիտական եզրակացություններ:

Պատասխանողի ներկայացուցիչ Լ. Բաղդասարյանը առարկեց միջնորդությանը՝ պատճառաբանելով, որ հայցվոր կողմը կաշկանդված չէ դիմել տարբեր պետական և ոչ պետական մարմինների: Չնայած դա վերջինիս իրավունքն է, սակայն հայցի առարկան վերաբերում է այն հիմքին, որով հայցվորը մտել է դատարան, և հայցապահանջը վարույթ ընդունելուց հետո հայցվորը փորձում է ապացուցել, որ հայցապահանջի հիմքում դրված ապացուցողական նշանակություն ունեցող փաստերը պետք է նոր ապացուցվեն: Իսկ ինչ վերաբերում է այն ապացույցին, որ հայցվորը կստանար 25 օրվա ընթացքում, ապա այն կարող է նաև ստանալ դատաքննության ընթացքում, այսինքն՝ ոչ մի խնդիր չկա նիստը հետաձգելու:

Դատավարությունը նախագահող Ռ. Ներսիսյանը հայտնեց, որ սույն հայրը վարույթ է ընդունվել 2011թ. նոյեմբերի 23-ին, այժմ 2012թ. ապրիլի 13-ն է, այս ընթացքում հայցվորը դատարանին է ներկայացրել հայցադիմումի լրացում, այսօր հայցվորը ներկայացնում է հայցադիմումի ևս մեկ լրացում, այնուհետև ավելացրեց, որ այս մասով հայցվորի կողմից ակնհայտորեն առկա է անբարեխիղճ վերաբերմունք դատավարական իրավունքների իրագործման հանդեպ: Իսկ ինչ վերաբերում է միջնորդությանը, դատարանը նշեց, որ այն ենթակա է բավարարման այն պատճառաբանությամբ, որ նախնական դատական նիստի ամբողջ իմաստն այն է, որ կողմերը ապացույցներ ձեռք բերելու և դատարանին ներկայացնելու հնարավորություն ունենան, ինչպես նաև ավելացրեց, որ այս դեպքում առավելությունը պետք է տրվի արդարադատության իրականացմանը, և կողմին պետք է ապացույցներ ներկայացնելու հնարավորություն ընձեռվի:

## **«Կյանքի խոսք»-ն ու «Իրավունքը» չհաշտվեցին**

Մայիսի 10-ին հայցվորը հայտարարեց, որ պատրաստ է հաշտություն կնքելու բանակցություններ վարել կողմի հետ: Սակայն հաջորդ նիստին դատարանին հաշտության որևէ համաձայնություն չներկայացվեց, և դատավոր Ռ. Ներսիսյանը շարունակեց նիստը:

Պատասխանողի ներկայացուցիչ Լևոն Բաղդասարյանը դատարանին որպես ապացուցողական փաստաթուղթ ներկայացրեց «Իրավունք» թերթի մայիսի 29-ի 59-րդ համարը: Դատավորի հարցին, թե հայցվորն արդյոք գտնում է, որ պատրաստ են դատաքննության փուլ անցնելու, Ա. Պապինյանը պատասխանեց՝ «ոչ» պատճառաբանելով, որ այս գործով կիրառելի Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում բացակայում է բարի համբավի մասին նորմատիվային եզրույթը, այլ առկա է գործարար համբավի եզրույթը: Ա. Պապինյանն ավելացրեց, որ «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը չունի գործարար համբավ, քանի որ այն բիզնեսով չի զբաղվում, այս դեպքում այն ունի բարի համբավ: Եվ որպեսզի հետաքայում օրենքում տվյալ նորմատիվային եզրույթի բացակայությունը չանդրադառնա գործի ելքի վրա, միջնորդեց դատարանին գործը կասեցնել և վիճարկվող հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան:

Պատասխանող կողմն առարկեց տվյալ միջնորդությանը՝ պարզաբանելով, որ հայցվորը ցանկանում է ժամանակ շահել և նիստը անընդհատ հետաձգել: Դատարանը մերժեց հայցվորի միջնորդությունը՝ մեկնաբանելով, որ Սահմանադրական դատարանն արդեն իսկ որոշում ունի տվյալ հոդվածի վերաբերյալ (նոյեմբերի 15, ՍԴԴ - 997), ինչպես նաև ավելացրեց, որ Վճռաբեկ դատարանը, արդեն իսկ հաշվի առնելով ՍԴ-ի N997 որոշումը, հրապարակել է որոշումներ, որոնցում մանրակրկիտ նկարագրվում է վիճարկվող հոդվածը:

## **«Կյանքի խոսք»-ն աղա՛նդ է, թե՛ Մայր Աթոռի պատասխանն է իրավախախտ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հաստատել է, որ «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը աղանդ է: Հուլիսի 13-ին «Իրավունքի» ներկայացուցիչ, փաստաբան Լ. Բաղդասարյանն իր խոսքում ներկայացրեց Մայր Աթոռից ստացված գրության պատասխանը: «Հայ առաքելական եկեղեցին որևէ կապ չունի «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպության հետ, «Կյանքի խոսք» կազմակերպությունը չի կարող դիտվել որպես հայ եկեղեցու բաղկացուցիչ մաս: «Կյանքի խոսքը» աղանդ է համարվում, որովհետև նրա դավանանքը և ուսմունքը շեղված են առաքելական ճշմարիտ եկեղեցու հավատքից և սրբազան հաղորդությունից, նրա ծեսերը և խորհուրդները չեն համապատասխանում եկեղեցու կանոնական և ավանդական սկզբունքներին, այն չի ընդունվում և չունի առաքելական հաջորդականություն և նվիրապետություն»:

«Կյանքի խոսք» կրոնական կազմակերպության և դրա ղեկավար Ա. Սիմոնյանի ներկայացուցիչ Ա. Պապինյանը պնդեց, որ այս պատասխանը չի կարող դրվել վճռի հիմքում և առհասարակ հաշվի առնվել դատարանի կողմից, քանի որ իրավաբանական ուժ չունի և հանրաճանաչ իրավունքների խախտման փաստ է պարունակում: Եկեղեցուն տրված հարցը, թե «Կյանքի խոսքը» համարվում է աղանդավորական կազմակերպություն, ըստ փաստաբանի՝ հակասում է «Իսղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին. ««Կյանքի խոսքը» երբևէ չի նշել, որ կապ ունի Հայ առաքելական եկեղեցու հետ, և վերջինիս վերապահված չէ իրավունք՝ հայտնելու որևէ կարծիք, այդ թվում՝ թվացյալ մասնագիտական՝ այլ եկեղեցու կամ կրոնական կազմակերպությունների մասին, հետևաբար հարցը Հայ առաքելական եկեղեցու իրավասությունից դուրս է և այս վեճում որևէ նշանակություն, առավել ևս՝ ապացուցողական, չի կարող ունենալ», - ասաց փաստաբան Պապինյանը:

Մեջբերելով Եվրոպայի մի շարք նախադեպային որոշումներ՝ Նա նշեց, որ ժողովրդավարական և իրավական հասարակությունում, նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առկայության պայմաններում Մայր Աթոռի պատասխանը իրավախախտ և նշվածներին հակասող պատասխան է: Այն կոպտագույնս խախտում է հասարակության անդամների կյանքի հոգևոր կողմի ազատ բազմակարծությունը և ժխտողական և նեգատիվ կերպով պիտակավորում նրա հանրահայտ իրավունքը, միևնույն ժամանակ վտանգում և պայմաններ է ստեղծում այդ իրավունքի սահմանափակման տեսանկյունից: Փաստաբանը միջնորդեց այն չդիտարկել ապացույցների շարքում, որին թերթի ներկայացուցիչը առարկեց՝ նշելով, որ դատարանն է գնահատում ներկայացված ապացույցները: Համաձայնություն հայտնեց նաև դատավոր Ռ. Ներսիսյանը և մերժեց միջնորդությունը:

Անդրադառնալով «աղանդ» բառի վիրավորական լինել-չլինելուն՝ Ա. Պապինյանը պնդեց դրա վիրավորական լինելը, մեջբերեց «աղանդ» բառի բառարանային իմաստները, որոնք բացասական են, այն է՝ կախարդանք, տվյալ երկրում ընդունված կրոնին դեմ կամ օտար կրոն, մոլորություն և այլն: Նա նաև վկայակոչեց մասնագետների կողմից արված բազում գիտական, վերլուծական, մասնագիտական աշխատություններ, որոնցում հիմնավորվում է «աղանդ» բառի վիրավորական և զրպարտչական լինելը, և որոնից բխում է ստորացնող և նսեմացնող նշանակությունը:

Թերթի ներկայացուցիչ Լ. Բաղդասարյանն ամբողջությամբ առարկեց հայցադիմումին: Նա հղում կատարեց «աղանդ» եզրույթի՝ Ղ. Աղայանի բառարանային բացատրությանը, համաձայն որի՝ աղանդը տվյալ եկեղեցու դավանանքից շեղվող կրոնական ուսմունք է, տվյալ երկրում ընդունված կրոնից օտար մեկ այլ կրոն, որևէ ուսմունքից շեղվող ուղղություն: «Աղանդ» նշանակում է նաև որևէ ուսմունքի հիմունքներից շեղվելը, իսկ «աղանդավորը» աղանդի հետևորդն է, հերետիկոս, խմբակային իրենց շահերով ու դոգմատիկ համոզմունքներին հետևող գործիչ, աղանդավորություն տարածող և այլն:

Ըստ այդմ, փաստաբանը դատարանին միջնորդեց մերժել «Կյանքի խոսք»-ի հայցը և որպես դատական ծախս «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունից և կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանից հօգուտ «Իրավունքի» բռնագանձել 300-հազարական դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

## **Դատարանը հետազոտեց «Կյանքի խոսք»-ին եւ Անժելա Սարգսյանին վերաբերող խտասկավառակները**

Դերասանուհի Անժելա Սարգսյանի և «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպության հնարավոր կապը կամ դրա բացակայությունն էր քննարկվում հուլիսի 17-ի դատական նիստի ընթացքում: «Կյանքի խոսք»-ի կողմից ներկայացված խտասկավառակում «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Կռվախնձոր» հաղորդման ընթացքում Անժելա Սարգսյանի հայտարարությունն էր առ այն, որ վերջինս «Կյանքի խոսք» եկեղեցու անդամ չէ և հետաքրքրությունից դրդված հաճախակի է այցելել տարբեր եկեղեցիներ և մասնակցել տարբեր հավաքների:

«Իրավունք» թերթի ներկայացրած խտասկավառակը տեղեկություններ էր պարունակում «Կյանքի խոսք» կազմակերպության ղեկավար Ա. Սիմոնյանի գործունեության մասին: Հիմնականում ներկայացվում էր Ա. Սիմոնյանի իտալերեն քարոզը, որտեղ վերջինս օգտագործում է «պոռնոաստվածուհի», «ծովի հրեշի որդիներ» բառերը: Անդրադարձ էր կատարվում Ա. Սիմոնյանի վարքագծին, այն է՝ հավաքների ընթացքում վերջինս նշում է, որ շնացել է, հարբել է, պետությունից գողություն է կատարել, ինչ պետք է եղել, այն էլ գողացել է:

Խտասկավառակում առկա էր հատված Ռուսաստանում անցկացված «Կյանքի խոսք»-ի հավաքներից, որտեղ հովիվը բեմի վրա տեղադրված կուգարանը համեմատում է աղոթատեղիի հետ՝ նշելով, որ բնական կարիքները հոգալու ժամանակ աղոթելիս անձը մաքրվում է վերջում ջուրը քաշելու միջոցով:

Այնուհետև խտասկավառակում ներկայացվում է Անժելա Սարգսյանի «տղամարդու» մոր՝ Մարինա Արայանի հարցազրույցը, ով հայտնում է, որ Ա. Սարգսյանը սպառնացել է իր որդուն. «Անժելան շանտաժի էր ենթարկում Կարենին, փորձում էր ահաբեկել իր թիկունքին կանգնած «Կյանքի խոսք» աղանդով, որն ի գորու է այս քաղաքում լուծել ցանկացած հարց»: Մ. Արայանը նաև հայտնում է, որ Ա. Սարգսյանի քույրը՝ Աննան, «Կյանքի խոսք»-ի ավագներից է:

Ա. Սարգսյանի նախկին կուլեգաներ Գայանե Ալյամազյանը և Անի Պետրոսյանը հայտնում են, որ Ա. Սարգսյանը հիմնականում խոսել է հավատքից՝ նշելով. «Մենք իմացել ենք, որ նա հավատացյալ է, որովհետև անընդհատ խոսում էր, որ սա մեղք է, նա մեղք է, ես գնում եմ հավատքի»: Նրանք նաև ավելացրել են, որ «Անժելան ունի քույր, որն ինչ-որ կապ ունի թերթերի հետ, և պատահական չի, որ էդ ամեն ինչը անընդհատ հայտնվում ա մամուլում»:

Խտասկավառակում ներկայացվում է նաև Ա. Սարգսյանի հարցազրույցը, որտեղ նա ասում է, որ հավատքով է հասել այն ամենին, ինչ հիմա ունի, որ նա սովորել է «Աստվածաշնչյան դպրոցում»: Ըստ պա-

տասխանողի պարզաձ տվյալների՝ այդ դպրոցը պատկանում է «Կյանքի խոսք» եկեղեցուն, որի դեկանն է Արթուր Տոնոյանը: Պատասխանողը ներկայացնում է հատվածներ, որտեղ Ա. Սարգսյանը դեռ վաղ տարիքից ներկա է եղել «Կյանքի խոսք»-ի հավաքներին:

Խտասկավառակները դիտելուց հետո դատարանը հեռացավ ապացույցների հետազոտման և դատական ակտ կայացնելու համար:

Հուլիսի 31-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Ռ. Ներսիսյանի նախագահությամբ մերժեց «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպության հայցն ընդդեմ «Իրավունք» թերթի: Համաձայն վճռի՝ «Կյանքի խոսք» կազմակերպությունից և նրա ղեկավար Արթուր Սիմոնյանից հոգուտ «Իրավունք» թերթի պետք է բռնագանձվի 150-հազարական դրամ՝ որպես փաստաբանական ծախս, իսկ հոգուտ պետական բյուջեի՝ 1500 ՀՀ դրամ:



Մարգարիտա Խաչատրյան

## **«Հրապարակը» հերքում չի տպագրելու. 1-ին ատյանի դատարանը մերժեց Մարգարիտա Խաչատրյանի հայցը**

2011 թ. ապրիլին «Հրապարակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանը դիմել էր ոստիկանություն՝ Մարգարիտա Խաչատրյանին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջով: Վերջինս էլ հայցով մտել էր դատարան եւ պահանջում էր, որ «Հրապարակը», իր մասին տպագրած հրապարակումներից մեկը հերքելուց զատ, զրպարտության համար իբրեւ փոխհատուցում իրեն վճարի 2 մլն ՀՀ դրամ:

Ապրիլի 21-ին «Հրապարակ» օրաթերթն առաջին էջում տպագրել էր մի նյութ, ըստ որի՝ Մարգարիտա Խաչատրյանը, որ պարբերաբար ստուգայցեր է կատարում ՀՀ զորամասերում, աչքի է ընկնում իր կոպիտ վարքագծով. զորամասերում թերություններ, խախտումներ հայտնաբերելիս զերծ չի մնում հայիոյանքներից: «Մեր տեղեկություններով՝ վերջին այցերից մեկի ժամանակ ԼՂՀ զորամասերից մեկում վիճաբանություն է սկսվել Մարգարիտա Խաչատրյանի եւ հրամանատարական կազմի միջեւ, եւ բանը հասել է նույնիսկ քաջքռոցի ու ծեծի»,- գրել էր թերթը:

«Հրապարակ» օրաթերթում նշյալ լուրի տպագրվելու հենց նույն օրն առավոտյան Մարգարիտա Խաչատրյանն այցելել էր խմբագրություն: «Անակնկալ ներխուժում է, կարմրեցած գոտում, տղամարդավարի հայիոյում, քացով խփում է աթոռներին, պատռում թերթերը, հարձակվում խմբագրի ու խմբագրակազմի վրա, ջրով լի բաժակը շարտում խմբագրի ուղղությամբ, բարեբախտաբար բախվելով պատին՝ բաժակի փշուրները հատակին են թափվում. «Թողեք խփեմ սրան»...», - սհա այսպես է «Հրապարակի» լրագրող Ֆելիքս Եղիազարյանը թերթի հաջորդ օրվա համարում նկարագրել «Մարգարիտա Խաչատրյանի եւ իր տիկնանց ջբախմբի» այցելությունը: Այս ամենի, ինչպես նաեւ լրագրողներից մեկին հարվածելու եւ խմբագրի ձեռքը ճանկոելու համար (որը հետագայում արձանագրվել է դատաբժշկական փորձաքննության) նույն օրը հաղորդում է ներկայացվում ոստիկանության Կենտրոնական բաժին:

Տարեվերջին վերոնշյալ դրվագներից եւ ոչ մեկով դեռեւս հանգուցալուծում չկար: Կենտրոնի դատարանը ձգձգում էր գործի քննությունը՝ պայմանավորված նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարանի կողմից վիրավորանքի եւ գրպարտության մասին օրենքի սահմանադրականության հարցի որոշմամբ: Իսկ հաղորդման հիման վրա կատարված քննության արդյունքում իրավապահները որոշել էին քրեական գործ չհարուցել: Այս որոշման դեմ խմբագրության՝ դատարան ներկայացրած բողոքը բավարարվել էր: Իրավապահներն իրենց հերթին դիմել էին վերաքննիչ դատարան, սակայն այս ատյանը եւս համարել էր, որ քրեական գործ հարուցելու հիմքերը բավարար են: Արդյունքում դատախազությունը խմբագրություն ուղարկած գրությամբ հայտնել էր, որ ոստիկանության Կենտրոնի բաժնում խուլիգանության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Դեկտեմբերի 23-ի նիստին Մ. Խաչատրյանի փաստաբան Դավիթ Թումանյանը միջնորդություն ներկայացրեց դատարանին, որը բաղկացած էր երկու մասից. առաջինում միջնորդություն էր արվում, որպեսզի պատասխանողը հայցվորին տրամադրեր իր եկամուտների մասին տեղեկություն, քանի որ, համաձայն Սահմանադրական դատարանի նոյեմբերի 15-ի որոշման, հայցվորը դրամական փոխհատուցում պահանջելիս պետք է հաշվի առնի պատասխանողի ֆինանսական վիճակը: Այդ պատճառով հայցվորը միջնորդում էր իրեն տրամադրել համապատասխան տվյալներ, որպեսզի հարկ եղած դեպքում փոփոխություններ արվեն հայցապահանջի մեջ: Միջնորդության երկրորդ մասում հայցվորը դատարանին ներկայացրեց իր կազմած հերքման տեքստը, համաձայն որի՝ «Հրապարակ» օրաթերթը պետք է հերքի Մարգարիտա Խաչատրյանի վերաբերյալ ապրիլի 21-ին հրապարակած տեղեկությունները, ինչպես նաև հետագայում հայցվորի վերաբերյալ որևէ վիրավորական նյութ չհրապարակի:

Դատավոր Ս. Թադևոսյանը միջնորդության առաջին մասը չբավարարեց՝ մեկնաբանելով, որ վճիռ կայացնելիս դատարանին միզուցե պետք զա պահանջվող տեղեկությունը, հարկ եղած դեպքում դատարանն այն կպահանջի պատասխանողից: Իսկ երկրորդ մասով դատարանը բավարարեց հայցվորի միջնորդությունը և պատասխանող կողմին հատկացրեց օրենքով սահմանված 14-օրյա ժամանակահատված, որպեսզի պատասխանողը ծանոթանա հայցադիմումին, քանի որ միջնորդությունից հետո հայցապահանջը փոխվել է՝ ավելացել է նաև հերքման տեքստը:

## **Մարգարիտա Խաչատրյանը «Հրապարակ» օրաթերթից այլևս 2 մլն չի պահանջում**

Արդեն 2012-ին կայացած դատական նիստի ժամանակ «Զինվոր» ՀԿ-ի համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանը հրաժարվեց «Հրապարակ» օրաթերթի դեմ ներկայացված 2 մլն դրամ գումարային պահանջից: Մ. Խաչատրյանը թերթից պահանջեց միայն հերքել իր մասին հրապարակած, գրպարտություն հանդիսացող տեղեկությունները:

Գումարային պահանջից հրաժարվելը Մ. Խաչատրյանի ներկայացուցիչ, փաստաբան Դ. Թումայանը հիմնավորեց «Հրապարակ» օրաթերթի ֆինանսական որոշ խնդիրներով, ըստ որի՝ օրաթերթի որոշ լրագրողներ հոնորար չեն ստանում: «Որպեսզի «Հրապարակ» օրաթերթը հետագայում չչափարկի այն հանգամանքը, իբրև թե Մարգարիտա Խաչատրյանը ցանկանում է հարստանալ այդ եղանակով, մենք ընդհանրապես գումարային պահանջ չենք ներկայացնում», - հավելեց Դ. Թումայանը:

Ըստ փաստաբանի՝ դատաքննության ընթացքում հրապարակված տեղեկությունների մասին որևէ ապացույց, որ դեպքը տեղի է ունեցել, չի ներկայացվել, չնայած ապացուցման բեռը հենց պատասխանողի վրա էր: Մինչդեռ հայցվոր կողմն է զորամասից տեղեկանք ներկայացրել, որտեղ նշված է, որ զորամաս այդ օրվա այցելության ժամանակ որևէ դեպք չի գրանցվել: Դ. Թումայանի խոսքով՝ հայտնի չէ նաև այն աղբյուրը, որից օրաթերթը ծեծկոտուքի մասին տեղեկություններ է ստացել:

Օրաթերթի շահերը ներկայացնող փաստաբան Դավիթ Դանիելյանը նշեց, որ լրագրողը բարեխղճորեն կատարել է իր պարտականությունը, ունեցած տեղեկությունները ճշտելու համար զանգահարել է Մ. Խաչատրյանին և նրա պատասխանը նույնպես ներառել այդ նյութում, որտեղ Մ. Խաչատրյանը հերքում է այդ տեղեկությունները: Հետևաբար, ևս մեկ անգամ հերքում տպագրելու անհրաժեշտություն չկա:

Կողմերն անդրադարձան նաև հերքման տեքստին, որը ներկայացրել էր հայցվորը: Ըստ էության, այն ավելի ծավալուն էր, քան հրապարակված նյութը և ներառում էր նաև Մարգարիտա Խաչատրյանից ներողություն խնդրելու հատված: Օրաթերթի ներկայացուցիչը նշեց, որ միայն վիրավորանքի պարագայում է կիրառելի ներողությունը, այլ ոչ թե զրպարտության: Ավելին, հայցվորը հերքման տեքստում պահանջում է հետագա հրապարակումներում ևս զերծ մնալ նմանատիպ տեղեկություններ տարածելուց, ինչը նույնպես ընդունելի չէ օրաթերթի համար: Բացի դրանից, հերքման տեքստը չպետք է զիջի հիմնական նյութին, բայց նաև չպետք է գերազանցի ողջամիտ ծավալը:

Այդուհանդերձ, փաստաբան Դ. Դանիելյանը առարկեց հայցին և դատարանից խնդրեց ամբողջությամբ մերժել այն: Գործով դատաքննությունն ավարտվեց հուլիսի 13-ին:

Հուլիսի 30-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժեց Մարգարիտա Խաչատրյանի՝ հերքումը տպագրելու մասին հայցն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի:

Իսկ Կենտրոնի քննչական բաժնի քննիչ է. Ալվազյանի որոշմամբ, ամիսներ տեսած քննությունից հետո, 2012թ. փետրվարին քրգործով վարույթը կարճվում է՝ «Մ. Խաչատրյանի կողմից խուլիգանություն կատարելու կապակցությամբ քրեական հետապնդում չիրականացնել հանցակազմի բացակայության հիմքով»:

# **Կկասեցվի՝ Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոն-news.am դատավարությունը**

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Մարգարիտա Հարթենյանի նախագահությամբ դեռեւս 2011 թվականից լավում է news.am լրատվական-վերլուծական գործակալության դեմ Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի՝ պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության հայցը:

News.am-ի դեմ ներկայացված հայցի համար հիմք է հանդիսացել լրատվական գործակալության՝ 2010 թ. նոյեմբերի 23-ին տպագրած նյութը: Այն վերաբերում էր Հայաստանի քաղաքացի Հովհաննես Կաթրջյանին, ով news.am-ի թղթակցի հետ զրույցում մեղադրել էր վերոնշյալ բժշկական կենտրոնին իրեն խաբելու և 10 տարի շահագործման ժամկետով էլեկտրակարդիոլոգիանիչի փոխարեն վիրահատությամբ մեկ այլ՝ էժանագին սարք տեղադրելու մեջ: Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնը լրատվամիջոցից 2 մլն դրամ է պահանջում իր պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին վնաս հասցնելու համար:

Նիստերից մեկի ժամանակ հայցվորի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանը միջնորդեց կասեցնել գործի քննությունը, քանի որ քաղաքացի Հովհաննես Կաթրջյանը դիմել է ոստիկանություն Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի դեմ քրեական գործ հարուցելու համար: Սակայն պատասխանող news.am-ի ներկայացուցիչ Արամազդ Կիվիլոյանը առարկեց հայցվորի միջնորդությանը՝ պատճառաբանելով, որ տվյալ քրեական գործը որևէ ազդեցություն չի կարող ունենալ սույն գործի ելքի վրա, քանի որ Հ. Կաթրջյանը մեղադրում է Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնին իրեն խաբելու և գումար յուրացնելու մեջ, իսկ սույն գործով քննվում է news.am-ի կողմից հայցվորի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին վնաս հասցնելու հարցը:

Դատավոր Մ. Հարթենյանը հայցվորին հարց ուղղեց առ այն, որ եթե հայցվորը այնդում է, որ news.am կայքը վիրավորել և զրպարտել է Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի պատվը, արժանապատվությունը և գործարար համբավը, ինչպես նաև նշում, որ Հ. Կաթրջյանն է զրպարտել հայցվորին, ապա ի՞նչ կապ ունի news.am-ը: Հայցվորը պատասխանեց, որ Հ. Կաթրջյանը հայտնել է այդ մասին պատասխանողին, իսկ նրանք էլ իրապարակել են այն, ուրեմն պատասխանատվությունը նրանք են կրում:

Հետագա դատական նիստերին Մուրադ Ասրյանի միջնորդությունները գործի կասեցման եւ Սրտաբանական կենտրոնի տնօրենին որպես վկա ներգրավելու մասին դատավոր Հարթենյանը մերժեց:

Սեպտեմբերի 3-ին հայցվորի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանը ամբողջությամբ ընթերցեց հայցապահանջը, որում հիմնականում այնդում էր, որ հողվածի վերնագիրը և հողվածի բովանդակությունը միմյանց

չեն համապատասխանում՝ պատճառաբանելով, որ հողվածի մեջ որևէ կերպ չի ասվում, որ Հ. Կաթրջյանին «Ֆոռացրել» են: Ըստ Մ. Ասրյանի՝ կա լրագրողի կողմից գնահատողական դատողության չարաշահում է՝ հիմնված ոչ ստույգ փաստերի վրա:

Սակայն իր ելույթում պատասխանողի ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյանը հայտնեց, որ իրենք այն կարծիքին են, որ վերնագիրն անմիջական կապ ունի հողվածի հետ: Ա. Կիվիրյանը նաև դատարանին ներկայացրեց, որ իրենք առարկում են հայցապահանջի դեմ, քանի որ այն ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետների խախտմամբ. նյութը հրապարակվել է նոյեմբեր ամսին, սակայն հայց է ներկայացվել փետրվարին:

Մուրադ Ասրյանը նաև պահանջ է ներկայացրել դատարանին փաստաբանական ծախսերի համար, որի գումարը կազմում է երկու հարյուր հազար դրամ: Ա. Կիվիրյանն էլ դատարանին խնդրեց, որպեսզի դատարանը հաշվի առնի «Մեդիա Կոնսայթ» ՍՊԸ-ի և «Արես» փաստաբանական գրասենյակի միջև կնքված պայմանագիրը դատական ծախսերի վերաբերյալ:

## **News.am-ի գործով կհետազոտվի հեռախոսային հարցազրույցը**

Հոկտեմբերի 9-ին դատարանը հետազոտեց գործում առկա ապացույցները, այնուհետև հրավիրեց դատակոչված վկա Հովհաննես Կաթրջյանին:

Քանի որ պատասխանողն էր միջնորդություն արել նրան որպես վկա դատակոչելու, վկային առաջինը հարցաքննելու իրավունքը տրվեց պատասխանողի ներկայացուցիչ Ա. Կիվիրյանին: Վերջինս ընթերցեց news.am-ում հրապարակված «Սրտի արատով հիվանդին Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնում «Ֆոռացրել» են ու այլ սարք տեղադրել» վերտառությամբ հողվածը և հարցրեց վկային՝ արդյո՞ք հողվածում առկա խոսքերը իր խոսքերն են: Հ. Կաթրջյանը հաստատեց, որ իր խոսքերն են, իսկ վերնագրում առկա «Ֆոռացրել» են բառի վերաբերյալ ավելացրեց, որ դա մեղմ է ասված:

Հ. Կաթրջյանը դատարանին ներկայացրեց բժիշկների տված արձանագրությունը, որում ասվում է, որ տեղադրված սարքը ծառայելու է 6 տարի ժամկետով: Ինչպես նաև դատարանին ներկայացրեց որոշում քրեական գործով իրեն տուժող ճանաչելու և Առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի նախկին տնօրեն Սմբատ Զամայանին մեղադրյալ ներգրավելու մասին: Վկան ավելացրեց, որ բացի իրենից՝ ևս երկու հոգի է Ս. Զամայանին դատի տվել՝ վերջինիս անվանելով մարդասպան, Հիպոկրատի երդում տված մարդ, որը տարիներ շարունակ մարդկանց հաշմանդամ է դարձրել, որին պետք է կախել: Հ. Կաթրջյանը Ս. Զամայանին նաև համեմատեց Սաֆարովի հետ՝ մեկնաբանելով, որ վերջինս քնած է մարդ սպանել, Ս. Զամայանն էլ քնեցնելով է դա անում:

Մ. Ասրյանի հարցին, թե նա ինչ միջոցով է news.am-ին հաղորդել վիճահարույց հողվածում հրապարակված տեղեկատվությունը,

Հ. Կաթոջանը պատասխանեց, որ անձամբ, իր նախաձեռնությամբ է գնացել news.am գործակալություն:

Դատարանը հրապարակեց ամբողջ տեքստը, որպեսզի վկան ասեր, թե արդյոք հողվածում առկա տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, թե ոչ, և ինչը իր կարծիքը չէ, այլ ավելացված է խմբագրության կողմից: Վկան ասաց, որ ամբողջն իր հայտնած տեղեկություններն են և կրկին պնդեց իր կարծիքը Ս. Ջամալյանի վերաբերյալ:

Այնուհետև կողմերը դատարանին հայտնեցին իրենց դիրքորոշումները վկայի ցուցմունքի վերաբերյալ: Մ. Ասրյանն առաջադրեց այն հարցը, որ պատասխանողի ներկայացուցիչ Ա. Կիվիրյանի խոսքերի և դատակոչված վկա Հ. Կաթոջանի ցուցմունքի միջև հակասություններ կան առ այն, որ Հ. Կաթոջանն ասում է, թե իր նախաձեռնությամբ է գնացել գործակալություն, մինչդեռ Ա. Կիվիրյանը նախորդ նիստերից մեկում ասել է, որ Հ. Կաթոջանին թղթակիցը հանդիպել է Կառավարության շենքի դիմաց: Սրանից Մ. Ասրյանը հետևություն է անում, որ news.am-ում հրապարակված հոդվածը հրապարակային ելույթից վերցված չէ, այդ իսկ պատճառով որպես պատասխանող պետք է հանդես գա «Մեդիա Կոնսալթ» ՍՊԸ-ն, որը ներկայացրել է ոչ հավաստի տվյալներ:

Մ. Ասրյանը պնդեց, որ որպես ապացույց ներկայացված ծայնասկավառակը, որում news.am-ի թղթակցի և Ս. Ջամալյանի հեռախոսային հարցազրույցն է, հետազոտվի դատարանում: Դատարանը նիստը հետաձգեց, քանի որ համապատասխան տեխնիկա չկար՝ հետազոտելու ծայնասկավառակը: Հերթական նիստի օր նշանակվեց հոկտեմբերի 26-ը, որը հետաձգվեց:

## **Նոր պահանջ՝ մեկական մլն վիրավորանքի եւ գրապարտության համար**

Մինչ news.am լրատվական-վերլուծական գործակալությունը դատարանում փորձում էր ապացուցել, որ չի արատավորել Առիթմալուգիական սրտաբանական կենտրոնի բարի համբավը, կենտրոնի փաստաբան Մուրադ Ասրյանը 2011 թ. մարտին գործակալության դեմ («Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ) **իր** պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության հայց ներկայացրեց: Հայցի հիմքում 2011թ. փետրվարի 4-ին news.am կայքում Գագիկ Շամշյանի հեղինակությամբ հրապարակված «Հեթոսկան դատական հայցը անկախ լրատվամիջոցի դեմ. անգրագիտության կատարյալ օրինակ» հոդվածն էր:

Մ. Ասրյանը ներկայացրել էր երկու պահանջ՝ հրապարակել իր պատասխանը և վճարել փոխհատուցում հոդվածում առկա գրապարտության համար՝ 2 մլն ՀՀ դրամ: Սակայն 2012թ. ապրիլի 19-ի նիստին հայցվորը ցանկություն հայտնեց փոխել հայցի առարկան՝ ինչպես վիրավորանքի, այնպես էլ գրապարտության համար պահանջելով 1-ական մլն ՀՀ դրամ: Այսինքն՝ հայցվորը պահանջվող գումարը թողնում է անփոփոխ՝ 2 մլն դրամ, փոխվում է միայն հայցի առարկան՝ վիրավորանքի մասով: Սակայն Մ. Ասրյանը հայցի առարկան փոխելու մասին գրավոր միջնորդություն չունեց, այդ պատճառով խնդրեց նիստը հետաձգել մինչև հայցի առարկայի և հնարավոր հիմքի փոփոխության մասին դատարանին գրավոր միջնորդության ներկայացումը:

Պատասխանող կողմի ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյանը իր կարծիքը հայտնեց առ այն, որ հայցվորը բարեխղճորեն չի օգտվում իր իրավունքներից, այն է՝ լինելով հայցվոր՝ պետք է նախօրոք պատրաստված գար, որպեսզի նիստը չհետաձգվեր: Պատասխանողի մյուս ներկայացուցիչ Դիանա Գրիգորյանը հայտնեց դատարանին, որ որպես օգնություն հայցվորին՝ կողմը սղագրել է 2011թ. փետրվարի 4-ի դատական նիստը, որը ցույց է տալիս, որ news.am կայքում հրապարակված հոդվածը չի արատավորում հայցվորի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, այլ գրված է օբյեկտիվորեն, ինչպես նաև առկա է վիդեոնկարահանում, որն էլ ապացուցում է պատասխանողի օբյեկտիվությունը:

Դատարանը բավարարեց երկու կողմերի միջնորդությունները՝ ընդունեց պատասխանող կողմի միջնորդությունը և հայցվորի խնդրանքով նիստը հետաձգեց մինչև հունիսի 22-ը:

Նշված օրը Մ. Ասրյանը դատարանին հայտնեց, որ հոդվածում տեղ գտած հետևյալ արտահայտությունները՝ «Ընդ որում, դատարանը վարույթ է ընդունել մի հայց, որն ապշեցնում է իր անգրագիտությամբ եւ օրենքի խախտումներով», «Դատավոր Էդիկ Ավետիսյանը ստիպված էր ժամանակ տրամադրել հայցվորի՝ Հայաստանի առիթմալուգիական սրտաբանական կենտրոնի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանին՝ շտկելու հայցի ակնհայտ անգրագիտությունը», «Դատարկումն, ի դեպ, անսպասելի էր Մուրադ Ասրյանի համար, եւ վերջինս ողջամիտ որբու է բացատրություն չկարողացավ գտնել: Դատավոր Էդիկ Ավետիսյանը

մի կերպ «հուշեց-բացատրեց» փաստաբանին, որ նա միջնորդություն ներկայացնի եւ դատարանից ժամանակ խնդրի հայցում պատշաճ պատասխանողի անունը նշելու համար», համարում է գրպարտություն, քանի որ դրանք չեն համապատասխանում իրականությանը և ներկայացնում են ոչ փաստացի տվյալներ:

Մ. Ասրյանը վիրավորանք է համարում այն արտահայտությունը, որ լրագրողն իրեն անվանել է «անգրագետ»:

Հայցվորը նաև անդրադարձավ հողվածում առկա լուսանկարին՝ մեկնաբանելով, որ պատասխանողների նկարները, մեղմ ասած, տարբերվում են իր նկարից: Նա դա նույնպես համարում է լրագրողի կողմից դիտավորություն, քանի որ վերջինս հայցվորին մի քանի անգամ նկարել է, սակայն տեղադրել է հայցվորի համար գրպարտիչ բնույթ կրող նկար:

Պատասխանողի ներկայացուցիչ Դ. Գրիգորյանը, անդրադառնալով Մ. Ասրյանի կողմից նշված գրպարտությանը և վիրավորանքին, դատարանին հայտնեց պատասխանողի դիրքորոշումն առ այն, որ լրագրողն անդրադարձել է հայցի անգրագիտությանը, քանի որ Մ. Ասրյանը որպես պատասխանող է ընդգրկել news.am-ին, սակայն վերջինս որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ չէր կարող հանդիսանալ, այն որպես իրավաբանական անձ չի գրանցված:

Այնուհետև ներկայացուցիչը հայտնեց, որ հայցվորը դատարան դիմելիս պահանջել է դրամական փոխհատուցում, սակայն պետական տուրք վճարել է ընդամենը 8 հազար ՀՀ դրամ, այն դեպքում, երբ պետք է վճարեր առնվազն 48 հազար ՀՀ դրամ: Ըստ ներկայացուցչի՝ ակնհայտ կոպիտ սխալներով է հայցը դատարան մուտք արվել:

Դ. Գրիգորյանը դատարանին ներկայացրեց նիստի արձանագրությունից հատված, որտեղ դատավոր Է. Ավետիսյանը հուշումներ է անում Մ. Ասրյանին՝ նիստը հետաձգելու և պատշաճ պատասխանող ներկայացնելու վերաբերյալ միջնորդություն անելու: Նիստի ընթացքում դատավորի կողմից հաճախակի կրկնվում են արտահայտություններ, ինչպիսիք են «լսում եմ ձեզ», «ի՛նչ անենք հիմա»... : Այսքանով Դ. Գրիգորյանը դատարանին ներկայացրեց իրենց առարկությունները՝ նշելով, որ լրագրողն իր կարծիքն է հայտնել հայցի, այլ ոչ թե հայցվորի անձի վերաբերյալ:

Պատասխանողի ներկայացուցիչները խոսեցին ապացույցների բաշխում կատարելու մասին, սակայն Մ. Ասրյանը առարկեց՝ պարզաբանելով, որ պետք է ծանոթանա պատասխանողի գրավոր առարկությանը, այնուհետև անցնեն ապացույցների բաշխմանը:

Հոկտեմբերի 8-ին նշանակված նիստը հետաձգվեց, քանի որ Մուրադ Ասրյանը հայտարարեց հայցի առարկան փոխելու իր մտադրության մասին: Հերթական դատական նիստը նշանակվել է նոյեմբերի 19-ին:

## **Առողջապահության ազգային ինստիտուտի նախկին աշխատակիցը վիրավորվել է «պիտանի չեն» արտահայտությունից**

Առողջապահության ազգային ինստիտուտի նախկին աշխատակից Յուրի Մնացականյանը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում վիճարկում էր 2011թ. նոյեմբերի 26-ին news.am կայքում հրապարակված «Առողջապահության ազգային ինստիտուտի 40-100 աշխատակիցներ կհամալրեն գործազուրկների շարքերը» հոդվածում Վիգեն Շահինյանի արած արտահայտությունը: Հայքը ներկայացվել էր ընդդեմ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Խ. Ավրայբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ ՊՓԲԸ-ի և Վիգեն Շահինյանի, 3-րդ անձ՝ news.am-ի:

Հոդվածը վերաբերում էր Առողջապահության ազգային ինստիտուտի 150 աշխատակիցների, որոնք աշխատավարձ չեն ստացել՝ հայտնվելով կրճատման տակ: Հոդվածում Առողջապահության ազգային ինստիտուտի աշխատանքային խմբի ղեկավար Վիգեն Շահինյանն ասել է. «Հիմա իրավիճակը այսպիսին է. 176 հոգի դեռ շարունակում է աշխատել, որոնց մի մասի վճարումը ձգձգվում է, իսկ մյուսներին ընդհանրապես գումար չի վճարվել: Նման դեպքերում անխուսափելի են վերակազմակերպական կառուցվածքային փոփոխությունները: Ներկա պահին 40 հոգի կրճատման գործընթացի փուլում է, որոնք այս նոր պայմաններում պիտանի չեն ինստիտուտի գործունեության համար»: news.am-ի հարցին, թե ինչ նկատի ունի «պիտանի չեն» ասելով, նա պատասխանել է. «Այսինքն՝ ղեկանատ չկա: Օժանդակ ստորաբաժանումներում 6 հոգի է, իսկ նոր պայմանները թելադրում են, որ 3-ը մնա»:

Հայցվոր Յ. Մնացականյանը Առողջապահության ազգային ինստիտուտի աշխատակից է եղել և այդ ժամանակ նույնպես գտնվել է կրճատման տակ, ուստիև վիրավորվել է «պիտանի չեն» արտահայտությունից: Նա պատասխանողից որպես վիրավորանքի փոխհատուցում պահանջում էր 1 մլն դրամ:

2011թ. դեկտեմբերին ներկայացված հայքը քննության առնվեց 2012թ. ապրիլի 5-ին: Հուլիսի 23-ի նիստում պատասխանողի ներկայացուցիչը դատարանին ներկայացրեց դատարանի պահանջած փաստաթուղթը, որում ասվում էր, որ Յ. Մնացականյանը 4,5 ամիս առաջ ծանուցում է ստացել կրճատման մասին, սակայն այն այդպես էլ չի հաստատվել: Հետագայում՝ 2012թ. մայիսի 21-ին, հաստատվել է, սակայն այլ հիմքով՝ ժամանակին աշխատանքի չներկայանալու պատճառով, որի համար վերջինիս պայմանագիրը լուծվել է:

Օգոստոսի 21-ին կողմերն արդեն պետք է անցնեին դատաքննության փուլ, սակայն հայցվորի ներկայացուցիչ Դիանա Գրիգորյանը միջնորդեց դատարանին նախքան դատաքննությունը սկսելը ապացույցներ ներկայացնել դատարան: Ներկայացված ապացույցով հայցվորը պնդում էր, որ նախորդ դատական նիստին պատասխանողի


ներկայացրած ապացույցները որևէ էական նշանակություն չունեն, մասնավորապես՝ Յուրի Մնացականյանին աշխատանքից ազատելու մասին հրամանն իրավաբանական ուժ չունի և առոչինչ է: Դ. Գրիգորյանի խոսքով՝ տնօրենը, ըստ իր կողմից ներկայացված հրամանի, դեռևս մայիսի 21-ի դրությամբ աշխատանքից չէր ազատել Յուրի Մնացականյանին, սակայն 2011թ. նոյեմբերին news.am կայքում համապատասխան հոդվածը հրապարակելուց առաջ հայցվորին տվել է ծանուցագիր, որով վերջինս հայտնվել է կրճատման գործընթացի մեջ: Այնուհետև հայցվորը news.am-ի հոդվածից տեղեկանում է, որ կրճատման մեջ հայտնվածները «պիտանի չեն» աշխատելու համար: Հայցվորին աշխատանքից հեռացնելու մասին այդպես էլ հրաման չի կայացվել, ինչը, ըստ փաստաբանի, ուղղակիորեն վիրավորել է հայցվորի պատիվն ու արժանապատվությունը: Դ. Գրիգորյանը ավելացրեց, որ այն արդարացումը, թե «մեղմ ասած՝ դեկանատ չկա, և օժանդակ ստորաբաժանումներում 6 հոգի է», չի վերաբերում հայցվորին, քանի որ վերջինս ոչ դեկանատի աշխատող է, ոչ էլ՝ օժանդակ ստորաբաժանման:

Պատասխանողի ներկայացուցչի հարցին, թե որտեղ է գրված, որ խոսքը վերաբերում է միայն դեկանատին, Դ. Գրիգորյանը պատասխանեց, որ իրենք կարծում են, որ «պիտանի չեն» արտահայտությունն ուղղակիորեն վերաբերում է հայցվորին, սակայն, «մեղմ ասած», որպես արդարացում նշվել են դեկանատի և օժանդակ ստորաբաժանման աշխատակիցները: Պատասխանողն իր ելույթում դատարանին հայտնեց, որ Վիգեն Շահինյանը հոդվածում նշել է ընկերության բոլոր ստորաբաժանումների աշխատակիցներին, այդ թվում՝ հայցվորին, վերջինիս խոսքը վերաբերել է ընդհանուրին, ոչ թե կոնկրետ հայցվորին:

Սեպտեմբերի 4-ին Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Ռ. Ափինյանի նախագահությամբ վճռեց մերժել Յուրի Մնացականյանի հայցն ընդդեմ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ ՊՓԲԸ-ի և Վիգեն Շահինյանի, 3-րդ անձ՝ news.am-ի: Համաձայն վճռի՝ Յուրի Մնացականյանից պետք է բռնագանձվի 20 հազար ՀՀ դրամ՝ որպես պետական տուրք:



Զախից՝ Շ. Մալթեուսյան, Գ. Վեզիրյան



Փ. Միրզոյան

## **Դատարանը մերժեց Փ. Միրզոյանի հայցն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանության»**

### **Թե ինչից է վիրավորվել Փարավոն Միրզոյանը**

2012թ. հունվարի 24-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում շարունակվեց Ազգային պատկերասրահի տնօրեն Ֆարաոն Միրզոյանի (կամ՝ Փարավոն Միրզոյան) պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները հերքելու և պատճառված վնասները հատուցելու պահանջների մասին հայցով դատավարությունն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի («Կողմնակի անձանց Մ» ՄՊ ընկերության և Սերգեյ Գասպարյանի):

Գործով դատական առաջին նիստը տեղի էր ունեցել 2011թ. հոկտեմբերի 14-ին: Միրզոյանի փաստաբան Սիմոն Բաբայանի՝ գործուղման մեկնելու պատճառով դատարանն անժամկետ հետաձգել էր դատավարությունը:

2011թ. ապրիլի 9-ին «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթը «Ճանաչել Փարավոնին» հրապարակման ներքո անդրադարձել էր Ազգային պատկերասրահի տնօրեն Ֆարաոն Միրզոյանին, որը Հայաստանի գեղարվեստական ակադեմիայի 65-ամյակի առթիվ կազմակերպված միջոցառման ժամանակ «վիրավորվել է, որ իրեն պարգևատրում են «ընդամենը» շնորհակալագրով եւ «Արվեստի վաստակավոր գործչին շնորհակալագիր չեն տալիս» բառերն ասելով՝ ցուցադրաբար հրաժարվել է փարավոնին ոչ վայել պարգևը վերցնել կրթության նախարար Արմեն Աշոտյանի ձեռքից»:

Այս թերթը շարունակել է զարգացնել պատկերասրահի տնօրենի գործունեության թեման՝ օգտվելով նախկինում Ֆ. Միրզոյանի գործունեության մասին այլ լրատվամիջոցների հրապարակումներից: Հրապարակումը պատրաստելիս «Չորրորդ ինքնիշխանություն»-ը, մասնավորապես, հղում է արել «Հետք» թերթի 2010 թ. նոյեմբերի 8-ի մի հոդվածի, որտեղ արվեստագետ Սերգեյ Գասպարյանը մեղադրում է Միրզոյանին Ազգային պատկերասրահին ի պահ տրված հավաքածուից 410 նմուշ վաճառելու մեջ: «Հետքն» այս մեղադրանքի վերաբերյալ իր տեսակետը հայտնելու հնարավորություն էր սովել նաեւ Ֆ. Միրզոյանին:

Արտատպելով յուրացումների մասին Գասպարյանի պնդումները՝ «Չորրորդ ինքնիշխանություն»-ը երգիծանքով եզրակացրել է, որ «...գուցե կրթության եւ գիտության նախարարը ծերունազարդ ապակեգործ Սերգեյ Գասպարյանի ստեղծագործությունները յուրացնելու եւ վաճառելու գործում ունեցած վաստակի եւ ավանդի համար է որոշել Փարավոնին այսպես շնորհակալագիր տալ»:

Կարճ ժամանակ անց Ֆարաոն Միրզոյանի ներկայացուցիչներ Սիմոն Բաբայանի եւ Արսեն Հարությունյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան՝ ընդդեմ պատասխանողներ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի հիմնադիր եւ հրատարակիչ «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի եւ Սերգեյ Գասպարյանի, որով խնդրվել է պարտավորեցնել պատասխանողներին հերքել հայցվորին արտավորող տեղեկությունները, ինչպես նաեւ պատասխանողներից համապարտության կարգով հոգուտ հայցվորի բռնագանձել 2 մլն ՀՀ դրամ՝ որպես գրպարտության համար փոխհատուցում, 1 մլն դրամ՝ որպես վիրավորանքի փոխհատուցում, 300 հազար դրամ՝ որպես խախտված իրավունքների պաշտպանության համար վճարված փաստաբանի վարձատրության գումար, 60.000 դրամ էլ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի հատուցում:

Ըստ հայցվորի՝ հրապարակման մեջ տեղ գտած հետևյալ արտահայտություններն իրեն ուղղված գրպարտություն կամ վիրավորանք են.

1. «Բավական է հիշել «Հայապակի» ՓԲԸ-ից ապակեգործ Սերգեյ Գասպարյանի՝ Ազգային պատկերասրահին ի պահ տրված մոտ 800 աշխատանքների յուրացման և վաճառելու պատմությունը»:

2. «Իսկապես, գուցե կրթության և գիտության նախարարը ծերունազարդ ապակեգործ Սերգեյ Գասպարյանի ստեղծագործությունները յուրացնելու և վաճառելու գործում ունեցած վաստակի և ավանդի համար է որոշել Փարավոնին այսպես շնորհակալագիր տալ»:

3. «Բայց պետք է խոստովանել, որ անգամ ամեն ինչ տեսած հայ հասարակության համար է աննախադեպ արվեստագետի կողմից արվեստագետին օրը ցերեկով անպատիժ կողոպտելը, և Փարավոնը բոլոր հիմքերն ուներ՝ փարավոնավայել պարզ և ակնկալելու»:

4. «Գասպարյանը բաց նամակով դիմել էր բոլոր հնարավոր ատյաններին՝ Փարավոնին մեղադրելով իր ստեղծագործությունների ցուցադրությունը միտումնավոր ձգձգելու, դրանց կեսը յուրացնելու և «Գլխա ուրուղ քամիլընի» ընկերության սեփականատեր Ա. Քոչարյանին վաճառելու մեջ»:

5. «Բաց նամակներից մեկում Գասպարյանը Փարավոնի մասին գրել է. «Միրզոյանը հոշոտել, թալանել է թանգարանը... Ես նրա պորտրետը նկարելու եմ ու վրան գրելու եմ՝ աշխարհի ամենամեծ սրիկան...»»:

«Չորրորդ ինքնիշխանությունը»-ը հայցադիմումի պատասխանում նշել է, որ հայցվոր Ֆարաոն Միրզոյանի դիրքորոշումը և պահանջն ընդհանրապես հակասում են մի շարք միջազգային, ներպետական իրավական ակտերի պահանջներին և ՄԻԵԴ-ի արտահայտած դիրքորոշումներին: Հոդվածում հղում է պարունակվում «Հետք» ինտեր-

նետային թերթին և այդ նույն լրատվամիջոցին Սերգեյ Գասպարյանի տված հարցազրույցներին, ավելին, դրանցից կատարված են բանացի մեջբերումներ («Հետք», 08.11.2010թ., 20.12.2010թ. հրապարակված հոդվածներ): «Վերոհիշյալ լրատվամիջոցում այդ հոդվածների հրապարակումից հետո հայցվորը, հավանաբար դրանք գրպարտություն և վիրավորանք չհամարելով, չի դիմել հերքում կամ պատասխան հրապարակելու պահանջով, և այդ փաստը հաշվի առնելով՝ պատասխանողն իրավունք է ունեցել համարելու, որ այդ տեղեկություններն իրավացի են և միանգամայն օրինականորեն օգտագործել է դրանք իր հոդվածում՝ հղում կատարելով տեղեկատվության աղբյուրին և միաժամանակ անելով իր գնահատողական դատողությունները, որոնք ապացուցման կարիք չունեն», - ասված է պատասխանում:

Նշելով, որ հայցն ակնհայտ անհիմն է՝ պատասխանողը դատարանին խնդրել է այն մերժել ամբողջությամբ:

Հունվարի 24-ի նիստին ներկա չէր որպես պատասխանող ընդգրկված Սերգեյ Գասպարյանը, չնայած պատշաճ ծանուցված էր նիստի մասին: Այնուամենայնիվ, նիստը շարունակվեց նրա բացակայությամբ: Նիստին ներկա պատասխանող «Չորրորդ ինքնիշխանություն» ներկայացուցիչ Հովիկ Արսենյանը դատարանին տեղեկացրեց, որ լրագրողը կատարել է գնահատողական դատողություն և հերքեց հայցվորի այն դիրքորոշումը, թե թերթը վիրավորել և գրպարտել է Ֆ. Միրզոյանին: Հայցվորի ներկայացուցիչ Ս. Բաբայանը շարունակեց պնդել, որ թերթը, չնայած այլ լրատվամիջոցից է վերցրել իր վստահորդի մասին ինֆորմացիան, սակայն փոփոխել է այն, ինչի հետևանքով էլ գրպարտել և վիրավորել է իր վստահորդին:

Դատավոր Էդիկ Ավետիսյանի նախագահությամբ կողմերի միջև բաժանվեց ապացուցման բեռը հետևյալ հաջորդականությամբ. հայցվորը պետք է ապացուցի, որ իրեն վիրավորել են, իսկ պատասխանողներ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի և Սերգեյ Գասպարյանի վրա դրվեց գրպարտության մասով ապացուցման բեռը:

Մարտի 22-ին դատարանի՝ հաշտության գալու առաջարկին կողմերը դրական արձագանքեցին, և հայցվորի ներկայացուցիչ Ս. Բաբայանը պատասխանողին ներկայացրեց հաշտության իրենց տեքստը: Պատասխանողի ներկայացուցիչ Յուրա Եղիազարյանը դատարանին միջնորդեց ժամանակ տրամադրել հաշտության տեքստին ծանոթանալու համար: Դատարանը բավարարեց միջնորդությունը և հերթական նիստի օր նշանակեց մայիսի 23-ը:

Սակայն Ֆարան Միրզոյանը և «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթը հաշտության եզրեր չկարողացան գտնել: Օգոստոսի 27-ի նիստում Ս. Բաբայանը իր ելույթում հայտնեց, որ ամբողջությամբ պնդում է իր հայցը, ինչպես նաև դատարանին ներկայացրեց Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Սկիզբ մեդիա կենտրոն»-ի գործով Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումը, որը նախադեպային է վիրավորանքի և գրպարտության գործերով: Օրաթերթի փաստաբան Հովիկ Արսենյանը նույնպես պնդեց իր առարկությունները, ինչպես նաև ավելացրեց, որ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթը պատշաճ պատասխանող չի կարող լինել, քանի որ օգտվել

է «Հետք» օրաթերթի հրապարակումներից, և որ հենց «Հետքը» պետք է որպես պատասխանող ընգրկվեր: Սակայն Հ. Արսենյանի այդ միջնորդությանն առարկել էր հայցվորի ներկայացուցիչը, իսկ դատարանը դեռ նախնական դատական նիստերի ընթացքում միջնորդությունը մերժել էր:

Սեպտեմբերի 11-ին դատարանը պետք է հրապարակեր այս գործով դատական ակտը, սակայն դատավոր Է. Ավետիսյանը հայտարարեց, որ դատարանը, անհրաժեշտ համարելով լրացուցիչ հետազոտել ապացույցները կամ շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, վերսկսում է գործի քննությունը: Դատարանը պետք է պարզեր, թե պատասխանողն արդյոք հերքման տեքստ ստացել է և արդյոք այն տպագրել է իր թերթում, թե՞ ոչ: Դատարանը նաև պետք է պարզեր՝ պատասխանողի կողմից արված արտահայտությունները գնահատողական դատողություններ են եղել, թե՞ ոչ: Բայց քանի որ կողմերը նիստին ներկա չէին, Է. Ավետիսյանը դատաքննությունը համարեց ավարտված և գործում առկա նյութերի հիման վրա հեռացավ վճիռ կայացնելու:

Հոկտեմբերի 2-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը դատավոր Էդիկ Ավետիսյանի գլխավորությամբ մերժեց Ֆարսոն Միրզոյանի՝ պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները հերքելու և պատճառված վնասները հատուցելու պահանջների մասին հայցն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի («Կողմնակի անձանց Մ» ՍՊ ընկերության և Սերգեյ Գասպարյանի):



Ռուբեն Հայրապետյան

## **Ռ՛վ է Շելսինկյանի «օղերով շան ծնունդը». Արթուր Սաքունցն ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի**

«Ինչո՞ւ եք դիմել, ինչ եք պահանջում»,- հայցվորին ուղղված հարցադրումով 2012թ. հուլիսի 25-ին նիստը սկսեց Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ափինյանը: Դա Արթուր Սաքունցի հայցով առաջին նախնական նիստն էր ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի, երրորդ անձ՝ Հանրային հեռուստաընկերության՝ հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու, պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին:

Դատավորը նշեց, որ հայցադիմումում փոփոխություն է արվել. «Պատկերացնո՞ւմ եք, հայցապահանջը նվազեցվել է 10 դրամից 1 լումայի, շատ լուրջ փոփոխություն է՝ 10 անգամ նվազեցվել է պահանջը»:

Պատասխանող Ռուբեն Հայրապետյանի ներկայացուցիչ Լուսինե Բակումյանը հայտնեց, որ իրենք ծանոթացել են փոփոխությանը: Հայցվորի ներկայացուցիչ Կարեն Թումանյանը հայտնեց, որ խնդիրը ոչ թե նյութականն է, այլ բարոյական կողմը:

Լուսինե Բակումյանը դատարանին և կողմին տրամադրեց հայցադիմումի պատասխանը՝ հայցադիմումն ամբողջությամբ մերժելու խնդրանքով, սակայն Կ. Թումանյանը չցանկացավ, որ նիստը հետաձգվի պատասխանին ծանոթանալու պատճառաբանությամբ, քանի որ, ըստ փաստաբանի, այն կարճ է ու պարզ, և հայցվոր կողմը տեղում ծանոթացավ պատասխանին:

Դատավորն ընթերցեց հայցի համար հիմք հանդիսացած 2012 թ. մայիսի 26-ին Հանրային հեռուստաընկերությամբ ցուցադրված «Լրացուցիչ ժամանակ» սպորտային հաղորդման ընթացքում Ռ. Հայրապետյանի արած հետևյալ արտահայտությունը. «Երբ որ ես Վանաձորում ուզում եմ ֆուտբոլի դպրոցը կառուցեմ, ոչ մի ծառ, ոչ մի թուփ չկա, սարի վրա դպրոց եմ կառուցում, բայց, չգիտես ինչի, հայտնվեց հեկտարների մի հատ ինչ-որ անհասկանալի օղերով մի հատ շան ծնունդ ու բռնեց դատի տվեց մեզ, քաղաքապետարանին, ավագանու որոշմանը,

այդ թվում ֆեդերացիան էլ որպես երրորդ կողմ, պատասխանող կողմ: Հիմա դրանք մի քանի կոպեկ արտասահմաններից էդ գրանտները ստանում են, իրանց գրանտների հաշվին ցանկացած գեղեցիկ բան այսօր վարկաբեկում են»:

Այնուհետև Ռ. Ափինյանը հարց ուղղեց Կ. Թումանյանին, թե արդյոք հայցվորը «հելսինկյան մի հատ ինչ-որ անհասկանալի օղերով մի հատ շան ծնունդ» արտահայտությունը համարում է վիրավորանք: Կ. Թումանյանը պատասխանեց, որ նա «այժմ ցուցմունք չի տալու», այլ նախնական դատական նիստի կարգին համապատասխան պետք է ներկայացնի հայցի հիմքը և առարկան, և քանի որ հայցի հիմքը գործում առկա է, նա դատարանին խնդրեց՝ պարտավորեցնել Ռ. Հայրապետյանին ներողություն խնդրել Ա. Սաքունցից:

Դատավոր Ռ. Ափինյանն ընթերցեց պատասխանը, որում ասվում էր հետևյալը. «Պատասխանում որպես վիրավորական գնահատված արտահայտությունում ակնհայտ է, որ խոսքը ոչ միայն Ա. Սաքունցի մասին չէ, այլև բացառվում է նրա դեմ ուղղված լինելը, քանզի Ռ. Հայրապետյանն արտահայտվել է մի հատ ինչ-որ անհասկանալի օղերով անձի մասին, որին անվանել է շան ծնունդ, մինչդեռ Ա. Սաքունցը, մեր տեղեկություններով, երբևէ որևէ կարգի օղ չի կրել»: Դատավորը հայտարարեց, որ հայցվորի վրա է դրվում ապացուցման այն բեռը, որ այդ վիրավորանքը հասցեագրված է եղել Ա. Սաքունցին:

**Կ. Թումանյան.** «Այդ փուլը դեռ պետք է նախորդեր որոշակի այլ փուլերի, որոնց մենք դեռ չենք հասել»:

**Դատավոր.** «Դուք ուզում եք դատարանի հետ բանավեճի մեջ մտնել: Դատարանը պետք է բաշխի ապացուցման բեռը, և Ձեր վրա է դրվում այդ բեռը: Այդպես է համարում դատարանը, քանի որ Դուք եկել եք ոչ թե դատարանի հետ բանավիճելու, այլ կողմի»:

**Կ. Թումանյան.** «Ձեմ հասկանում, թե մենք քաղաքացիական դատավարության սկզբունքների շրջանակում ենք գործը քննում, քանի որ առաջին հերթին կողմերի հետ պետք է քննարկվի, թե արդյոք անիրա-ժեշտություն կա՞ կողմին փոխանակելու, թե՞ ոչ»:

Ներկայացուցիչն, այնուհետև, հարց ուղղեց պատասխանողին առ այն, թե ում է ուղղված քննարկվող արտահայտությունը: Սակայն դատավորը հարցը հանեց՝ պատճառաբանելով, որ պատասխանողն ապացուցելու որևէ պարտականություն չունի: Այնուամենայնիվ, Լ. Բակումյանը ցանկացավ պատասխանել այդ հարցին՝ ասելով, որ քանի որ գործը քննվում է կոնկրետ փաստի վերաբերյալ, ապա նա որևէ ենթադրություն կամ գուշակություն չի կարող անել: Սակայն Կ. Թումանյանը հայտարարեց, որ, քաղաքացիական դատավարության սկզբունքներից ելնելով, ցանկանում է պատասխանողից ճշտել, թե ում է ուղղված եղել այդ արտահայտությունը, որպեսզի փոխի պատասխանողին, քանի որ վերջինս նշում է, որ այդ արտահայտությունն Ա. Սաքունցին ուղղված չի եղել:

Դատավորը պարզաբանեց՝ քանի որ հայցվորն ինքն է այն իրեն վերագրել, հետևաբար ինքն էլ պետք է ապացուցի, որ վիճահարույց արտահայտությունն իրեն է ուղղված:

Կ. Թումանյանը ժամանակ խնդրեց դատարանից ապացույցներ ներկայացնելու համար, որոնք կվերաբերեն այն մարզադաշտին, որը Վանաձորի քաղաքապետը նվիրաբերել է Ռուբեն Հայրապետյանի դեկավարած ֆուտբոլի ֆեդերացիային:

«Եթե Ռ. Հայրապետյանը հայտարարի, որ ուրիշին է ասել, այլ ոչ թե Սաքունցին, ապա նա պետք է ընդունի, որ այդքանը չէր էլ կարող ասել, քանի որ նրա հնարավորությունը այդքանը չէր ների՝ Ա. Սաքունցի հասցեին նման արտահայտություն անելու», - ասաց փաստաբան Կ. Թումանյանը:

Օգոստոսի 17-ի նիստի ընթացքում Ա. Սաքունցը Հայրապետյանի ներկայացուցիչ Լ. Բակումյանի հետ հարցուպատասխանի միջոցով դատարանին ցույց տվեց, որ ֆուտբոլի ֆեդերացիան ցանկանում էր Վանաձորում ֆուտբոլի դպրոց կառուցել, եւ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դատական կարգով վիճարկել է ավագանու այդ որոշումը: «Բա ղնց է, որ Ռ. Հայրապետյանը վերացական հայտարարություններ է արել», - Բակումյանին հարցրեց Սաքունցը:

Լ. Բակումյանը դարձյալ ասաց, որ Ռ. Հայրապետյանը վերացական հայտարարություն է արել եւ Սաքունցին նկատի չի ունեցել, քանի որ «օբյեկտիվ կապ չկա վիրավորական արտահայտության եւ Սաքունցի միջեւ»: Ըստ նրա՝ «պետք է լինի օղ կրող անձ, որը դատի է տվել ֆուտբոլի ֆեդերացիային, մինչդեռ Սաքունցն օղ չի կրում եւ, ինչպես ինքը՝ հաստատեց իր խոսքում, երբեք էլ չի կրել»: Սաքունցը հետաքրքրվեց՝ հնարավոր է, որ Հայրապետյանը շփոթել է գործողությունը կատարող եւ օղ կրող՝ անձանց: Լ. Բակումյանը հայտարարեց, որ հարցն այս գործին չի վերաբերում: Մինչդեռ Սաքունցը կարծում է. «Մեր կողմից կատարված գործողությունները եւ Ռ. Հայրապետյանի տված գնահատականներն օբյեկտիվ կապի մեջ են»:

Օգոստոսի 29-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժեց Ա. Սաքունցի հայցն ընդդեմ Ռ. Հայրապետյանի և որպես երրորդ անձ հանդես եկող Հանրային հեռուստաընկերության:



## Շամշյանի դեմ հայցից հրաժարվեց

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ավարդ Հունանյանի վարույթում էր գտնվում ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Արաբկիր» սպասարկման գրասենյակի ղեկավարի տեղակալ Արամ Չատինյանի հայցն ընդդեմ «Առավոտի» ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի:

Ա. Չատինյանն իր ներկայացուցչի՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ Արշակ Թովմասյանի միջոցով վիճարկում էր պատիվը, արժանապատվությունը արատավորող տեղեկություններ տարածելու փաստը և հերքում էր պահանջում:

Ըստ հայցադիմումի՝ այդ տեղեկությունները տարածվել էին 24.08.2011թ. aravot.am կայքում հրապարակված ««Վերելները» հույսերը չարդարացրին» հոդվածի միջոցով: Հոդվածում ասվում է, որ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության (6-րդ վարչություն) աշխատակիցները Թումանյան-Հյուսիսային պողոտա փողոցների խաչմերուկից բերման էին ենթարկել միջպետական հետախուզման մեջ գտնվող 40-ամյա Տիգրան Չատինյանին, որը Կադաստրի պետական կոմիտեի «Արաբկիր» սպասարկման գրասենյակի ղեկավարի տեղակալ Արամ Չատինյանի եղբայրն է:

Այնուհետև հեղինակը նշում է, որ դատարանի բակում հավաքված Տիգրանի մտերիմներն ասում էին, որ «ոչ մի խնդիր չկա, վերևներով հարցերը լուծել ենք, մեր ախպերը դատարանից ազատ է արձակվելու», սակայն Տ. Չատինյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է 40-օրյա կալանք, որից հետո Չատինյանը տեղափոխվել է «Նուբարաշեն» ՔԿ:

Այնուհետև «Առավոտը» նշում է, որ իր տեղեկություններով՝ Օդեսայում նրան հովանավորել է Վանիկ անունով մի հայտնի գործարար, որը մինչև Տիգրանի ձերբակալվելը ժամանել է Երևան և նրա հարցերը լուծելու նպատակով հանդիպումներ ունեցել Աժ որոշ պատգամավորների և պետական պաշտոնյաների հետ, ինչը, հավանաբար, այդպես էլ օգուտ չի տվել:

Գործով երկու նախնական նիստ էր տեղի ունեցել, իսկ ֆոտոլրագրողն էլ դիմել էր ՀՀ փաստաբանների պալատի անդամ Հովիկ Արսենյանին՝ իր ներկայացուցիչը լինելու խնդրանքով: Սակայն գործը չհասավ դատական քննության փուլ, քանի որ Արամ Չատինյանն իր հայցադիմումից հրաժարվեց:

## **slaq.am-ի ղեկավարությունն ընդունել է սխալը եւ առաջարկել հաշտվել**

2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրություններում պատգամավորի թեկնածու ինքնառաջադրված, փաստաբան Անուշավան Նիկողոսյանը դատի է տվել slaq.am-ին («Վիրտուալ Մեդիա» ՍՊԸ): Նա պահանջում է իր հասցեին գրված վիրավորական և զրպարտիչ արտահայտությունների համար ներողություն խնդրել, հերքում տպագրել slaq.am կայքում և փոխհատուցել զրպարտության համար 2 մլն դրամ, վիրավորանքի համար՝ 1 մլն դրամ:

Անկուսակցական Անուշավան Նիկողոսյանը առաջադրվել էր Լոռու մարզի թիվ 32 ընտրատարածքում (ք. Տաշիր): ՀՀԿ-ական Կարեն Կարապետյանը նրա մրցակիցներից էր: 2012թ. մայիսի 4-ին slaq.am կայքում հրապարակվել է «Անուշավան Նիկողոսյանի «աբիժնիկության» իրական պատճառը» վերնագրով հոդվածը, որտեղ նշվում է, որ Անուշավան Նիկողոսյանի և Կարեն Կարապետյանի հակամարտության իրական պատճառը Կարապետյանի մերժումն է Նիկողոսյանի՝ երթուղային տրանսպորտի գիծ տրամադրելու հարցում օգնելու խնդրանքին:

Անուշավան Նիկողոսյանի հայցը վարույթ է ընդունվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Ռուբեն Ափինյանի գլխավորությամբ: Դատական առաջին նիստը տեղի ունեցավ հուլիսի 31-ին: Այդ օրը պատասխանողն ընդունեց հայցն ամբողջությամբ, իսկ հայցվոր Անուշավան Նիկողոսյանը պնդեց իր հայցը:

slaq.am-ի ներկայացուցիչ, վերջինիս գլխավոր խմբագիր Կարեն Վարդանյանը դատարանին հայտնեց, որ պատրաստ է հաշտության գալ կողմի հետ: «Հետքին» Կ. Վարդանյանն ասաց, որ իրենք ընդունում են իրենց սխալը և պատրաստ են հերքում տպագրել, սակայն տեղյակ չեն Ա. Նիկողոսյանի դիրքորոշմանը: «Ուսումնասիրելով նյութերը՝ ընդունում եմ, որ սխալմունք է եղել, ճիշտ ձևակերպումներ չեն եղել: Բոլորս էլ սխալվում ենք, ոչ մեկն ապահովագրված չէ սխալներից», - ասաց Կ. Վարդանյանը: Նա նաև տեղեկացրեց, որ նախապես դիմել է Անուշավան Նիկողոսյանին հաշտության եզրեր գտնելու համար, սակայն վերջինս չի համաձայնել: «Չնայած հիմա նման բաներ շատ կան կայքերում, լրատվամիջոցների մեծ մասում, օրինակ՝ ընդդիմադիր լրատվամիջոցները նախագահի, տարբեր քաղաքական գործիչների հասցեին վիրավորանքներ են հասցնում, բայց հիմնականում դրա համար իրար դատի չեն տալիս: Բայց դա իր սահմանադրական իրավունքն է, եթե կարծում է, որ դրա համար պետք է դատի տալ, ուրեմն թող տա», - նշեց Կ. Վարդանյանը:

Դատարանը կողմերին ժամանակ է տրամադրել մինչև օգոստոսի 10-ը՝ հաշտության եզրեր գտնելու համար: Սակայն հացվորը դեմ է արտահայտվել հաշտության համաձայնություն կնքելուն: Դատարանը վճիռը հրապարակելու է նոյեմբերի 12-ին:

## **Դեկանը հրաժարվեց «Հետքի» լրագրողի դեմ ներկայացրած հայցից**

2011 թ. նոյեմբերին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանից ծանուցում էր ստացվել, որ Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի դեկան Թերեզա Շահվերդյանը պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի մասին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Հետք» թերթի թղթակից Ադրինե Թորոսյանի՝ որպես երրորդ անձ ներգրավելով նաև «Հետք» թերթին: Հայցի հիմքում թերթի մայիսի 13-ի համարում Ա. Թորոսյանի հեղինակությամբ հրատարակված «Հիվանդագին կրքեր Վանաձորի մանկավարժական ինստիտուտում» վերնագրով հոդվածն էր, որի հետևյալ արտահայտությունը դեկանը համարել էր զրպարտություն. «Դեպքերի հետագա զարգացմամբ՝ 2011թ. ապրիլի 1-ին, հայոց լեզվի ամբիոնի դասախոս Լուսինե Սարգսյանը մանկավարժության ամբիոնի դեկան Թերեզա Շահվերդյանի հետ ներկայացել է ոստիկանության Վանաձորի բաժին և հայտարարություն տվել, որ հայոց լեզվի ամբիոնի դասախոս Լուսինե Աշուրյանը շուրջ երկու տարի սպանության սպառնալիքներ է տալիս Լուսինե Սարգսյանի հասցեին»:

Դեկանը դատարանից սկզբում խնդրում էր լրագրողին պարտավորեցնել «Հետք» թերթում հրատարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և նրանից հոգուտ իրեն բռնագանձել 2 մլն ՀՀ դրամ, ինչպես նաև՝ դատական ծախսերը: Այնուհետև ներկայացնելով հայցադիմումի լրացում՝ փոխել էր գույքային պահանջի չափը՝ 2 մլն-ի փոխարեն պահանջելով 200 հազար դրամ:

Դատական նիստերի անընդհատ հետաձգման պատճառով բուն դատաքննությունն այդպես էլ չսկսվեց: Մեկ տարվա ընթացքում կայացած ընդամենը 2 դատական նիստերից մեկի ժամանակ հայցվոր կողմը հաշտության առաջարկ է արել, որը հաջորդ նիստին մերժվել է պատասխանողի ու նրա ներկայացուցիչների կողմից, քանի որ լրագրողի ու խմբագրության համոզմամբ՝ թերթի նշված հրատարակումը որևէ զրպարտություն չի պարունակում: Ավելին՝ լրագրողն իր հրատարակման իսկությունը ապացուցող ծայնագրություն ունի: Դրան հաջորդող նիստն էլ հետաձգվել է դեկանի՝ դատարանում իր շահերը ներկայացնող փաստաբան չունենալու պատճառաբանությամբ:

Հոկտեմբերի 24-ին նշանակված էր հերթական դատական նիստը, սակայն նիստից 1 ժամ առաջ դատարանից լրագրողին հայտնեցին, որ դիմում է ստացվել Թերեզա Շահվերդյանից՝ հայցից հրաժարվելու մասին:

## **«Հետք» եւ ATV-ն՝ որպէս երրորդ անձ**

2011թ. հուլիսին Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը պատվին, արժանապատվւթյանը և գործարար համբավին պատճառված մնասի հատուցման պահանջով հայց էր ներկայացրել դատարան՝ որպէս երրորդ անձինք ներգրավելով «Հետք» շաբաթաթերթին և ATV հեռուստաընկերոթյանը:

Մայիսի 13-ին «Հետքի» հրապարակած «Հիվանդագին կրքեր Վանաձորի մանկավարժական ինստիտուտում» վերնագրով նյութի մեջ ինստիտուտի նախկին դասախոս Լուսինե Աշուղյանը մեղադրում էր ամբիոնի ղեկավարոթյանը և բուհի ռեկտորին անարդարացիորեն իր դասաժամերը կրճատելու և դրանք կոլեգային՝ Լուսինե Սարգսյանին, տալու համար: Դասաժամերի համար վեճը երկու դասախոսներին հասցրել էր անգամ ոստիկանոթյուն, որտեղ մեկը հայտարարոթյուն էր տվել սպանոթյան սպառնալիքի մասին, մյուսը՝ սուտ մատնոթյան: Երկու դեպքում էլ քրեական գործերի հարուցումը մերժվել էր:

«Սա կանխամտածված, միտումնավոր քայլ էր: Հետևում այն մարդն է կանգնած, որը խիստ շահագրգիռ է, որ Լուսինեն պաշտպանի (նկատի ունի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանին, որը Լուսինե Սարգսյանի գիտական ղեկավարն է - «Հետք»): Ամեն ինչ վերևից է թելադրված՝ ղեկավարոթյան կողմից: Պարզապէս իրագործել են Լուսինե Սարգսյանն ու նրա մայրը»,- Լուսինե Աշուղյանի՝ ռեկտորի մասին ասված և «Հետքում» տպագրված այս արտահայտոթյունն է ռեկտոր Գ. Խաչատրյանը գնահատել որպէս զրպարտոթյուն: Գ. Խաչատրյանը դատարան ներկայացրած հայցով խնդրել է Լուսինե Աշուղյանին պարտավորեցնել նոյն լրատվամիջոցներով՝ ATV հեռուստաընկերոթյամբ և «Հետք» թերթով, հրապարակայնորեն հերքել զրպարտոթյուն համարվող փաստացի տվյալները և պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել 2 մլն ՀՀ դրամ, ինչպէս նաև՝ դատական ծախսերը:

Շուրջ մեկ տարի գործը Վանաձորի դատարանում քննվելուց հետո Լ. Աշուղյանը դատավոր Սուրեն Բաղդասարյանին ինքնաբացարկի միջնորդոթյուն է ներկայացրել, որն ընդունվել է, և գործը փոխադրվել է Սպիտակ քաղաքի դատավոր Աղասի Մկոյանի վարոթյոթ: Սկսվել է նոր քննոթյուն:

## **Հ1-ը, «Բանաձեւը» եւ Ս. Եղիազարյանը պարտավոր են հրապարակային ներողություն խնդրել ԵՊՀ ամբիոնի վարիչից**

2012թ. փետրվարի 29-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի և նույն ամբիոնի դասախոս Արա Գաբուլյանի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելու և հերքման պարտավորեցնելու պահանջի մասին հայցով նախնական դատական նիստն ընդդեմ «Բանաձև» ՍՊԸ-ի, Սիրակ Եղիազարյանի և Սոնա Հարությունյանի:

Պետհամալսարանը վիճարկում էր «Ականատես» հաղորդման «Իրավախախտ իրավագետը» վերնագրով սյուժեում հաղորդված տեղեկությունները: Հաղորդումը պատմում է Սիրակ Եղիազարյանի մասին, ով դիմել է Մայր բուհի մագիստրատուրա, սակայն նրա գրավոր աշխատանքն անբավարար է գնահատվել՝ առանց բովանդակությունը ստուգելու, միայն ծավալին նայելով: Ըստ հաղորդման՝ դասախոսը փորձել է դիմորդին ոստիկանությանը հանձնել միայն այն պատճառով, որ երիտասարդը համարձակվել է բողոքարկել:

Ըստ ԵՊՀ-ի՝ վերնագրի «իրավախախտ» բառը զրպարտիչ կամ վիրավորական է քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտի համար: Այն առավել ևս վիրավորական և զրպարտիչ բնույթ ունի, երբ վերաբերում է դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր իրավաբանին: Հայցվոր կողմը հարցնում է, թե ինչպես կարող է իրավախախտը իրավագիտություն սովորեցնել և իրավունքի նորմերի պահպանության օրինակ ծառայել ուսանողներին:

Նշյալ դատական նիստին հայցվորն անդրադարձավ պատասխանողների կողմից հաղորդման ընթացքում թույլ տրված վիրավորական և զրպարտիչ արտահայտություններին:

**Հաղորդման իրավաբան-փորձագետ Սոնա Հարությունյանի կողմից կատարված արտահայտությունը.** «Եթե մենք ասում ենք՝ բոլորը հավասար են օրենքի առջև, տվյալ դեպքում ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնը պատասխանում է, որ մենք մեր ուսանողներին այլ կերպ ենք վերաբերվում, քան, կներք արտահայտությանս համար, դրսից եկած ուսանողներին»:

Ըստ հայցվորի՝ սրանով փորձագետը փորձում է ցույց տալ, որ դրսի ուսանողներին իրենք ավելի վատ են վերաբերվում, քան ներսի ուսանողներին:

Դատավորը հարց ուղղեց Սիրակ Եղիազարյանին՝ արդյոք նա համալսարանն է ավարտել: Սիրակը պատասխանեց՝ ոչ, նա ավարտել է Գյումրիի Մանկավարժական համալսարանը:

Պատասխանողի ներկայացուցիչը նշեց, որ Սոնա Հարությունյանի արած հայտարարության համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԳ նախարարին ուղղված՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մասնա-

գետների կարծիքից մի հատված, որը վերաբերում է հենց քննարկվող արտահայտությանը եւ կատարվել է Սիրակ Եղիազարյանի բողոքի հիման վրա նրա գրավոր աշխատանքի կրկնակի ստուգման արդյունքում. «...Առանձին հարցերի համար դրված գնահատականները մեղմ մոտեցման արդյունք են. մեր ուսանողների նկատմամբ պահանջներն ավելի խիստ են, ընթացիկ քննությունների ժամանակ նրանց նմանօրինակ պատասխաններն ավելի ցածր են գնահատվում»:

Ըստ հայցվոր կողմի՝ հաղորդման փորձագետը, խեղաթյուրելով արտահայտված միտքը, կատարել է սխալ եզրակացություններ, անհիմն հայտարարություններ արել և զրպարտել ԵՊՀ-ին՝ ի դեմս իրավագիտության ֆակուլտետի: Սակայն պատասխանողը համարում է, որ այստեղ չկան զրպարտության տարրեր, քանի որ փորձագետն իր կարծիքն է հայտնել: Եթե նրա կարծիքը հիմնվել է գնահատողական դատողությունների վրա, ապա ԵՊՀ-ն խախտում է ուսանողների հավասարության սկզբունքը: Իսկ թե ինչպես է «Բանաձևը» արել իր հարցադրումները, ինչպես է դրանք մեկնաբանել, հայցապահանջը պետք է ուղղել «Բանաձևին»: Նա նաև ավելացրեց, որ հայցվորները, տեղյակ լինելով Սոնա Հարությունյանի արած արտահայտությանը, բաց են թողել դատարան դիմելու՝ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված ինչպես 1-ամսյա, այնպես էլ 6-ամսյա ժամկետները:

Հայցվորի ներկայացուցիչ Գրիգոր Բեքմեզյանը հայտնեց, որ Սոնա Հարությունյանի արած հայտարարությունը մեկնաբանվում է, թե իբր իրականում իրավաբանական ֆակուլտետում բոլորը հավասար չեն, քանի որ բուհի ուսանողներին ավելի լավ են վերաբերվում, քան դրսի ուսանողներին, այսինքն՝ բացասական վերաբերմունքի են արժանանում դրսի ուսանողները:

Այսպիսով, ապացուցման բեռը դրվեց Սոնա Հարությունյանի վրա, որը փաստ է արձանագրել և պետք է ապացուցի դրա համապատասխանությունը իրականությանը:

### **«Ականատես» հաղորդաշարի ընթացքում հնչած արտահայտությունները.**

*«Իրավագետ իրավախախտը»:* Սա հայցվորը համարում է մասնագետին՝ ԵՊՀ դասախոսին ուղղված զրպարտություն, իսկ որպես իրավաբանի՝ վիրավորանք:

*«Սխալներ գտնելու համար վերադաս մարմինը նայեց ամեն փեղ, բացի այն փեղից, որ փեղ սխալներ հաստատ կգտներ»:* Սա հայցվորը համարում է փաստի արձանագրում, որ համալսարանում սխալ կա:

*«Թաքնված կոռուպցիայի կասկած հայտնում է ոչ թե սովորական մի երիտասարդ, այլ իրավաբանական մի ամբողջ խումբ»:* Դատավորը սա համարեց ակնհայտ փաստի արձանագրում և զրպարտություն, որը պետք է պատասխանողն ապացուցի:

*«Խոսել կոռուպցիայի վերացման մասին, կարելի է ասել, անհնար է, որովհետև պեպական մարմինները, որոնք պեպք է ձեռնամուխ լինելին դրա դեմ պայքարին, ցուցաբերել են անգործություն»:* Դատավորի դիտարկմամբ՝ այս արտահայտությունը պետական մարմիններին է վերաբերում, սակայն հայցվորն ավելացրեց, որ խոսվում է ԵՊՀ-ի մասին, չնայած, դատավորի դիտարկմամբ, դա ընդհանուր է ասվում:

«Գրավոր աշխատանքի թերությունները ցույց տալու և գնահատականը հիմնավորելու փոխարեն «դասախոսը դեմագոգ է անվանում դիմորդին ու վախեցնում ոստիկանությամբ»: Քննության արդյունքի մասին բացատրություն ստանալու փոխարեն Սիրակը լսում է՝ կարևորը գրավորի ծավալն է, թե քանի էջ ես լցրել»: Ըստ հայցվորի՝ սրանով զրպարտում են դասախոսին, ինչպես նաև՝ իրավաբանական ֆակուլտետին:

«Օրենքը խախտել է»: Սա նույնպես փաստ է, որը պետք է ապացուցի «Բանաձևը»:

«Դասախոսի խաբեությունը և պրոռեկտորի սխալը»: Ըստ հայցվորի՝ սրանով դասախոսին խաբեքա են անվանում:

«Մայր բուհում դիմորդի գրավորը անբավարար են գնահատել առանց բովանդակությունը ստուգելու»: Ըստ հայցվորի՝ սա անհիմն հայտարարություն է, որը չի համապատասխանում իրականությանը, արտահայտում է միակողմանի և չստուգված պնդում եւ ցույց է տալիս, որ ԵՊՀ-ում ուսանողներին կամ տվյալ դեպքում մեկ դիմորդի գնահատում են ոչ օբյեկտիվ, որը նսեմացնում է ԵՊՀ-ի գործարար համբավը:

Դատավորի հարցին՝ արդյոք կողմերը համաձայն են արտադատական կարգով գործը լուծել, Սիրակը պատասխանեց՝ ոչ: Նրա ներկայացուցիչը հայտնեց, որ «դեմագոգ» բառի համար հակընդդեմ հայց է ներկայացվել Արա Գաբուզյանի դեմ:

Սակայն Գ. Բեքմեզյանը հայտնեց, որ դա սույն գործի հետ կապ չունի, քանի որ սույն գործի նյութերի հիման վրա չի հարուցվել վարույթ, այլ aravot.am կայքում Արա Գաբուզյանի տված հարցազրույցի հիման վրա:

**Սիրակ Եղիազարյանի կողմից արված արտահայտությունները.**

«Նրանք ինձ ասում են, որ աշխատում են միայն ծավալի վրա, մեզ համար բովանդակությունը չի կարևոր»:

**Դատավոր.** Սիրակ, ռվ է ասել:

**Սիրակ.** Արա Գաբուզյանն է ասել:

**Գ. Բեքմեզյան.** Սա իրականությանը չի համապատասխանում, քանի որ Արա Գաբուզյանը նման բան պատասխանողին չի ասել:

«Ես ականապես եմ եղել կրթության ոլորտում իրականացված մի գործողության, որն իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկ»:

**Դատավոր.** Սա Դու՞ք եք ասել:

**Սիրակ.** Այո, ասել եմ: Սակայն այստեղ ԵՊՀ-ի անունը չի տրվում:

**Գ. Բեքմեզյան.** Կոռուպցիոն ռիսկը դուք որտեղ եք տեսնում:

**Սիրակի ներկայացուցիչ.** Այն հանգամանքում, որ ԵՊՀ-ի կայացրած որոշման բողոքը՝ ուղարկված գիտության և կրթության նախարարություն, ուղարկվել է ԵՊՀ-ի գնահատմանը:

**Գ. Բեքմեզյան.** Դուք գիտեք, չէ՞, թե ինչ է կոռուպցիան:

**Ներկայացուցիչ.** Այո, բայց դա Դուք պետք է մեկնաբանեք, թե կոռուպցիան ինչ է նշանակում, քանի որ Դուք եք դա վիրավորանք կամ զրպարարանք համարում, իսկ այստեղ ԵՊՀ-ի անունը չկա:

**Գ. Բեքմեզյան.** Այստեղ ԵՊՀ-ի անվան լինել կամ չլինելը ընդհանրապես կապ չունի: Սիրակ Եղիազարյանը իր խոսքերի ենթադրեքստում նկատի է ունեցել, որ կոռուպցիոն ռիսկ ասելով՝ հասկանում է,

որ ամբողջ համալսարանը կոռուպցիայի է գնում: Կոռուպցիոն ռիսկը սկսվել է համալսարանից և ավարտվել նախարարությամբ:

**Ներկայացուցիչ.** Կոռուպցիոն ռիսկ միայն չի նշանակում կաշառք տալը, կոռուպցիոն տարրեր կարող են պարունակել մի շարք այլ դրսևորումներ:

**Գ. Բեքմեզյան.** Օրինակ:

**Ներկայացուցիչ.** Դե հիմա:

Դատավոր Ս. Թադևոսյանը նշեց, որ հաղորդման ձայնագրությունը կնայի, նոր այդ կետի վերաբերյալ իր կարծիքը կհայտնի:

«Ըստ իս և ըստ մասնագետների՝ իմ գրավոր աշխատանքը ավելի քան 5 միավոր էր և ավելի քան 8 միավոր էր՝ մինիմալը համալսարան ընդունվելու համար»:

**Գ. Բեքմեզյան.** Սիրակը փաստում է մի բան, որ չկա: Իսկ մասնագետների կարծիքը թող ապացուցի, թե ովքեր են եղել այդ մասնագետները:

«Ձավեշտալին այն է, որ պարոն Գաբուզյանը և նրա նմանները կարևորում են ոչ թե օրենքի հղումը ճիշտ կատարելը, այլ սպիտակ թուղթը սևացնելը»: «Բա դու պրոֆեսոր ես, գիտես, որ ինձանից դու խելացի ես»:

**Գ. Բեքմեզյան.** Սիրակի նմանները համալսարան են ուզում ընդունվել:

**Դատավոր.** Մի բան արեք...

**Գ. Բեքմեզյան.** Չվիրավորեմ: Տեսնում եք, որ սա վիրավորանք է:

**Սիրակ.** Ես դա որպես վիրավորանք չեմ ընդունում:

«Նա վրդովվեց, սպառնաց ոստիկանություն կանչել, փնտրում էր հեռախոսը ոստիկանություն կանչելու համար: Ոստիկանություն էր կանչում այն պատճառով, որ ես ճիշտն էի խոսում, որի համար էլ ինձ դեմագոգ անվանեց»:

**Դատավոր.** Ո՞վ է տեսել ձեր նշած գործողությունները, որևէ վկա եղել է:

**Սիրակ.** Աննա Մարգարյանը:

**Գ. Բեքմեզյան.** Որպես վկա հրավիրենք նրան:

**Սիրակ.** Նա շահագրգռված անձ է, աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվում Արա Գաբուզյանի հետ, և նրա ասածը չի կարող արժանահավատ լինել:

**Դատավոր.** Նախքան վկայություն տալը վկան երդվում է, իսկ դա արդեն դատարանը կորոշի՝ կարելի՞ է կանչել որպես վկա, թե՞ ոչ:

**Դատավոր.** Ոստիկանություն կանչելու մասին ձեզ ասել է:

**Սիրակ.** Այո, անգամ aravot.am-ին տված հարցազրույցում նա խոստովանել է, որ փորձել է ոստիկան կանչել:

Գ. Բեքմեզյանը դատարանին հայտնեց հայցի առարկայի փոփոխության մասին, այն է՝ հայցվորը պահանջը փոխում է, քանի որ «Բանաձևը» այլևս չի հեռարձակվում Հ1-ով: Պահանջում է Սիրակ Եղիազարյանին, Սոնա Հարությունյանին, «Բանաձև» ՍՊԸ-ին պարտավորեցնել հրապարակային, բանավոր ներողություն խնդրել ԵՊՀ-ից և քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից Հ1-ի այլ հեռուստահաղորդմամբ, ինչպես նաև դատարանի վճիռը հրապարակել <http://akanates.banadzev.com> ինտերնետային կայքում:

Հուլիսի 31-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Թադևոսյանը մասնակի բավարարեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի և նույն ամբիոնի դասախոս Արա Գաբուզյանի հայցը: Դատարանը գտել է, որ իրավաբանական անձը չի կարող ունենալ պատիվ և արժանապատվություն, ուստի և չի կարող այդ իրավունքների ենթադրյալ խախտման պաշտպանության հայց ներկայացնել դատարան, այսինքն՝ ԵՊՀ-ն պատշաճ հայցվոր չէ, և այս մասով հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Դատարանը նաև համարել է, որ Սոնա Հարությունյանին ներկայացված պահանջը ենթակա է մերժման այն պատճառաբանությամբ, որ համաձայն Քաղ. օր.-ի 1087.1 հոդվածի՝ հայց կարող է ներկայացվել դատարան վիրավորանքի կամ գրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո մեկ ամսվա ընթացքում, իսկ տվյալ դեպքում հայցվորը քննարկվող հաղորդման մասին իմացել է 2011թ. մայիսի 28-ին, սակայն Սոնա Հարությունյանին պահանջ է ներկայացվել 2011թ. նոյեմբերի 29-ին՝ ավելի քան 6 ամիս հետո: Այսինքն՝ կողմը բաց է թողել դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դատարանը գտել է, որ Ս. Եղիազարյանի մասով ներկայացված հայցը ենթակա է բավարարման: Համաձայն վճռի՝ Ս. Եղիազարյանը պարտավոր է «Բանաձև» ՍՊԸ-ի կողմից պատրաստվող և Հանրային հեռուստաընկերության Հ1 հեռուստաալիքով հեռարձակվող «Ականատես» հաղորդաշարի՝ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող հաղորդման ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հանրային հեռուստաընկերության այլ հեռուստահաղորդմամբ հրապարակային բանավոր ներողություն խնդրել ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից՝ տեղադրելով այդ տեսանյութը նաև «Ականատես» հաղորդաշարի ինտերնետային կայքում և [www.youtube.com](http://www.youtube.com) կայքում: Ս. Եղիազարյանը պարտավոր է նաեւ վերը նշված կարգով հերքել Ա. Գաբուզյանի վերաբերյալ գրպարտություն համարվող ստորև բերված փաստացի տվյալները՝ տեղադրելով այդ տեսանյութը նաև «Ականատես» հաղորդաշարի ինտերնետային կայքում և [www.youtube.com](http://www.youtube.com) կայքում.

- *նրանք ասում են. «Մենք աշխատում ենք ծավալի վրա, մեզ բովանդակությունը չի կարևոր»,*
- *«ըստ մասնագետների՝ իմ գրավոր աշխատանքն ավելի քան հինգ միավոր էր և ավելի քան ութ միավոր էր»:*

«Բանաձև» ՍՊԸ-ն պարտավոր է իր իսկ կողմից պատրաստվող և Հայաստանի Հանրային հեռուստաընկերության Հ1 հեռուստաալիքով հեռարձակվող «Ականատես» հաղորդաշարի՝ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող հաղորդման ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հանրային հեռուստաընկերության այլ հեռուստահաղորդմամբ հերքել ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Ա. Գաբուզյանի վերաբերյալ գրպարտություն համար-

վող հետևյալ փաստացի տվյալները՝ տեղադրելով այդ տեսանյութը նաև «Ականատես» հաղորդաշարի ինտերնետային կայքում և [www.youtube.com](http://www.youtube.com) կայքում.

- «Մայր բուհում դիմորդի գրավորը անբավարար են գնահատել՝ առանց բովանդակությունը ստուգելու, միայն ծավալին նայելով»,
- «քննության արդյունքի մասին բացատրություն ստանալու փոխարեն Սիրակը լսում է. «Կարևորը գրավորի ծավալն է, թե քանի էջ ես լցրել»,
- «խնդրի լրջությունը գնահատականից հեռու է գնում. իրա վաբաններն ակնհայտ կասկած ունեն, որ գործը կոռուպցիոն ռիսկեր ունի: Դիմում են կրթության և գիտության նախարարություն, որ գործն ուսումնասիրեն և հավանական կոռուպցիան կանխեն..., թաքնված կոռուպցիայի կասկած հայտնում է ոչ թե սովորական մի երիտասարդ, այլ իրավաբանական մի ամբողջ խումբ..., սխալներ գտնելու համար նախարարությունը նայեց ամեն տեղ՝ բացի այնտեղից, որտեղ սխալներ հաստատվեցին»,
- «պատմությունը մեկ դասախոսի կամ մեկ ամբիոնի սխալն է»:

«Բանաձև» ՍՊԸ-ն նաև պարտավոր է ինտերնետային կայքի գլխավոր էջի երևացող մասում, ինչպես նաև <http://akanates.banadzev.com> ինտերնետային կայքի սկզբի և 28.05.2011 թ. հաղորդման էջերում երևացող մասերում հրապարակել դատարանի վճիռը՝ նշումով. «ք. Երևան, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռով պարտավորեցվել է «Բանաձև» ՍՊԸ-ին և Սիրակ Եղիազարյանին ներողություն խնդրել ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուզյանից և հերքել վերջինիս վերաբերյալ զրպարտություն համարվող փաստացի տվյալները «Իրավախախտ իրավագետը» հաղորդման ընթացքում հասցված վիրավորանքի և զրպարտության համար»:



Տիգրան Քոչարյան

## **Բլոգեր Փիղն ու «Զի»-ն դատարանում են. փոխհատուցման պահանջը 3,5 մլն դրամ է**

Հուլիսի 24-ին բլոգեր Տիգրան Քոչարյանը (Փիղ) իր Ֆեյսբուքյան էջին գրել էր, որ դատի է տվել «Չորրորդ ինքնիշխանություն» թերթին «Ֆաշիստն ու փիղը. ի պաշտպանություն փղերի» հոդվածում իր հասցեին հնչած և զրպարտություն ու վիրավորանք պարունակող հայի-դանքների հիմքով:

Սեպտեմբերի 5-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում դատավոր Ա. Սուքոյանի նախագահությամբ կայացավ Տիգրան Քոչարյանն ընդդեմ «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի նախնական դատական նիստը: Նիստին ներկա պատասխանող «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Մաթևոսյանը դատարանին հայտնեց, որ փոստային խնդիրների պատճառով իրենք հայցը ստացել են օգոստոսի 23-ին և ժամանակ չեն ունեցել հայցապահանջին պատասխան ներկայացնելու:

Հայցվոր Տիգրան Քոչարյանի ներկայացուցիչ Անահիտ Սարգսյանը չառարկեց, որպեսզի պատասխանողին ժամանակ տրամադրվի պատասխան գրելու համար և միաժամանակ դատարանին ներկայացրեց որոշ փաստաթղթեր, որոնք վերաբերում էին հայցվորին՝ նրա կրթությանը, բուհերին, որոնք նա ավարտել է:

Դատարանը նիստը հետաձգեց մինչև սեպտեմբերի 24-ը՝ ժամանակ տրամադրելով պատասխանողին հայցապահանջին պատասխան ներկայացնելու համար:

Հոկտեմբերի 16-ի նիստում նախքան հայցադիմումի հիմքը և առարկան դատարանին ներկայացնելը հայցվորի ներկայացուցիչ Անահիտ Սարգսյանը դատարանին ներկայացրեց հայցի հիմքի փոփոխություն, այն է՝ հայցվորը փաստաբանական ծախսերի համար պահանջում է 500 հազար ՀՀ դրամ: Բացի այդ, զրպարտության համար հայցվորը պատասխանողից պահանջում է 2 մլն դրամ, իսկ վիրավորանքի համար՝ 1 մլն դրամ:

Ա. Սարգսյանը դատարանին ներկայացրեց 2012թ. հուլիսի 13-ի թիվ 616 համարում հրապարակված «Ֆաշիստն ու փիղը» վերտառությամբ վիճահարույց հոդվածում առկա վիրավորական և զրպար-

տիչ արտահայտությունները: Հոդվածի նախաբանում գրված է. «Ախր դասական իմաստով ֆաշիստ էլ չէ այս պատվիրված, պատվիրովի խամաճիկը: Ախր էս անասունին, էս կենդանուն ներշնչել են, թե ինքը պետականամետ, հզոր, անդրկուլիսյան մուտիտի մասնագետ է, կրեատիվ կերպար է ու օգտագործում-գործածում են»: Այս նախադասությունը փաստաբանը համարում է վիրավորանք ընդհանուր բովանդակային իմաստով, մասնավորապես՝ «պատվիրովի խամաճիկը», «էս անասունին», «էս կենդանուն» արտահայտությունները:

«Հայտնի իմաստով ֆալսուի վրա քաշված ռեզինն էլ ֆալսուի ֆորման է ստանում ու նրա գործառույթները ստանձնում զուգահեռաբար...»: Այս նախադասությունը պարունակող պարբերությունն ավարտվում է հետևյալ արտահայտություններով. «Կնճիթ: Փիղ: Փիղ: Կնճիթ: Կասեք՝ էլի փղին եկանք: Կասեք՝ էլի Փղին ես դարձել: Փղից, կասեք, ինչ ես ուզում»: Ըստ փաստաբանի՝ այս արտահայտություններն ուղղված են կամ վերաբերում են մեկին, ում ծածկանունն է «Փիղ»:

Պատասխանողի ներկայացուցիչ Վահե Հովսեփյանի հարցին, թե ինչն է հայցվորը վերոնշյալ արտահայտությունների մեջ համարել վիրավորանք, Ա. Սարգսյանը պատասխանեց, որ պարբերությունն ամբողջ իմաստային բովանդակությամբ վիրավորանք է: Վ. Հովսեփյանը դիմեց հայցվորին, թե արդյոք բացառում է, որ այլ անձինք կարող են ունենալ «Փիղ» մականուն: Ա. Սարգսյանը պատասխանեց, որ չի բացառում, սակայն «Փիղ» ծածկանունով անձնավորությունը հայտնի է այդ անվամբ ոչ միայն իր ընկերական շրջապատին, այլև ընդհանրապես հասարակությանը:

Հոդվածի շարունակության մեջ գործածվում են «հայվանը», «կոնդոմ» արտահայտությունները, որոնք, ըստ հայցվորի, նախորդ նախադասության շարունակությունն են և վիրավորում են հայցվորին:

Վիճահարույց հոդվածի հրապարակումից օրեր առաջ՝ 2012թ. մայիսի 26-ին, «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթում հրապարակվել էր մեկ այլ հոդված՝ «Ֆաշիստիկ-Ֆաշուլյա-Ֆաշյա-3 փղերի մասին» վերտառությամբ, որը տպագրվել է նույն ծածկանվամբ՝ Մ.Մ.: Հոդվածում նշված է. «Եվ բազմազանության շքերթի վրա հարձակվողներին, տեսանյութով դա հստակ է երևում, համակարգում էր երկու «փիղ»։ Մեկը՝ մորուրով, պնդոտ, «ինտելեկտուալ» երիտասարդ՝ արիներից թե արիացիներից /վայը տանի արիացիներին, թե դա է արի լինել/, բայց այս կնճիթավոր կաթնասունի անձնագրային անունը չեմ ասի՝ չգիտեմ, մյուսը՝ դարձյալ փիղ, ինքը Փիղն էր՝ Հայաստանի մերձքաղաքական շրջանակներում հայտնի կնճիթավոր անասունը, որ ՌԲ-ի ու ՍՍ-ի թիմի կերակրատաշտի լավորներից է ՊՍՇՏՈՆԱՊԵՍ: Սրան անվանապես արժե մոռանալ դեռ կենդանության օրոք: Անունը՝ Քոչարյան Տիգրան: Սա նաև օրեր առաջ «Կենտրոնով» հյուր էր եղել Պետրոսին»:

Ըստ Ա. Սարգսյանի՝ այս երկու հոդվածի ուսումնասիրությունից և վերլուծությունից պարզ է դառնում, որ հոդվածների հեղինակը նույն անձն է, որ «Փիղը» «ուղղորդել կամ ղեկավարել է» բազմազանության շքերթի վրա հարձակումը, ինչպես նաև այն, որ «Փիղ» ծածկանունով անձնավորության անունն է Քոչարյան Տիգրան:

Հայցվորն առաջին հոդվածի հրապարակվելուց հետո իր բլոգում

տեղադրել է մի հողված, որով դիմում է «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի լրագրողներին՝ պահանջելով հանել այդ հողվածը և ներողություն խնդրել իրենից: Եվ նախադասությունը վերջացնում է «բեզ արիդ» արտահայտությամբ: Ա. Սարգսյանը տեղեկացրեց դատարանին, որ հենց այդ բառերով էլ վերջանում է նաև վիճահարույց հողվածը: Հայցվորը զրպարտություն է համարում հետևյալ արտահայտությունները. «...բազմազանության շքերթի մասնակիցների վրա հարձակվելու, նրանց հալածելու և ֆաշիստական վարքագծի և արտահայտությունների համար...», «Այսպես ասեմ՝ ընդունել է այս ՀԱՅՎԱՆԸ այն փաստը, որ ինքն է ուղղորդել, ղեկավարել բազմազանության երթի վրա հարձակումը»: Փաստաբանն այս արտահայտությունների զրպարտություն լինելը հիմնավորում է նրանով, որ դրանք չեն համապատասխանում իրականությանը, քանի որ հայցվորը ֆաշիստ կամ ֆաշիզմի հետևորդ չէ:

Այսպիսով նիստն ավարտվեց, և պատասխանողին երկշաբաթյա ժամկետ տրվեց դատարանին իր դիրքորոշումը ներկայացնելու համար:

## **Զրպարտության եւ վիրավորանքի գործում 5 լրատվամիջոց ներգրավված է որպես երրորդ անձ**

«Հայիդրոէներգանախագիծ» ինստիտուտի տնօրենների խորհրդի նախագահ Սենիկ Ջուլիակյանը 2012թ. մայիսի 15-ին վիրավորանքի համար հրապարակայնորեն ներողություն խնդրելուն, իսկ զրպարտության համար հրապարակայնորեն տեղեկությունները հերքելուն պարտավորեցնելու ու փոխհատուցման գումար բռնագանձելու պահանջի մասին հայց է ներկայացրել Քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանի դեմ: Գործում որպես երրորդ անձ՝ պատասխանող են ճանաչվել 9 ինքնուրույն պահանջ չներկայացնողներ՝ «Հրապարակ» օրաթերթը, «Հայելի ակումբը», «Մեդիա Սթայլ» ՍՊ ընկերությունը (tert.am), «Դիալոգ» փորձագիտական հայկական կենտրոնը, «Հենարան» սոցիալ-իրավական հումանիտար ասոցիացիան, «Արմենիա» TV ընկերությունը, «Մուլտի Մեդիա-Կենտրոն Թիվի»-ն եւ «Արմեյուգ» ՓԲԸ ընկերությունը:

Հ. Հովհաննիսյան-Հայիդրոէներգանախագիծ վեճը սկսվել է այն բանից հետո, երբ ինստիտուտի ղեկավարությունը Հովհաննիսյանին խնդրել է ազատել շենքում իր ղեկավարած միության զբաղեցրած տարածքը, քանի որ այն պետք է վերանորոգվի: Տարբեր լրատվամիջոցներում Հ. Հովհաննիսյանը Ս. Ջուլիակյանի հասցեին արել էր այսպիսի արտահայտություններ. «... Դա մաշենիկ է եւ որեւէ սեփականություն չունի, իրեն ձեռացնում է լուրջ բիզնեսմեն, այնինչ ոչ մի բաժնետոմս չունի, ընդամենը ֆիրմայի առետրային ներկայացուցիչն է Սուրգուտ քաղաքում եւ զբաղվում է լուստրանտերի վաճառքով» («Հրապարակ», 20.04.2012 թ.), «Քաղաքում Լիսկան է՝ Սենիկ Ջուլիակյանի տեսքով... Մյուս երեք տարածքները արդեն ձեռ գցած չակերտավոր բարերարը ինչ-որ թուղթ է ներկայացրել... Նա անհաջող ավանտյուրիստ է, ով վտանգ է ներկայացնում» (Tert.am, 20.04.2012 թ.): Հայցադիմումում հղում է արվել նաեւ [www.hayeli.am](http://www.hayeli.am) կայքէջին, որտեղ Հ. Հովհաննիսյանն ասել էր. «Ս. Ջուլիակյանը գաղտնի ծայնագրել էր, ինչի իրավունքը չունեմ», իսկ «Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվել էր հետտեսյալը. «Ներդրողների փոխարեն երկիր են գալիս աֆերիստները, Ս. Ջուլիակյանը կասկածելի անձնավորություն է, ով բարերարի անվան տակ իբր ներդրումներ է կատարում ինստիտուտում, նա մաշենիկ է, վտանգավոր է հասարակության համար»:

Մեջբերումները կատարվել են Հ. Հովհաննիսյանի՝ մամուլի ասուլիսի ժամանակ ունեցած ելույթից: Հայցվոր Ջուլիակյանը վիրավորական է համարում «մաշենիկ» բառը, որի մեկնաբանության համար դիմել է ռուս-հայերեն բառարանի օգնությանը, որտեղ այն թարգմանված է՝ խաբեբա, սուտասան, խարդախ:

Հայցվորը զրպարտություն է համարել նաեւ «Քաղաքում Լիսկան է՝ Ս. Ջուլիակյանի տեսքով, չխաբվեք», ինչպես նաեւ «Ս. Ջուլիակյանը գաղտնի ծայնագրել էր, այստեղ սկսվեց ջրհեղեղի նման մի բան,

միտումնավոր էր արվում, իմ ահագանգերին հակառակ՝ ջուրը չէին կտրում, ես ոստիկանություն հրավիրեցի, Կենտրոնի բաժնում գործ է հարուցված», «Լիսկան եկել է այստեղ, շոյել է այս պատերը» արտահայտությունները: Գործը լսում է Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանը, որը վճռի հրապարակման օր է նշանակել նոյեմբերի 1-ը:

# **«Հրապարակային հայտարարություն» հասկացության գնահատման նոր չափանիշ՝ «հասանելի է բոլորին»**

## **Կայացվել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի վերաբերյալ Հայաստանում առաջին վճիռը**

2012թ. հունիսի 28-ին Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը հրապարակել է Դ. Ի.-ի, Բ. Պ.-ի, Հ. Ս.-ի՝ ընդդեմ «Մեկ ազգ» կուսակցության հայցով վճիռը:

Հայցվորները հայցադիմում էին ներկայացել դատարան ընդդեմ «Մեկ ազգ» կուսակցության՝ «պատասխանող կազմակերպությունից հայցվորների պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորելու համար գումարի բռնագանձման, ինչպես նաև հրապարակային ներողություն խնդրելու պահանջի մասին»: Հայցվորները հայտնել էին, որ 2011թ. դեկտեմբերի 28-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքի էջում հրապարակվել են հայցվորների նկարները, որոնց կից գրվել են սուտ (զրպարտիչ) տեղեկություններ հայցվորների մասին և վիրավորանքներ նրանց հասցեին:

Մասնավորապես, Դ. Ի.-ի մասին «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքը հայտարարել էր, որ վերջինս «համասեռամուլների պաշտպան է, ով դատապարտում է «Մեկ ազգ» դաշինքի պայքարը ընդդեմ համասեռամուլության... Այս խեղկատակը նույնիսկ ազգությամբ հայ չէ...»: Հայցվորներն իրենց դիրքորոշման մեջ նշում են, որ Դ. Ի.-ն, լինելով բավականին հայտնի հասարակական գործիչ, երբեք հանդես չի ելել համասեռականների պաշտպանությամբ և երբեք չի դատապարտել դաշինքի պայքարն ընդդեմ որևէ մեկի (այդ թվում՝ համասեռականների):

Նրան վերաբերող հայտարարությունում նաև ասվում էր, որ վերջինս խեղկատակ է և ազգությամբ հայ չէ: «Այդ տեղեկությունները ևս զրպարտիչ են և բացարձակապես չեն համապատասխանում իրականությանը, քանի որ Դ. Ի.-ն խեղկատակ չէ, երբեք կրկեսում չի աշխատել, ազգությամբ հայ է», - նշել են հայցվորները:

Բ. Պ.-ի մասին դաշինքը հայտարարել էր, թե նա չի պատկերացնում մեր երկիրն առանց համասեռամուլների: Հայցվորները վիրավորանք էին համարել նաև Բ. Պ.-ի հասցեին դաշինքի հնչեցրած «գաղափարական վիժվածքը» արտահայտությունը:

Հ. Ս.-ի մասին դաշինքը հայտարարել է. «Այս տիկինը դատապարտել է «Մեկ ազգ» դաշինքի պայքարը ընդդեմ համասեռամուլության, երևույթը մեկ բան է փաստում, որ ինքը սեռական հեղափոխության վառ կողմնակից է ու Հայաստանը միայն պատկերացնում է համասեռամուլների հոծ բանակի ներքո»:

Հայցվորների կարծիքով՝ այս հայտարարությունն էլ նախորդների նման սուտ է ու զրպարտող: Հ. Ս.-ն սեռական հեղափոխության կողմնակից չէ (առավել ևս՝ վառ) և երբեք որևէ տեղ նման կարծիք չի բարձրաձայնել: Հայցվորների կարծիքով՝ դաշինքը իր վերոնշյալ հայտարարություններով վիրավորանք է հասցրել Դ. Ի.-ն և Բ. Պ.-ին, ինչպես նաև՝ զրպարտել է Դ. Ի.-ն, Բ. Պ.-ին և Հ. Ս.-ին, եւ այդ վիրավորանքի ու զրպարտության դեպքերը համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում ամրագրված սահմանումներին:

Հայցվորները խնդրել են ճանաչել զրպարտությունների և վիրավորանքների վերոնշյալ դեպքերը և պատասխանող կազմակերպությունից հայցվորների պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորելու համար հայցվորների օգտին բռնազանձել դրամական փոխհատուցում: Ինչպես նաև հարկադրել հրապարակավ ներողություն խնդրել Դ. Ի.-ից, Բ. Պ.-ից վերջիններիս վիրավորելու համար ու հրապարակավ հերքել հայցվորների մասին տարածված զրպարտիչ տեղեկատվությունը:

Պատասխանողը հայցադիմումի վերաբերյալ պատասխանում հայտնել է, որ այն մեղադրանքները, որոնք հնչեցվել են հայցվորների կողմից «Մեկ ազգ» կուսակցության մասին, անհիմն են: Մեկ պարզ պատճառով, քանի որ այն խոսքերը, որոնք մեկնաբանության տեսքով տեղադրվել են «Ֆեյսբուքում» առկա, «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքին պատկանող էջում, տեղադրվել են ոչ թե «Մեկ ազգ» կուսակցության կամ «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքի ղեկավարության կողմից կամ նրա հանձնարարականով, այլ «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքի երիտթևի անդամ Կ. Թ.-ի ինքնազուլիս նախաձեռնությամբ, հետևաբար ոչ «Մեկ ազգ» կուսակցությունը և ոչ էլ «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքը, որի մաս է կազմում նաև «Մեկ ազգ» կուսակցությունը, իրավական կամ քաղաքական պատասխանատվություն չի կարող կրել վերոնշյալ հայցվորների առջև: Պատասխանողի դիրքորոշման մեջ նշվում է նաև, որ քաղաքացի Կ. Թ.-ն ընդունում է, որ ինքը տուրք է տվել հայրենասիրական զգացումներին ու «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքի պայքարն ընդդեմ աղանդավորության, ընդդեմ համասեռամոլության երևույթի դատապարտող քաղաքացիների առջև ինքն է կրում իրավական պատասխանատվություն ու պատրաստ է գրավոր այն ներկայացնել դատարանին:

Դատարանը գտավ, որ հայցը ենթակա է մասնակի բավարարման՝ պատասխանողին հարկադրել հրապարակավ ներողություն խնդրել Դ. Ի.-ից, Բ. Պ.-ից վերջիններիս վիրավորելու համար և վիրավորանքին համաչափ փոխհատուցում սահմանել՝ Դ. Ի.-ի օգտին բռնազանձել 10 դրամ վիրավորանքի համար, Բ. Պ.-ի օգտին՝ 10 դրամ վիրավորանքի համար: Հայցը մնացած պահանջների մասով մերժվեց:

Այս գործը հետաքրքրական էր ոչ միայն այն առումով, որ առաջին հայցն էր «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում հրապարակված տեղեկատվության հիմքով, եւ սոցցանցն իր բնութագրական հատկանիշներով համարվել է ՋԼՄ, այլև դատարանի կողմից «հրապարակային

հայտարարություն» հասկացության գնահատման նոր՝ «հասանելի է բոլորին» չափանիշի կիրառմամբ: Մինչ այդ ոչ մի դատարան, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշման մեջ, այն չէր կիրառել: Ըստ այդմ, սոցիալական ցանցում տեղադրված նյութը կամ տարածված խոսքը ցանկացած հանգամանքում համարվում է հրապարակային, քանի որ հասանելի է բոլորին:

**ՄԱՍ II**  
**ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## ԽՈՒԿԳԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆԵԱ ԽԱՆՑԱՆՔ չԷ

Այս տարվա փետրվարի 12-ին՝ Հրազդանի քաղաքապետի ընտրության օրը, «Չենք լռելու» երիտասարդական նախաձեռնությունը տարածել էր հաղորդագրություն եւ տեսանյութ, որը, ինչպես մինչ այդ նախաձեռնության տարածած բազմաթիվ հաղորդագրություններ, համապատասխան հղմամբ տեղ գտավ նաեւ [hetq.am](http://hetq.am) կայքէջում:

«Հարձակում լրագրողի վրա (տեսագրությունը պարունակում է հայ-հոյանքներ)» վերնագիրը կրող հաղորդագրությունում «Չենք լռելու»-ն պատմում էր. «Ըստ ականատեսների՝ Հրազդանի համատիրություններից մեկն իր գրասենյակից ամբողջ օրվա ընթացքում ընտրակաշառք էր բաժանում 5000 դրամի չափով: Նկատելով լրագրողներին՝ ընտրակեղծարարները հարձակվել են նրա վրա: Համատիրության վրա փակցված է ՀՀ-ի լրգոտիպը կրող դրոշ»:

Ոստիկանության լրատվության վարչությունը «Շեռքի» խնդրանքով ներկայացրել է դեպքերի զարգացման հետագա ընթացքը: Ըստ այդմ՝ փետրվարի 28-ին Կոտայքի մարզի քննչական բաժինը ոստիկանության Հրազդանի բաժնից նյութեր է ստացել այն մասին, որ «Աղավ-նաձոր գյուղի բնակիչ Աշոտ Դանիելյանը, 2012թ. փետրվարի 12-ին իր ընկերներ Աշոտ Հարությունյանի եւ Իշխան Մուրադյանի հետ գտնվելով վերջինիս վարձակալած՝ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 68 շենքի 4-րդ բնակարանում, ժամը 17:00-ի սահմաններում հացկերույթի ժամանակ նկատել է, որ ինչ-որ մեկը տեսախցիկով նկարահանում է իրենց: Ա. Դանիելյանը դուրս գալով պատշգամբ՝ փորձել է պարզել նկարահանողի ով լինելը, սակայն վերջինս չի ներկայացել, ինչից էլ զայրացած Ա. Դանիելյանն իրենց նկարահանող անձի հասցեին 3-4 րոպե տվել է սեռական բնույթի հայիոյանքներ՝ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը եւ դրսեւորելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ»:

Տեսանյութը հստակ ֆիքսել է, որ նկարահանողի ուղղությամբ տարբեր բաներ նետող Աշոտ Դանիելյանից բացի՝ այլ անձինք եւս հայիոյում են, հետեւաբար, գուցեւ ավելի քիչ տեսողությամբ, վերջիններս եւս կոպիտ կերպով խախտում են հասարակական կարգը եւ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորում հասարակության նկատմամբ: Քննիչն այս ամենին ուշադրություն չի դարձրել եւ նույն տեսանյութը դիտելիս տարօրինակ կերպով հանգել է հետետության, որ Աշոտ Դանիելյանը, դուրս գալով պատշգամբ, նախ փորձել է պարզել նկարահանողի ով լինելը եւ միայն վերջինիս չներկայանալուց զայրացած՝ սկսել է հայիոյել: Ավելին՝ բացահայտ անուշադրության է մատնվել այն հանգամանքը, որ կատարվածը, խուլիգանությունից գատ, պետք է որակվեր նաեւ իբրեւ լրագրողի մասնագիտական գործունեության խոչընդոտում, եթե, իհարկե, հիմնավորվեր, որ նկարահանողը լրագրող էր: Մի բան, որ այդպես էլ չի պարզվել՝ դառնալով բոլոր հարցերի լուծման բանալին:

Փաստի առթիվ ՀՀ քր. օր.-ի 258-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով («Խուլիգանություն») հարուցվել է քրեական գործ: Հետագայում նույն հոդվածով Աշոտ Դանիելյանին մեղադրանք է առաջադրվել,

խկ իբրև խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին որոշումը: Դրանից հետո ոստիկանությունը սկսեց հաղորդագրություններ տարածել՝ խնդրելով «տեսանկարահանողին եւ ականատեսներին ներկայանալ ոստիկանություն»: Անգամ «Հետքը» հարցում ստացավ ոստիկանությունից՝ «տեսանյութի եւ հողվածի հեղինակին ճշտելու համար»: Պատասխանն անձամբ վերցնելու համար Կոտայքի մարզից խմբագրություն էր եկել քննիչը: Վերջինիս «Հետքում» մանրամասն բացատրեցին՝ նշյալ հրապարակումը եւ կցված տեսանյութը տարածել է «Չենք լռելու» երիտասարդական նախաձեռնությունը, իսկ քննիչն անկեղծացավ, որ անցած ամիսներին իրենց այդպես էլ չի հաջողվել գտնել «Չենք լռելու»-ի անդամներին: «Հետքի» փոխխմբագիր Լիանա Սայադյանը քննիչին տվեց երիտասարդական նախաձեռնության էլեկտրոնային հասցեն, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում ցույց տվեց «Չենք լռելու»-ի էջը եւ նախաձեռնության հիմնադիր խմբի անդամ Աշոտ Պողոսյանի տված հարցազրույցը «Մեդիամաքս» գործակալությանը: Ընդ որում՝ «Մեդիամաքսը» հրապարակել է նաեւ Պողոսյանի լուսանկարը:

«Կարծում եմ՝ այսքանից հետո առնվազն տվյալների բազայի միջոցով ոստիկանությունը կգտնի Աշոտ Պողոսյանին», - քննիչին ասաց Լիանա Սայադյանը:

Հետո «Հետքը» էլեկտրոնային նամակ գրեց «Չենք լռելու» նախաձեռնությանը: Պատասխանեցին, որ տեսանյութը ներբեռնել են «YouTube»-ից: Այսինքն՝ «Չենք լռելու»-ն ուրիշի տեսանյութը «YouTube»-ից ներբեռնել, ապա կրկին վերբեռնել է «YouTube», բայց արդեն՝ «Չենք լռելու»-ի էջ ու տարածել լրատվամիջոցներով: Այնուամենայնիվ, նախաձեռնությունը տեսանյութի ներքեւի հատվածում գրել է, որ դրա «հեղինակային իրավունքները «Չենք լռելու»-ին չեն պատկանում: Այն բեռնված է youtube.com/hrazdanelections ալիքից» (թեւ չենք կարող պնդել, որ այս նշումը տեսանյութի տակ եղել է նաեւ փետրվարի 12-ին, երբ «Չենք լռելու»-ն ՉԼՄ-ներով տարածել է տեսանյութը):

«YouTube»-ում հիշյալ «Ընտրություններ» (<http://www.youtube.com/hrazdanelections>) անունը կրող էջում որեւէ տվյալ չկա, բայց ոստիկանության համապատասխան մասնագետների համար ցանկության դեպքում առանձնակի դժվարություն չի ներկայացնի տվյալ էջը «տնօրինողներին» գտնելը: Ճիշտն ասած՝ «Հետքը» չի էլ փորձել նույն բանն անել, որովհետեւ բանը բանից վաղուց անցել է:

Կոտայքի մարզի դատախազի տեղակալը հանձնարարել է կարճել քրեական գործի վարույթը եւ դադարեցնել քրեական հետապնդումը հանցակազմի բացակայության հիմքով: Պարզվում է՝ խուլիգանությունը հանցանք չէ, կամ այն հիմնավորելու համար անհրաժեշտ է գտնել նկարահանողին:

Մնում է հուսալ, որ եթե հաջորդ անգամ աշոտ դանիելյանները նույն արարքը կատարեն, իրավապահները հստակ կզբաղվեն իրենց գործով:

**Արարատ Դավթյան**



## Լրագրողները չեն կարող պաշտպանություն ակնկալել իշխանություններից

Հայաստանյան ժողովրդավարության փորձաքարը ընտրություններն են. 2012 թվականը ընտրական է, եւ իշխանությունները խոստացել էին ամենաժողովրդավարական ընտրություններն անցկացնել, ինչպիսին չեն եղել երբեք: Չնայած խոստմանը, այնուամենայնիվ, ոչ ոք Հայաստանում ընտրություններն առանց միջադեպերի չի պատկերացնում: Խոսքի ազատության սահմանափակման, լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու, բռնություններ կիրառելու հիմնական դեպքերը գրանցվում են հենց ընտրությունների ժամանակ: Պետք է ասել, որ նախորդ համապետական ընտրությունների համեմատությամբ առաջընթաց արձանագրվեց՝ 2012թ. գրանցվեց լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու 7 դեպք: Այն քանակապես զիջեց 2008-ի նախագահական ընտրությունների ժամանակ գրանցված՝ լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու դեպքերին (գրանցվել էր 18 դեպք), նաեւ՝ 2009-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ գրանցված 11 դեպքին: Սակայն բռնությունները ձեւի առումով չմեղմացան, չփոխվեց նաեւ իշխանությունների վերաբերմունքը՝ իրավապահ մարմինները շարունակեցին անպատիժ թողնել լրագրողների նկատմամբ բռնություններ կիրառողներին:

Խորհրդարանական ընտրություններին նախորդել էր Հրազդանի քաղաքապետի ընտրությունը (2012թ., փետրվարի 12), որի ժամանակ գրանցված բռնության դեպքը տարածվել էր համացանցում եւ լայն արձագանք գտել: 2012թ. փետրվարի 12-ին՝ Հրազդանի քաղաքապետի ընտրության օրը, «Չենք լռելու» երիտասարդական նախաձեռնությունը տարածեց «Հարձակում լրագրողի վրա (տեսագրությունը պարունակում է հայիդյանքներ)» վերնագիրը կրող հաղորդագրություն եւ տեսանյութ: «Չենք լռելու»-ն պատմում էր, որ Հրազդանի համատիրություններից մեկն իր գրասենյակից ամբողջ օրվա ընթացքում ընտրակաշառք էր բաժանում 5000 դրամի չափով: Նկատելով նկարահանողներին՝ ընտրակեղծարարները հարձակվել են նրանց վրա:

Փաստի առթիվ քրեական գործ հարուցվեց, այնուհետեւ ոստիկանությունը հաղորդագրություններ տարածեց՝ խնդրելով «տեսանկարա-

հանողին եւ ականատեսներին ներկայանալ ուստիկանություն»։ Ճիշտ է, «YouTube»-ի հիշյալ «Ընտրություններ» անունը կրող էջում, որով տարածվել էր տեսագրությունը, որեւէ տվյալ չկա «Չենք լռելու» երիտասարդական նախաձեռնության մասին, բայց ուստիկանության համապատասխան մասնագետների համար դժվար չէր նրանց գտնելը։ Տեսանյութը տարածողները նախաքննական մարմնին աջակցել էին այդ հարցում՝ ներկայացնելով նրանց տվյալները, բայցեւայնպես կարճ ժամանակ անց իրավապահները «խուլիգանությունն» իրականացնողներին անպատիժ թողնելու հնարը գտան։ Կոտայքի մարզի դատախազի տեղակալի որոշմամբ կարճվեց քրեական գործի վարույթը, եւ քրեական հետապնդումը դադարեցվեց հանցակազմի բացակայության հիմքով։

Որ խուլիգանությունը կատարված փաստ էր՝ անհերքելի է, կատարողները նույնպես հայտնի էին, սակայն չկար նկարահանողը, թեպետ հայտնի չէ, թե նրա ի հայտ գալն ինչ կփոխեր «խուլիգանություն» որակված նրանց արարքում։ Ինչեւէ, նախաքննություն իրականացնողները որոշեցին չփնտրել նկարահանողին, քանի որ նկարահանողը՝ տվյալ դեպքում՝ «Չենք լռելուն», նման է անգլուխ ծիավորին։ Նա աներեւութական է՝ եւ կա, եւ չկա, ու, փաստորեն, ամենապատասխանատու պահերին կարող է չգոյություն համարվել (քանի որ իրավաբանական անձ չէ)՝ իր կատարածի ողջ պատասխանատվությունը թողնելով տարածողներին։

Այս պատմությանը վերջակետ դրեց Վճռաբեկ դատարանը՝ վիրավորանքի եւ գրպարտության գործով 2012 թ. ապրիլի 27-ին կայացրած որոշմամբ նախազգուշացրեց լրագրողներին ու լրատվամիջոցներին, որ այսօրինակ տեղեկատվության աղբյուրներին օգտվելու ռիսկն իրենցն է։ Եվ եթե նույնիսկ տեղեկատվության վերարտադրությունը բարեխիղճ կերպով է կատարվել, դա չի նշանակում, որ լրատվամիջոցը կարող է ինքնըստինքյան ազատվել պատասխանատվությունից։ Աղբյուրը, որից օգտվել է լրատվամիջոցը, ըստ այս որոշման, պետք է հանդիսանա հեղինակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասի իմաստով. եթե ինֆորմացիան տարածում է այնպիսի աղբյուրի անունից, որն իրավաբանական անձ չէ, չպետք է ընդունի, հակառակ դեպքում տարածողներն իրենք են պատասխանատվություն կրելու նյութի համար։

Մայիսի 6-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների ժամանակ լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու 7 դեպք գրանցվեց։ Դրանցից 4-ով քրեական գործ հարուցվեց Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի հիմքով՝ «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը»։ Քրեական գործերի քննության ընթացքը պարզորոշ ցույց է տալիս, որ իշխանությունների վերաբերմունքը չի փոխվել՝ լրագրողները չեն կարող պաշտպանություն ակնկալել իրավապահներից։

Ուստիկանությունը կարճեց «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Էլինա Չիլինգարյանի նկատմամբ կիրառված բռնության դեպքով հարուցված քրեական գործը՝ իր պատճառաբանությունների մեջ հասնելով արսուրդի։ Լրագրողը մեղավոր համարվեց իր մասնագիտական գործունեությունը բարեխղճորեն չկատարելու համար, իսկ բռնություն կիրառողի գործողություններին համար արդարացում գտնվեց։



Մայիսի 6-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, թիվ 178 դպրոցում տեղակայված 12/32 ընտրատեղամասի բակում նկարահանումներ անելիս «Վարդան» անունով ներկայացած անձը հարվածել է «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Էլինա Չիլինգարյանի ձեռքին և փորձել խլել «ՖԼԻՊ» տեսակի նկարահանող սարքը: Հետագայում պարզվել է, որ նա Հովիկ Համբարձումյանն է: «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Էլինա Չիլինգարյանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործը ոստիկանության Էրեբունու քննչական ծառայությունը հուլիսի 13-ին կարճել է՝ հանցակազմի բացակայության հիմքով: Գործը կարճելու մասին որոշման մեջ նշվում է. «Էլինա Չիլինգարյանը տեսանկարահանումներ կատարելիս չի ներկայացել որպես լրագրող, լրագրողին հատուկ տարբերիչ նշան չի կրել, նրա օգտագործած տեսախցիկը նույնպես տարբերանշան չի ունեցել:

Նման պայմաններում նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներն իրենց համակցության մեջ գնահատելով՝ հիմնավորված պետք է համարել, որ Հ. Համբարձումյանը չի գիտակցել եւ պարտավոր չէր գիտակցել, որ Էլինա Չիլինգարյանը լրագրող է եւ իրականացնում է մասնագիտական գործունեություն: Հ. Համբարձումյանի դիտավորությունն ուղղված չի եղել Չիլինգարյանին ծեծելուն, մարմնական վնասվածք կամ ֆիզիկական ցավ պատճառելուն: Նկարահանվելուց խուսափելու նպատակով նա հարվածել է նկարահանողի ձեռքին, որի հետեւանքով տեսախցիկն ընկել է գետնին:

2012թ. մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունների ընթացքում լրագրողների դեմ բռնության մյուս երեք դեպքերը գրանցվեցին Գյումրիի ընտրատեղամասերում: Եթե Էլինա Չիլինգարյանի գործը կարճելու պատճառը «լրագրողի հատուկ տարբերիչ նշան չկրելն էր», ապա «Մաքսիմֆո» լրատվական-վերլուծական գործակալության լրագրող-օպերատոր Կարեն Ալեքյանին դա էլ չի փրկել:

**ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների օրը՝ ժամը 09:30-ին, չորս անհայտ անձանց կողմից Գյումրու թիվ 34/26 ընտրատեղամասում «Մաքսինֆո» լրատվական-վերլուծական գործակալության լրագրող-օպերատոր Կարեն Ալեքյանի տեսախցիկը խլելու, նրա հազուստին ամրացված լրագրողի անցագիրը պոկելու և ընտրատեղամասից հեռանալու, դրանով վերջինիս մասնագիտական լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դեպքի առթիվ 2012թ. մայիսի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:**

Այս եւ Գյումրիի ընտրատեղամասերում նույն ձեռագրով կատարված բռնության մյուս երկու դեպքերը միացվել են մեկ վարույթում եւ փոխանցվել Հատուկ քննչական ծառայությանը (ՀՔԾ)՝ քննություն կատարելու: Սակայն առ այսօր առաջընթաց չկա, քննության 4 ամիսների ընթացքում որևէ մեկին մեղադրանք չի առաջադրվել: ՀՔԾ-ից «Կետքին» պատասխանել են, որ մինչև օրս երեք գործերով կասկածյալներ կամ ձերբակալվածներ չկան, նախաքննությունը շարունակվում է, և «միջոցներ են ձեռնարկվում հանցանք կատարած անձանց ինքնությունը պարզելու ուղղությամբ»:

**1. ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների օրը՝ ժամը 08:30-ին, անհայտ անձանց կողմից Գյումրու թիվ 34/21 ընտրատեղամասում «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող-օպերատոր Վլադիմիր Խաչատրյանի տեղադրած տեսախցիկը վերցնելու և ընտրատեղամասից հեռանալու, դրանով վերջինիս մասնագիտական լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դեպքի առթիվ 2012թ. մայիսի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:**

**2. ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների օրը՝ ժամը 08:30-ին, Գյումրու թիվ 34/25 ընտրատեղամասում «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող-օպերատոր Վարազդատ Պապիկյանի տեղադրած տեսախցիկը վերցնելու և ընտրատեղամասից հեռանալու միջոցով վերջինիս լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դեպքի առթիվ 2012թ. մայիսի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:**

Հայտնի չէ, թե ՀՔԾ-ն որտեղ է փնտրում «հանցանք կատարած անձանց», բայց արժե հիշեցնել, որ «Կենտրոն» հեռուստաընկերության օպերատոր Վարազդատ Պապիկյանի ձեռքից տեսախցիկը վերցնելու

մասին ուստիկանությանը տեղեկացրել էր «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձը: Նա հայտնել էր, որ Գյումրու քաղաքապետի որդին՝ Սպարտակ Ղուկասյանը, «Կենտրոն» հեռուստաընկերության օպերատոր Վարազդատ Պապիկյանի ձեռքից վերցրել է տեսախցիկը և նրան դուրս հանել ընտրատեղամասից:

Խորհրդարանական ընտրությունների եւ դրան նախորդած օրը տեղի ունեցած մի քանի այլ դեպքերով իրավապահ մարմինները մերժել են քրեական գործերի հարուցումը: Այսպես՝

**«Գալա» հեռուստաընկերության լրագրող Նաիրա Նալբանդյանի** ներկայացրած հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության Գյումրիի քննչական բաժինը մերժել է քրեական գործի հարուցումը: Լրագրողը ոստիկանությանը հայտնել էր, որ ընտրությունների նախորդ օրը դիմել է թիվ 33 ընտրատարածքի հանձնաժողովի նախագահ Գ. Հովհաննիսյանին՝ պարզաբանումներ ստանալու, սակայն նա հրաժարվել է տեղեկություններ տրամադրել, վիճաբանել և խոչընդոտել է լրագրողի գործունեությանը:

**«Առավոտ» օրաթերթի լրագրող Նելլի Բաբայանի** աշխատանքը խոչընդոտել են մայիսի 6-ին Դավթաշեն վարչական շրջանի թիվ 5/11 ընտրատեղամասում: Տեղամասում ընտրողների կուտակումները հեռախոսով նկարելու ժամանակ անհայտ անձը փորձել է լրագրողի ձեռքից խլել հեռախոսը: Նա չի ներկայացել և փորձել է «ապացուցել», որ լրագրողը նկարելու իրավունք չունի: «Ավելի շատ փորձում էր հոգեբանական ճնշում գործադրել, վախեցնել», - ասել է Նելլի Բաբայանը: Քիչ հետո երիտասարդը վերադարձրել է հեռախոսը, սակայն այդպես էլ չի ներկայացել:

**mynews.am կայքի թղթակից Արթուր Հարությունյանն** ահագանգել է, որ մայիսի 6-ին Արարատի մարզի Նոր կյանք գյուղի 18/17 ընտրատեղամասում խոչընդոտում են իր աշխատանքին: «Ընտրությունների հենց սկզբից տեղամասում մթնոլորտը լարված էր: Նկատվում էին մարդկային կուտակումներ տեղամասի առջեւ եւ ներսում: 09:45-ի սահմանում, երբ պարզապես ցանկանում էի նկարել տեղամասը, թե ինչպես են քաղաքացիները գալիս քվեարկության, ՏՀՀ անդամ Արմեն Աբրահամյանը ստիպեց ինձ չնկարել եւ իմ աշխատանքը որակեց «մեյմունություն»՝ ինձ մեղադրելով ոչ անաչառ գործողությունների մեջ: Ինձ ստիպեցին զբաղեցնել լրագրողների համար նախատեսված տեղը»:

Վերջին երկու դեպքերի կապակցությամբ ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի վարչությունից «Հետքին» տեղեկացրել են, որ «06.05.2012թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում Դավթաշեն վարչական շրջանի թիվ 5/11 ընտրատեղամասում «Առավոտ» օրաթերթի լրագրող Նելլի Բաբայանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու» և «06.05.2012թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում Արարատի մարզի Նոր Կյանք գյուղի թիվ 18/17 ընտրատեղամասում ՏՀՀ անդամ Արմեն Աբրահամյանի կողմից լրագրող Արթուր Հարությունյանի աշխատանքը խոչընդոտելու» վերաբերյալ տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով որոշումներ են կայացվել քրեական գործի հարուցու-

մը մերժելու մասին՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի մարզային վարչության Մաշտոցի բաժնի կողմից՝ հանցակազմի, իսկ Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի կողմից՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

Ներկայացված օրինակները փաստում են, որ իրավապահներն անտարբեր են քրեական գործերի քննության նկատմամբ անգամ այն դեպքերում, երբ անվանապես հայտնի են լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտողները, բռնություն գործադրողները: Քրեական գործերի հարուցումը զուտ ձեական բնույթ է կրում՝ ընտրական խախտումներին արձագանքողի տպավորություն թողնելու, լրավածությունը թուլացնելու համար ժամանակ շահելու նպատակով:

Իրավապահները, սակայն, նույնքան հանդուրժող չեն լրագրողների նկատմամբ: 2012 թվականը նշանավորվեց «Հայկական ժամանակ» օրաթերթի թողարկման պատասխանատու, լրագրող Հայկ Գետրոյանի ձեռքարկումով, որն անակնկալի բերեց ոչ միայն լրագրողական համայնքին, այլև քաղաքացիական հասարակությանը:



2012թ. փետրվարի 3-ին, առավոտյան աշխատանքի գնալիս քաղաքացիական հագուստով անձինք բերման են ենթարկել «Հայկական ժամանակ» օրաթերթի թողարկման պատասխանատու, լրագրող Հայկ Գետրոյանին: Ոստիկանության Կենտրոն բաժին բերելուց քիչ ավելի ուշ Հայկին կալանավորել և տեղափոխել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ: ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժնի աշխատակիցները լրագրողին կալանավայր տեղափոխելու որոշումը բացատրել են նրանով, որ դեռևս հունվարի 23-ից Հայկ Գետրոյանը գտնվել է հետախուզման մեջ:

Դեպքն արտառոց էր, եւ ոստիկանությունը պարտավոր էր բացատրություն տալ կատարվածին: Նույն օրը երեկոյան տեղեկություններ տրամադրեցին ոստիկանությունը և «Հայկական ժամանակ»-ի խմբագրությունը:

Ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը հայտարարեց, որ դեռևս հունվարի 23-ից Հայկ Գետրոյանը հետախուզման մեջ է գտնվել հունվարի 13-ին վրաերթ կատարելու եւ դեպքի վայրից փախուստի դիմելու փաստի առթիվ: Ոստիկանությունը վրաերթ կատարելու հանգամանքը հիմնավորել է հունվարի 23-ին կատարված լուսանկարով ճանաչման ներկայացնելու

արձանագրությամբ եւ նույն օրն էլ Հայկ Գևորգյանին բերման ենթարկելու որոշում է կայացրել:

Լրագրողներն այս հայտարարությանը թերահավատորեն վերաբերվեցին այն պահից, երբ ոստիկանությունը հայտարարեց, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նա չի հայտնաբերվել: Ըստ ոստիկանության հաղորդագրության՝ Հայկ Գևորգյանը պատշաճ կերպով, ինչպես փոստով, այնպես էլ ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հունվարի 17-ին ծանուցվել է ՃՏՀ քննության բաժնի հարցաքննության ներկայանալու համար:

«Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագրությունը փաստում է, որ Հայկ Գևորգյանը ինչպես հունվարի 23-ից առաջ, այնպես էլ դրանից հետո ամենօրյա ռեժիմով շարունակել է իր լրագրողական գործունեությունը, վարել է նույն ավտոմեքենան, ամեն օր այդ մեքենայով է ներկայացել աշխատանքի, վերադարձել տուն, մասնակցել կառավարության նիստերին, լուսաբանել բարձրաստիճան պաշտոնյաների ասուլիսները եւ այլն: «Հայկական ժամանակ»-ի խմբագիր Նիկոլ Փաշինյանի խոսքերով՝ Հայկ Գևորգյանն այս ընթացքում նաև մի քանի հեռախոսազրույց է ունեցել ճանապարհային ոստիկանության՝ նրա նկատմամբ հետախուզում հայտարարած քննիչի հետ և ասել, որ պատրաստ է ներկայանալ քննության, եթե իրեն ծանուցագիր ուղարկվի: Գործով քննիչին հայտնվել է նաև Հայկ Գևորգյանի վարած ավտոմեքենայի գտնվելու վայրը և առաջարկվել այն գննության ենթարկել տեղում:

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը հրավիրած ասուլիսում հայտարարեց, որ Հայկի կալանավորումը կարող է կապված լինել նրա մասնագիտական գործունեության հետ, իր կարծիքով՝ այն պատվիրված հետապնդում է եւ կապված է ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի մասին հրապարակումների հետ:

Հայկ Գևորգյանին ազատ արձակելու պահանջով հանդես եկան մի շարք լրագրողական և իրավապաշտպան կազմակերպություններ՝ նրա կալանավորման հիմքերը համարելով շինծո: Նրանք երկրի քաղաքական իշխանությանը կոչ արեցին արդյունավետ քայլեր ձեռնարկել լրագրողների եւ լրատվամիջոցների նկատմամբ անհիմն հետապնդումները, մեղադրանքները եւ ճնշումները բացառելու նպատակով: Հավանական են համարվում «Հայկական ժամանակ»-ի այն ենթադրությունները, որ խափանման միջոցի ընտրությունը պայմանավորված է լրագրողի մասնագիտական գործունեությամբ: Փետրվարի 6-ին Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում պետք է քննվեր Հայկ Գևորգյանի խափանման միջոց կալանքի հարցը, սակայն նույն օրը քիչ ավելի վաղ դատախազությունը որոշում կայացրեց խափանման միջոց կալանավորումը փոխարինել բնակավայրից չհեռանալու մասին ստորագրությամբ:

«ՀԺ»-ի գլխավոր խմբագիր Հայկ Գևորգյանը ստացել է ՀՀ ոստիկանության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի քննիչ Ա. Ասատուրյանի՝ հուլիսի 3-ին Գևորգյանի նկատմամբ հարուցված քրեական գործը կարճելու մասին որոշումը՝

հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: «Հայկական ժամանակ»-ն այդ կապակցությամբ իր հրապարակման մեջ նշեց, որ սա բավականին «խորամանկ» որոշում է: Թերթի կարծիքով՝ եթե գործը հասնի դատարան, ապա այնտեղ միանշանակ կապացուցվի, որ «վրաերթը» սարքվել է եւ սարքվել է ՀՀ ոստիկանապետ Վովա Գասպարյանի հրահանգով, կամ առնվազն որեւէ բարձրաստիճան ոստիկան փորձել է նրան լավություն անել: Գործը կարճելով՝ ՀՀ ոստիկանությունը փորձում է խուսափել այս հեռանկարից: Հ. Գետրոգյանը բողոքարկել է կարճման որոշումը՝ նպատակ ունենալով ապացուցել «վրաերթի» սարքված լինելը ու պատասխանատվության կանչել գործում ներգրավված բոլոր անձանց:

**Սառա Պետրոսյան**

## **ՄԱՍ III**

### **ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՉԼՄ-ՆԵՐՈՒՄ**

# Հին նպատակներ՝ նորացված մեթոդներով

Վերջին երկու տարիներին ինտերնետի սակագների նվազումն ու մուտքը անգամ հեռավոր գյուղական բնակավայրեր ստիպում է փոխել նախկին ավանդական ընկալումները ընտրական քարոզչության առումով հեռուստաընկերություններին վերապահվող դոմինանտության վերաբերյալ: Այլընտրանքային տեղեկատվական հոսքերի առկայության պայմաններում քարոզչական հին մեթոդաբանությանն ու ավանդույթներին ապավինելը ռիսկ է՝ վերջնականապես կորցնելու լրատվական օրակարգ ձևավորելու հանրային վստահության ռեսուրսը և տանուլ տալու ինտերնետի հետ ներկայումս ծավալված անզիջում մրցակցությունում: Դա հասկանում են թե՛ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը, թե՛ պետությունը և թե՛ հեռուստաընկերությունները:

2012թ. խորհրդարանական ընտրությունները տեղի են ունենում այս նոր իրողությունների, վերափոխումների պայմաններում, ինչն ուղղակիորեն անդրադառնում է ընտրություններում հեռուստաընկերությունների քարոզչական ֆունկցիոնալ նշանակության վրա: Մյուս կողմից՝ քաղաքական սուր բևեռացվածության բացակայությունը, 2008թ. նախագահական ընտրությունների ողբերգական հետևանքները ստիպում են իշխանություններին վերանայել հեռուստաընկերությունների միջոցով ագրեսիվ քարոզչական քաղաքականության նախկին մոտեցումները և առաջնորդվել գոնե իմիտացիոն մրցակցության ֆոն ապահովելու սկզբունքով: Այս վերանայումը սկսվեց 2009-2010 թթ. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որոնք ուղղված էին հեռուստառադիոլրրտի կառավարման որոշակի անկախության ապահովմանը: Այն գործնական որևէ արդյունք չտվեց, սակայն գոնե իրավական բազա ստեղծեց՝ ցույց տալով իշխանության ուղեգծում արձանագրված փոփոխությունները:

2012-ին հեռուստադաշտը զուտ ներկայանալիություն ապահովելու իմաստով ակնհայտորեն ավելի մատչելի է քաղաքական ուժերի համար, քան 2007-ին: Ընդ որում՝ սա նկատելի է մատչելիության չափման գրեթե բոլոր ասպեկտներով: Մարտ ամսին թե՛ հանրային և թե՛ մասնավոր հեռուստաընկերությունները, օրենքի պահանջից էլնելով, հրապարակեցին քարոզարշավի ընթացքում քաղաքական ուժերին հատկացվելիք եթերաժամանակի սակագները: Ըստ նոր Ընտրական օրենսգրքի՝ վճարովի եթերաժամի 1 րոպեի գինը չի կարող գերազանցել մինչև ընտրությունների նշանակումը վերջին 6 ամսվա համար առևտրային գովազդի միջին գինը:

Սա նպաստեց, որ քաղաքական գովազդին հատկացվող եթերաժամանակի սակագինը նվազի: Բայց նվազեցման հարցում մասնավոր հեռուստաընկերությունները անհատական մոտեցում հանդես բերեցին: Եթե այսպես կոչված ժամանցային ուղղվածություն ունեցող հեռուստաընկերությունները («Արմենիա», «Շանթ») սակագինը նվա-

զեցրին մոտ 20 տոկոսով, ապա պայմանականորեն լրատվական-վերլուծական ուղղության հեռուստաընկերությունները («Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Արմնյուզ») գրեթե եռակի: Առաջինների դիտողականության բարձր ցուցանիշներին երկրորդները հակադրեցին մասշտիբությունը:

Այս խորապատկերին առանձնացավ միայն Հանրային հեռուստաընկերությունը, որը սահմանել է վճարովի եթերաժամանակի այնպիսի գին, ինչպիսին 2007-ի ընտրությունների ժամանակ: Այն գրեթե հավասար է մասնավոր ժամանցային հեռուստաընկերությունների հայտարարած գներին: Հանրայինը հարցին մոտեցել է ոչ թե հանրային պատասխանատվության սկզբունքից ելնելով, ինչը նման կարգավիճակով օժտված հեռուստաընկերության պարտականությունը պետք է լիներ, այլ՝ բիզնեսի:

Ընդ որում՝ բացարձակապես չի հիմնավորվում, թե ինչ չափորոշիչներից ելնելով է հատկապես այդ գինը սահմանվել: Քաղաքական գովազդի համար եթերաժամանակ հատկացնող հեռուստաընկերությունները, բացառությամբ «Արմնյուզի», այսօր արբանյակային հեռարձակում են ապահովում և հասանելի են հեռավոր մարզերում ու բնակավայրերում: Եթե այս հարցում նախկինում Հանրայինն ուներ բնական առավելություն, ապա այսօր զրկվել է նաև դրանից: Ներկայումս որդեգրած քաղաքականությունը նաև այս իմաստով որևէ տրամաբանության չի ենթարկվում:

Սակայն ընտրազանգվածի կողմնորոշումների վրա ոչ այնքան վճարովի եթերի միջոցով իրականացված քարոզչությունն է ազդում, որքան՝ դրանից դուրս, այսպես կոչված թաքնված քաղաքական գովազդը կամ հակաքարոզչությունը: Իրական անհավասարությունը, խտրականության դրսևորումները ավանդաբար արտահայտվել են հենց այս միջավայրում, որովհետև դուրս է իրավական կարգավորման դաշտից և պայմանավորված է հեռուստաընկերությունների որդեգրած ծրագրային-տեղեկատվական քաղաքականությամբ:

Իշխանական կամ իշխանամերձ քաղաքական ուժերն ավանդաբար թե՛ քանակական, թե՛ որակական ու բովանդակային առումներով հսկայական առավելություն են ունեցել մնացած մրցակիցների նկատմամբ: Այս խզումը նախկինում չափազանց մեծ էր՝ առաջին հերթին հեռուստաընկերությունների կողմից իրականացվող ճակատային, ոչ պրոֆեսիոնալ և բացահայտ գովազդի, ինչպես նաև՝ մյուս մրցակիցների նկատմամբ իրականացված հակաքարոզչության ու տեղեկատվական այլընտրանքային աղբյուրների, խողովակների բացակայության պատճառով:

Այս երևույթը հիմա այդքան էլ զգալի չէ: Բայց պատճառը թաքնված գովազդի կամ հակաքարոզչության ծավալի նվազումը չէ: Դեր ունի երկու հիմնական գործոն:

**Առաջինը հեռուստաընկերությունների, այսպես կոչված, տեսակավորումն է, քաղաքական նախընտրությունների որոշակի տարբերությունները,** որոնք նախկինում նկատելի չէին: Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից երկուսը՝ ՀՅԴ-ն ու ԲՀԿ-ն, ունեն իրենց շահերի տիրույթում գործող հեռուստաընկերություններ՝ համա-

պատասխանաբար «Երկիր Մեդիա»-ն և «Կենտրոնը»: Հանրային, Հ 2, «Արմենիա» և «Շանթ» հեռուստաընկերությունները գտնվում են իշխանությունների, տվյալ դեպքում՝ ՀՀԿ-ի ոչ ֆորմալ վերահսկողության ներքո: Այս իրողությունը խայտաբղետ տեղեկատվական-քարոզչական միջավայր է ապահովում:

Սակայն իրական քարոզչական մրցակցությունն այս հեռուստաընկերություններում սկսվել է շատ ավելի վաղ, որն արտահայտվում էր լրատվական թողարկումներում կուսակցական բնույթի իրադարձություններին եւ միջոցառումներին ողջախոհության սահմաններից դուրս անդրադարձ կատարելու, հարցազրույցային ժանրով հաղորդումներում պոտենցիալ մրցակից ուժերի ներկայացուցիչներին լրագրողական, հոգեբանական նուրբ ճնշումների ենթարկելու միջոցով: Սա հնարավորություն է տալիս եթեր բերել «փակ» թեմաներ, հիմնախնդիրներ, ինչ-որ առումով նպաստում է ընտրողների կողմնորոշումների վրա:

Մյուս կողմից՝ անհավասար պայմաններ է ստեղծում նման ռեսուրսների չտիրապետող մնացած ուժերի՝ ՕԵԿ-ի, Հայ ազգային կոնգրեսի, Կոմունիստական կուսակցության համար: Վերջիններսու համար եթերը փակ չէ, սակայն նրանց գործունեության նկատմամբ գործում է այսպես կոչված «եթե ոչինչ չասել հնարավոր չէ, ապա գոնե ասել նվազագույնը» սկզբունքը:

ՕԵԿ-ի պարագայում իրավիճակը մի փոքր այլ է, որովհետև վերջինս, լինելով իշխանական ուժ, ավելի շատ ընկալվում ու ներկայացվում է իբրև իրական իշխանություն կրող ուժի՝ ՀՀԿ-ի քարոզչության լրացուցիչ պոտենցիալ, բաղադրիչ: ՕԵԿ-ը՝ որպես առանձին քաղաքական միավոր, գոնե մինչև ընտրարշավի պաշտոնական մեկնարկը չի ներկայացվում հեռուստաընկերությունների միջոցով: Կոմկուսը եթերում չի երևում ոչ այնքան խտրականության, որքան նրա նկատմամբ հետաքրքրության բացակայության պատճառով: Ամենախոցելի վիճակում շարունակում է մնալ ՀԱԿ-ը, որին անդրադառնում են միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է համակողմանիության և հավասարության պատրանք ապահովել:

**Երկրորդ թաքնված քաղաքական գովազդի բնույթի փոփոխությունն է, որը պայմանավորված է իշխանությունների քարոզչական մարտավարության փոփոխությամբ:** Թույլ տալով որոշակիորեն ընդլայնել հեռուստառադիոեթերի սահմանափակ ազատությունը՝ իշխանությունն իր քարոզչությունը սկսեց կառուցել երկու մոտեցման վրա. քարոզչության շարունակականության և պետական ու կուսակցական գործառույթների նույնականացման: Առաջինը ենթադրում էր քարոզչական թեթև «չափաբաժիններով» իշխանական կուսակցությունների գործունեության լուսաբանում տևական ժամանակահատվածի կտրվածքով:

Այս մարտավարությունը գործադրվում է 2009-ից՝ հայտնի քաղաքական և տնտեսական ճգնաժամների արդյունքում իշխանության և նրա կորիզը կազմող կուսակցությունների վարկանիշի զգալի անկումից հետո: Որպես «թիրախ» կամ գործիք կիրառվում էր հիմնականում կուսակցությունների բարեգործական գործունեությունը: Այն արտա-

հայտվում էր ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի կողմից սոցիալական, առողջապահական անվճար ծառայությունների մատուցման, տարբեր ակցիաներին մասնակցության, ստեղծված, զուտ ֆորմալ բնույթ կրող բարեգործական հիմնադրամների կողմից բաժանվող նվերների և այդ ամենը հեռուստաընկերությունների միջոցով հետևողական ու նպատակադրված լուսաբանման միջոցով:

Այս թեմաներով ռեպորտաժները գերծ են եղել գովասանք, որակում, ածականներ պարունակող արտահայտություններից: Զուգահեռաբար, հետևողականորեն լուսաբանվում էին նաև հատկապես կոալիցիոն կուսակցություններին քաղաքացիների անդամակցության միջոցառումները: Սա ավելի շատ ուղղված էր ընտրագանգվածի ենթագիտակցության վրա ներգործելուն և գերհզոր ու ամենակարող կուսակցությունների իմիջ ձեւավորելուն:

Պետական և կուսակցական գործառույթների նույնականացման միտումները դրսևորվել են համեմատաբար վերջերս և ավելի ու ավելի ընդգծված դարձել նախընտրական ժամանակաշրջանի մոտենալուն զուգընթաց: Հանրապետության վարչապետի, Անվտանգության խորհրդի քարտուղարի՝ աշխատանքային ժամերին մարզային այցելություններն ու կուսակցական անդամատոմսերի բաժանումը, կուսակցության տեղական կառույցների ներկայացուցիչների հետ նախընտրական ծրագրերի քննարկումը, նախընտրական բնույթ ունեցող ելույթները հեռուստաընկերություններով լուսաբանվում էին պետական պաշտոնյաների պարտականությունների ու գործառույթների համատեքստում, ինչը տիպիկ թաքնված քաղաքական գովազդ էր:

Դրան ավելացան նաև Կառավարության՝ ակնհայտորեն պոպուլիստական բնույթ կրող նախաձեռնությունները (սոցիալական անապահով շերտերի կրթության մատչելիության ապահովման, զինծառայողներին աշխատանք գտնելու հարցում օժաղակելու, նախորդ տարիների՝ եկամտահարկից ու հողի հարկից կուտակված պարտքերի ու ապառքների գրոյացումը), ինչպես նաև ծառայությունների մատուցման ոլորտում կատարված հակակոռուպցիոն փոփոխությունները ներկայացնելուն ուղղված լայն քարոզչական արշավների կազմակերպումը հեռուստաընկերություններով:

Ի տարբերություն հեռուստաընկերությունների՝ ռադիոէթերը անհամեմատ ավելի ազատ է: Հանրային ռադիոընկերությունն առաջնորդվում է քաղաքական ուժերի միջև հավասարակշռության և լուսաբանման անաչառության սկզբունքով՝ անդրադառնալով չոր փաստերին ու երևույթներին: Հայաստանում այլընտրանքային տեղեկատվական աղբյուրի իր գործառույթը շարունակում է անարգել իրականացնել նաև «Ազատություն» ռադիոկայանը: Մնացած ռադիոընկերությունները, որոնք հիմնականում ժամանցային-երաժշտական ուղղվածություն ունեն, սահմանափակվում են բացառապես կարճ ու հիմնականում ջրաղաքականացված լրատվահոսքերով: Նրանց դերակատարությունը քարոզարշավում լինելու է նվազագույն մակարդակով:

## **Ազատ, բայց ոչ ազդեցիկ վիրտուալ մեդիան**

2008թ. նախագահական ընտրություններից հետո մեծ թվով նոր լրատվամիջոցներ են ի հայտ եկել հենց վիրտուալ տիրույթում, և նրանց մեծ մասն այսօր դարձել է համակարգիչ ու ինտերնետ ունեցող բազմահազար և օր օրի ավելացող քաղաքացիների տեղեկատվության հիմնական աղբյուրը: Դա պայմանավորված է մեկ հիմնական գործոնով. ի տարբերություն ավանդական թղթային կրիչներով ՋԼՄ-ների կամ էլեկտրոնային լրատվամիջոցների՝ համացանցային ՋԼՄ-ները և հաղորդակցության միջավայրերը շատ ավելի քիչ են վերահսկելի ու գրաքննության ենթակա, ինչը ստեղծագործական ու ինքնադրսետրման ավելի մեծ ազատություններ է տալիս:

Հայաստանյան ՋԼՄ համացանցային տիրույթում նկատելի է զարգացման երեք հիմնական ուղղություն. առաջին՝ տեղեկատվական, երկրորդ՝ մեկնաբանական-վերլուծական, երրորդ՝ հաղորդակցային:

Առաջին ուղղությանը դավանող կայքերի միջև լուրջ մրցակցություն է ծավալվել լուրերի հայթայթման առումով: Դա հանգեցրել է լուրերի որակի անկման: Փոխարենը առաջ են մղվել օպերատիվության, բազմազանության և հնարավորության սահմաններում օբյեկտիվության հատկանիշները: Տեղեկատվական կայքերը սկսել են լրատվական գործակալություններին դուրս թողնել ասպարեզից՝ ստիպելով նրանց փոխել իրենց նպատակներն ու խնդիրները:

Երկրորդ ուղղությանը պատկանող կայքերում քաղաքական կողմնորոշումներն ավելի շատ են, օբյեկտիվության գործոնը մղված է երկրորդ պլան, և նրանք հիմնականում գործում են տպագիր մամուլի հետ մրցակցության տիրույթում: Անգամ մամուլի միջոցների ինտերնետային տարբերակներն այսօր փաստացի ավելի պահանջված են, քան հենց թերթերն ու պարբերականները: Համեմատության մեջ վերլուծական-մեկնաբանական կայքերն ավելի ցածր հաճախելիություն ունեն, քան տեղեկատվական կայքերը: Դա պայմանավորված է հիմնականում ընթերցողների՝ հնարավորինս օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու առաջնային պահանջով: Փոխարենը ինտերնետային վերլուծական «պարբերականները» շատ ավելի մեծ պոտենցիալ ունեն հանրային կարծիքի վրա ներգործության առումով, որովհետև աստիճանաբար այստեղ է կենտրոնանում հասարակության մտավոր, թարմ հայացքներով ու վերլուծական ձիրքով օժտված անհատների մեծամասնությունը:

Երրորդ ուղղությունը հիմնված է ավելի շատ հաղորդակցության, տեղեկատվության փոխանակման այլընտրանքային միջոցների վրա: Խոսքը հիմնականում վերաբերում է այսպես կոչված «բլոգոսֆերային» և սոցիալական ցանցերին, որոնցից Հայաստանում առավել տարածված ու կիրառելի են Facebook-ը, Twitter-ը և YouTube-ը: Սրանցում առավել, քան որևէ այլ միջավայրում կիրառելի և օգտագործելի են դառնում տեղեկատվության գրեթե բոլոր ձևերը՝ գրավոր, տեսաձայնային, պատկերային, նշանային և այլն: Ցանցային ակնթարթային փոխանցման հնարավորություններով դրանք վերաձվում են տեղեկատվական

հոսքերի անվերահսկելի տարածության: Այստեղ եղանակ ստեղծում է ոչ թե լրագրողը, այլ անհատը, որը վերածվում է տեղեկատվության տիրապետողի և սպառողի միաժամանակ: Տեղեկատվության աղբյուրները, հավաստիության սկզբունքը մղվում են երկրորդ պլան, ինչը հանգեցնում է պատասխանատվության անհասցեականության՝ ինտերնետային ռեսուրսները տեղեկատվության փոխանակման համար դարձնելով ավելի գայթակղիչ և նախընտրելի:

Համացանցի հայաստանյան ռեսուրսները 2012-ի խորհրդարանական ընտրությունների համատեքստում կատարում են երեք հիմնական գործառույթ՝ տեղեկատվական, քարոզչական և մոբիլիզացիոն, որոնք փոխապայմանավորում են միմյանց:

## **Տեղեկատվական գործառույթ**

Ընտրական գործընթացների վերաբերյալ այսօր ավելի համապարփակ ու համակողմանի տեղեկատվություն չի կարելի ձեռք բերել, քան հենց համացանցից: Մի քանի կայքերի արագ դիտարկումը, լրատվահոսքերի, հրապարակումների համադրությունը թույլ են տալիս գրեթե ամբողջական պատկերացում կազմել ընտրությունների ընթացքի և դրա գրեթե բոլոր հանգամանքների մասին: Այս իմաստով քաղաքացին գրեթե լիարժեք հնարավորություն ունի ոչ միայն հետևելու պրոցեսներին, ստանալու կամ ընտրելու իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը, այլև անմիջականորեն մասնակցելու եւ ազդելու գործընթացների և հանրային կարծիքի ձևավորման վրա: Մյուս կողմից՝ տեղեկատվական արագ հոսքերը մեծացնում են նաև մարդկանց մանիպուլյացիայի ենթարկելու հնարավորությունները:

## **Քարոզչական գործառույթ**

Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը վիրտուալ տարածքում հավասարապես հանդիսանում են տեղեկատվություն «արտադրողներ»: Աստիճանաբար ինտերնետը սկսում է ընկալվել որպես քարոզչություն իրականացնելու արդյունավետ միջոց: Այս ռեսուրսից օգտվելու կարիք առավելաբար զգում են ընդդիմադիր ուժերը, որոնց մուտքը հեռուստատեսքեր որոշակիորեն սահմանափակված է: Նրանք չունեն քարոզչություն իրականացնելու այլընտրանքային միջոցներ: Եթե իշխանական ուժերի քարոզչական հիմնական գործիքները վերահսկելի մամուլի միջոցներն են և հատկապես հեռուստաընկերությունները, ապա հատկապես արմատական ընդդիմության հիմնական գործիքը համացանցն է՝ պաշտոնական կայքերով ու սոցիալական ցանցերում նրա ներկայացուցիչների ու համախոհների լայն տարածվածությամբ:

Մայիսյան ընտրություններին մասնակցող 9 քաղաքական ուժերից համացանցում ակտիվ են հատկապես երկուսը՝ ՀԱԿ-ը՝ իր համախոհ քաղաքացիական շրջանակներով, և «Ժառանգությունը»՝ ժամանակակից տեխնոլոգիաների մանիպուլյացիոն և քարոզչական նշանա-

կությունը հասկացող երիտասարդ ակտիվիստներով: Իշխանությունը ներկայացնող ուժերի՝ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի համար համացանցը և սոցիալական ցանցերը հիմնականում անհասցե հակաքարոզչության և քննադատություններին, մամուլի հրապարակումներին արագ արձագանքելու միջոց են:

## **Մոբիլիզացիոն գործառույթ**

2011թ. արաբական երկրներում տեղի ունեցած հեղափոխություններում, հասարակական հզոր շարժումների կազմակերպման ու ղեկավարման առումով սոցիալական ցանցերի ունեցած դերակատարությունից հետո այլևս հնարավոր չէ թերազնահատել վիրտուալ սոցիալական մեդիայի մոբիլիզացիոն գործառույթը:

Ընտրական գործընթացներում տեղի ունեցող զարգացումները, մանր ու մեծ, շրշափելի ու հարաբերական բոլոր խախտումները, օրինազանցությունները շատ արագ հայտնվում են ցանցերում և տարածվում անվերահսկելի ձևով, ինչն ինքնին, առանց լրացուցիչ մեկնաբանությունների, բացատրությունների ձևավորում է հանրային ընկալում ընտրությունների որակի, ընտրախախտումների ծավալների վերաբերյալ: Դրանք ունակ են դիմադրության մեծ ալիք առաջացնել՝ կիրառելով ցանցային իրազեկման և գործողությունների համաձայնեցման վիրտուալ մեխանիզմները՝ փոխակերպվելով փողոցային զանգվածային միջոցառումներ:

Ռուսաստանում անցած տարի հենց վիրտուալ մեդիայի և ցանցային հաղորդակցության հենքի վրա ծավալվեցին ազգայնամոլական արյունալի իրադարձությունները Մոսկվայի հրապարակներում: Ադրբեջանում հզոր հանրահավաքները, որոնք խեղդվեցին իշխանությունների ռեպրեսիվ գործողությունների արդյունքում, նախ կազմակերպվում ու «տաքացվում էին» հենց վիրտուալ ցանցային միջավայրում: Այս իրողությունը Հայաստանում հաշվի չառնել չեն կարող: Մանավանդ, որ փետրվարին Հրազդանի քաղաքապետի ընտրություններից անմիջապես հետո իշխանությունները ստիպված եղան բացատրություններ ներկայացնել ցանցերում հայտնված խայտառակ տեսանյութերի վերաբերյալ: Կոնկրետ ընտրությունների հետ կապված առաջին նման մոբիլիզացիոն դրսևորումն իրականացրեց «Հայաստանն առանց ընտրակեղծիքների» նախաձեռնությունը՝ կոչ անելով ընտրակեղծիքների դեմ իրենց սկսած պայքարին միանալ նաև Facebook-ի միջոցով:

Ընդհանրապես, ընտրակեղծիքների և այդ շրջանակում ընտրացուցակներում առկա հսկայական անճշտությունների, ընտրողների թվի չհիմնավորված ու անբացատրելի ուռճացման խնդիրն արդեն իսկ դարձել է ամենաքննարկվող թեման ցանցերում, և չի կարելի բացառել, որ դրանք նաև հասարակական նորանոր նախաձեռնությունների կհանգեցնեն:

Սակայն բլոգերների և սոցիալական ցանցերի հայաստանյան հանրույթների վարքագծի դիտարկումը ցույց է տալիս, որ վիրտուալ մեդիան չի ձևավորում համարժեք ընկալում ցանցերի մոբիլիզացիոն

նշանակության վերաբերյալ և դուրս չի գալիս տեղեկատվության տարածման ու ցանցային պարզունակ հաղորդակցության շրջանակից: Ցանցային ակտիվ հանրույթն ավելի շատ օրիգինալ երևալու, առավելագույնը բանավիճային թեմաներ առաջադրելու տեսանկյունից է գնահատվում, որի պատճառն առաջին հերթին այդ հանրության խիստ բևեռացվածությունն ու հատվածականությունն է:

Ներհասարակական բանավեճի կուլտուրայի բացակայությունը լիարժեքորեն դրսևորվում է նաև սոցիալական ցանցերում, որտեղ ավելի շատ հայիոյանք կա, քան ռացիոնալ քննարկում: Դրան նպաստում են վերջին շրջանում ակտիվացած այսպես կոչված կեղծ օգտատերերը, որոնց նպատակը, մեծ հաշվով, իրական ակտիվ հանրության մոբիլիզացման հնարավորությունները չեզոքացնելն է, արժեզրկելը: Այլ կերպ ասած՝ ընտրություններին ընդառաջ՝ ցանցերում շատ ավելի մանիպուլյացիոն երևույթներ են նկատելի, քան ընտրական գործընթացը վեբհսկելու գործնական նախաձեռնություններ:

## **Բազմազան, բայց ինտրիգային ու մակերեսային մամուլը**

Ի տարբերություն ՋԼՄ-ների այլ տեսակների՝ տպագիր մամուլը Հայաստանում չափից դուրս քաղաքականացված է: Թերթերը լրատվական դաշտում իրենց դիրքավորմամբ մոտավորապես արտացոլում են ուժերի այն հարաբերակցությունը, որն առկա է քաղաքական դաշտում: Այս իմաստով նրանք ոչ այնքան տեղեկացնելու, իրազեկելու գործառույթ են իրականացնում, որքան քարոզչական ճակատում քաղաքական գործընթացներին մասնակցելու:

Առանձին վերցրած՝ գրեթե որևէ պարբերականից հնարավոր չէ լիարժեք և ամբողջական պատկերացում կազմել ընտրական ամբողջ գործընթացի մասին, որովհետև հիմնականում տեղեկատվության նկատմամբ ընտրողական վերաբերմունք է ցուցաբերվում: Ըստ այդմ՝ շատ ավելի գործ ունենք թաքնված գովազդի ու հակագովազդի, համակրությունների ու հակակրությունների դրսևորումների հետ, քան տեղեկատվության:

Սա թելադրում է նաև ընթերցող-թերթ հարաբերությունների որոշակի կուլտուրա: Մարդիկ այս կամ այն թերթը կրպակից գնում են ոչ թե որքան հնարավոր է շատ ու որակյալ, համակողմանի տեղեկատվություն ստանալու, այլ ցանկալի, շատ հաճախ իրենց համոզմունքները հաստատող տեղեկատվություն ստանալու համար: Այսինքն՝ թերթերի ընթերցողների մի սովոր մասը հիմնականում արդեն իսկ կողմնորոշված քաղաքացիներն են:

Նախընտրական շրջանում կարելի է առանձնացնել տպագիր մամուլի մի քանի առանձնահատկություն: Մամուլի մի որոշակի հատված թաքնված իրականացնում է իշխանությունը կրող քաղաքական ուժերի, ավելի կոնկրետ և հաճախ՝ Հանրապետական կուսակցության քարոզչությունը: Առավել ակնհայտ դա դրսևորվում է «Հայոց աշխարհ» և «Իրավունք» պարբերականներում: Վերջինիս հստակ կողմնորոշումը պայմանավորված է ՍԻՄ նախագահ Հայկ Բաբուխանյանի՝ Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկվելու հանգամանքով: Թե՛ մեկը և թե՛ մյուսն ավելի շատ զբաղվում են հակաքարոզչությամբ՝ քննադատելով ու բացասական որակումներ տալով մրցակիցների գրեթե բոլոր նախաձեռնություններին: Թերթերից մի քանիսը գրեթե նույն նկատառումներով գործում են Հայ ազգային կոնգրեսի քարոզչության տիրույթում: Դրանք են՝ «Հայկական ժամանակ», «Չորրորդ ինքնիշխանություն», մասամբ՝ «Ժամանակ» օրաթերթերը: Թե՛ մեկ, թե՛ մյուս կողմին սատարող պարբերականները, կարելի է ասել, շատ ավելի քարոզչական թուղիկների տպավորություն են թողնում:

Առանձին «դասակարգ» են իրենց անկախ համարող մի քանի պարբերականներ, որոնք ձեռագրով, հետապնդած նպատակներով խիստ նման են իրար: Խոսքը «Հրապարակ», «Ժողովուրդ», «Հայացք» պարբերականների մասին է, որոնք փաստացի վերածվել են անաղբյուր տեղեկատվության «լաբորատորիայի»: Սրանք քաղաքական հստակ կողմնորոշումներ չունեն, հիմնական խնդիրը ինտրիգի ապա-

հովումն է: Այս յուրահատկության շնորհիվ նրանք որոշակի լսարան ունեն, այդ իսկ պատճառով նաև հետաքրքրություն են ներկայացնում ընտրություններին մասնակցող բոլոր ուժերի համար: Թե որքանով այս պարբերականները հավասարակշռություն կպահպանեն բուն քարոզչության շրջանում, կերևա առաջիկայում, սակայն չի կարելի չնկատել, որ նրանց հիմնական թիրախը մեծամասնական ընտրակարգով մասնակցող թեկնածուներն են և նրանց հետ կապված տեղեկատվությունը:

Անկախների մեկ այլ «դասակարգ» են ներկայացնում «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Առավոտ» և «168 ժամ» պարբերականները, որոնք փորձում են խաղալ ոչ միայն չափավոր օբյեկտիվության, այլև ընդգծված կոռեկտության սահմաններում: Առաջին երկուսն առայժմ լուսաբանում են հիմնականում ընտրությունների ընթացակարգային կողմը՝ ակնհայտորեն խուսափելով քարոզչությունից: Երկրորդների տեսադաշտը շատ ավելի լայն է, ընդգրկում է նաև ներկուսակցական ու միջկուսակցական հարաբերությունները, ընտրատարածքներում ու թեկնածուների շուրջ տեղի ունեցող գործընթացները: Սակայն, ի տարբերություն մյուսների՝ նրանք համեմատաբար ավելի խորքային մոտեցում են ցուցաբերում: Հատկանշական է, որ այս երկու պարբերականների ներկայացուցիչները, մի դեպքում՝ առանցքային լրագրողը, երկրորդի դեպքում՝ խմբագիրը, առաջադրվել են ընտրություններում և իրենց գործունեությունը խմբագրություններում կատարել են՝ թերթերին ազատ գործելու հնարավորություն թողնելով: Կոռեկտության սկզբունքը փորձում են պահպանել նաև «Երկիր» և «Օրակարգ» պարբերականները, սակայն նրանք ունեն քաղաքական նախասիրություններ ու քարոզչական առաջնայնություններ. առաջինի դեպքում՝ ընդգծված կերպով Հայ հեղափոխական դաշնակցությունն է, երկրորդի դեպքում՝ թաքնված՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը:

Այս ընտրություններում նկատելի է տպագիր մամուլը տեղեկատվական խայծերի համար օգտագործելու՝ ընտրապայքարին մասնակցող քաղաքական ուժերի միտումը: Դա դրսևորվել է առայժմ մեծամասնական ընտրատարածքներում թեկնածուներին առաջադրման և համամասնական սկզբների կազմերի հստակեցման, ինչպես նաև հրապարակվող պատվիրված սոցհարցումների միջոցով:

Սակայն, դրան զուգահեռ դեռևս նկատելի չէ մամուլը կոմպրոմատային պատերազմների դաշտի վերածելու՝ նախկինում գրեթե մշտապես արձանագրվող իրողությունը: Այնուամենայնիվ, փորձարկումների, հասարակական տրամադրությունների շոշափմանն ուղղված այս հնարքների կիրառումն է նաև պատճառներից մեկը, որ ի տարբերություն նախորդ ընտրությունների՝ այս անգամ տեղեկատվական աղբյուրներին հղում չպարունակող լուրերը թերթերում սկսել են գերակշռել, և որպես կանոն՝ դրանք շատ ավելի մեծ պահանջարկ են վայելում, որովհետև հիմնականում մեծ կամ փոքր սենսացիաներ են պարունակում:

Սա, իհարկե, թերթերն ավելի շատ բամբասանքների տարածման միջոցների է վերածում: Սակայն փաստը, որ տեղ գտնող նմանատիպ

լուրերում նշվող հանգամանքները հաճախ իրականություն են դառնում, թույլ է տալիս ասել, որ դրանք մեծամասամբ նպատակային կերպով շրջանառության մեջ դրվող տեղեկություններ են:

Պարբերականների այս «ձեռագիրը» պայմանավորված է նաև կուսակցական պաշտոնական լրահոսի գրեթե բացարձակ բացակայությամբ: Այս բացը լրագրողները փորձում են փոխլրացնել սեփական աղբյուրներից ճշտումներ անելով: Դա է պատճառը, որ կուսակցականների հետ անհատական զրույցներն ու հարցազրույցները, դրանց վրա արվող ընդհանրացումները, մեկնաբանությունները դարձել են խիստ տարածված: Դրանից, սակայն, ոչ թե տպագիր ՁԼՄ-ները կամ էլ ընթերցողներն են տուժում, այլ՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունները, որոնք այդպիսով չեն կարողանում վերահսկելի տեղեկատվական հոսքեր ապահովել և հաճախ ընկնում են անհեթեթ վիճակների մեջ ու փորձում խնդիրները հարթել քիչ տպավորություն թողնող ու անհամոզիչ բացատրություններով:

Այս ամենը երբեմն թույլ չի տալիս երկրորդականը զատել առաջնայինից, երբեմն էլ առանցքային ընտրական հետաքրքրություն ներկայացնող որոշ թեմաներ դուրս են մնում պարբերականների ուշադրությունից: Մասնավորապես՝ այդպես էլ լուրջ մասնագիտական վերլուծությունների չենթարկվեցին քաղաքական ուժերի նախընտրական լոզունգները: Ներկայացված ընտրացուցակները, որոնց առաջին 20-յակները կարելի է ինչ-որ տեղ ստվերային կամ պոտենցիալ կառավարությունների կազմեր համարել, կադրային պոտենցիալի գնահատման առումով դուրս մնացին լրատվամիջոցների ուշադրությունից հենց մակերեսային անդրադարձերի պատճառով:

Միանգամայն անտեսվել է քաղաքական ուժերի գաղափարական պոտենցիալի, ծրագրային մոտեցումների տիրույթը: Գրեթե ոչ մի լրագրողական հետազոտություն, վերլուծություն չի ներկայացվել այն մասին, թե որքանով են ընտրություններին մասնակցող, ներկայիս խորհրդարանում գործող կուսակցությունները հավատարիմ մնացել իրենց նախընտրական ծրագրերին, եղել հետևողական, ինչը նաև ընթերցողներին կողմնորոշվելու հնարավորություն կտար: Այս առումով ներկայիս մամուլը ավելի շատ մակերեսային, ֆորմալ ընկալման մակարդակով է մոտենում ընտրություններին:

## **Հեռուստաընկերությունների անաչառ «կողմնակալությունը»**

Ընտրարշավի անցած ընթացքի քիչ թե շատ հանդարտությունը նաև հայաստանյան հեռուստաընկերությունների իրականացրած տեղեկատվական-քարոզչական քաղաքականության հետևանք էր: Մեծ հաշվով, լուրջ էքսցեսներ չեղան. հեռուստաընկերությունները, հիմնականում պահպանելով սահմանված կանոնները, ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին քարոզչության համար գրեթե հավասարաչափ եթերաժամանակ տրամադրեցին: Թե վերջիններս որքանով կարողացան այս ռեսուրսն օգտագործել՝ ոչ այնքան կոնկրետ հեռուստաընկերություններից էր կախված, որքան քաղաքական ուժերի ֆինանսական ու ստեղծագործական հնարավորություններից:

Ընտրություններին մասնակցող հետնապահ քաղաքական ուժերը՝ ՀԿԿ-ն, ՀԴԿ-ն և «Միավորված հայերը», ի տարբերություն մյուսների, օգտվեցին միայն օրենքով իրենց հասանելի քաղաքական գովազդի անվճար եթերաժամանակից՝ դա հիմնականում պայմանավորելով ունեցած սուղ միջոցներով:

Ի տարբերություն նախորդ համապետական ընտրությունների, որոնց ժամանակ հեռուստաընկերություններն առաջնորդվում էին հիմնականում բացառման կամ հստակ տարբերակման սկզբունքով, ինչով անհավասար պայմաններ էին ստեղծում մրցակցության համար, այս անգամ գործում էին նախապատվության սկզբունքով: Այն քաղաքական ուժերը՝ ԲՀԿ, ՀՅԴ, որպես իշխանություն՝ ՀԿԿ-ն, որոնք իրենց ուղղակի կամ անուղղակի ազդեցության ներքո ունեին գործող հեռուստաընկերություններ՝ համապատասխանաբար «Կենտրոն», «Երկիր Մեդիա», Հանրային հեռուստաընկերություն, դրանցով թե՛ ծավալային և թե՛ բովանդակային առումով մի փոքր ավելի լավ ներկայացվեցին:

Նկատելի էր այս ուժերին ավելի համակողմանի «մատուցելու» ձգտումը, որը, սակայն, ընդհանուր պատկերի մեջ այնքան էլ ընդգծված չէր: Չնայած դրան՝ Հանրապետական կուսակցության կողմից իրականացված՝ ՀՀ նախագահի մարզային աշխատանքային հանդիպումները կուսակցական ընտրարշավային այցելությունների հետ համատեղելը ՀՀԿ-ին ավելի շատ ժամանակ տրամադրելու հնարավորություն էր տալիս, որովհետև նախընտրական բնույթի հանդիպումները ևս ՀՀ նախագահին էր միանձնյա անցկացնում: Իսկ դա բավականին նուրբ մշակված, թաքնված քարոզչություն էր: Նույնը կարելի էր ասել նաև «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամի՝ հատկապես գյուղատնտեսական նշանակության բարեգործական ակցիաների վերաբերյալ անդրադարձերի մասին:

Չնայած ԲՀԿ-ն հայտարարում է, որ այդ հիմնադրամի հետ կապ չունի, սակայն դա ընդամենը կուսակցության կողմից բարեգործությանը չզբաղվելու օրենսդրական արգելքի ֆորմալ կողմը պահելու նպատակ է հետապնդում: Բոլոր այդ ակցիաներն ուղղակիորեն կապվում են ԲՀԿ-ի հետ թեկուզ այն պատճառով, որ հիմնադրամի ղեկա-

վարն այդ կուսակցության նախագահն է, որը ևս անձամբ է իրականացնում ԲՀԿ-ի քարոզարշավն ու հանրային հանդիպումները:

Հեռուստաընկերությունների գործունեության ամենադրական կողմերից մեկն այն էր, որ զերծ էին մնում հակաքարոզչությունից: Եթերը զգալիորեն բացվել էր ընդդիմադիր ուժերի համար, որոնք բավականաչափ հնարավորություն ունեին ոչ լրատվական թողարկումների կամ քաղաքական գովազդների, այսինքն՝ հեռուստատեսային այլ ձևաչափերով հաղորդումներին մասնակցության միջոցով հանրությանը ներկայացնելու իրենց մոտեցումներն ու ծրագրերը տարբեր հարցերի վերաբերյալ: Միաժամանակ պահպանելով կոռեկտության չգրված օրենքները՝ հեռուստաընկերություններն իրենք էին ձգտում զերծ մնալ բացասական երանգավորում, որակումներ, սուր քննադատություն պարունակող մտքերից ու ձևակերպումներից՝ կենտրոնանալով զուտ փաստերի, բայց հատկապես նախընտրական ելույթներում հնչած մտքերի վրա: Այսպիսով նրանք զերծ էին մնում ընտրություններին մասնակցող ուժերի վերաբերյալ ուղղակի ձևով հստակ բացասական կարծիք ձևավորելուց՝ հնարավորություն տալով ընտրողին սեփական դատողությունները կատարել:

Եվ չնայած այս դրական տեղաշարժին՝ հեռուստաընկերությունների գործունեությունն առանձնացավ նաև բացասական երանգներով:

1. Էլեկտրոնային լրատվամիջոցները հերթական անգամ չկարողացան դառնալ քաղաքական երկխոսությունների հարթակ և նախաձեռնող: Չհաշված որոշ բացառություններ՝ չփորձեցին ձևավորել քաղաքակիրթ բանավեճի մշակույթ: Այս ընտրություններին ևս եթերից բացակայում էին բանավեճերը, որը երկու պատճառ ուներ: Մի դեպքում քաղաքական ուժերը, մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող անհատներն իրենք էին խուսափում բանավեճից, թեև ընտրարշավի մեկնարկին հատկապես տրամագծորեն հակառակ ճամբարներում գտնվող ՀՀԿ-ի ու ՀԱԿ-ի ներկայացուցիչները միմյանց բանավեճի ձեռնոցներ էին նետում: Դրանցից, սակայն, կայացավ ընդամենը մեկը՝ Երևանի թիվ 2 ընտրատարածքում առաջադրված երկու թեկնածուները՝ Սամվել Ֆարմանյանը և Վլադիմիր Կարապետյանը, հրապարակային բանավեճի մեջ մտան «Արմնյուզ» հ/ը եթերով: Ու չնայած այն բավականին հեռու էր քաղաքակիրթ բանավեճ համարվելուց, սակայն գոնե փորձ էր: Մինչդեռ բանավեճի մյուս նախաձեռնությունները տապալվեցին իշխանության օլիգարխ թեկնածուների կողմից, որոնք պարզապես հրաժարվեցին իրենց տված նախնական համաձայնություններից:

Հետաքրքրականն այն էր, սակայն, որ բանավեճ նախաձեռնելու ցանկություն չհայտնեցին ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից և ոչ մեկը՝ բացառությամբ, թերևս, ՀՅԴ-ի: Իշխող Հանրապետական կուսակցությունն առհասարակ հենց սկզբից որդեգրեց բանավեճերից հրաժարվելու քաղաքական կեցվածք, չնայած իրենց հավատալու պատճառները ներկայացնելու համար դրանից լավ ձևաչափ չէր կարող լինել: Իրականում սա պատասխանատվությունից խուսափելու, ընտրողների առջև հաշվետու չլինելու բացորոշ պահվածք էր:

Մյուս դեպքում հեռուստաընկերություններն իրենք նախաձեռնող չեղան: Բացառությամբ «Երկիր Մեդիա», «Արմնյուզ» և ինչ-որ չափով նաև «Կենտրոն» հեռուստաընկերությունների՝ մնացածները բանավիճային հաղորդաշարի որևէ նոր ձեռաչափ չստեղծեցին: Դրանց առկայության դեպքում քաղաքական ուժերը գուցե պարտադրված կլինեին մասնակցելու հրավիրվող բանավեճերին՝ թեկուզ մյուսներից ետ չմնալու համար:

2. Ոչ հեռուստատեսությամբ եթեր գնացող քաղաքական գովազդի, ոչ էլ որևէ այլ ձևաչափով քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերը չհանրայնացվեցին: Դրանում թերացան թե՛ կուսակցությունները, թե՛ հեռուստաընկերությունները: Լրատվական թողարկումներում ուշադրությունը կենտրոնացած էր հանրային հանդիպումների և ելույթների վրա, որոնք շատ բան չէին կարող տալ՝ թեկուզ ընդհանրական ու որոշ դեպքերում զգացմունքային լինելու պատճառով: Հեռուստաընկերությունները դա կարող էին ապահովել հենց բանավիճային հաղորդաշարերի միջոցով, որոնք, ինչպես նշեցինք, պարզապես բացակայում էին եթերից:

Արդյունքում ընտրողը հայրենի հեռուստաեթերից հասցրեց միայն իմանալ, թե որ կուսակցությունը տվյալ օրը որ մարզում, որ քաղաքում է հանդիպումներ ունեցել և մոտավորապես ինչի մասին է խոսել: Եվ քանի որ բոլորը հիմնականում նույն տոնայնությամբ նույն բաների մասին էին խոսում, միայն հեռուստաեթերին հետևելով՝ ընտրողը կողմնորոշվելու գրեթե ոչ մի հնարավորություն չունեցավ, մասնավոր եթե նկատի առնենք, որ քաղաքական ուժերն իրենք էլ շեշտադրումը կատարում էին ավելի շատ վճռական, քան համոզիչ երևալու վրա: Այս ընդհանուր մոտեցումը թույլ չտվեց հեռուստաընկերություններին փորձել նպաստել նախընտրական ծրագրերի նկատմամբ հանրային պահանջարկի ձևավորմանը:

3. Երկու հեռուստաընկերություններ՝ «Արմնյուզը» և «Շանթը», առանձնացան սոցիալական հետազոտություններ պատվիրելով ու դրանց արդյունքները հրապարակելով: Արտաքուստ դա արվում էր լրիվ անմեղ՝ հանրային տրամադրությունների դինամիկան ներկայացնելու նպատակով: Սակայն հանրությանն այդպես էլ անհայտ մնաց, թե բավականին սուղ միջոցներ ունեցող այս հեռուստաընկերություններն ինչպես կարողացան նման թանկարժեք հետազոտություններ պատվիրել:

Հաշվի առնելով նաև ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի՝ ներկայացված վարկանիշների խիստ կասկածելիությունը, հանրային տրամադրությունները և վարկանիշները բնորոշող հիմնական տվյալների որոշ անհամատեղելիությունը՝ հեռուստաընկերությունների այս նախաձեռնությունն ավելի շատ արդյունքների օբյեկտիվության հետ կապված կասկածներ առաջացրեց, հատկապես երբ պարզ դարձավ, որ միջազգային քիչ թե շատ հեղինակավոր սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոններն իրենց այս հարցումներն արել էին տեղական մասնագիտացված, բայց հեղինակազրկված կազմակերպությունների ու սոցիոլոգների միջոցով:

Հեռուստաընկերությունների միջոցով նման հարցումների անցկացումը պարզապես օբյեկտիվության պատրանք ստեղծելու նպատակ էր հետապնդում՝ նրանց դարձնելով ընտրողներին դեպի ՀՀ-ն տրամադրելու քարոզչական գործիք: Սա աշխատանք էր ոչ թե հանրային գիտակցության, այլ՝ ենթագիտակցության հետ: Թեև իրենց լրատվական քաղաքականությամբ այս հեռուստաընկերություններն ընդգծված անկողմնակալություն էին հանդես բերում, սակայն ընտրողներին սկսեցին կողմնորոշել քաղաքական տեխնոլոգիաների՝ տվյալ դեպքում սոցիալարցումների միջոցով: Սա, իհարկե, քարոզչության բոլորովին այլ, ավելի պրոֆեսիոնալ մակարդակ է: Թե որքանով է բարոյական ու որքանով է տեղավորվում հեռուստաընկերությունների գործառույթների ու առաքելության համատեքստում, քննարկելու հարց է:

## **Մամուլի քարոզարշավը կամ քարոզարշավի մամուլը**

2012-ի խորհրդարանական ընտրությունները մամուլի համար տարբերվեցին առաջին հերթին նրանով, որ վերջինս ուղղակիորեն սկսեց մասնակցել ընտրությանը: Մի քանի լրագրողներ՝ հիմնականում հենց տպագիր մամուլի դաշտից, ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրին՝ մի մասը համամասնական, մյուս մասը՝ մեծամասնական ընտրակարգով: Այս հանգամանքը, սակայն, մեծ ազդեցություն չունեցավ ընտրարշավում մամուլի կողմնորոշումների կամ լուսաբանումների բնույթի վրա, որովհետև ի սկզբանե պարզ դարձավ, որ նրանց նկատմամբ լրագրողական համքարության ուղղորդված աջակցությունը մամուլի միջոցով չի դրսևորվելու:

Ընդհանրապես ընտրություններին լրագրողների՝ հենց լրագրողի իմիջով մասնակցությունը մասնագիտական էթիկայի հետ կապված որոշակի հիմնախնդիրներ հարուցեց, որոնք դեռ վերլուծության պետք է ենթարկվեն: Օրինակ՝ որքանով է ճիշտ լրագրողի՝ պատգամավորության թեկնածու առաջադրման դեպքում նրա մասնագիտական գործունեության շարունակումը ընտրարշավի ընթացքում, արդյոք դա նրան մրցակցային որոշակի առավելությամբ չի օժտում, կամ հասարակական դիրքը մասնավոր շահերին ծառայեցնելու հնարավորություն չի ընձեռում: Երբ պարբերական մամուլը դիտարկում ենք քարոզչության գործառույթի պրիզմայով, լրագրողական օբյեկտիվության պահպանման խնդիրն առհասարակ ավելորդ է դառնում:

Բայցևայնպես, լրագրող-թեկնածուների առկայությունը ընտրապայքարում որոշակի ինտրիգ մտցրեց: Ի տարբերություն համամասնական ընտրակարգի կամ քաղաքական ուժերի մրցակցության՝ մեծամասնական ընտրակարգի նկատմամբ այս անգամ մամուլն այդքան էլ բժախնդիր մոտեցում չէր ցուցաբերում: Մի կողմից դա պայմանավորված էր այս դաշտում ընտրարշավի համեմատաբար կոռեկտ ընթացքով՝ չհաշված ընտրարշավի սկզբում արձանագրված բռնությունների երկու-երեք դեպքերը թեկնածուների կամ նրանց մերժավորների նկատմամբ, որոնք լայնորեն լուսաբանվեցին մամուլում: Մեծամասնական ընտրակարգում հիմնական ինտրիգն ապահովեց հենց լրագրող-թեկնածուների ագրեսիվ քարոզարշավը, որը հիմնականում պտտվում էր բանավեճերի հրավիրման, դրանցից մրցակիցների հրաժարվելու տրագիկոմեդիկ դրվագների շուրջ: Սակայն, ընդհանուր առմամբ, նկատելի էր, որ մամուլը մեծամասնական ընտրակարգը որոշակիորեն առանձնացրել էր ընդհանուր քաղաքական մթնոլորտից և առանձնապես ցանկություն չունեցավ խորանալու առանձին ընտրատարածքների ներքին խոհանոցների մեջ: Այնպիսի տպավորություն էր, կարծես խոսքը ոչ թե համապետական ընտրությունների մասին է, այլ տեղական ինքնակառավարման մարմինների:

Բուն ընտրարշավը մամուլում լուսաբանվեց՝ ելնելով քաղաքական նախասիրություններից ու հակվածություններից, այսինքն՝ այնքանով, որքանով անհրաժեշտ էր այս կամ այն կուսակցության կամ դաշինքի

քարոզչության իրականացման համար: Այսուհանդերձ, ընտրարշավի ընթացքում ընտրախախտումների դեմ միջկուսակցական շտաբի ձևավորման ու դրանից ածանցյալ երևույթների ու զարգացումների ընդհանուր ֆոնին մամուլում արձանագրվեցին համարժեք վերափոխումներ: Ողջ մամուլը, կարելի է ասել, սկսեց տեղավորվել ստեղծված ԲՀԿ-ՀՅԴ-ՀԱԿ տանդեմի աջ ու ձախ կողմերում: Եվ մամուլը գրեթե ամբողջությամբ մտավ քաղաքական այս վերադասավորումների շուրջ, դրանից բխող ինտրիգների հյուսման ու հրահրման, փոխադարձ պրովոկացիաների լաբիրինթոս՝ հիմնական շեշտադրումները տեղափոխելով կեղծ ու իրական ընդդիմությունների ու մերկացումների հանրածանոթ ու ոչինչ չտվող հարթություն: Փոխվեցին հակաքարոզչության թիրախները: Անգամ այն ուժերը, որոնք նախկինում ենթարկվում էին որոշ թերթերի սուր քննադատությանը, վերջիններս կողմից սկսեցին ավելի լոյալ վերաբերմունքի արժանանալ: Եվ այս իրողությունը հստակ ցույց տվեց, թե մամուլը որքան մեծ կախվածության մեջ է քաղաքական շրջանակներից:

Մամուլն ավելի ընկալունակ էր ընտրարշավին հարող, իրենց մեջ անձնական, խմբակային կամ քաղաքական ինտրիգներ պարունակող երևույթների նկատմամբ, քան ընտրողների համար շատ ավելի լուրջ նշանակություն ունեցող խնդիրների, մասնավորապես՝ ընտրարշավի բովանդակության, կուսակցությունների ու թեկնածուների ծրագրերի, նրանց անցած ճանապարհի, խոստումների իրատեսականության, մարտավարությունների: Այդպես էլ ողջ քարոզարշավի ժամանակ ըննության չառնվեց հարցը, թե ժամկետը սպառող խորհրդարանում ներկայացված այն ուժերը, որոնք նորից են ընտրություններին մասնակցում, որքանով են իրենց հնարավորությունների սահմաններում կարողացել իրականացնել նախկինում ներկայացրած ծրագրերը, որքանով են հավատարիմ մնացել դրանց գաղափարաբանությանն ու դրույթներին: Մինչդեռ նման դիտարկումներն ու վերլուծությունները կարող էին էապես ազդել ընտրողների կողմնորոշման և այս կամ այն ուժի նկատմամբ իրենց վերաբերմունքը ճշտելու վրա:

Չնայած բոլոր քաղաքական ուժերն էլ ներկայացել էին սեփական ծրագրերով՝ քարոզարշավի ընթացքում մամուլն առհասարակ դրանց չանդրադարձավ: Բացառություն էր, թերևս, «Երկիր» օրաթերթը, որը երկու-երեք շաբաթ գրեթե ամեն օր կատարում էր ծրագրերի թեմատիկ հպանցիկ համեմատական դիտարկում, որը, սակայն, շատ ավելի արվում էր ՀՅԴ-ի ծրագրի առավելություններն ընդգծելու նպատակով: Բոլոր դեպքերում, որքան էլ դա «Երկիրի» քարոզչական քաղաքականության մաս էր կազմում, գոնե միջանկյալ հնարավորություն էր տալիս ծանոթանալու այս կամ այն ոլորտի հետ կապված՝ կուսակցությունների մոտեցումներին, այն դեպքում, երբ այդ ծրագրերը մամուլում չհրապարակվեցին:

Նկատելի էր, սակայն, մամուլի առանձնահատուկ վերաբերմունքը պատգամավորության թեկնածուների հրապարակած գույքի և եկամուտների հայտարարագրերի նկատմամբ, մի բան, որ նախկինում երբեք նման աժիոտաժ չէր առաջացրել: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ, ի տարբերություն նախկինի, այս անգամ

հանրային ուշադրության կենտրոնում առավել շատ գտնվող թեկնածուներն առանձնապես ջանք չէին գործադրել թաքցնելու ունեցվածքը: Եվ չնայած փաստերի արձանագրմանը՝ ընդհանուր առմամբ ներկայացված տվյալները մամուլի կողմից խորքային վերլուծությունների չենթարկվեցին: Բացառիկ էին այն դեպքերը, երբ լրատվամիջոցները փորձեցին պարզել առանձին թեկնածուների ներկայացրած՝ աներևակայելի չափերի հասնող եկամուտների ու գույքի ծագման աղբյուրները, այն դեպքում, երբ նրանցից շատերը պետական պաշտոնյաներ էին և, ըստ տրամաբանության ու իրավական սահմանափակումների, նման կարողությունների չէին կարող տիրապետել: Մամուլի նման կրավորական վերաբերմունքը հանրային գիտակցության մեջ ամրապնդում է այդ ամենն իբրև օրինաչափություն ընդունելու մտայնությունը:

Այս ընթացքում մամուլի ուշադրության կենտրոնում էր նաև ընտրախախտումների հնարավորության, ընտրությունների արդյունքների հնարավոր կեղծման թեման, որը հիմնականում սահմանափակվում էր ընտրակաշառքների բաժանման մասին ահազանգերի և ընտրացուցակներում տեղ գտնող անճշտությունների մասին առանձին հրապարակումներով: Բացի այն, որ ընտրակաշառքների մասին ահազանգերը, դրանց հետ կապված մեկնաբանությունները սովորաբար հրապարակվում էին առանց կոնկրետ փաստերի, ինչը առնվազն կասկածի տակ էր դնում տեղեկատվության արժանահավատությունը, ցուցակներում անճշտությունների մասին հրապարակումները եւս խիստ անհամաչափ էին այն պատկերին, որ ներկայացնում էին այսպես կոչված ընդդիմադիր կամ չեզոք մամուլի ներկայացուցիչները, որոնց հակադրվում էին իշխանության մատուցներում գործող թերթերն այս խնդիրների նկատմամբ իրենց անբնական, կեղծ անտարբերությամբ, դրանց մասին չխոսելու անթաքույց կեցվածքով:

Խնդիրը ցուցակներում առկա վիճակի չափազանցության մեջ չէ, իհարկե, այլ տեղեկատվության և դրանց աղբյուրների սակավության: Երբ հարցը կրկին տեղափոխում ենք հայաստանյան ներկայիս մամուլի համար ամենաբնական վիճակի՝ քարոզչության, այն էլ՝ նախընտրական քարոզչության հարթություն, պարզ է դառնում, որ ներկայացվող փաստերն իսկապես քիչ էին կամ անհամոզիչ՝ հրապարակված ցուցակների և ընտրողների իրական թվի ահռելի տարբերությունը հիմնավորված ներկայացնելու համար: Եվ դրա պատճառով իշխանությունը կարողացավ մանևրելով խուսափել լուրջ բացահայտումներից:

Այնպես որ, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում հրապարակախոսական, վերլուծական միտքը դեռևս մամուլում է կարողանում իրացվել, զուտ ընտրական գործընթացի կտրվածքով մամուլը դուրս չեկավ այն մակերեսայնության ու ինտրիգայնության մակարդակից, որում գտնվում էր ընտրարշավի մեկնարկին:

# Նախընտրական քարոզչության վիրտուալ երեսը

Ընտրություններին մասնակցող քաղաքական 9 ուժերից 7-ն ունեն պաշտոնական կայքէջեր, որոնք ընտրություններին ընդառաջ հիմնականում թարմացվել են թե՛ արտաքնապես և թե՛ ինչ-որ չափով բովանդակային առումով: Սակայն նրանց ընդամենը մի մասն է, որ պաշտոնական կայքէջերը փորձել է օգտագործել քարոզչական նպատակներով: Այս իմաստով աչքի են ընկնում հատկապես «Ժառանգությունը» և Հայ ազգային կոնգրեսը, որոնց կայքէջեր այցելող ընտրողները կարող են գրեթե ամբողջական պատկերացում կազմել թե՛ այս ուժերի նախընտրական ծրագրի, թե՛ ներկայացրած թեկնածուների և թե՛ առհասարակ ընտրարշավի ընթացքի վերաբերյալ:

ԲՀԿ-ն և ՕԵԿ-ն այս ռեսուրսը մասնակիորեն են օգտագործել՝ կայքերում զետեղելով միայն քարոզարշավին առնչվող ամենահիմնական ատրիբուտները: Չնայած իրականացրած մասշտաբային և շատ էֆեկտիվ քարոզարշավին՝ ՀՅԴ-ի պաշտոնական կայքէջը գրեթե չի արտացոլել այդ ամենը: Առհասարակ, չնայած առանձին վերցրած կուսակցականների կողմից ինտերնետային, ցանցային ռեսուրսների այս կամ այն չափով կիրառմանը՝ ՀՅԴ-ն վիրտուալ գործիքակազմն օգտագործելու իմաստով չափից դուրս պահպանողական է եղել: Նույնը կարելի է ասել նաև ՀՀԿ-ի վերաբերյալ: Վերջինիս առանձնահատկությունն այն է, սակայն, որ կուսակցության պաշտոնական կայքէջն օգտագործվում է նաև թաքնված քարոզչության համար: Այստեղ ոչ միայն զուտ կուսակցական, այլև անհասկանալիորեն երկրի նախագահին կամ վարչապետին առնչվող պաշտոնական լրահոսն է զետեղվում: Ի դեպ, այս մոտեցումն ընկած էր նաև ՀՀԿ-ի նախընտրական քարոզարշավի կառուցվածքի և մեթոդաբանության հիմքում:

Մեծ հաշվով, սակայն, այցելությունների մասով կուսակցությունների պաշտոնական կայքերն այդքան էլ հետաքրքրություն չեն ներկայացնում: Կուսակցությունների նկատմամբ հետաքրքրությունն ավելի մեծ է սոցիալական ցանցերում ու տարատեսակ վիրտուալ ֆորումներում: Խնդիրն այն է, սակայն, որ սոցցանցերում ներգրավված կոնտինգենտը կազմում են հասարակության առավել քաղաքականացված ու քաղաքացիականացված և, ըստ էության, իրենց կայուն համոզմունքներն ունեցող անհատները, և զուտ էֆեկտիվության տեսանկյունից այս ճակատում քաղաքական ուժերի համար քարոզչության իրականացումը լուրջ ազդեցություն չէր կարող ունենալ, ինչով և բացատրվում է վիրտուալ մեդիաաշխարհում նրանց ոչ նախաձեռնողականությունն ու նկատելի պասիվությունը:

Գուցե դա է պատճառը, որ միկրոբլոգները, Facebook-ը ընտրարշավի ընթացքում այդպես էլ քարոզչության իրականացման լայնամասշտաբ հարթակի չվերածվեցին, կուսակցությունները ջանք չգործադրեցին ցանցերում ձևավորելու իրենց խմբը: Ինտերնետը և հատկապես ցանցերն ավելի շատ օգտագործվում էին քաղաքական ուժերի առանձին ներկայացուցիչների կողմից՝ որպես կուսակցությունների գործո-

դրությունների, կայացրած քաղաքական որոշումների պատճառները, հիմնավորվածությունը հրապարակային-անհատական կոնտակտների միջոցով ներկայացնելու, բացատրելու, պաշտպանելու լավագույն հարթակ:

Հետևաբար, որքանով կուսակցությունների առանձին ներկայացուցիչներ ճանաչելի ու ազդեցիկ են ցանցային հաղորդակցության միջավայրում, այնքանով ներկայանալի է տվյալ կուսակցությունը: Այս իմաստով վիրտուալ հաղորդակցության հնարավորությունները լավագույնս օգտագործել են «Ժառանգություն»-ը և «ՀԱԿ»-ը՝ իրենց ֆեյսբուքյան համայնքների, համախոհների, մոլեռանդների բազմությամբ, որոնք, ունենալով որոշակի աշխարհայացքային ընդհանրություններ և քաղաքական հայացքների տարբերություններ, երբեմն իրենց դիպուկ մեկնաբանություններով, սուր քննարկումներով կարողացել են հետաքրքիր ներկայանակ ստեղծել:

Ի տարբերություն կուսակցությունների՝ ցանցային ռեսուրսներից առավելապես օգտվել են մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները՝ ստեղծելով իրենց անձնական-քարոզչական էջերը և դրանք փորձելով ծառայեցնել իրենց իմիջի ձևավորմանը: Հատկապես այժի էին ընկնում Սաթիկ Սեյրանյանի, Սամվել Ֆարմանյանի, Վլադիմիր Կարապետյանի, Գոհար Վեգիլյանի, Վահան Կարապետյանի, Գարեգին Նուշիկյանի և մի քանի այլ թեկնածուների՝ PR տեսանկյունից հետաքրքրաշարժ էջերը:

Վիրտուալ մեդիան լավագույնս օգտագործել են այն անհատները, ովքեր, փաստորեն, հասկանում էին բազմաձև տեղեկատվության և դրա փոխանակման այլընտրանքային միջոցների կարևորությունը հանրային գիտակցության ուղղորդման, մանիպուլյացիաների առումով: Երբեմն, իհարկե, դա հանգեցնում էր չափի զգացողության կորստի, ինչպես, օրինակ, Սամվել Ֆարմանյանի և նրա գերակտիվ թիմակիցների պարագայում: Բայց որքան անհասկանալի էր քաղաքական ուժերի նկատելի անտարբերությունը ցանցերի ռեսուրսների նկատմամբ, նույնքան էլ չափազանցված էր մեծամասնական թեկնածուների նման ակտիվությունը՝ հաշվի առնելով, որ այս միջավայրում նրանք կարող էին աշխատել միայն իրենց պոտենցիալ ընտրազանգվածի շատ փոքր մասի հետ:

Այս ամենով հանդերձ՝ քարոզչության տեսանկյունից հայաստանյան վիրտուալ իրականությունը դրսևորվեց նաև իր բացասական կողմերով: Նախ՝ այդպես էլ որևէ քաղաքական ուժ կամ առանձին թեկնածու չկարողացավ օգտագործել ցանցային հաղորդակցության տիրույթի մոբիլիզացիոն պոտենցիալը, որի մանիպուլյատիվ էֆեկտը բազմապատիկ ավելի մեծ կարող էր լինել:

Հաղորդակցությունը դուրս չեկավ տեղեկատվության փոխանակման պարզունակ մակարդակից և չվերածվեց որոշակի զաղափարների շուրջ համախմբումների: Իրականում, սակայն, դրա անհրաժեշտությունն առկա էր առնվազն ընտրակեղծիքների դեմ համահասարակական պայքար նախաձեռնելու մասով՝ հաշվի առնելով ընտրացուցակներում առկա անճշտությունների քանակը, որոնք բացահայտելու համար անհրաժեշտ էր գոնե ակտիվ քաղաքացիների կոնսոլիդացված

աշխատանք հենց ընտրացուցակների հետ, ինչպես նաև՝ այս հարցի քաղաքականացումը:

Հայաստանյան հասարակական-քաղաքական հարաբերություններում քաղաքակիրթ երկխոսության և բանավեճի անտիմշակույթն իր ողջ շուքով դրսևորվեց հենց վիրտուալ հաղորդակցության տարածքում՝ որոշ դեպքերում հանգելով ընդհուպ գոեհիկ դրսևորումների: Քաղաքական հարաբերությունների անձնավորված երանգավորումները, վիրավորական արտահայտություններով ուղեկցումները, անհանդուրժողականության տարրերն ու շփումներում երբեմն փոխադարձ տարրական հարգանքի բացակայությունը ֆեյսբուքյան իրականությանը բնորոշ երևույթներ են, որոնք ավելի խորն արտահայտվեցին այս նախընտրական արշավի ընթացքում:

Սկզբից դա հիմնականում ընթանում էր ՀՀԿ-ԲՀԿ երիտասարդ քաղաքական գործիչների «սրամտությունների» դաշտում, երբ օրինակ, ՀՀԿ քաղխորհրդի անդամ, ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը և ԲՀԿ-ական պատգամավոր Վահե Էնֆիաջյանը փորձում էին իրար սևացնելու գործում միմյանց գերազանցել հետաքրքիր ձևակերպումներով, իսկ հետագայում էստաֆետը հանձնեցին նույն ընտրատարածքում մրցակցող Սամվել Ֆարմանյանին և Վլադիմիր Կարապետյանին, որոնք փորձեցին չխախտել կոռեկտության սահմանները: Ավելի ուշ դա տեղավորվեց նաև այսպես կոչված հակաժառանգական տիրույթ, երբ այս կուսակցությունը դուրս եկավ ընտրակեղծիքների դեմ պայքարի միջկուսակցական շտաբից և իր դեմ տրամադրեց որոշակի համոզմունքներ եւ կուսակցությունից հակառակ սպասելիքներ ունեցող շրջանակների հսկայական զանգվածի:

Վիրտուալ մեդիայի հնարավորություններն անսպառ են հատկապես այն պատճառով, որ այստեղ տեղեկատվության պատասխանատվության խնդիրը խորքային չէ, իսկ ինֆորմացիայի աղբյուրների անհասցեականության շահագործումը հնարավոր է լինում դարձնել պրովոկատիվ մանիպուլյացիաների գործիք: «Ռեզնում» գործակալության կողմից հրապարակված տեղեկատվական խայծը՝ «Ժառանգություն» կուսակցության լիդեր Ռաֆֆի Հովհաննիսյանի և «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավար Իսախանյանի Բոքոբեյանի՝ Մեծ Բրիտանիայում թուրք դիվանագետների հետ հանդիպման և ինչ-որ սեպարատ պայմանավորվածություններ ձեռք բերելու մասին, հենց այդ շարքից էր:

Հանրությունն այն կով չտվեց միայն այն պատճառով, որ շատ հապճեպ պատրաստված լինելու պատճառով շատ արագ բացահայտվեց դրա արհեստականությունը և հստակ միտումնավորությունը: Սակայն տեղեկատվական այս գրոհը կարող էր հաջողություն ունենալ, որովհետև գայթակղիչ լուրը արագորեն սկսել էր տարածվել սոցցանցերի միջոցով՝ տեղեկատվության աղբյուրները չճշտելուն սովոր օգտատերերի օգնությամբ: Սա սև PR-ի դասական օրինակ էր՝ հիմնված երկու ղեկավարների, իսկ ընդհանուր առմամբ՝ ողջ «Ժառանգություն» կուսակցությանը վարկաբեկելու մեթոդաբանության վրա:

Այս իմաստով համացանցում և վիրտուալ տեղեկատվության ու հաղորդակցության միջավայրում տեղի է ունենում հայաստանյան տպա-

գիր մամուլին բնորոշ որոշ բացասական երևույթների առավել բյուրեղացման, դրանց իրացման, դրսևորման միջոցների կատարելագործման գործընթաց:

Ինչ վերաբերում է տեղեկատվա-վերլուծական կայքերին, որոնք անդրադառնում էին ընտրարշավին, ապա զուտ տեղեկատվության բովանդակության, մեսիջների ուղղվածությունների առումով դրանք էականորեն չէին տարբերվում մամուլից, որովհետև ինչպես մամուլը, ինտերնետային տեղեկատվական կայքերը ևս ավելի շատ կենտրոնանում էին ինտրիգների վրա՝ խորամուխ չլինելով իրադարձությունների, զարգացումների ներքին պատճառահետևանքային տրամաբանական կապերի մեջ:

**Violence,  
intimidation and  
legal cases  
against journalists  
and the media  
in Armenia  
2012**

cases and analysis



Investigative  
Journalists  
NGO

Yerevan 2012

# CONTENT

<b>PREFACE</b>	169
<b>Media Freedom in Armenia</b>	170
<b>PART I</b>	
<b>JOURNALISTS AND THE MEDIA IN THE COURTS</b>	178
Courts Now Taking a More Balanced Approach Re: Slander Compensatory Damages Against the Media	179
The Decision of the Court of Cassation Definitely Restricts the Activities of the Press	181
Court Found No Premeditation on the Part of Hraparak Newspaper	183
Cassation Court Sets Precedent with <i>Zhamanak</i> Newspaper Case	187
Glendale Hills v <i>Zhamanak</i> : 200,000 AMD in Slander Damages	189
Hayk Baboukhanyan Loses: Doesn't File Slander Suit Within Deadline	192
Lernapat Village Mayor Loses in Cassation Court	196
Court Awards 200,000 AMD to Regional Governor in Compensation for Slandered Dignity	198
Court Finds in Favor of Police Chief	201
Construction Company Sues Ijevan TV and Reporter for 3.2 Million Each	203
<i>168 Zham</i> Newspaper Issues a Retraction	205
Son of Former Principal Loses Slander Case against Reporter	206
Court Finds that Hetq Reporter Did Not Slander or Insult Lernapat Mayor	207
Arrhythmology Cardiology Center and Aravot Reconcile	209

Court Throws Out Arman Avetisyan’s Slander Suit; He Filed Too Late	210
Benik Haroutyunyan Drops Slander Suit against <i>Zhoghovour</i>	212
Armenian Public T.V. Issues Retraction in Jehovah’s Witnesses Slander Case	213
Gourgen Aghajanyan v Zhoghovour: Constant Delays Plague This Slander trial	216
<i>Hraparak</i> Apologizes to Robert Kocharyan	217
Court Throws Out “Word of Life” Slander Suit against <i>Iravounk</i>	218
Court Rejects Margarita Khachatryan’s Slander Suit: <i>Hraparak</i> Doesn’t Have to Publish Retraction.	221
Arrhythmology Cardiology Center v. News.am: Will the Case be Suspended?	223
New Demand: One Million Apiece for Slander and Insult	225
Former National Institute of Health Employee Finds Term “Unsuitable” Insulting	226
Court Rejects Slander Suit Filed by Paravon Mirzoyan against Chorrord <i>Inknishkhanutyun</i>	227
Artur Sakunts v Rouben Hayrapetyan: Who Was That “Son of a Dog Wearing an Earring?”	230
Plaintiff Withdraws Slander Suit against Shamshtyan	232
Slaq.am Admits It Slandered Parliament Candidate; Seeks Reconciliation	233
Vanadzor Dean Drops Slander Charges against Hetq Reporter	234
Rector Sues Former Teacher; Hetq & A-TV Named as 3 <sup>rd</sup> Party Defendants	235
Armenian Public TV, Banadzev Ltd and Sirak Yeghiazaryan Must Apologize to YSU’s Head of Criminal Law Chair	236

Blogger “ <i>Pigh</i> ” Demands 3.5 Million in Compensation from <i>Chorrord Inknishkhanutyun</i>	238
Five News Outlets Listed as 3 <sup>rd</sup> Party Defendants in Slander Case	240
A New Evaluative Concept of “Public Declaration” – “Accessible to All”	241

## **PART II VIOLENCE**

Is Hooliganism No Longer Considered a Crime?	244
Reporters in Armenia Can’t Expect Any Assistance From Law Enforcement	246

## **PART III MEDIA COVERAGE OF THE PARLIAMENTARY ELECTIONS**

Election Campaigning: Old Objectives – New Methods	252
Armenia’s “Virtual” Media: Free, but Not Influential	255
Armenia’s Print Media: Diverse But Superficial and Mostly Focused on Intrigue	257
Unbiased “Objectivity” of Armenia’s TV Stations	259
Media Campaign or the Campaign’s Media	261
The “Virtual” Face of Election Campaigning	263

## PREFACE

Those concerned with the state of freedom of speech in Armenia will find this latest study of the Investigative Journalists' NGO of interest. The compendium pays particular attention to incidents of violence perpetrated against reporters and a new method that has surfaced within the past two years to impede the functioning of the press; namely to sue the media on charges of slander and insult.

The book summarizes the cases and incidents that have been reported from January to October, 2012. Attorneys Ara Ghazaryan and Ashot Vareljyan have concisely presented various aspects regarding the freedom of news outlets – legislative regulation, news accessibility, physical violence, and slander/insult court cases. In their analysis, they have expressed an optimistic view only on the latter; i.e., the overall judicial process is developing in the right direction. Such cases brought to the courts have decreased dramatically, and the significant drop in the amounts of compensatory damages awarded has become established judicial practice. In contrast, when it comes to exposing incidents of violence committed against journalists, the situation hasn't improved. In 2012, as in years past, police investigations of the cases reported have been more for “show” than anything else and thus unproductive.

The first section of the book, entitled “Reporters and News Outlets in Court”, includes articles on 2012 court cases in which reporters have been either defendants or third party litigants. The main charges filed against them are slander, insult and defaming the honor, dignity and working reputation of another. *Hetq* reporters have covered every step of these trials, in all the courts, preparing news stories, analytical pieces and interviews with specialists in the field.

The book's second section recaps incidents of violence committed against reporters during the same period. Seven such cases have been reported so far in 2012. The conclusion reached by *Hetq* reporters in their analytical pieces is that journalists in Armenia cannot expect to have their rights defended by state authorities.

In contrast to past publications, this book has a new section entitled “Media Coverage of the Parliamentary Elections”. *Hetq*'s political commentator followed the May 6, 2012 official and non-official campaign appearing in the print media, TV and internet surrounding the elections and came up with a number of interesting insights.

# **MEDIA FREEDOM IN ARMENIA (JANUARY-OCTOBER 2012)**

## **BRIEF**

In 2012 the civil society, the Central Election Committee and the government undertook legislative initiatives some of which resulted in changes in statutory laws regulating the media activities whereas some other initiatives had no success because they were either rejected by the National Parliament or were not included in the agenda of the Parliament despite the fact that they had been submitted to the Parliament in the beginning of this year and it's already a significantly long time now since the drafts have been in circulation in the Parliament.

On the day of the parliamentary elections several instances of physical assaults were recorded against the journalists in the polling stations in respect of which the police demonstrated inaction by failure of instituting criminal proceedings or by discontinuing the instituted proceedings after certain period of time on the basis of the lack of offense or lack of criminal behavior in the actions of the offender.

Violations of the right to access to information were recorded by some public bodies and non-state trade companies. In the framework of administrative and judicial proceedings, both the public bodies and the courts continued interpreting the definition of the concept of "trade secret" overly broadly as a result of which the media outlets and some other human rights organizations defending media rights were deprived of the access to information.

The only area where steady positive developments continue is the judicial practice of defamation and libel lawsuits in which the courts consistently refuse the disproportionately high and unjustified damage claims jeopardizing media's right to impart information which is regarded by the courts as a public interest issue.

## **Legislative initiatives and amendments**

In 2012 human rights groups, government bodies and the Central Electoral Commission undertook some legislative initiatives concerning media freedom and the freedom of journalists. In particular, it is worth noting the decision of 31 January 2012 of the Central Electoral Commission (CEC) about amending the regulations of accreditation of the journalists covering elections, and under the decision it was presumed to reject or terminate the accreditation of those journalists who had been convicted of premeditated criminal offense and their criminal records had not been removed or quashed at that time, including those who had disseminated untrue information about the activities of the electoral commissions or their officials and where those facts had been established by court verdict. It was clear that the mentioned amendments defined such limitations of the journalistic freedom that they raised human rights issues, and therefore those limitations could not have been stipulated by the CEC and instead they should have been stipulated by statutory law adopted by the National Parliament. After several media organizations and human rights defenders had expressed

concerns over the above decision, on March 15 the CEC had to abolish the above constraining regulations of the accreditation procedure.

It is also worth noting the fact of adoption by the National Parliament on March 21 of the “Law on Legal Regime of the State of Emergency”. The adoption of such law was justified under Constitution, in particular it emanated from the standpoint of the Constitutional requirement that the fundamental rights and freedoms of an individual be limited in the order prescribed by “law”. The article 7 of the prescribes the exhaustive list of limitations, the paragraph 12 of which prescribes the *“limitation of the right to free speech, in particular, prohibition of certain publications, programs through mass media”*. In combination with this law, the article 182.2 of the “Law on Administrative Violations” was amended (violation of legal regime of the state of emergency) to define imposition of fine in the amount of five to eight hundred times of the minimum salary for dissemination of prohibited publications or programs via mass media.

A matter of special interest was the draft law on “Amendments in the Law on Television and Radio of RA” prepared jointly by three journalistic organizations, the Yerevan Press Club, the Internews and the Committee of Protection of Freedom of Speech. On March 19 the Standing Committee on Science, Education, Culture, Youth and Sport of the National Parliament put the draft law into circulation. The proposed changes in the law were justified after incorporation of digital broadcasting technologies in the television and radio broadcasting sphere without first having resolved those main complex issues which would ensure the expected results of the incorporation of digital broadcasting and would address the concerns that had been raised by journalistic community, the wide public and the international organizations. Before the draft law was presented to the above committee, it was discussed with the OSCE and COE experts and then it was posted for public discussions within the framework of the “Forum of Media Freedom” organized by the Ombudsman’s office which had 100 participants. The main changes proposed by the draft are aimed at adopting proper regulatory statutory framework for digitized broadcasting, as well as at enhancing the supervisory authorities of the Television and Radio National Commission (TRNC) over the public television and radio companies. It has to be noted that any supervisory authority by the TRNC over the public television and radio companies may bring to conflicts between the two regulatory bodies, the TRNC from the one side and the Council of Public TV and Radio of Armenia from the other side since these two bodies regulate two distinct areas. It is not clear whether such regulatory mechanism will be effective in practice. At present the draft law is still in circulation and it has not been included in the agenda of parliamentary sessions.

Another draft law about amending the article 1087.1 of the Civil Code authored by Karen Mezhlumyan and put into circulation by a former member of the National Parliament Karen Dallakyan is still in circulation. They propose by the draft to add in the disposition of the above article non-public statements, as well as such concepts of defamatory and insulting speech as “improper” and “clearly false” statements. It is further proposed by the draft to lower the civil damage compensation ceiling to 500,000 drams for defamation and 800,000 for insult. The inclusion of the draft in the agenda was postponed in 06/02/2012 for 60 days. At present the draft law is still in circulation.

## Physical assaults

In 2012 incidents of physical assaults were recorded against journalists during parliamentary elections and the elections of local self-governing bodies. As a rule, in those cases the journalists filed police report on the facts of violence to district police stations and the police opened criminal cases but after certain period of time the police closed the criminal cases for lack of a crime or a criminal offense. We present hereby some examples. On May 5 the journalist of Gala TV Naira Nalbandyan was physically assaulted in no. 33 election district. She reported the incident to the department of police investigation of the Shirak district and the police opened a criminal case on the basis of the report. However, on May 16 the police took a decision to close the criminal case for lack of elements of crime.<sup>13</sup> A similar approach was demonstrated in respect of the journalist Elina Chilingaryan from the “Freedom” radio station. She was video shooting the outside of the polling station and the group of young men who were crowded at the entrance of the station and a young man from the group approached her and hit her two times to her hands by attempting to grab the camera. The journalist could hardly manage to save the camera after which she left the area. Elina Chilingaryan filed a report to the police about the incident on the grounds of the part 1 of the article 164 of the Criminal Code. Despite the fact that the police carried out formal investigation and collected materials for the criminal case, on July 13 it took a decision to discontinuing the investigation on the following grounds: *“During video filming, Elina Chilingaryan did not present herself as a journalist, she did not bear an identification mark as a journalist, her camera also didn’t have an identification mark. Under such circumstances, on the basis of the assessment of the evidence obtained in the course of the investigation, it is to be concluded that H. Hambarzumyan did not realize and couldn’t have realized that Elina Chilingaryan was a journalist and that she was acting in her professional capacity. The determination of H. Hambarzumyan was not directed to beating Chilingaryan, causing her bodily injuries or physical pain. In order to avoid being video filmed, he hit on the hands of the video cameraman as a result of which the camera fell on the ground. It was only Elina Chilingaryan who had testified that a second person had hit on her hands. No other evidence was obtained in respect of that episode, thus, the crime event was not confirmed”*.<sup>14</sup>

A criminal case was instituted under paragraphs 3 and 5 of part 2 of the article 149 of the Criminal Code for preventing the performance of professional duties of the journalist of “Maxinfo” informational-analytical news agency Karen Aleqyan on the facts of hindering the representative of media to perform his/her functions by a group of persons accompanied with violence. However, as of the moment of writing this report the police has not brought any charges against any person and nor has it conducted any investigative or procedural measures in the framework of the instituted criminal case.<sup>15</sup>

The above described situations raise an issue of failure by the Republic of Armenia of performing its positive obligations stipulated under the RA

13 See the observations of the “Hetq” Investigative Journalists concerning the violations of 2012 on the following website: <http://hetq.am/arm/articles/17891/lragroxnery-chenkarox-pashtpanutyun-aknkalel-ishkhanutyunneric.html>

14 Ibid.

15 Ibid.

